Գիրքը լուսապատճենահանվել է
"Համահայկական Էլ. Գրադարան"
կայքի՝ www.freebooks.do.am
կողմից եւ ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"

Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...
For more info: www.freebooks.do.am

ԴՈՒՔ ԼՈՒՍԱԼՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՔ ՁԵՐ ԼԵՌՈՒՄՆ ՈՒՆԵՆԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՔՆԵՐԴ
ԷՈՒՄՈՊԱՏԵԼԱՀԱՆԵԼ ԳՐՔԵՐ:

ԹԿԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀԱՅԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ" ԿԱՅՔԻՆ՝

www.freebooks.do.am

ՀԱՐՀԱՎԱՆ ԵՆՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՐ ԿԱՅՔԻՑ:
ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ՀԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ:

ԳՐԵՔ ՄԵԶ՝ freebooks@rambler.ru

ՎԱՂԱՐՇԱԿ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԳԻՇԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՎԱՂԱՐՇԱԿ
ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԿԵՐԿԱՅԱՐԻՆ ՏԵՐԻՆԵՐ

Երևան «Հայաստան»

1988

ԳՄԴ 63.3(2Հ)52
Հ 843

Գրախոս և խմբագիր պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հ. Մ. ՊՈՂՈՍՅԱՆ

Գրական մշակող Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

Հովակիմյան Վ. Հ.

Հ 843 Դժվարին տարիներ. Հուշեր / Խմբ. Հ. Մ. Պողոսյան.— Եր.: Հայաստան, 1988,— 208 էջ, 1 թ. նկ.:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին անասելի զոհեր տված, դժնդակ փորձություններով անցած հայ ժողովրդի զավակները, համախմբված կամավորական խմբերում, ռուսական բանակի շարքերում մարտնչում էին իրենց դարավոր ոսոխի դեմ: Հայ ժողովրդական հերոս Անդրանիկի և նրա զինվորների խիզախությունն է նկարագրում ականատես-հուշագիրը այս գրքում:

Նախատեսված է ընթերցող լայն շրջանների համար:

Հ $\frac{0505040000}{701(01)-88}$ 57—87 ԳՄԴ 63.3(2Հ)52

ISBN 5—540—00468—X

© «Հայաստան» հրատարակչություն, 1988

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Վ. Հ. Հովակիմյանի «Դժվարին տարիներ» աշխատությունը հրատարակում ենք լեզվառճական որոշ փոփոխություններով: Այն բերևս գրական ոչ մի ժանրի պահանջները չի բավարարում. ոչ այն է պատմական ուսումնասիրություն է, ոչ այն է գեղարվեստական պատում, ոչ էլ հրապարակախոսական ակնարկ կամ էսսե: Դա ուղղակի ականատեսի գրառումներ են, հուշեր, որոնցում հեղինակը հիշողությամբ ներկայացնում է Անդրանիկ զորավարի վարած հայրենապաշտպան գործողությունները, մոտավոր ճշտությամբ վերարտադրում նրա զրույցները, հայրենասիրական կոչերն ու ելույթները հայ կամավորների առջև:

Գրքույկը լույս է ընծայվում այն ակնկալումով, որ գուցե թե փաստերի, դեպքերի, վավերագրի արժեք ունեցող նկարագրությամբ այն հետագայում նյութ կդառնա պատմաբանի կամ վիպասանի համար: Ոչ միայն դա: Հեղինակի թող ոչ հղկված, ոչ գեղանի արտահայտի այս արտահույզ խոսքը հայրենասիրական ոգի ներարկի ընթերցողին:

ՍԿԻՋԲԸ

1914-ին սկսված պատերազմը, հետզհետե ծավալվելով, իր խառնարանի մեջ առավ նորանոր մեծ ու փոքր պետություններ։ Խորամանկ ու արյունարբու թուրքական կառավարությունը առաջին իսկ օրից պիտի շտապեր պատերազմ հայտարարելու ցարական Ռուսաստանին, բայց միայն նոյեմբերի 11-ին պաշտոնապես միացավ Գերմանիային։ Սակայն ռուսական դիվանագետները վաղուց քաջատեղյակ էին նրա բոլոր խաղերին և պատահական չէր, որ պատերազմի առաջին իսկ պայթյունից ցարական կառավարությունը շտապեց նախապես իր ռազմական ուժերը կենտրոնացնել նախ ռուս-թուրքական և ապա պարսկա-թուրքական սահմանագլուխներին։ Թուրքիայի՝ Գերմանիային համեմատաբար ուշ միանալու փաստը, ի շարս այլ խոշընդոտների, պետք է վերագրել նրա տերիտորիայի բնականից աննպաստ տեղադրմանը, ինչպես նաև երկաթուղիների, նույնպես և շատ թե քիչ տանելի խճուղիների բացակայությանը, որ արգելակում էին նրան իրագործելու իր բանակների հապճեպ առաջխաղացումը դեպի Կովկասյան ճակատ և առավել ևս դեպի պարսկա-թուրքական սահմանագլուխ։

Եվ ահա շատ չանցած օդը թնդաց.

Ի զե՞ն, հայե՛ր սուր և ի հրացան
Տաճկահայաստանից կոչում է մի ձայն,
Լեռից լեռ թնդում է ահեղ հրաման,
Թռե՛ք հայեր, թռե՛ք դեպի Հայաստան,
Դեպի՛, դեպի՛ դեպի՛ Հայաստան,
Դեպի՛, դեպի՛ դեպի՛ Հայաստան...

Կայծակնային արագությամբ արձագանքեցին աշխարհում սփռված բոլոր պանդուխտ հայերը։ Եվ չանցած երկու-երեք շաբաթ Թիֆլիս քաղաքի փողոցներով անցնում էին հայ կամավորական խմբերը.

Մեր հայրենիքը թշվառ անտեր,
Մեր թշնամյաց ոտնակոխ,
Ցուր որդիքը արդ կանչում են
Հանել յուր վրեժ, քեն ու ոխ...

Թիֆլիսում համախմբված հայ երիտասարդության գերակշռող մասը բաղկացած էր աշխարհի բոլոր ծայրերից եկած մեր արևմտահայ եղբայրներից, սակավ չէին նաև արևելահայերը, որոնց շարքերը համալրում էին Պետերբուրգից, Մոսկվայից, Կիևից և Ռուսիո այլ համալսարանական քաղաքներից եկած բավական թվով հայ ուսանողներ և նույնիսկ հայ ուսանողուհիներ։ Այս երևույթը բացատրվում էր նրանով, որ իրավ, արևելահայ հատվածի զենք կրելու ընդունակ երիտասարդությունը պատերազմի հենց առաջին օրից, ընդհանուր զինակոչի ենթարկված լինելով, որպես պաշտոնական կանոնավոր զորք՝ ռուսական բանակների շարքերում, ռուս զինվորի հետ կողք կողքի Արևմտյան ճակատի ռազմաբեմում արդեն կռվում էր գերմանա-ավստրիական բանակների դեմ։ Թիֆլիս էին եկել զորավար Անդրանիկը, Քեռին (Արշակ Խանասորի Կաֆաֆյան), Վարդանն ու Իշխանը, Տարոնից խմբապետ Սմբատը և ուրիշներ։

Ռուս գեներալ-լեյտենանտ Զեռնոզուբովը նշանակված էր պարսկա-թուրքական սահմանագլխի ուղղությամբ գործող ռուսական բանակի ընդհանուր հրամանատար։ Նրա կորպուսի երեք դիվիզիաներից մեկի հրամանատարն էր հայազգի գեներալ-մայոր Թ. Նազարբեկյանը։ Գեներալ Զեռնոզուբովը երկար տարիներ գտնվելով հյուսիսային Իրանում, քաջատեղյակ էր պարսկա-թուրքական սահմանագլխի բոլոր վայրերին, ազգաբնակչության կազմին ու սովորու-

թյուններին։ Նա իր կորպուսի համար բանակատեղի էր ընտրել Խոյ (Հեր) քաղաքի պարիսպներից դուրս տարածվող պատմական Ավարայրի դաշտը։ Հայկական կամավորական առաջին գունդը, որի հրամանատարն էր Անդրանիկը, մոտ 1800 մարտիկներով, 1914-ի հոկտեմբեր ամսվա սկզբներին Թիֆլիսից շարժվեց դեպի Խոյ։ Նրանց թվում էր նաև տողերիս հեղինակը։ Դեռ չլրացած կյանքիս քսան տարին, պատերազմի շեփորը հնչելուն պես Միջին Ասիայից արձագանքել էի հայրենիքիս կանչին և ի շարս շատ շատերի եկել հասել ռազմաշունչ որդիների շարքերին, ինչպես երդվյալ ուխտավոր, գերի և սուրբ հայրենիքի ազատության համար պայքարելու։ Դեռ վաղ տարիքիս քանի-քանի երգեր էի սերտել, բոլորն էլ ձոնված Անդրանիկին, կապված նրա հաղթանակների հետ՝ ընդդեմ արյունարբու Թուրքիայի։ 1904-ի Սասունի ինքնապաշտպանության օրերին և նրանից հետո համայն հայության շրջանում հազիվ թե գտնվեր մի անձ, որ լսած չլիներ Անդրանիկի քաջագործությունները և չպարծենար մեր անարգ թշնամու դեմ նրա տարած հաղթանակներով։ Նա վայելում էր հայության բոլոր խավերի անսահման սերը, հարգանքն ու համակրանքը։ Չկար մի տոնախմբություն, մկրտություն կամ հարսանյաց հանդես, որտեղ բազմաթիվ բաժակներ չդատարկվեին նրա արևշատության համար, որտեղ չտրվեր Անդրանիկի անունը։ Սակավ չէր այն հայերի թիվը, որոնք երդվում էին նրա անունով և իրենց նորածին արու զավակներին անվանակոչում՝ Անդրանիկ։ Մեր ազգային պատմության համար Անդրանիկը մեր օրերում հեթանոսական Հայաստանի պաշտամունքի հմայք ստացած Վահագնն էր կատարյալ, և բնավ պատահական չէր, որ ես իմ վաղ տարիքից երազել էի լինել նրա շուրջը համախմբվածների շարքերում և կռվի նետվել մեր դարավոր թշնամու դեմ։ Պատահական չէր նաև այն, որ Անդրանիկի հետ իմ առաջին իսկ հանդիպումից իմ ուշքն ու միտքը գրավվեց այդ ազնիվ հայի անձնավորությամբ, որին սկսեցի պաշտել։

Տարիներ առաջ, երբ ես դեռ ծխական դպրոցի աշակերտ էի, մի օր քեռիներիցս մեկը նվիրեց ինձ Ստեփանոս Պալասանյանի Հայոց պատմության չափազանց մատչելի դասագիրքը։ Ես չէի ընթերցում դասագիրքը որպես սովորական ընթերցանության գիրք, ո՛չ, այն այնքան հետաքրքրեց ինձ, որ ես հափշտակված, ինքնամոռաց ագահությամբ կլանում էի նրա ամեն մի տողը։ Մի ուշ գիշեր, երբ կարդում էի Տիգրան Մեծի ժամանակաշրջանի մասին, համեմատելով հայ ազգի փառահեղ անցյալը իմ օրերի անմխիթար վիճակի հետ, անզոր եղա զսպել հոգեկան հուզմունքս, հանկարծ փղձկացի և սկսեցի բարձրաձայն հեկեկալ։ Մայրս վեր ցատկեց անկողնուց, քուրսու վրայից չանթեց առջևս դրված գիրքը, մարեց նավթի ճրագը և պառկեցրեց ինձ անկողնում, նախատելով. «Ա՛յ որդի, դե բավական ա, էլի՛, օգում ես էնքան կարդաս վեր պլանա՞ս։ Բա իմ դարդ ու ցավս քիչ ա, վեր օգում ես նոր դարդ ու ցավ ավելացնես սրտիս վրա՞...» Այն ժամանակ նույնիսկ ես կարծես Անդրանիկի անձնավորության մեջ տեսնում էի իմ գերի հայրենիքի անպարտելի փրկչին։ Անսասան հավատքով զոդված շարունակում էի հավատալ, որ միևնույն է, սկսված պատերազմը պիտի վերջանա Օսմանյան Թուրքիայի պարտությամբ և արևմտահայերի ազատությամբ։ Պատերազմական գործողությունները սկսելու հենց առաջին շրջանում ես համոզվեցի, որ Անդրանիկի ռազմական բնածին տաղանդի առաջ զլուխ էին խոնարհում ոչ միայն հայերն ու Բալկանյան թերակղզու մեզ համակիր ազգությունները, այլև հայության ոխերիմ թշնամի Թուրքիան։ Անդրանիկին հարգում և համակրում էին նաև մեր Եղբայրակից վրաց ժողովուրդը և անգամ եվրոպական մեծ պետությունների ու ռուսական հասարակական, քաղաքական և ռազմական ականավոր գործիչները։

ԴԵՊԻ ՌԱԶՄԱՃԱԿԱՏ

1914 թվի հոկտեմբեր ամսվա սկզբին Թիֆլիսից, Անդրանիկի հրամանատարությամբ, առաջին հերթին ռազմաճակատ մեկնեց հայկական կամավորական I գունդը, բաղկացած 1800 մարտիկներից։ Մեր էշելոնը կանգնած էր Թիֆլիսի Նավթլուղ կոչվող քաղաքամերձ երկաթուղային կայարանում, ուր հավաքվել էին հայ, մասամբ էլ վրաց ու ռուս հասարակության մի հոծ բազմություն։ Այնտեղ ասեղ գցելու տեղ չկար։ Հավաքվածները եկել էին ծաղկեփնջերով, դհոլ-զուռնայով և ռուսական փողային նվագախմբով։ Եղան հավուր պատշաճի ելույթներ։ Վերջում ելույթ ունեցավ Անդրանիկը, բայց ես ոչ մեկի ասածները չհասկացա, որովհետև էշելոնի վագոնը, որի մեջ ի շարս այլոց տեղավորված էի և ես, բավական հեռու էր կանգնած կայարանից։ Եվ այդպես, Թիֆլիսից մեծ խանդավառությամբ հասնելով Ջուղա, Արաքսն անցնելուց առաջ Անդրանիկը դիմեց իր գընդին հետևյալ խոսքերով.

— Սիրելի հայրենակիցներ, զինակից եղբայրք, համոզված եմ, որ ձեզմե ամեն մեկը արդեն իրեն հաշիվ տված է և հարցուցած, թե ո՞ւր կերթանք մենք, ասանկ սպառազինված։ Մենք տոնախմբության կամ թե հարսանյաց հանդեսի չենք երթար, այլ պատերազմի։ Մեր նպատակը հայտնի է ամեն մի հայու և առավել ևս ձեզ։ Այդ նպատակն է, որ մղել է մեզ հավաքվելու մեր ազգային այս սուրբ դրոշակի տակ հանուն մեր գերի հայրենիքի և թուրքական բռնակալական լծից նրա բազմաչարչար զավակներու ազատության։ Պատերազմը առնչված է բազմաթիվ արհավիրքներու և զոհաբերություններու հետ։ Ձեզնից անոնք, որոնք վստահ չեն իրենց ուժերուն, իրենց մեջ չեն զգար մեծ կամք ու կարողություն հաղթահարելու պատերազմի հետ կապված դժվարությունները, թող այժմեն առանց ամչնալու դուրս գան մեր շարքերեն հանուն մեր զենքի հաջողության և ի սեր մեր հայրենիքի։ Նորեն կկրկնեմ՝ եթե ձեր շարքե-

ռում կան այդպիսի անհատներ, թող որ ազնիվ մարդուն վայել օրինապահությամբ խոստովանեն իրենց անզորությունը։ Մենք նման անհատներու նկատմամբ բացի շնորհակալություն կշտամբելու միտք չունինք։ Ասացե՛ք, այդպիսի անձինք կա՞ն ձեր շարքերում, թե չէ, այլապես վայն եկել տարել է անոր, որը այժմ ամոթեն կլռե, իսկ վաղը վախկոտությունեն կլքե պատերազմի դաշտը, իր դիրքերը առանց խորհելու ատոր հետ կապված տխուր հետևանքներու մասին։

Գունդը մի պահ զսպված լռությունից հետո հանկարծ միաբերան բարձրաձայն գոչեց՝ ո՛չ, փաշա, վախկոտներ չկան մեր շարքերում...

— Ուրեմն աղեկ, համբուրում եմ ձեր ճակատը... Օն, հառա՛ջ, դեպի Վա՛ն, դեպի Էրգի՛ր...

Գունդը որոտընդոստ երգերով շարժվեց առաջ, դեպի Արաքսի կամուրջը։ Գնդի առջևից, իրենց նժույգներին նստած մոտ 700—800 քայլ հեռավորության վրա երիվարում էին հինգ-վեց հեծյալներ, Անդրանիկը շրջապատված էր քաջասիրտ թիկնապահներով, նրանց հետևում էին հետևակ վաշտերը, հեծելազորը և, վերջապես, գնդի գումակը։

Հոկտեմբեր ամսվա վերջերն էր։ Հունձը վերջացած, դաշտերն ամայացած էին։ Աշխատավոր գյուղացիությունը իրենց կալերում դիզված հացահատիկները վաղուց էին կալսել, վերջացրել, դարմանը լցրել մարագները, իսկ հացահատիկի պաշարը զետեղեր հորերի մեջ։ Ճնճղուկների, տարինոսների (ազնվասարեկ), սարյակների և լորերի անթիվ երամներ հնձված արտերի խոզաններում հավաքում էին թափված հատիկները։ Կռունկների ուշացած երամները խոլ կռնչոցով դեպի հարավ էին շտապում։ Այս ու այն սարահարթի կամ դաշտավայրի փոքրիկ լճակներում սիգաճեմ նազանքով լողում էին ջրային հավքերի խմբեր։ Աշնան տխուր դաշտերում գիշերային խավարի միջից շրջակա ճահիճներից երբեմն-երբեմն լսվում էր կտցարի աղիողորմ հեծեծանքը։ Այլևս եղեգնուտներից չէր լսվում գորտերի, չգիտեմ ինչու

ինձ համար շատ դուրալի, սիրային սիմֆոնիան։ Այգեկութը վերջացած էր։ Ծառերի տերևները դեղնել, թոշնել էին և մեղմ քամուց թափվում էին գետնին։ Բայց դեռ որոշ մրգատու ծառերի, ինչպես, օրինակ, դեղձենիների, տանձենիների, ծիրանենիների տերևները ամենակարող արևի կենարար ճառագայթներից կարծես թե պճնազարդվել էին բազմերանգ գույներով, որ հիացմունք էին պատճառում տեսնողին։ Սակայն այս երևույթն էլ կրում էր կարճատև բնույթ, որովհետև օր օրի ուժեղացող ցրտերից դալկանում էին նաև ծառերը։

Օրերն զգալի կերպով կարճացել էին։ Արևն այլևս ուժասպառ էր դարձել ջերմացնելու գետինը, երկինքն էլ օր օրի պատվում էր քուլա-քուլա ամպերով, բայց դեռ դաշտավայրերը շրջապատող սարերի լանջերին իրենց թարմությունը պահող աշնանային ծաղիկներից արշալույսի և վերջալույսի զեփյուռը խլում բերում էր և մեզ հասցնում նրանց հոգեզմայլ բուրմունքը։ Մի քանի օր անց սկսվեցին աշնանային անձրևները։

Ջուղայից ճանապարհվելու երկրորդ օրը երեկոյան մեր գունդը հասավ Խոյ և ըստ կորպուսի հրամանատար գեներալ-լեյտենանտ Ջեռնոզուբովի հրամանի 2—3 օրից շարժվեց դեպի Սալմաստ, տեղավորվեց հայաբնակ Ղալասար գյուղի բնակիչների բավական մաքուր և ճաշակով հավաքված լուսավոր և տաք հարկերի տակ։ Առանձնապես հիշատակության է արժանի Խոյի և Սալմաստի հայ ազգաբնակչության սրտառուչ վերաբերմունքը հայ կամավորական խմբերի նկատմամբ։ Ճանապարհին, նախքան որևէ գյուղ հասնելը, տեղացի հայ երիտասարդների հետիոտն խմբերը, զինված, բավական ճանապարհ կտրելով, գալիս էին մեզ ընդառաջ և ողջագուրվելով մեզ հետ, առաջնորդում դեպի իրենց գյուղերը, տեղավորում բնակիչների խրճիթներում։ Ինքներս լինելով գերազանցապես գյուղացիների որդիներ, հիացած էինք նրանց նահապետական նիստ ու կացով, մարդասիրությամբ, սրտառուչ և անկաշառ հյուրասիրու-

թյամբ։ Ամենաուրախալին այն էր, որ այդ գյուղացիության երկսեռ խավերի զգալի տոկոսը գրաճանաչ լինելով՝ օժտված էին ազգային գիտակցությամբ։ Մենք հիացած էինք յուրաքանչյուր խրճիթի որմնախորշերում խնամքով դարսված մայրենի լեզվով տպագրված հայ գրականության մեկ-երկու և ավելի տասնյակ գրքերի հատորների առկայությամբ և այս ամենի հետ նրանց տնտեսական անհամեմատ բարվոք վիճակով։ Բացի այդ, չկար մի գյուղ, որ չունենար իր կանոնավոր դպրոցը հայ երկսեռ մանուկների համար և վերջիններիս կից թատերական սրահն ու համեմատաբար հարուստ գրադարան-ընթերցարանը, որոնց սեղանների վրա կարելի էր տեսնել հայ պարբերական մամուլի թերթեր, ամսագրեր՝ սկսած Պոլսո «Բյուզանդիոնից» ու «Ճակատամարտից», Թիֆլիսի «Մշակից», «Հորիզոնից», Փարիզի Ա. Զոպանյանի «Անահիտից» և մինչև իսկ Վենետիկի «Գեղունից» ու Գ. Լևոնյանի Թիֆլիսում հրատարակվող «Գեղարվեստ» ստվարածավալ ամսագրերից։ Մի խոսքով, մի նախանձելի երևույթ, որից, ցավոք սրտի, զուրկ էին Արևելյան Հայաստանի շատ բնակավայրեր, որոնց թվում նույնիսկ Արարատյան գաշտի գյուղերից շատերը։

ԱՆԴՐԱՆԻԿԸ

Ըստ իմ ունեցած կցկտուր տեղեկությունների Անդրանիկը ծնվել է 1865-ին Շապին Գարահիսար գյուղաքաղաքում, արհեստավորի ընտանիքում։ Գրաճանաչ է դարձել գյուղաքաղաքի հայկական տարրական դպրոցում։ Նա իր ֆիզիկական ամուր կազմվածքով, հանդուգն ու համարձակ խառնվածքով և մանավանդ անաչառ բնավորությամբ դեռ վաղ տարիքից վայելել է իր խաղընկերների սերն ու համակրանքը։ Նրանք բոլորն էլ ակնածությամբ են նայել իրենց քաջ ու համարձակ ընկերոջը։ Անդրանիկը իր ծնողների խնդրանքով ամուսնացել է 18 տարեկանում։ Մի տարի անց կի-

նը իր սիրեցյալ ամուսնուն պարգևելով մի արու զավակ, ինքը մահացել է ծննդաբերության ժամանակ։ Կնոջ մահվանից երկու ամիս անց մահացել է նաև մանկիկը։ Այդ ողբերգությունից ապագա հերոսը այնքան է ազդվել, որ ամիսներ շարունակ իր վիշտը սփոփել է տեղական եկեղեցում աղոթելով։ Համակված խորին թախիծով, նա կորցրել է իր զվարթությունը, դարձել լռակյաց և մելամաղձոտ։ Հոգեկան այդպիսի տանջանքներով տոգորված մի օր գետնին է տապալում իր հորը ծեծողներից մեկին և ապա թողնում է հայրենի տունը, մեկնում Կ. Պոլիս և շատ չանցած՝ Սասուն՝ միանալու Սերոբ փաշայի հայդուկային խմբին։ Անդրանիկն իր քաջագործություններով հենց առաջին իսկ օրվանից գրավում է իր ավագ ընկերների ուշադրությունը։ Սերոբ փաշան և Գևորգ Չավուշը սկսում են սիրել նրան։ Անդրանիկի կատարած սրխրագործությունների հռչակը տարածվում է Հայաստանի անառիկ Սասունի ու Տալվորիկի լեռներից անդին։ Սասունի 1904 թվի ինքնապաշտպանական մարտերից հետո Անդրանիկը ճանապարհորդում է դեպի Եվրոպա, լինում է Ֆրանսիայում, Շվեյցարիայում, հանդիպում այդ երկրների շատ անվանի ու առաջադեմ հասարակական քաղաքական գործիչների հետ։ Բալկանյան պատերազմի ժամանակ, 1912—1913-ին, որպես հայկական կամավորական զորամասի վոյեվոդա բուլղարական բանակի շարքերում հերոսաբար կռվել է Թուրքիայի դեմ և իր քաջագործությունների համար բուլղարական կառավարության կողմից պարգևատրվել շքանշաններով և ստացել սպայի աստիճան։ Ավելին, բուլղարական կառավարությունը պատերազմի վերջում Անդրանիկին, որպես բուլղարական բանակի պատվավոր վետերանի, նվիրել էր մի ագարակ Վառնա քաղաքի շրջանում, որտեղ մինչև համաշխարհային առաջին պատերազմը նա ապրում էր իր քրոջ որդու՝ Երվանդի հետ։

Առաջին համաշխարհային պատերազմի հենց սկզբի օրերից, երբ տակավին Թուրքիան պաշտոնապես չէր անցել Գերմանիայի կողմը ընդդեմ Անտան-

տի պետությունների, Անդրանիկը Բուլղարիայից վերադարձավ Անդրկովկաս, գլխավորելու կազմակերպվելիք հայկական կամավորական գնդերից մեկը ընդդեմ Թուրքիայի։ Անդրանիկը ստանձնեց հայկական կամավորական I գնդի հրամանատարությունը։ Չնայած Անդրանիկը սիստեմատիկ կրթություն չէր ստացել, սակայն տիրապետում էր իր մայրենի լեզվին և թուրքերենին, բավական հաջող խոսում էր բուլղարերեն, մի փոքր էլ՝ ֆրանսերեն։ Անդրանիկը վայելչակազմ էր։ Նրա արտաքինին նայելիս դիտողը իր հոգու խորքում ինչ-որ անբացատրելի հմայք էր զգում։ Այդ ժամանակ Անդրանիկն արդեն հիսունն անց էր, միջակից քիչ բարձր հասակով, լայն թիկունքով, նրա համաչափ գեղեցիկ գլուխը զարդարում էին ալեխառն մազերը։ Լայն ճակատը, համաչափ մեծությամբ փոքր-ինչ կորացած արծվային քիթը, գեղեցիկ սև-սպիտակախառն խիտ հոնքերը, որոնց բաժանման կետում հպարտության մկանների կծկումից առաջացել էին դեպի քթի հենքը իջնող երեք ուղղահայաց խորշոններ, սիրուն, խնամքով սղալված ալեխառն խիտ բեղերը և զայրույթի պարագային բոցավառվող շագանակագույն և միաժամանակ գթությամբ լի աչքերը հիացմունք էին պատճառում տեսնողին։ Քայլվածքը համարձակ էր և հաստատուն։ Որևէ տհաճ դեպքից վշտացած պահին թագբեհը կառներ ձեռքը և ինքն իր խոհերի հետ լայն քայլերով կճեմեր բանակատեղից դուրս, մինչև որ հուզմունքը կանցներ։ Խիստ ժուժկալ էր։ Գիշերը բանակում ամենից վերջինը նրա վրանի լույսը կմարեր, իսկ առավոտները ամենից վաղ նա էր ոտքի վրա և հերթապահ վաշտապետի հետ խոհարարներին գնդի համար համեղ և սննդարար նախաճաշ պատրաստելու հրահանգ էր տալիս։ Սակավապետ էր, մեկ-մեկ էլ կսիրեր իր հոգեկան դառնությունը դուրս վանելու նպատակով 1—2 գավաթ կոնյակ խմել։ Նույնը կաներ նաև հաղթանակի պարագային, երբ շրջապատված կլիներ իրեն այցի եկած վաղեմի զինակից ընկերներով։ Հպարտ էր փաշան, մանավանդ մարտերում թշնամու

գերազանց ուժերի դեմ տարած հաղթանակից հետո, բայց բնավ ցուցամոլ չէր, իր հպարտությունը գիտեր ամփոփել իր մեջ այնպես, որ նկատելի չլիներ շրջապատին։ Խստապահանջ էր ինքն իր սեփական անձի նկատմամբ։ Նույնը կպահանջեր նաև իր զինակից ընկերներից և մինչև իսկ շարքային զինվորներից։ Բարեխիղճ էր և անաչառ։ Մայրահեղ ճշտապահ էր, խոստացածը ժամանակին պիտի կատարեր։ Տանել չէր կարող վախկոտ, անփույթ և փնթի զինվորներին։ Ամենքին կհրահանգեր՝ խնամք տանել իր անձի, հագուստի, կոշիկների, ինչպես նաև զենքի ու ձիու մաքրության համար։ «Ձիուդ չխնամած, զենքդ չմաքրած, կոշիկիդ և հագուստեղենիդ պատռվածքները չկարկատած ու քո մարմինը կեղտից չմաքրած մի նստիր ճաշի»,— հաճախ կկրկներ նա։

Արգահատանքով կնայեր այն զինվորին, որը մարտի դաշտում ընկած թշնամու նկատմամբ կցուցաբերեր որևէ բարբարոսություն։ «Ախպարս, ան ալ մարդ է, մեզ նման զինվոր մըն է, կռվել է իր հայրենիքի համար, ընկել է պատվով, ալ ի՞նչ կարիք կա ավելորդ բարբարոսություններու...»։ Անդրանիկը ազգային կենսական հարցի լուծման ասպարեզում հոսանքներ չէր որոնում՝ «Նախ հայրենիքի ազատություն և ապա նոր միայն քաղաքական տարբեր հոսանքներ»։ Ահա նրա ազգային ազատագրության ասպարեզում ունեցած քաղաքական աշխարհայեցողության հավատամքի ուղն ու ծուծը։ «Երբ խնդիրը կվերաբերվի հայրենիքի փրկության հարցին, ալ ինչ խոսք կրնա ըլլալ քաղաքական տարբեր հոսանքներու մասին։ Ըստ իս բոլոր հոսանքներն ալ անկախ իրենց քաղաքական տարբեր համոզմունքներու հավասարապես պատասխանատու են հայրենիքի և ազգի առջև»։ Հաճախ կառարկեր նա իր հակառակորդներին։ Հիշում եմ 1914-ի հոկտեմբեր ամսվա վերջին օրերն էին։ Անդրանիկը իր երկարամյա զինակից ընկերների՝ բայբուրդցի Սեպուհի, թաքիրդաղցի Ավետիսի (Կայծակ Ավո), Մշեցի Սմբատի, ախալցխացի Արտաշես Սուճյանի և այլոց հետ վերոհիշյալ Ղալասար-

կոչվող հայկական գյուղում անհամբեր սպասում էին ռուսական բանակի գալուն, որպեսզի սկսեին ռազմական գործողություններն ընդդեմ պարսկա-թուրքական սահմանագլխին դիրքավորված թուրքական բանակի։ Երբ Անդրանիկը յուր զինակից ընկերներով նստում էր զինվորական խորհրդի, ի ծնե ռազմական տենչանքով մոլեգին այդ հայդուկները իրենց մարմնի ընդհանուր կազմվածքով ու կեցվածքով և ըմբոստ դեմքերի հանդուգն ու խիզախ արտահայտությամբ իմ երիտասարդ սիրտը լցնում էին անհուն բերկրանքով ու հարկադրում ինձ ակամայից վերհիշել ռուս մեծ նկարիչ անմահ Ռեպինի հանճարեղ վրձնի նույնքան անմահ «Նամակ թուրքական սուլթանին» կենդանի պատկերը։ Տարբերությունը միայն այն էր, որ այնտեղ Ռեպինի կտավի վաղուց անմահացած ռուս ազգային գաղափարատիպ հերոսներին մեր օրերում փոխարինում էին հայազգի կենդանի հերոսները։ Ահա՛ միջակից փոքր-ինչ բարձր հասակով, լայն կրծքով, ջղուտ կազմվածքով, արծվահայաց աչքերով և ալեխառն մազերով Անդրանիկը, պարթևահասակ, լայնաթիկունք, հաստաբազուկ, լայն ճակատով, գանգրահեր ու ալեխառն մազերով, բարակ ոլորուն բեղերով, խաժ աչքերով Սեպուհը, համեստության և լրջախոհության տիպար տարեց հերոս Ավոն (Կայծակ Ավո) և համեմատաբար երիտասարդ մշեցի քաջ Ահարոնը, որը 1918-ի ամռանը ճակատամարտի վերջում նահատակվեց Ավարայրի դաշտում։ Ահա՛ մեր օրերի կատարյալ Տարաս Բուլբան, պողպատյա կազմվածքով, հուսահատության անծանոթ, գանգրահեր սև մազերով մշեցի Սմբատը և մոտ երկու մետրի չափ հասակ ունեցող աներկյուղ և անսասան, շիտակ ու ազնիվ, քառասունն անց, վեհանձն մշեցի Հասրաթ Բորբոբյանը, որի կողքից կախված երկար թրի ծայրը հազիվ էր հասնում նրա ծնկան հոդին։ Ահա՛ Բաքվի նավթահորերի բանվոր Վասպուրական նահանգի հայոցձորցի շարքային զինվոր, անվախ և հաղթանդամ Սերոբը։ Ահա՛ վայրի ճարպկությամբ օժտված, ոսկեհուռ խիտ մազերով,

կարճահասակ, կանաչավուն աչքերով, զույգ ատրճանակները գոտկի տակ խրած ոզմեցի քաջամարտիկ Ասլանը, լոռեցի, զանգեզուրցի, ղարաբաղցի, դիլիջանցի ֆիզիկական կարողությամբ օժտված սխրագործ պատանիների մի խումբ՝ լցված ազգային վրեժխնդրության ոգով՝ Մուշեղը, Վախթանգը, Նշանը, Արմոն, Սուրենը, Կոսայան և ուրիշներ, որոնք գիտակցական պատվավոր մահը հազար անգամ գերադասում էին անամոթ ու անպատվաբեր պարտությունից։ Ահա՛ բարձրահասակ, մարմնի նուրբ կազմվածքով, անմեղ մարդասեր առաքինությամբ առլեցուն լոռեցի հնէաբան, բոլորին շատ սիրելի Աշխարհաբեկ Քալանթարը։ Դրանց թվում են թոքատցի Գրիգոր Ամիրյանը, մշեցի Արտաշես Միրզոյանը, Արիստակես Ասլեյանը և ուրիշ շատ ու շատ այդպիսի դեմքեր, որոնք ոչ միայն իրենց արտաքին կազմվածքով, այլև իրենց տարազով ու սխրագործություններով մի պահ դիտողին հարկադրում էին խորհելու, որ վերևում ասված Ռեպինի կտավը ոչ այլ ինչ է, եթե ոչ պատճենն այդ կենդանի պատկերի։ Այստեղ արժե հիշատակել, որ Արևմտյան Հայաստանի ոզմեցիների, շատախցիների, արճակցիների, արճեշցիների, մոկսեցիների, սասունցիների, մշեցիների, խլաթցիների, խնուսցիների, մանազկերտցիների, բագրևանդցիների ոչ միայն տղամարդկանց, այլև կանանց տարազը զարմանալիորեն ինձ հիշեցնում էին ուկրաինական ժողովրդի աշխատավոր գյուղացիության տարազը։ Որպիսի զուգադիպություն, կատարյալ հանելուկ է... Արդյոք, սկյութների կամ կիմերների ժամանակներից չի՞ մնացել այս տարազը... Թվածս վայրերի հայ երկսեռ ազգաբնակչությունը ոչ միայն տարազով, այլև իրենց ֆիզիկական ողջ կառուցվածքով միանգամայն հակապատկերն են Արևելյան Հայաստանի դաշտաբնակ հայ ազգաբնակչության։ Իսկ մեր խարբերդցիք, սեբաստացիք և մանավանդ կիլիկեցիք իրենց պարթև կազմվածքով,

լայն ճակատով, նուրբ սպիտակ մաշկով, կանաչավուն, կապտավուն խոշոր աչքերով, շեկ կամ շագանակագույն մազերով, իսկ կանայք էլ այս բոլոր առավելությունների հետ մեկտեղ նաև զարգացած կոնքերի, զիստերի, նուրբ շրթունքների և առհասարակ դիմագծերի ընդհանուր ներդաշնակ համաչափությամբ միանգամայն հիացմունք էին պատճառում դիտողին և հպարտությամբ լցնում նրա սիրտն ու հոգին, որ ինքը այդ գեղեցիկ, ազնիվ, շիտակ, ընդունակ քաջամարտիկ և ջանասեր ազգի զավակն է։ Վերհիշելով տնցյալը, այսօր անգամ բարի նախանձից մղկտում, կսկծում է սիրտս, որ մենք տակավին զուրկ ենք հայ Ռեպինից, որի պատճառով մեր նոր սերունդը որոշ դեպքերում քաջատեղյակ չէ յուր ազգային պատմության հիշատակության արժանի և շատ կարևոր փաստերի կենդանագիր պատկերների միջոցով լուսաբանված նյութերին, որոնց թվում նաև մեր ազգային ազատամարտի պատմության անձնվեր հերոսների կենդանի պատկերներին։ Գեղարվեստի շնորհալի մշակներ որքան ուզես կան մեր մեջ, բայց չգիտես ինչու ոչ ոք նրանցից չի հանդգնում Վանի 1915-ի ապրիլյան Թուրքիո դեմ տարած ապրստամբության հաղթական հերոսամարտի և 1918-ի Սարդարապատի թուրքական բանակների դեմ հաղթական ճակատամարտի էպոպեան նկարելու լայն կտավի վրա կամ թե վերածելու կինոնկարի և հրամցնելու այն մեր ազգային ազատամարտի պատմության ծարավ քաջառողջ երիտասարդությանը։

Ռազմական տաղանդով օժտված Անդրանիկը լուսաբացից մինչև ուշ գիշեր դադար չուներ։ Քանի դեռ Սալմաստից չէինք շարժվել դեպի Էրգիր, զորապետն իր զինակից ընկերների հետ ամբողջ օրը զբաղված էր իր զինվորների մարզումով։ Խրախուսում էր, ռազմական ոգի ներշնչում յուրաքանչյուր զինվորի և անգամ իր բարոյախոսական խրատներով ոգևորում, բարձրացնում մարտիկների բարոյական մակարդակը։ Ինչպես մարզանքների ժամերին, այնպես էլ հան-

գրստի պահին Անդրանիկի հանկարծակի երևալը անանկարագրելի խանդավառություն էր առաջացնում թե՛ իր երկարամյա զինակից ընկերների և թե՛ ռազմիկների շարքերում։ Սովորական պաշտոնական «Ողջո՛ւյն քաջաց, ողջո՛ւյն քաջին» բարևներից հետո օդը թնդում էր որոտընդոստ աղաղակներով. «Կեցցե՛ մեր ազգային հերոսը իր ընկերներով», որին անմիջապես հետևում էին երկարատև ուռաները։ Զարմանալի հիշողություն ուներ Անդրանիկը։ Մի անգամ տեսած մարդուն այլևս չէր մոռանա, հիշում էր ոչ միայն դեմքը, այլև անունը, հայրանունը, ազգանունը և նույնիսկ նրա որտեղացի լինելը և նման շատ մանրամասնություններ։ Նրա ուշադրությունից չէր վրիպում յուրաքանչյուր զինվորը յուր առօրյա կարիքներով։ Ասեղն ու թելը, հելունն ու սրիմը և դանակը համարում էր անհրաժեշտություն ամեն մի զինվորի համար։ Վայ նրան, որի ձին, ձիու թամբն ու զարդարանքը կեղտոտ էր, կամ պատռված, ձին չէր փայլում մաքրությունից և աշխուժությունից, կամ թե հարկավոր չափով հոգ չէր տանում դեպի յուր զենքերը։ Նույնն էր պահանջում նա նաև յուր զինակից ընկերներից։ Հաճախ դիմում էր իր ռազմիկներին. «Զավակնե՛րս, թույլ տվեք համոզվելու, որ ձեզնից յուրաքանչյուրը կամովին սպառազինվել, կանգնել է մեր ազգային այս դրոշի տակ ընդդեմ մեր դարավոր ոխերիմ թշնամի Թուրքիային՝ լցված մեր սրբազան հայրենիքի ազատության գաղափարի վեհ գիտակցությամբ։ Վայ այն ազգին, որ զուրկ է սեփական հայրենիքեն, տունեն ու տեղեն, որի ժառանգները ազատ չեն և կտառապին իրենց պապենական հողին վրա օտար հրոսակներու լծին տակ։ Թե՛ համայն ազգության և թե՛ անհատի համար չկա ավելի ստորացուցիչ հանգամանք, քան յուր հայրենի տանը օտարին ճորտ ըլլալը։ Թուրքիան յուր բարբարոսությամբ ընդունակություններ զուրկ գտնվեցավ հարգել հայ ժողովրդի մարդկային տարրական պահանջներն ու իրավունքները։ Թուրքական պետության ղեկավար-

ները տհաս գտնվեցան ըմբռնելու, որ, հարգելով մեր ազգային նվազագույն պահանջները, հարգած կըլլան նաև Թուրք պետականության և Թուրք աշխատավոր ժողովրդի անմիջական շահերը։ Մենք բնավ նպատակ չունինք կոտորելու, ավերելու և իսպառ բնաջնջելու Թուրքիան։ Ո՛չ, մենք միայն կձգտենք վերականգնելու մեր ազգային ոտնահարված իրավունքները, մեր գերի հայրենիքի հողին վրա Թուրքական ծանր լծից և մեր բարի դրացիական հարաբերություններով ուսուցել ու համոզել Թուրք ժողովրդին և առավել ևս նրա պետական գործիչներին խաղաղ, շինարար, ստեղծագործ կյանքի առավելություններն ու քաղցրությունը երկու դրկից ժողովուրդներու միջև։ Ամեն մի ազգ, ամեն մի ժողովուրդ իրավունք ունի ապրելու ազատ, անկաշկանդ յուր հայրենի հողին վրա, անոր պայծառ արևուն տակ և վայելելու յուր ճակատի քրտինքով ձեռք բերած վաստակը՝ հալալ հացը, բայց ոչ երբեք բռնի կերպով զավթելու օտարի հողը, կայքն ու գույքը, բռնաբարելու անոր ժողովուրդի մարդկային տարրական իրավունքները և շահատակելու վերջինիս վաստակը։ Նախապես կըզգուշացնեմ ամենուդ՝ կողոպուտով զբաղվող, կանանց և դեռատի աղջիկներու բռնաբարությամբ հափըշտակված մարտիկները, ինչպես նաև նոքա, որոնք գազանաբար իրենց սուրը կմերկացնեն թըշնամու մանուկներուն, ծերերուն և առհասարակ անզեն խաղաղ ազգաբնակության վրա, նոքա իրավունք չունին մնալու մեր շարքերում։ Մենք աշխարհի զանազան անկյուններեն եկել հավաքվել ենք մեր աս փոզփոզուն դրոշակի տակ լոկ մեր գերի հայրենիքի ազատության, բայց ոչ երբեք բարբարոսություններու համար։ Այդ վայրենաբարո, ստորաքարշ մարդուն անվայել վարկաբեկ դերը մենք ամենայն ուրախությամբ կզիջենք մեր թշնամուն, թող նա յուր հայրենիքի և ազգության ճակատը մրոտե իսկական մարդուն անվայել աղտոտություններով, իսկ մենք երբեք չենք նախանձի անոր... Վայ այն բանակին, որի ուշքն

ու միտքը կլանված կըլլա կողոպուտով, որի շարքերում բարոյապես լքված ու այլասերված տարրեր կըլլան, վասնզի այդպիսիները իսկական ռազմիկին անվայել վարք ու բարքով կաղտոտեն նաև ամբողջ բանակի անունը և կնսեմացնեն անոր պատիվն ու կոչումը»։

Անդրանիկը ընդունակ էր նաև մասնակցելու լուրջ բանակռիվների։ Այդ պատմական շարժումներին անմիջական մասնակցություն ուներ նաև հայության առաջադեմ խավերին հանրածանոթ մի այլ պատկառելի դեմք՝ բժիշկ Հակոբ Զավրևը, որի անունը որպես «Հայկական հարցի» ականավոր գործչի հայտնի էր։ Այդ մանկան պես դյուրահավատ եռանդով լեցուն հայը, կուրացած յուր ազգային լավատեսությամբ, իր հոգեկան խորունկ ապրումներով հայ ժողովրդի անեղը վշտի կատարյալ մարմնացումն էր։ Քանի դեռ Ղալասարում էինք և դեռ ռազմական գործողությունները չէին սկսվել, ամեն երեկո համեստ ընթրիքից հետո սկսվում էր բանավեճ գլխավորապես Անդրանիկի և Զավրևի միջև, որը սովորաբար սկզբում կրում էր խաղաղ զրույցի բնույթ, իսկ վերջն էլ թեև հետզհետե բորբոքվում էր, բայց բարեբախտաբար միշտ էլ վերջանում էր առանց լուրջ միջադեպերի։ Հաճախ Անդրանիկը կդառնար Զավրևին. «Դոքտոր, խաբվել եք դուք, խաբել եք զիս, իսկ ես ալ ձեզ հետ միասին մեր տղայամտությամբ խաբել ենք նաև մեր ազգին»։

— Սիրելի Անդրանիկ,— կպատասխաներ Զավրևը իր կոտրված հայերենով կամ ավելի շուտ թարգմանի միջոցով,— գործի սկզբից դեռ վաղ է վճռական հետևություններ անել, մի քիչ էլ համբերություն է պետք...

— Բե, աղբարս, ալ ինչ համբերել, քանի կատարված սխալի տխուր հետևանքը սկզբեն է ակներև։ Կովկասյան ճակատի ռուսական բանակներու թիվը, սկսած Բաթումեն մինչև Քիրմանշահ, երկու

հարյուր հազարեն դենը չի անցնի մինչդեռ հայության միայն Արևելյան հատվածը (չհաշված կամավորական խմբերու թիվը) 260 000 սվինից բաղկացած բանակ է՝ տված ռուսական ցարին, ուժ մը, որով միանգամայն դյուրին կըլլար փշրել և խուճապի մատնել մեր դեմ կանգնած Կովկասյան ճակատի թուրքական բանակներուն և առանց խոշոր զոհեր տալու շտապ կերպով ազատելու անոր տիրապետությունեն Արևմտյան Հայաստանի երկրամասի մեծագույն մասը, եթե միայն հայ զինվորները հայ հրամանատարական կազմի հետ փոխանակ ուղարկելու Արևմտյան ռազմաբեմ ավստրո-գերմանական բանակներու դեմ մարտնչելու, ուղարկվեր Կովկասյան ճակատ Թուրքիո դեմ։ Ատկե զատ, մենք առանց հապաղելու ոչ միայն ամեն կողմից կաճապարեինք էրգիր մտնել նաև կանխելու հավանական կոտորումը մեր անզեն եղբայրներու, այլև անկասկած կհաջողվեր մեզ կարճ ժամանակվան մեջ կրկնապատկել մեր բանակի թիվը՝ ազատագրված վայրերում զենքի ընդունակ մեր երիտասարդներով և նույնիսկ հասունացած աղջիկներով և կանանցով։

— Սիրելի Անդրանի՛կ, գոնե ես այդչափ հոռետես չեմ այդ խնդրում...

— Բե, ծերուկ, ալ համբերությունս հատեցիր քո լավատեսությամբ։ Ասա, ի՞նչ հիմք ունիս այդչափ լավատես ըլլալու այդ ճակատագրական հարցում, ասա... եթե իրոք ռուս պետությունը տրամադրած է ազատագրել Հայաստանի արևմտյան վիլայեթները թուրքական անարգ լուծեն, ալ ի՞նչ հարկ կար հայ բանակայիններին ուղարկել Արևմտյան ճակատ։ Մինթե այդ հզոր պետությունը իր միլիոնավոր զինվորներով և սպաներով չէր կրնար յոլա գնալ առանց հայ բանակայինների համեմատաբար չնչին ուժի։

— Ուրեմն, սիրելի Անդրանիկ, դու համոզված ես, որ ցարական կառավարությունը խաբել է մեզ...

— Անկասկած խաբել է, հապա չի՞ խաբել։ Եթե այդ խաղը վարագուրված չէ խարդավանքի քողով,

հապա ի՞նչ կարիք կա Կովկասյան ճակատը փոխանակ հայկական զորքերով ամրացնելու, կանգ չառնելով նյութական ահագին ծախսերու առջև ամրացնել ռուսական ուժերով։ Բացի այդ ցարը կվախենա նաև հեղափոխություն, որը հավանականություն դուրս չէ։ Իսկ դաշնակցության արևելյան բյուրոն չի կռահել խորհելու ասանկ կարևոր խնդիրներու շուրջը...

— Գոնե մեր վարած բանակցությունները Ռուսիո արտաքին գործոց նախարար Սազոնովի, ինչպես նաև Դումայի նախագահ Ռոդձիանկոյի, Փարիզի ռուսական հյուպատոս Իզվոլսկու և Պոլսի ռուսական հյուպատոս Գիրսի, մասամբ էլ Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի պետական ու հասարակական գործիչների հետ, հիմք են տալիս հավատալու, որ մենք հաղթանակով պիտի դուրս գանք սկսված խաղից, եթե միայն հանկարծ հարկադրված չլինենք կանգ առնելու միանգամայն անսպասելի անակնկալ դեպքերի առջև...

— Դոքտո՛ր, նվաստս դիվանագետ ըլլալու հավակնություն չունի, ես լոկ սոսկական զինվոր մըն եմ իմ խեղճ ազգի, սակայն հակառակ քո, Ա. Ահարոնյանի, Մ. Վարանդյանի և այլոց կարծիքներու, տրամադիր եմ խորհելու հակառակը, որ առանց մեր այս պատերազմին անմիջական մասնակցությանն ալ, դաշնակից պետությունները կրնան ազատագրել Արևմտյան Հայաստանը Թուրքիայից, եթե միայն, կրկնում եմ, ատիկա կպահանջե անոնց անմիջական շահերը, իսկ եթե ոչ, ապա միանգամայն ապարդյուն են և չափազանց վտանգավոր մեր այսօրվա թափած ջանքերն ու ընդվզումները, առավել ևս, որ մեր ժողովուրդը համարյա թե անզեն է... Ահա իմ կարծիքը...

Գոնե ինձի անհայտ են, թե ովքեր են մեր բարեկամները, բայց ինչպես ամեն մի հայը, անանկ ալ ես հաստատ համոզված եմ, որ բացի ոխերիմ Թուրքիայից մեզ թշնամի են նաև Եվրոպայի խարդախ գաղութարար պետությունները՝ սկսած ցարից մինչև բրիտանական պետությունն ու ԱՄՆ-ը...

Այս զրույցի ընթացքում դրսի պահակներից մեկը ներս մտավ և հայտնեց, որ քրդական տարազով սպառազինված ինչ-որ մի հեծյալ ասում է՝ հայտնեցեք պարոն բժշկին, որ Յուսուփը վերադարձել է Վանից։ Բժիշկը դուրս վազեց և լայն միջանցքում սրտանց ողջագուրվելով հայախոս քուրդ սուրհանդակի հետ, գրկախառնված առաջնորդեց նրան դահլիճ։ Երբ սուրհանդակը ազատվեց բժշկի գրկից, նախ իր հրացանը հենեց պատին, ապա երկյուղածությամբ մոտեցավ փաշային և խոնարհելով իր գլուխը՝ համբուրեց Անդրանիկի աջը և ավելացրեց.

— Փաշա, ի՛մ երես զբո սուրբ ոտքերու տակ, ներիր որ ուշ խասա։— Ապա նույն հաճությամբ բարևվելով նաև սեղանի շուրջը բազմած մյուս անձանց, որոնց նա ճանաչում էր վաղուց, մնաց կանգնած։ Անդրանիկը Յուսուփին այդ շվար վիճակից հանելու նպատակով, բարձրացավ իր աթոռից, համբուրեց նրա ճակատը և բազմեցնելով իր քովի աթոռին, դարձավ նրան.

— Է, տղա՛ս, պատմե տեսնենք ճանապարհին դեպի Վան և վերադարձին փորձանք չպատահե՞ց քեզի, ինչ նորություններ ես բերել Էրգրից, ինչպե՞ս են մերոնք, տեսե՞լ ես անձամբ թուրքական բանակը, որտեղ են նոցա բանակները դիրքավորված, ի՞նչ քանակությամբ, թնդանոթներ ունի՞ն, միայն թուրքե՞ր են թե քրդեր ալ կան անոնց շարքերում... պատմե լսենք...

— Մկա զմին ա՛եկիկ-մեկիկ կպատմեմ ձեզի, փաշա, միայն թե թույլ տաք...

— Պատմե՛, պատմե՛, տղաս, օտար մարդ չկա հոս։

Յուսուփը բարձրացավ աթոռից, նստեց հատակին փռած գորգի վրա և շտապ հանեց ձախ ոտքի չարուխը և դանակի սուր ծայրով սկսեց կտրատել կաշվե կարկատանի փոկերը և, նրա տակից հանելով ծրարված մի նամակ՝ պարզեց Անդրանիկին։ Մինչդեռ Անդ-

բանիկը կբացեր ծրարը, Յուսուփը պատմեց հետևյալը.

— Հեռի ձեր սուրբ երեսեն, դուք ինչպես խուրջինները լցրել էիք մանր-մունր ուլունքներով, հայելիներով, բիլազուկներով, կոճի թելով, ասեղներով և քորոցներով, ծամոնով ու մատնոցներով և ուրիշ այլ բաներով, ես այդ խուրջինը կապեցի իմ ձիու յահարին և խանասորի վրայով ճամփա ելա դեպի Վան։ Երեկոյան դեմ խասնելով Բարդուղիմեոսի վանքին՝ վանախեր չգտա հոն։ Լամուկի մեկը ըսավ՝ գնացել է Բաշկալեն մեռել խորելու։ Ասացի որ էդմալ է աղեկ, ես էլ կերթամ Բաշկալեն, բայց վանքից բավական հեռանալուց հետո ես իմ ձիու գլուխը թեքեցի դեպի աջ, դեպի Զուխա-գյադուկի կողմը և լուսաբացին ապահով մտա Խայոց ձոր (Հայոց ձոր)։ Ձիուս շատ հոգնած ըլլալու պատճառով օր մը հանգստացա խայու մը տան և մյուս օրը առտուն ճամփա ելա ու երեկոյան դեմ խասա Վարագ և գիշերեցի վանախոր մոտ։ Առտուն կանուխ ձիս ու հրացանս թողի վանախոր մոտ, ինքս ոտքով ճամփա ելա դեպի քաղաք։ Դե հեռի ձեր սուրբ երեսեն, դուք զմմենդ ալ լավ կճանչնաք Այգեստանում գտնվող խաչ-փողանի դայֆեխանեն։ Հենց նոր էի մոտեցել այդ դայֆեխանեին, երբ հանդիպեցի խորոխպեր Գրիգորին (Գրիգոր Բուլղարացի)։ Էլ ինչ երկարացնեմ, Բուլղարացու խետ գացինք մի խայու տուն, որտեղ ձեր նամակ տվի խորոխպոր։ Մյուս օրը մութն ընկնելուն պես գիս տարան մի ուրիշ տուն, որտեղ տեսա պարոն Արամին, Իշխանին և Վռամյանին։ Աստված կյանք տա, մարդիկ գիս ընդունեցին խալալ ախպոր պես և մյուս օրը առտուն կանուխ լավ ճամփա դրին։ Իմ Վանից դուրս գալու օրը պարոն Արամ պատվիրեց գիս նախ գնալ Արճկա լճի մոտով դեպի Սարայ-Հասբստան, իմանալու թուրք զորքի տեղն ու քանակը և ապա Սարայից անցնել Կոտոլ, իսկ այնտեղից գնալ դեպի Բաշկալա և ապա խանասորի վրայով իջնել Սալմաստ։ Ինչպես պատվիրել էր Արամը, այնպես էլ կատարեցի։ Խոշաբա սարերի գյուղերում

Թուրքի զորքին թիվ ու խամրանք չկար, ամա Բաշ-Կալանում նրանց թիվը քիչ է։ Նրանց թոփեր լծված գոմեշներով սելերի վրա դրված է։ Ռուսներու պես ուժեղ ձիեր չունին։ Ավազակ Սմկոն էլ քրդերից տասը խազարի չափ ձիավորներով միացել է թուրք բանակին և արդեն սկսել է թալանել բոլոր քրիստոնյա բնակիչներին։ Ով կարողանում է փախչել, փախչում է դեպի Վան կամ դեպի Խոյի թարափ։ Թուրք զորքը խաց չունի. ցորենն առատ է, կուտի աղանձ, փոխինդ ու բուլղուր։ Միս շատ ունին։ Բոլոր անցած գյուղերում մեր կաճեններ և խայ կանայք կաուրմա է որ կպատրաստեն թուրք զորքի համար։ Թուրքեր և քրդեր կթալանեն խայու, ասորիներու և չխուդներու ունեցած-չունեցածը՝ ցորեն, գարի, կորեկ, վարսակ ու ոսպ, լոբի, խորած ժաժիկ ու պանիր, յուղ, անասուններ և սիրուն աղջիկներ... Թուրք զորքի խագուստն էլ աղեկ չէ։ Նրանցից շատերը համարյա թե կիսամերկ են, կոշիկներու փոխարեն չարուխներ են խագած։ Էլ ինչ պատմեմ, ահա իմ տեսածն ու լսածը, դրանից ավելին ոչինչ պատմել չեմ կարող, մնացածն էլ պարոն Արամ գրած կլինի, կարդացեք և խաբկցեք...

Յուսուփի թուրքական բանակի մասին հաղորդածները միանգամայն համապատասխանում էին մեր հետախուզական խմբի պետ Կայծակ Ավոյի հաղորդած տեղեկություններին։ Այդ միջոցին դահլիճում Անդրանիկից և Զավրևից բացի մնացել էին Սեպուհը, Սմբատը, Կայծակ Ավոն, Սալմաստի լիազոր Սամսոն-խան Թադևոսյանը, Արտաշես Սուճյանը, Գրիգոր Ամիրյանը, Յուսուփը և տողերիս հեղինակը։ Նամակի ընթերցումը հանձնարարված էր Ամիրյանին. այն ստորագրված էր Արամի, Իշխանի և Վռամյանի կողմից։ Հայտնում էին, որ իրենք այժմ ուշիուշով հետևում են բոլոր իրադարձություններին և պատրաստվում վտանգի պարագային ապստամբել թուրք իշխանության դեմ։ Նրանց գրած նամակի բովանդակությունից մենք համոզվեցինք, որ նոքա, հանուն պատրաստվելիք ապստամբության լիակատար

հաղթանակի, այժմեն գիշեր ու ցերեկ զբաղված են այդ ուղղությամբ նախապատրաստական լուրջ և անդուլ աշխատանքներով և կրկին անգամ ճգնում էին համոզելու մեզ, որ անպայման հաղթանակով պիտի ելնեն այդ դրությունից։ Միաժամանակ Վանից ստացած նամակի հեղինակները մեծ ցավով էին խոսում Կարնո, Բաղեշի և առևտրաշահ քաղաքների հայության մասին, որոնք, չկամենալով լրջորեն ըմբռնել իրերի դրությունը, հակառակ Տարոնո և Սասունի հայ աղգաբնակչության, վճռել են միանգամայն չեզոք մնալ և զենքի չդիմել, անգամ այն դեպքում, երբ թշնամին սկսեր յուր արյունարբու խժդժությունները անզեն հայերի դեմ։ Նամակի հեղինակները, կանխատեսելով Կ. Պոլսում և Թուրքիայի այլ նշանավոր քաղաքներում ապրող և գործող հայ մտավորականության գլխավին բնաջնջման ահավոր վտանգի հնարավորությունը, առանձին ցավով էին նկարագրում նրանց անել վիճակը։ Եղրափակելով իրենց նամակը, նոքա նա՛խ խնդրում էին շարունակել կենդանի կապը իրենց հետ, երկրորդ՝ խուսափել նոր սխալներ գործելուց և ցավով ընդգծում, որ մինչև այժմ գրավված չէ Վանը ռուսական բանակի կողմից և, որ գլխավորն է՝ արդարացիորեն պահանջում էին կատարած հանցանքը մեղմացնելու համար կանգ չառնել ոչ մի պատահարի և դժվարության առջև՝ ժամ առաջ փութացնելու ռուսական բանակի մուտքը առաջին հերթին Կարին և Վան։

Նամակի բովանդակությունն ընդհանուր առմամբ հուսահատական էր։ Այն չափազանց տխուր տպավորություն թողեց բոլորի վրա։ Ամեն ինչ պարզ էր... Բոլորը համակվել էին միայն մի ցանկությամբ՝ շտապել օր առաջ փշրելու մեր դեմ դիրքավորված թուրքական բանակը և շտապ մտնել Էրգիր։

Ուրիշ ելք չկար մեզ համար, օրվա միակ նշանաբանը այդ էր. հառա՛ջ, դեպի՛ Էրգիր...

Նույն օրը երեկոյան դեմ, առանց ժամանակ կորցնելու, Անդրանիկը շտապ իր գնդի հրամանատարական կազմին հրավիրեց ժողովի, որին մասնակցում էին նույնիսկ հիսնապետներն ու տասնապետները։ Նա հավաքվածներին դիմեց հետևյալ հակիրճ բառերով. «Սիրելինե՛ր, իմ զինակից քաջե՛ր, վաղը մեր գունդը պիտի լինի Դիլիմանում, ուր մենք կհանդիպենք ռուսական բանակին։ Հրամայում եմ այս գիշեր ժամը 4-ին կազմ և պատրաստ կենտրոնանալ գյուղի հյուսիսային կողմի բաց դաշտում՝ շարժվելու դեպի Դիլիման։ Բարի գիշեր»։

Հաջորդ օրը, մոտավորապես ժամը 12-ին, մեր գունդը հասավ Դիլիմանի մոտ գտնվող հայկական մի փոքրիկ գյուղ։ Զորավար Նազարբեկյանի դիվիզիան միայն հաջորդ օրը հասավ մեզ։ Զորավարը, անկախ իր հոգնածությունից, հենց նույն օրը կեսօրից հետո հրավիրեց Անդրանիկին, նրա զինակից ընկերներին։ Տեսակցությանը ներկա էր նաև Զավրեը։ Նազարբեկյանին առաջին անգամն էր վիճակվում հանդիպել Անդրանիկին։ Տեսարանը խիստ հուզիչ էր։ Վիթխարի ծերունին գրկախառնվեց բոլորի հետ, և անզոր լինելով թաքցնել իր խոշոր աչքերից գլորվող արցունքի կաթիլները, շտապեց աչքերը ցամաքեցնել թաշկինակով։ Ճակատագրի բերումով հայ ժողովրդի պատմությունը հարկադրել էր Նազարբեկյանին և նրա նման այլ հայ մեծանուն զինվորականներին օտար պետությունների բանակների զորավարներ լինելու և ոչ թե հայրենի պետության և նրա ժողովրդական բանակի։ Միսը մսից, արյունը ոսկորից, բայց չէ՞ որ նա ևս հայ է, չէ որ նրան ևս ծնել, սնել, դաստիարակել, մեծացրել է հայ մարդը, չէ՞ որ նրա երակների մեջ ևս հոսում է իր նախնիների արյունը...

Պաշտոնական կարճատև խոսակցության ընթացքում զորավարը հայտնեց, որ Թուրքիան դեռ պաշտոնապես պատերազմ չի հայտարարել Ռուսաստա-

նին, սակայն կասկածից վեր է, որ մոտ օրերս կհայտարարի, բայց քանի որ այդպիսի փաստ դեռ գոյություն չունի, ուստի մենք ստիպված ենք առայժմ չդիմել նախահարձակման, մինչև Կովկասյան ռազմաբեմի գերագույն հրամանատարության պաշտոնական հրամանի ստանալը։

— Ձե՛րդ գերազանցություն, մեծ եղբա՛յր, այդ ձևի դիվանագիտական խաղը հասկանալի է ամենքիս, բայց չէ՞ որ այդ խաղեն մեծապես կվնասվի մեր ազգը։ Եթե ցարական իշխանությունը ցանկություն կհայտնե ազատել Արևմտյան Հայաստանը և անոր մեջ ապրող հայությանը թուրքական անարգ յաթաղանեն, ալ ինչ հարկ կա այդչափ բծախնդիր ըլլալու ու սպանիչ դանդաղկոտության...

Զորավար Նազարբեկյանը հարկադրված էր խոստովանելու, որ ինքն այդ կապակցությամբ վճռական ոչինչ ասել չի կարող, ինքը լոկ զինվորական է և, ցավոք, անտեղյակ դիվանագիտական գաղտնիքներին, առավել ևս, երբ խնդիրը վերաբերում է Հայաստանին։ Ըստ երևույթին, շարունակում է գեներալը, գոյություն ունեն այնպիսի հարգելի պատճառներ, որոնք առայժմ արգելք են հանդիսանում ռուսական բանակին նախահարձակման դիմելու։

Անդրանիկը, բացելով քարտեզը, զորավար Նազարբեկյանին ասաց.

— Ներեցե՛ք, Ձերդ գերազանցությո՛ւն, ձեր բոլոր առարկություններն ու պատճառաբանությունները անզոր են արդարացնելու ռուսական բանակի դանդաղկոտությունը և վերջնականապես համոզելու ինձ, որ նվաստս սխալված է իր համոզմունքներուն մեջ։ Անկասկած, իմ ունեցած տեսակետը այդ կնճռոտ հարցին շուրջը կարելի է փոխել միմիայն ռազմական անհապաղ գործողությունների վերսկսումով և հաղթանակներով ընդդեմ մեր դարավոր արյունակզակ թշնամու։ Ուրեմն այդպես, վաղը ես իմ փոքրաթիվ ուժերով պիտի առաջ շարժվեմ։ Առաջին կռիվը պիտի տեղի ունենա Խոշարի սարերում։ Հաղ-

թանակի պարագային ես ուրախ կըլլամ տեսնվելու ձեր դիվիզիայի հետ գոնե Կոթուրում։ Միակ խնդիրս է 2—3 էսկադրոն կողակներ ուղարկել՝ բռնելու Խանասորի կիրճը, որպեսզի գրավեն այդ գծի վրա դիրքավորված թշնամու համեմատաբար փոքրաթիվ ուժերու ուշադրությունը՝ արգելելու անոնց հարձակվելու իմ ձախ թևի վրա։ Նահանջի մասին բնավ չխորհեք, մեռնել կա, բայց նահանջել՝ երբեք։ Գործի հաջողության դեպքում մեր երկրորդ ճակատամարտը տեղի կունենա Հասբստանի և Սարայի մոտերքը կամ թե Արճակի լճի մոտերքում, իսկ այնտեղից առանց հապաղելու կխիզախենք դեպի Վան. միայն թե ռուսական բանակի բարի կամքը ըլլա քիչ մը մեզ օգնելու, իսկ եթե ոչ, ապա, անշուշտ, այդ ամենը մեզ համար կրնա ունենալ աղետալի հետևանք...

Այդ խոսակցության պարագային Զավրևի դեմքը որպես անմիջական թարգմանի և մանավանդ չափազանց պատասխանատու անձի մե՛րթ մռայլվում էր, մե՛րթ էլ հուզմունքից կարմրում ու սփրթնում։ Նա ամեն կերպ ճգնում էր համոզել Անդրանիկին, որ վերջինս այդ տոնով չխոսի գեներալի հետ, սակայն անզոր էր տարհամոզել նրան իր համոզմունքների մեջ՝ փոքր-ինչ զիջելու Նազարբեկյանի առաջարկին։

— Ախպարս, վերջապես ես իմ հարազատ եղբորս հետ կխոսիմ, օտարի հետ չէ, որ վախենամ, թե նա կնեղանա ինձմե։

Նազարբեկյանը ժպտաց և շիկնեց... Եվ մեզ համար բնավ անսպասելի չէր, երբ Անդրանիկը, վերջացնելով իր խոսքը, անմիջապես ոտքի ելնելով, իր ձեռքը պարզեց զորավարին և, շնորհակալություն հայտնելով նրան, փորձեց շտապ թողնել վրանը։ Բայց վերջինս ելնելով իր բազկաթոռից, շտապ բռնեց Անդրանիկի աջը և ասաց.

—Մի շտապե՛ք, դեռ պիտի ճաշենք։

Անդրանիկը, թոթվելով Նազարբեկյանի աջը, պատասխանեց.

— Նվաստս ուրախ կըլլա ձեզ տեսնել մեր նա-հապետական համեստ սեղանի շուրջը, և ապա մենք ձեր սեղանի շուրջը... ցտեսություն...

Տեսակցությունը վերջացած էր։ Անդրանիկը դուրս եկավ զորավարի վրանից, նրան հետևեցին իր զինակից ընկերները, քիչ հետո էլ՝ բժիշկ Զավրևը։ Դեռ նոր էինք հասել մեր ճամբարին, երբ Անդրանիկին ներկայացավ զորավար Նազարբեկյանի կրտսեր համհարզներից մեկը՝ կոզակի համազգեստով, հեծած յուր մուգ կարմիր եռանդուն ձիուն։ Նա դեռ չհասած Անդրանիկի վրանին, 25—30 քայլ հեռավորության վրա շտապ վար ցատկելով իր նժույգից, ներկայացավ պահակին։ Բժիշկ Զավրևը լսելով ռուսաց լեզվով խոսակցություն, անմիջապես դուրս ելավ վրանից և կոզակ սպային հրավիրեց ներս։ Սպան, մտնելով Անդրանիկի վրանը, զինվորականին վայել պատշաճ կարգապահությամբ ողջունեց Անդրանիկին և նրան մեկնեց մի փակ ծրար։

Անդրանիկը վերցրեց ծրարը և հանձնեց այն Զավրևին ընթերցելու և ապա հրավիրեց սպային նստել, սկսեց ուշիուշով դիտել նրա դեմքը և, դառնալով բժշկին, խնդրեց հարցնել սպային.

— Մի՞թե նա ռուս է...

Բժիշկ Զավրևը մի պահ զարմացավ Անդրանիկի տարօրինակ հարցից և իր հերթին սկսեց զննել սպայի դեմքը, որը կատարյալ հայի դեմք էր, ապա դառնալով նրան, հարցրեց ռուսերեն լեզվով.

— Ասացեք, մի՞թե դուք ռուս չեք։

Սպան ժպտալով պատասխանեց.

— Դուք չեք սխալվում, պարոն բժիշկ, իմ մայրը հայուհի է, անունը Զմրուխտ, ես նրա հինգերորդ որդին եմ, նա դեռ, փառք աստծո, կենդանի է։ Իմ հայրը նրան կնության է առել 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմին, Ալաշկերտի հովտում, երբ նա որպես ռուսական բանակի շարքային կոզակ գեներալ Տեր-Ղուկասովի բանակում կռվել է թուրքերի դեմ։ Ես հավասարապես և՛ հայ եմ, և՛ ռուս, սիրում եմ ամեն մի հայի և ինքնակամ եկել եմ պատերազմ՝

կռվելու իմ մոր հայրենիքի դարավոր թշնամու դեմ։ Մայրս ինձ Սրքե է կոչում. թեպետ իմ անունը Սերգեյ է...

Բժշկապետը թարգմանեց Անդրանիկին կոզակ սպայի հուզիչ պատասխանը, որն իր արծվային հայացքը կրկին սևեռեց սպայի դեմքին և, բարձրանալով նստած տեղից, իր գիրկն առավ երիտասարդ սպային ու ջերմորեն համբուրեց հայ մորից ծնված ու սնված ռուս կոզակ սպային։ Հրաժեշտի պահին Սրբքեն ասաց Անդրանիկին.

— Պապաշա, դեռ մենք շատ հանդիպումներ կունենանք։

Սրքեի մեկնելուց հետո Զավրևը թարգմանեց գեներալ Նազարբեկյանի սեղմ գրության բովանդակությունը. «Եղբայրդ իմ Անդրանիկ,— գրում էր հայ զորավարը,— մի շտապիր. վճռել եմ վաղ առավոտյան կրկին տեսնվել քեզ հետ, մեր ազգի դժբախտ վիճակը ինձ ևս հանգիստ չի տալիս։ Քո՝ Նազարբեկյան»։

Լսելով հայ զորավարի նամակի հակիրճ բովանդակությունը, Անդրանիկը անմիջապես հրամայեց մեզ ծանոթ թուրքական բանակի նախկին փոխգնդապետ Գրիգոր Ամիրյանին երեք-չորս քաջամարտիկ հեծյալների հետ վաղը առավոտյան մեկնել զորավար Նազարբեկյանին ուղեկցելու մեզ մոտ։ Հաջորդ օրը առավոտյան մոտավորապես ժամը 11-ին զորավար Նազարբեկյանը, շրջապատված Անդրանիկի ուղարկած հեծյալներով, որի մեջ էր նաև վերը հիշատակած իր կրտսեր համհարզ Սրքեն, բազմած յուր նժույգին, երևաց մեր գնդի վրանների առջև։

Ճանապարհին գեներալը Ամիրյանի հետ խոսում էր ֆրանսերեն։ Հայ մարտիկները նախապես լսած լինելով հայ զորավարի գալուստի մասին, շտապեցին իրենց սրտաբուխ ուռաներով ու կեցցեներով ողջունել և մեծարել երևելի հային։ Մեր ռազմիկները հայ զորավարին ընդառաջ վազեցին և գրկելով հսկային, ցած բերին ձիուց։ Ծերունի գեներալը, հուզմունքից խոսք չգտնելով փաթաթվեց պատահած

մարտիկին և հայրական գթառատությամբ համբուրեց նրանց՝ հողմից ու արևից պղնձացած առնական դեմքը։

Անդրանիկը յուր ընկերներով բժիշկ Զավրևի հետ մեկտեղ շտապեցին ընդառաջ գնալ Նազարբեկյանին։ Այս անգամ, նրանք մի կողմ թողնելով ընդունված պաշտոնական զինվորական կարգապահությունը, կրկին ողջագուրվեցին ինչպես հարազատ եղբայրներ։ Մտնելով վրան, յուրաքանչյուրը գրավեց յուր տեղը և փոքր լռությունից հետո առաջինը խոսեց ինքը՝ գեներալ Նազարբեկյանը։

— Ես ցանկանում եմ շարունակել,— սկսեց նա,— մեր երեկվա ընդհատված խոսակցությունը։ Վերջապես հասկացեք,— ավելացրեց նա բոլորովին հանգիստ և անվրդով ձայնով,— որ թեև պաշտոնապես ռուսական բանակի սպա եմ ես, բայց չէ որ ծագումով հայ եմ։ Բայց ցավոք չափազանց թերուս եմ իմ ազգի թե՛ անցյալ պատմության և թե՛ նրա լեզվին ու մշակույթին։ Ես միայն Զավրևի օժանդակությամբ նոր եմ սկսել քավել իմ մեղքերը այդ ասպարեզում։ Խորապես ցավում եմ, որ իմ ազգը այսօր հասել է այսպիսի ծանր վիճակի։ Հիրավի, ռուսական բանակը շատ է դանդաղում, բայց հավատացեք, որ դրա մեջ մեղք չունի ո՛չ մեր բռնած ռազմագծի կորպուսի հրամանատար գեներալ-լեյտենանտ Զեռնոզուբովը և ո՛չ էլ իսկ՝ Կովկասյան ճակատի գերագույն հրամանատարությունը։ Որպեսզի խուսափած լինենք ավելորդ անախորժություններից, ես կրկին կխնդրեմ պարոն Անդրանիկին չհակառակել ինձ և առայժմ մի քանի օրով ևս հետաձգել նախահարձակման անցնելը, մինչև կլսենք Թուրքիա՝ Ռուսաստանին պատերազմ հայտարարելու պաշտոնական լուրը, մանավանդ որ առանց ռուսական բանակի անմիջական օգնության հազիվ թե ձեր նախահարձակումը պսակվի հաղթությամբ մեր դեմ դիրքավորված թշնամու անհամեմատ գերակշռող ուժերի դեմ։ Ես հասկանում եմ ձեզ ավելի, քան դուք կարող եք այդ երևակայել... Բայց նորից եմ կրկ-

նում՝ ես հայ եմ, հայ մոր կաթով եմ սնվել ու մեծացել, դե ասացե՛ք, ինչո՞վ կարող եմ օգտակար լինել իմ հայրենիքի պաշտպան զավակներին, որ ես մերժում եմ նրանց, ասացե՛ք...

— Ո՛չ, գեներալ,— պատասխանեց Անդրանիկը,— ձեր սրտառուչ խոսքերը անզոր են բուժելու մեր վերքերը, որոնեցեք այլ ելք, այլ հնար, որ իրավունքության մեջ հուզումնալից խոսքերը գեթ որոշ չափով ի վիճակի ըլլան սպեղանի դառնալու մեր վերքերին։ Ես երեկ հայտնեցի ձեզ իմ միտքը։ Իմ վճիռը մնում է անխախտ։ Ես այլևս համբերել չեմ կրնար, այս գիշեր լուսաբացին իմ փոքրաթիվ ուժերով պիտի շարժվեմ դեպի Վան, հուսալով, որ դուք ալ ձեր հնարամտությամբ ելք կգտնեք արդարանալու ռուսական հրամանատարության առջև մեր առաջխաղացման ու նախահարձակման կապակցությամբ։ Ով գիտե, թերևս գեթ այս ձևով հաջողվի մեզ շարժման մեջ դնել նաև ձեր հրամանատարության տակ գտնվող դիվիզիային։

Երբ Անդրանիկը վերջացրեց յուր խոսքը, գեներալը մի քանի վայրկյան խորասուզվեց իր մտքերի մեջ։ Կարծես թե նա մաքառելիս լիներ յուր խոհերի հակամարտության դեմ, երբ հանկարծ այդ վաթսունին մոտ վիթխարի կազմվածքով առնական հայի մռայլ դեմքը պայծառացավ, փայլատակեցին նրա խոշոր աչքերը և, դառնալով բոլորին, ասաց.

— Ըստ երևույթին ես անզոր եմ համոզել ձեզ. դե ի՞նչ արած, սկսեք, ես ձեզնից հետ չեմ մնա։ Բայց նախազգուշացնում եմ, բարձր պահեք ձեր նախնիների անմոռաց քաջերի անունները։ Կկռվենք ինչպես առյուծներ, ես միշտ ձեզ հետ կլինեմ։

Այս ասելով գեներալը փորձեց ոտքի ելնել, բայց Անդրանիկը բռնեց նրա թևից և խնդրեց մնալ ճաշին, որն անցավ սրտառուչ մթնոլորտում։

Այդ օրը, ըստ նախատեսված հրամանի, գունդը ընթրեց սովորականից վաղ։ Գիշերը պարզկա էր, աստղազարդ, կիսալուսինը հանդարտ լողում էր կապուտակ երկնքում։ Այս ամենը մի անբացատրելի

խորհրդավոր տպավորություն էին թողնում դիտողի վրա և տեղիք տալիս բազմաթիվ խոհերի։ Սալմասոտի շրջակա գյուղերի թուրք և պարսիկ ազգաբնակչությունը այդ պահին վայելում էր գիշերային հանգիստը և ասես բնավ տեղյակ չէր և չէր էլ կամենում իմանալ որևէ բան աշխարհի անցուդարձից։

Գիշերվա կեսն էր, ինձ սթափեցրեց գնդի փողի ձայնը։ Կամավորական գունդը արթնացավ քնից։ Նրա մարտիկները, տաք մսապուրով նախաճաշից հետո, դարձած մի սիրտ, մի հոգի, կանգնեցին շարքով՝ սպասելով առաջ շարժվելու հրամանի։ Մեզ ամենքիս համակել էր մի վեհ գաղափար՝ դեպի Էրգիր, և այդ գաղափարը որպես գերզորավիգ մի նյութ դարերից ի վեր ժառանգաբար շաղախված լինելով մեր արյան հետ, սնուցանում էր մեր գիտակցության կենտրոնը, քառապատկում մեր եռանդը՝ կանգ չառնել ոչ մի արգելքի առջև և վաղօրոք հասնել մեր նպատակին— դեպի Էրգի՛ր, դեպի Վա՛ն... Այս հասկացողությունից դուրս այդ օրերին ուրիշ միտք, ուրիշ գաղափար և այլ աշխարհ գոյություն չուներ մեզ համար։ Նա մեր հոգեկան սնունդն էր, մեր գոյության հենակետը, մեր սերը, մեր հույսն ու հավատը, մեր ձգտումների և գաղափարների կիզակետը, որոնք սերված էին մեր հոգում որպես սրբազան ժառանգություն մեր նախնիներից։

Ահա և ինքը, ազգային հերոս Անդրանիկը իր անձնակազմով, բազմած յուր գեղեցիկ, արծաթագույն նժույգին, որին նա կոչում էր Առյուծ։ Երբ նա ընդհուպ մոտեցավ իր գնդի շարքերին, սանձելով իր նժույգը, դիմեց մեզ հետևյալ խոսքերով. «Ողջո՛ւյն ձեզ, սիրելի հայրենակիցներ և զինակից ընկերներ, սպասելով ռուսական բանակի նախահարձակմանը, մեր համբերությունը հատավ։ Ճիշտ է, անոնք վերջապես եկան, բայց առանց ռազմական գործողություններ սկսելու պատշաճ հրամանի։ Ձեզ հայտնի պատճառներով և ձեր անմիջական ցանկությամբ ես վճռեցի դիմելու նախահարձակման, թերևս այս ձևով կարողանանք շարժել ռուս հրամանատա-

թության քար անտարբերությունը մեզ տանջող ցավերու շուրջը, շարժման մեջ դնելու նաև նրա ռազմական ուժը։ Վաղը չէ մյուս օրը մենք նախահարձակ կըլլանք Աղբակի և Շարափխանայի սարերում մեր դեմ դիրքավորված թշնամու դեմ։ Մեր հաղթության պարագային թուրքական զորքը կրնա ի վիճակի ըլլալ երկրորդ անգամ կռվի բռնվելու մեզ հետ միայն Սարայ-Հասբստանի լեռներում կամ թե Արճկա լիճը եզերող լեռներում։ Թշնամին յուր ուժերով մի քանի անգամ կգերազանցե մեր ուժերին։ Բացի թուրքական կանոնավոր զորքեն մեր դեմ պիտի կռվե նաև քրդական անկանոն հեծելազորը, որոնց, ինչպես դուք գիտեք, Թուրքիայում կոչում են համիդիե։ Թող այս հանգամանքները մազաչափ անգամ հուսահատության և վարանումներու մեջ չձգեն ձեզ։ Մեր շարքերում կասկածամիտներ և հուսահատներ չիպիտի ըլլան։ Մենք գնում ենք հաղթելու և միայն հաղթելու։ Պարտություն ըսած բառը այժմեն իսկ պիտի դուրս վանենք ոչ միայն մեր միտքեն, այլև մեր մայրենի լեզվեն։ Թշնամու բանակի գերազանց քանակը չիպիտի վարանե մեզ։ Քանակը չէ միայն, որ կապահովե հաղթանակը, այլև ռազմիկի գիտակցությունը, անոր կամքի ուժն ու կորովը և կռվի նպատակը։ Մեր նախնիները իրենց նվազ ուժերով հաճախ են խուճապի մատնել իրենց թշնամիներու թվով գերազանց բանակներուն։ Հարգենք անոնց անմեռ հիշատակը... Հանուն մեր գերի հայրենիքի սրբազան ազատության ապացուցենք, որ մենք մեր քաջարի նախնիներու արժանավոր ժառանգներն ենք։

Կաղաչեմ ձեզ ճակատամարտի պարագային զուր տեղը, աննպատակ հրացան չպարպեք երբեք։ Աշխատեցեք ձեր ամեն մի գնդակը հասցնել ցանկալի նպատակի։ Թշնամու վաշտերու համառ խիզախումը դեպի ձեր դիրքերը թող պատճառ չըլլա այդ պահին անդադար կրակի միջոցով փախուստի մատնելու նրան, առանց անոր շարքերեն շատերին գետնին տապալելու։ Այդպիսի դեպքերում դարան մտած վագրի համբերությամբ սպասեցեք մինչև թշնամին հասնի

այնպիսի մոտիկ տարածության, որպեսզի ձեր առաջին համազարկերեն նոսրանա անոր առաջապահ շարքերը և խուճապ առաջացնե անոնց հետևող կրովողների շարքերում։ Լավ իմացեք, մեր առաջին ճակատամարտի հաղթանակը վճռական նշանակություն պիտի ունենա նաև մեր սպասելիք հետագա ճակատամարտերու լիակատար հաղթանակի համար։

Ձեր հոգուն մատաղ, ձեր արևուն մեռնիմ, սիրեցեք միմյանց այնպես, ինչպես զինքս ու իմ զինակից ընկերները կսիրենք ձեզ։ Մենք հավատում ենք ձեր քաջությանը, հավատում ենք, որ ձեզնից ամեն մեկը պատրաստ է իր արյամբ լվանալ մեր սուրբ հայրենիքի բազմադարյան վերքերը։ Մեզի կսպասեն մեր մայրերը, մեր քույրերն ու դստերք, անոնց լալահառաչ ձայնը հասնում է ձեր ականջներին՝ անոնք օգնություն կհայցեն ձեզմե, հասեք անոնց... Հառա՜ջ, հառա՜ջ, թող մեր անմահ նախնիներու նվիրական անունները, որպես անմար լապտեր, լուսավորեն ձեր փառքի ճամփան, որ այս փողփողուն դրոշակի տակ կառաջնորդե մեզ դեպի հայրենիքի ազատություն...»

Արևելքում այգաբացը հետզհետե հաղթում էր խավարին, և շատ չանցած արեգակի վաղորդյան ճառագայթների ոսկեհուռ շողերը արևմուտքում համբուրում էին Հայաստանի ձյունազարդ լեռների գագաթները, երբ սիրելի հրամանատարի քաջալերանքից օդը թնդաց գնդի երկարատև, բարձր ու զիլ ուռաներով և «Փառք հայրենիքին» բացականչություններով, որից հետո գունդը շարժվեց դեպի Մայր Հայաստան։ Դեռ հազիվ 4—5 կմ ճանապարհ անցած, մեր գնդի հետևից երիվարող մեզ ծանոթ Սրքե կոզակ սպան, երկու կոզակ թիկնապահների ուղեկցությամբ հասնելով մեզ, հայտնեց Անդրանիկին, որ Թուրքիան արդեն պատերազմ է հայտարարել Ռուսաստանին։ Այդ պատմական օրը համընկնում էր 1914 թվի նոյեմբերի 11-ին։ Հայկական բարձրավանդակի լեռնագագաթները արդեն ծածկված էին ձյան հաստ շերտի սպիտակ սավանով, իսկ նրա դաշտերում և մանավանդ անդընդախոր ձորերում տիրող ոսկեհուռ աշունը դեռ

շարունակում էր համառորեն պայքարել վերահաս ձմռան դեմ։ Իսպառ դալկացել էր Սալմաստի գեղածիծաղ ու պտղավետ դաշտը, խլածաղիկներն անգամ ցրտից չքացել և ձմեռային մրափի մեջ էին մտել։ Ուժասպառ արևը այլևս անզոր էր հալեցնելու փոքրիկ վտակների եզրերը զարդարող սառցե բարակ շերտերի և նույնիսկ դալկացած ծառերի եղյամի մանրիկ բյուրեղներին։ Երեք շորս ժամվա ճանապարհ կտրելուց հետո մենք արդեն հրաժեշտ էինք տալիս Սալմաստի արգավանդ դաշտին, Ուրմիո լճի կապույտ ջրերին և Սալմաստի հյուսիսարևմտյան սահմանները երիզող Մայր Հայաստանի հարավարևելյան լեռնաշխարհի լեռնապարին։ Արեգակի ճառագայթներից ցերեկը ձյան շերտերի վերին փաթիլները բյուրեղացել էին և պսպղում էին ինչպես մարգարիտներ, ծակծկում էին մեր աչքերը և դժվարացնում երթը։

Ճանապարհը համարյա անմատչելի էր։ Ըստ երևույթին ձյունը գալուց հետո ոչ ոք չէր անցել այդ ճանապարհով։ Ձյան հաստ շերտերի վրա բացի հավքերի և վայրի կենդանիների ոտքերի հետքերից ոչինչ չէր նշմարվում։ Շրջակա գյուղերը, որպես քսենոփոնյան ժամանակաշրջանի հյուղակներ, թաղված ձյան մեջ, բոլորովին անմարդաբնակ էին։ Զենք կրելու անընդունակ քուրդ երկսեռ ազգաբնակչությունը, խուսափելով պատերազմի վերահաս վտանգից, իրենց անասուններով և ունեցած-չունեցածով գաղթել էր մասամբ դեպի Կորդվաց լեռնաշխարհի անմատչելի վայրերը, մասամբ էլ դեպի անառիկ Ռշտունիք, իսկ զենք կրելու ընդունակները միացել էին մեր դեմ կռվող թուրքական բանակին։ Սակայն մենք ճանապարհը կորցնել չէինք կարող, որովհետև մեր շարքերում շատ վալադներ կային, որոնց գլխի մազերը ճերմակել էին այդ վայրերում դեպի էրգիր գաղտնի զենք և զինամթերք տեղափոխելու մեջ։

Երբ գունդը հասավ առաջին քրդական անմարդաբնակ գյուղին, օրը արդեն երեկոյանում էր։ Հակառակ բոլոր դժվարություններին, այդ օրը մենք

անցել էինք 30 կմ տարածություն։ Գյուղ հասնելուն պես հրամայվեց հանգիստ տալ գնդին։ Գյուղը բաղկացած էր 25—30 տնից և իր խլուրդային տնակներում հազիվ տեղավորեցին մեր ռազմիկներին։ Մարտիկները շուտով վառեցին թոնիրները, տաքացրին խրճիթները և հոգնած, ուժասպառ, առանց ուշադրություն դարձնելու պատրաստվող ընթրիքին, քուն մտան։ Գիշերվա նշանաբանն էր՝ «Հաղթանակ»։ Ո՛չ Անդրանիկը և ո՛չ էլ իր զինակից ընկերները քնած չէին։ Գյուղի շուրջը պահակներ կարգելուց հետո նպատակահարմար համարեցին պատրաստած տաք ընթրիքը՝ որպես նախաճաշ, ռազմիկներին բաժանել հաջորդ օրը առավոտյան, որպեսզի խանգարած չլինեին նրանց քունը։ Գունդը առանց մի պատահարի այդ գյուղում հանգստացավ նաև հաջորդ օրը։ Գնդին տրված հրամանի կարևոր կետերից մեկն էլ այն էր, որ աչքացավից խուսափելու համար պետք էր ամեն մի ռազմիկ կոպերի տակը մրոտեր ածուխով, մինչև նախապահպանիչ գունավոր ակնոցներ ստանալը։ Երրորդ օրը առավոտյան, մոտավորապես ժամը տասին մենք կրկին առաջ շարժվեցինք։ Հակառակ ցրտին և դժվարամատչելի ճանապարհին բոլորի տրամադրությունն էլ բարձր էր։ Լեռնաշխարհի այդ երկնածիր բարձրավանդակում մարդու հետք չէր երևում։ Լուռ էր երկինքը յուր բազմաթիվ մեծ ու փոքր մոլորակներով, լուռ էր և երկիրը այս բարձրավանդակում, լուռ էինք և մենք։ Երկրագնդի այս փոքրիկ մարզից չքացել էին ոչ միայն մարդիկ, այլև նույնիսկ արյունարբու գազաններն ու գիշատիչ հավքերը։ Սկզբում մեզ թվում էր, թե եթե հասնենք այս կամ այն լեռան բարձունքին, ապա այլևս նոր բարձունքներ չպիտի ելնենք, այլ պիտի իջնենք որևէ հարթավայր, բայց շուտով համոզվեցինք, որ մեր հայրենիքում ո՛չ լեռները վերջ ունեին և ո՛չ էլ անդընդախոր ձորերը։ Մի պահ մտածում էի՝ ինչ կլիներ մեր վիճակը, եթե բնության տարերքը հանկարծ խառնվեր իրար, սկսվեր կատաղի բուք ու բորան, հազիվ թե մեզնից մեկն ու մեկը կենդանի մնար։

Ոչ պակաս աղետալի հետևանք կունենար նաև գիշերային խավարի միջից թշնամու անսպասելի հարձակումը։ Բայց մենք բախտավոր էինք. ո՛չ փոթորիկ տեղի ունեցավ և ո՛չ էլ՝ թշնամու կողմից հարձակում։ Այդ օրվա վալադներն էին արդվինցի քեռի Մարգարը և մշեցի Սաֆար բիձեն։ Սրանցից առաջինը յուր արտաքին փառահեղ կազմվածքով սարսափ էր ազդում յուրաքանչյուր դիտողին, իսկ երկրորդի դեմքը կարծես թե հիշեցնում էր վաթսունն անց եռանդամոլ ուխտավորի։ Նրանց կյանքի լավագույն տարիներն անցել էին Արևելյան Հայաստանից Արևմտյան Հայաստան գաղտնի զենք փոխադրելու գործով և ծպտյալ սուրհանդակի զբաղմունքով։ Ինչպես պատմում էին մեր ավագ ընկերները, նրանք քաջատեղյակ էին ոչ միայն այն լեռնային ճանապարհին, որով այսօր առաջնորդում էին մեզ, այլև բազմաթիվ այլ արահետների ու կածանների և կիրճերի անցքերին, որոնք Արարատյան, Շիրակի և Բասենի դաշտերից տանում էին դեպի Արևմտյան Հայաստան՝ Կարին, Վան, Տարոն, Բագրևանդ և այլուր։ Սաֆար բիձեն արդեն վաթսունն անց մարդ էր, թեպետ նրա գեղեցիկ գլխի խիտ մազերը վաղուց ձյան պես ճերմակել էին, բայց այդ թիկնավետ տարոնցին տակավին պահպանել էր 45—50 տարեկան քաջառողջ մարդու ֆիզիկական կարողությունները և երիտասարդ մարդու մտքի պայծառությունը։ Նրա գորովագութ, խոշոր, երկար թարթիչներով կապույտ աչքերը, լայն ճակատը, խիտ հոնքերով, ճեփ-ճերմակ խիտ ու երկար բեղերն ու միշտ խնամքով սափրած դեմքը բացառիկ թովչանք և հրապուրիչ կախարդանք էր պատճառում դիտողին։ Քաջատեղյակ լինելով հայ ազգի պատմությանը, նա միաժամանակ անգիր գիտեր մեր ազգային դյուցազներգությունը, հեքիաթները, առասպելները, ասացվածքները, հանելուկները, ժողովրդական առածները և անգամ բավական տեղյակ էր մեր հին ու նոր գրականության մշակների շատերի գրական վաստակներին։ Հաճախ տղաները պատկառանքով դիմում էին Սաֆար բիձային. «Տո՛, հո-

բեղբայր, դու քո կիսագրագետ հալով այդքան յուղ որտեղից ես հալել լցրել գանգիդ մեջ»։

— Կյանքը վարժարան է, որդյակ,— պատասխանում էր Սաֆար բիձեն,— ցանկություն է պետք, եռանդ։ Ժողովրդի մեջ ազնիվ վարժապետներ շատ կան, նրանց խոգուն մատաղ, միշտ կկարդան և մեզի կխասկցնեն։

Բայց Սաֆար բիձեն եզակի չէր, նրա նման խելացի մարդիկ շատ կային մեր շարքերում, որոնք թեև արտաքինով տարբերվում էին իրարից, բայց բոլորն էլ օժտված էին բնավորության, վարք ու բարքի և դրական հատկությունների այնպիսի առաքինի գծերով, ինչպիսին էր Սաֆար բիձեն։ Անդրանիկը հաճախ էր դիմում նրանց.

— Մեծ ախպրտիքս, ձեր վարմունքով ալ խայտառակ պիտի ընեք զիս։ Ո՞ւր են ձեր ձիանները, ինչո՞ւ ոտքով կքալեք, չէ՞ որ ես առաջին օրից ձեզ ձիեր եմ հատկացրել։

— Քո խոգուն մեռնիմ, փաշա,— բոլորի անունից պատասխանում էր Սաֆար բիձեն,— մի վրդովվիր զուր տեղը, մենք ուխտավորներ ենք, որոնց վայել չէ ձիու մեջքին նստած ուխտի երթալ։ Անհրաժեշտ է, որ մենք միշտ տղաներու խետ քալենք, նրանց խետ նստենք, նրանց խետ ճաշենք, քնենք ու արթնանանք։ Մեզի խատկացրած ձիերը մենք գիտենք, թե ում ենք պարգևել՝ նրանց, որոնց արյունը վրեժխնդրությունից կեռա իրենց երակներուն մեջ, նրանց, որոնք մեզնից տասն անգամ գերազանց են իրենց մարտունակությամբ։

Սալմաստից բաժանվելու օրը Անդրանիկը մեր հեծելազորից կապի համար երեք լավագույն հեծյալներ էր թողել զորավար Նազարբեկյանի տրամադրության տակ։ Նրանցից առաջինը՝ Գողթան գավառի ագուլիսցի Կարոն էր, երկրորդը՝ տիգրանակերտցի Զուլալը, իսկ երրորդը՝ զանգեզուրցի Նշան մականունով Արսենը։ Այս երեքն էլ իրենց բարոյական բարձր հատկություններով կըտրիճ մարդիկ էին՝ պարզ մեր լեռնաշխարհի

սառնորակ աղբյուրների ջրերի նման։ Կարոն այն հայդուկներից էր, որ տարիներ առաջ մասնակցել էր Խանասորի արշավանքին՝ քուրդ Շարաֆ բեկի պարսկա-թուրքական սահմանի վրա ունեցած սահմանապահ ուժերի դեմ։ Արսենը նույնպես հին հայդուկ էր, որ 1908-ին մարտնչել էր Քեռիի, Եփրեմ-խանի և Սատթար խանի ապստամբ ժողովրդական բանակների շարքերում։ Զուլալը համեմատաբար ավելի երիտասարդ էր, բայց նա էլ բախտ էր ունեցել պատերազմից առաջ որպես սուրհանդակ մեկերկու անգամ այս լեռնաստանի վրայով անցնել Վան։ Կարոյին որպես վալադի հանձնարարված էր առաջնորդելու ռուսական կոզակական հեծելազորին դեպի Խանասոր-Բաշկալե գիծը, իսկ Արսենը և Զուլալը պետք է միշտ կապ պաշտպաներին մեր և զորավար Նազարբեկյանի ռազմական ուժերի միջև։

* * *

Արևը բավական բարձրացել էր, երբ մեր գունդը հայկական այդ լեռնաշխարհի ամենաբարձր գագաթից սկսել էր վայրէջք կատարել դեպի Խանիկի կաթսայաձև ւարահարթը։ Օրն այնքան պարզ էր, որ մենք հեռադիտակով նշմարում էինք թուրքական բանակի ծխի քուլաները քրդական գյուղերի հանդիպակաց լեռներում։ Այդ տեսարանը մեր հոգու մեջ առաջացնում էր ազգային արդար ցասումի և վրեժխնդրության պոռթկումի մի այնպիսի հոգեվիճակ, որով մեզնից ամեն մեկը ցանկանում և խորհում էր մի հարվածով վրեժ լուծել իր դարավոր թշնամուց։ Նոր էինք հասել Խանիկ գյուղը, երբ Զուլալն ու Արսենը 5—6 կոզակների հետ հասան մեր գնդին և Անդրանիկին հանձնեցին զորավար Նազարբեկյանի առաջին զեկուցագիրը մոտավորապես հետևյալ բովանդակությամբ.

«Վստահեցնում եմ ձեզ, պարոն Անդրանիկ, որ ձեր գնդի առաջխաղացման օրը, համաձայն իմ խոստման, երկու էսկադրոն կոզակներ երկու լեռ-

նային թնդանոթով ուղարկեցի դեպի Խանասոր—Բաշկալե գիծը։ Դուք նախահարձակման կանցնեք միայն այն դեպքում, երբ լսեք նրանց հրետանու համազարկերի ձայնը։ Ձեր հեռատեսությունը խոյի կիրճի պաշտպանության անհրաժեշտությունը նույն օրը հաղորդած եմ մեր ճակատի ընդհանուր հրամանատար գեներալ-լեյտենանտ Ջեռնոզուբովին և նրա կողմից արդեն հավաստիացած եմ, որ ձեր խնդիրը վաղն ևեթ կկատարվի ըստ պատշաճի։ Ռազմական կապը ավելի ուժեղացնելու համար ձեր տրամադրության տակ եմ դնում մի տասնյակ կոզակ։ Ձեզ կհանդիպեմ երկու-երեք օր հետո իմ զորամասով հանդերձ։ Հաջողություն եմ ցանկանում։ Նազարբեկյան»։

Լուրերը բավական քաջալերիչ էին։ Գնդի մարտիկներին առանձնապես ուրախացրեց Խանասոր—Բաշկալե գծի ուղղությամբ թշնամու դեմ ուղարկված հեծելազորի լուրը, որոնց շարքերում էր նաև մեզ արդեն ծանոթ Սրքեն, որը եղբայրացել էր գողթանցի Կարոյի հետ։

Գունդը բավական հանգստացել էր։ Երեկոյան մութն ընկնելուն պես մեր հեծելախումբը շարժվեց առաջ։ Նրանց մեկնելուց մոտ 3—4 ժամ հետո առաջ շարժվեց ամբողջ գունդը։ Այն հանգամանքը, որ մենք թնդանոթներ չունեինք, բավական ազդում էր մեր գնդի և՛ հրամանատարական կազմի և թե՛ ռազմիկների վրա։ Բայց մեր հեծելազորից բավական թվով մարտիկներ բացի սովորական զենքերից, զինված էին նաև ձեռքի «Լուիս» գնդացիրներով։ Ամբողջ հետևակը բացի երեք գծանի «Մոսին» սիստեմի հրացաններից, ուներ նաև տասնոց ատրճանակներ։ Գնդի տրամադրության տակ կար մոտ 12 «Մաքսիմ» և 6 «Կոլոդ» սիստեմի գնդացիրներ։ Գունդը միանգամայն ապահովված էր փամփուշտի պաշարով, սնունդամթերքով և տաք հագուստով։ Գիշերվա մոտ ժամը 24-ին մեր հետախույզները, հանդիպելով թշնամու հետախույզներին, կարճատև կռվից հետո փախուստի էին մատնել նրանց, որոնք կռվի դաշտում թողել էին

4 սպանված և 2 վիրավոր։ Մերոնց կողմից, բացի մի թեթև վիրավորվածից, զոհեր չէին եղել։ Անդրանիկը և իր զինակից ընկերները գրեթե քուն չունեին, նրանք ամբողջապես կլանված էին կազմակերպչական աշխատանքներով։ Արշալույսը դեռ չբացված թշնամու հրետանու կրակի ներքո մեր գունդը դիրքավորված լեռնաշղթայի բարձունքներին վերջացնում էր իր խրամատները։ Թշնամու հրետանու որոտմունքների հետ մենք լսում էինք նաև մեր ձախ թևի կողմից թնդանոթամարտի համազարկերի հեռավոր ու խուլ պայթյունների արձագանքները։ Համոզված էինք, որ այդ արձագանքները դեպի խանասոր—Բաշկալե գծի ուղղությամբ մեկնած ռուս կոզակների գործն է։ Շուտով խավարը չքացավ, և մենք արդեն պարզ նշմարում էինք մեր աջ ու ձախ թևերի դեմ ասպատակող թշնամու հեծելազորի անկանոն շարքերը, իսկ կենտրոնից, առանց կրակ բացելու, ճակատում էին թշնամու կանոնավոր հետևակի խիտ վաշտերը։ Մեր դիրքավորված գունդը լուռ էր։ Գործում էր միայն թշնամու հրետանին, որպեսզի մի կողմից ահաբեկման մեջ դնի մեզ, իսկ մյուս կողմից ապահովի իրենց զորքի առաջխաղացումը։ Երբ քրդական հեծելազորը, գրոհելով դեպի մեր աջ ու ձախ թևերը, ձգտում էր օղակել մեզ, մեր և նրանց միջև եղած տարածությունը հազիվ էր անցնում 250—300 մետրից։ Այդ ժամանակ լսվեցին Անդրանիկի և իր զինակից ընկերների ահեղաձայն կոչերը՝ կրա՛կ։

Սկսեցին ճարճատել մեր գնդացիրները։ Թշնամին այնքան էր մոտեցել մեր դիրքերին, որ պարզ լսում էինք նրանց վայրենաբարո հայհոյանքներն ու լուտանքները, և մեր դիրքերից տեսնում էինք, թե ինչպես գնդակների տարափից արագորեն նոսրանում էին թշնամու հեծելազորի և մասամբ էլ հետևակի խիտ շարքերը։ Շատ չանցած քրդական հեծելազորը սարսափահար աղաղակելով շուռ տվեց ձիերի գլուխները և խուճապի մատնված բռնեց նահանջի ճամփան՝ ռազմի դաշտում թողնելով բազմաթիվ սպանված ու ծանր վիրավորներ։ Քրդերի փախուստը պատ-

ճառ հանդիսացավ վտանգելու թուրքական կանոնավոր զորքերի դեմ եղած առաջընթացը, թեպետև վերջինս առանց կարևորություն տալու ստեղծված անհույս դրությանը, շարունակում էր համառորեն առաջ նետվել։ Թուրքական հրամանատարությունը ստեղծված դրությունից ելնելու նպատակով ստիպված եղավ մի պահ իր հրետանին ուղղել պատերազմի դաշտը լքող քուրդ հեծելազորի դեմ, բայց դրանով նա յուր դրությունը ավելի վատթարացրեց։ Քրդական վայրենի խուժանը, ահաբեկված մեր տարած հաղթանակից, կորցրել էր յուր հավասարակշռությունը և նրանցից ամեն մեկն աշխատում էր մի կերպ փրկել յուր անձը։ Բարձունքների հետևը դարան մտած մեր հեծելազորը, որ հարյուրական հոգուց բաժանված էին աջ ու ձախ թևերի՝ պաշտպանության համար, անձամբ Անդրանիկի և Կայծակ Ավոյի մասնակցությամբ հանկարծ դուրս թռան սարի հետևից՝ բազմած իրենց սրաթռիչ նժույգներին և կատաղի բազեների պես սկսեցին հալածել ոչ միայն փախչող քրդերին, այլև հարկադրեցին փախուստի դիմել նաև դեպի մեզ խիզախող թուրքական զորքերին։ Թեև թշնամին խիստ ահաբեկված էր, սակայն նրա հրամանատարական կազմը ըստ երևույթին դեռ չէր կամենում հաշտվել իր համար ստեղծված աննպաստ դրության հետ։ Նրանք համոզվելով, որ մենք թնդանոթներ չունենք, սկսեցին անդադար հրետանային կրակ բացել մեր դիրքերի վրա, որի պատճառով թշնամուն հաջողվեց արագ կարգի բերել յուր խուճապի մատնված զորամասերը։ Ազնվությամբ պիտի խոստովանել, որ թշնամու գործադրած եռանդը պսակվեց հաջողությամբ, բայց յուր ուժերի վտանգավոր դրությունը նա վերջնականապես վերականգնեց միայն ուշ երեկոյան։ Մութն ընկնելուն պես թշնամին երկու-երեք անգամ ևս փորձեց թևանցել մեզ, բայց նրա ջանքերն այդ ուղղությամբ անհաջողության մատնվեցին։ Այս ընթացքում Անդրանիկը անդադար թևատարած արծվի պես թռչում էր մի դիրքից մյուսը, աջ թևից

դեպի ձախ թևը և քաջալերում ռազմիկներին, բարձրացնում նրանց ռազմական ոգին։

Հաջորդ օրը լուսադեմին կռիվը նորից բորբոքվեց, այս անգամ ավելի ուժգին։ Մեր բախտից թշնամու հրետանու արկերի մեծ մասը չէր պայթում, իսկ զգալի տոկոսն էլ սլանում էին մեր դիրքերի վրայից կամ չէին հասնում մեզ, այսպիսով թշնամու հրետանին համարյա կորցրել էր յուր ահաբեկիչ նշանակությունը։ Նախորդ օրվա և այդ օրվա ճակատամարտի տարբերությունն այն էր, որ քրդական հեծելազորի փոխարեն ամբողջ ճակատի լայնությամբ մեզ վրա էին հարձակվում թուրքական կանոնավոր հետևակն ու հեծելազորը։ Նրանք լուռ ու մունջ շարժվում էին մեր դեմ իրենց հրետանու անդադար համազարկերի ուղեկցությամբ, հրացանները ուսներից ձգած։ Բացի այդ, քրդական հեծելազորի մի մասը այս անգամ միացած էր թուրք հեծելազորին, իսկ մյուս մասը, իբրև հետնապահ, դանդաղորեն հետևում էր թուրքական հետևակ վաշտերին, որոնք ցանկանում էին շարժվել մեզ վրա ճակատի կողմից։

Դրությունը չափազանց լուրջ էր։ Մենք սպասում էինք ռուսական զորամասի շուտափույթ օգնությանը, որը կլիներ միայն հաջորդ օրը։ Կռիվը գնալով ավելի էր թեժանում, սակայն մեր շարքերում խուճապի տրամադրություն բնավ չէր նկատվում, և ամբողջ գնդի տրամադրությունը սպասածից ավելի բարձր էր։

Անդրանիկը, դեռ անցած գիշեր, նախատեսելով գալիք օրվա աննպաստ դրությունը, Կայծակ Ավոյին իր հեծյալ հարյուրակով ուղարկել էր թշնամու թիկունքը և հրամայել՝ սպասել հարմար առիթի հանկարծակի հարձակումով թշնամուն խուճապի մատնելու համար։ Ավոյի հարյուրյակը բաղկացած էր բացառապես թաքիրդաղցի, աֆիոնգարահիսարցի և մասամբ էլ Կոնիայի թրքախոս, վագրի պես անհողդողդ հայ առյուծասիրտ երիտասարդներից։

Թշնամու զորքի թիվը 5—6 անգամ գերազանցում էր մեր ուժերին։ Անկախ այդ հանգամանքից, մին-

չև կեսօր մեզ հաջողվել էր առանց զգալի կորուստների հետ մղել թշնամու կազմակերպած ահարկու գրոհները։ Կեսօրից հետո, մեզ անհայտ պատճառներով, թշնամու թնդանոթամարտը սկսեց զգալիորեն թուլանալ և երեկոյան իսպառ լռեց։ Ըստ երևույթին, սպառվել էր հրետանային արկերի պաշարը։ Մենք անհամբեր սպասում էինք մութն ընկնելուն, որպեսզի ժամանակ շահեինք՝ մինչ ռուսական զորամասի գալը։ Թշնամին շարունակում էր գրոհել, բայց միշտ էլ հետ էր մղվում, կռվի դաշտում թողնելով զգալի թվով սպանվածներ և վիրավորներ։ Վերջապես երեկոն յուր փրկարար թևերը փռեց երկրի վրա։ Մութն ընկնելուն պես սաստկացավ նաև ցուրտը, որ մեծապես օգնեց մեզ, քանի որ թշնամին շատ վատ էր հագնված, զուրկ տաք հագուստից, մուշտակներից և թաղիքե կոշիկներից։ Ավոյից լուր չկար։ Անդրանիկը տակավին անհանգիստ էր։ Նա իրեն չէր կարողանում ներել, որ թշնամու անցած օրվա խուճապը չի օգտագործել հարկավոր չափով. «Իզո՜ւր, իզո՜ւր հարմար առիթը ձեռքիցս բաց թողի երեկ։ Պետք էր հետապնդած ըլլայինք խուճապի մատնված թշնամուն. բայց չարինք այդ, ափսո՜ս, չարինք...»։

— Ինչ կերպ ալ ուզում է ըլլա, այդ սխալը պիտի շտկել աս գիշեր,— շարունակեց Անդրանիկը և ավելացրեց։— Անշուշտ, Ավոն կօգնե մեզ այդ գործում (խոսքը թշնամու թիկունք ուղարկած Կայծակ Ավոյի հեծելազորին էր վերաբերում)։

Քրդական մոտակա անմարդաբնակ գյուղում տեղավորված էր մեր գնդի գումակը։ Այնտեղ արդեն տաք կերակուրն ու թեյը պատրաստ էր։ Անդրանիկը հրամայեց հերթով կերակրել վաշտերին, որպեսզի առավոտյան ժամը չորսին գիշերային հանկարծակի հախուռն հարձակումով խուճապի մատնի թշնամուն։ Ռազմիկները համոզված էին, որ ճակատամարտի վերջնական հաղթանակը իրենք պիտի տանեն։ Թե՜ Անդրանիկը և թե՜ իր զինակից ընկերները զատ-զատ խրախուսում, քաջալերում էին մարտիկներին և իրենց անձնական

տոկունությամբ, համբերությամբ, անվհատ կամքով և անհողդողդ հավատով օրինակ տալիս յուրաքանչյուր մարտիկի։

Գիշերվա ժամը երեքն անց կեսին ամբողջ գունդը, ընթրիքից հետո, կրկին բռնեց իր դիրքերը։ Թուրքական բանակից կենդանության ոչ մի ձայն չէր լսվում։ Կարծես այնտեղ ամեն ինչ մեռել էր, կամ էլ նրանք ձգել էին ռազմագիծը և հեռացել։ Հանկարծ կիշերային խավարում բոցավառվեց մի քանի մեծ լապտերի լույս, և լսվեց գնդացիրների ու հրացանների համազարկերի ձայներ...

— Աղբա՜րս է, Ավո աղբա՜րս է,— ուրախ բացականչեց Անդրանիկը և դեռ չէր վերջացրել իր զվարթ բացականչությունը, երբ ամբողջ ճակատի երկայնությամբ, ըստ նախատեսված պայմանի, օդը թնդաց բարձր ուռաներով, և «Հառա՜ջ, հառա՜ջ, հառա՜ջ, առյուծնե՛ր» բացականչություններով գունդը մի մարդու պես կայծակի արագությամբ դուրս թռավ իր դիրքերից և սկսեց խիզախել դեպի թշնամին։ Լուսնի լույսի տակ պարզ երևում էր, թե ինչպես ահաբեկված թշնամին փախչում էր մեր առջևից։ Մի փոքր հետո Ավոյի ձիավորներից մի քանիսը միացան մեզ և հաղորդեցին, որ թշնամու գլխավոր ուժերը խուճապի մատնված փախչում են դեպի Կոտոր։

Լուսաբացին թշնամու հետքը չէր երևում Խոշարի բարձրավանդակում, բացի ստվար թվով վիրավորներից, սպանվածներից և գերիներից։ Հաղթանակը լիակատար էր, մանավանդ մենք այդ օրը գրեթե զոհ չէինք տվել։ Նախորդ օրերին մեր տված զոհերի թիվը հասնում էր 30-ի, որոնց թվում էր նաև անմոռանալի Զուլալը, ունեինք մոտ 45 թեթև ու ծանր վիրավորներ։ Այդ օրը գնդի տրամադրությունը ավելի բարձրացավ, երբ կեսօրին ստացանք Թավրիզի հայության ուղարկած հարյուր իշաբեռ հայկական հալվան և լավաշ հացը։ Երբեք չպիտի մոռանամ, թե ինչպես բժիշկ Զավրևը, ուրախության արցունքները աչքերին, անմեղ մանկան պես գրկում, համբուրում էր ամեն մի զինվորի, ասելով.

— Ահա, սիրելիս, անուշ արա, այս հալվան հայ մայրերն ու քույրերն են ուղարկել քեզ։

Մեր հաղթության երկրորդ օրը, երբ մենք պատրաստվում էինք հետապնդել նահանջող թշնամուն, Դիլիմանից մեզ հասավ ռուսական զորքը զորավար Նազարբեկյանի գլխավորությամբ։ Դիմավորելու պահին թե՛ հրամանատարական կազմը և թե՛ շարքային ռուս զինվորները գրկախառնվում էին մերոնց հետ հարազատ եղբայրների նման։ Խուճապի մատնված թշնամին, հասնելով Կոտոր և համոզվելով, որ կարող է օղակվել և ամբողջովին գերի ընկնել մեր և Տղմուտի ափն ի վեր խոյի կիրճով շտապող ռուսական բանակի ձեռքը, շարունակել էր նահանջել նա՛խ դեպի Բելաջիկ, իսկ այնտեղից՝ դեպի Հասբստան ու Սարայ։

Մեր առաջապահ զորամասերը հասնելով Կոտոր, թշնամու թեթև հրացանաձգությունից հետո. առանց որևէ դժվարության և մարդկային զոհերի գրավել էին Կոտորը և թշնամու ուտեստի աղքատիկ պահեստները՝ բաղկացած տեղացի հայ և քուրդ ժողովուրդներից բռնագրավված հազարավոր փութ ալյուրից, ցորենից, գարուց, ինչպես նաև ձիերի և այլ անասուններ-ի համար պատրաստած մի քանի դեզ խոտից։ Գլուխը կորցրած թշնամին այնքան արագ էր դիմել փախուստի, որ նույնիսկ մոռացել էր իր հետ տանել մոտ 150 գլուխ խոշոր եղջերավոր անասուններ։ Բացի այդ, թշնամին թողել էր երեք լեռնային թնդանոթ՝ հիսուն արկերով, 100 արկղ փամփուշտ։ Քուրդ ազգաբնակչության զենք կրելու ունակ տարրերը օր առաջ լքել էին իրենց գյուղերը՝ թողնելով պառավ կանանց և զառամյալ ծերունիներին, համոզված լինելով՝ որ նրանց ոչ ոք ձեռք չի տա։ Ի շարս վերջիններ-ի, մնացել էին նաև 1896-ին բռնի իսլամացած Կոտորի քրդախոս հայ գյուղացիության խղճուկ բեկորները, որոնց ուրախությանը չափ ու սահման չկար։ Մեր մարտիկների հետ զրուցելիս մանկան պես լալիս էին։ Նրանք մնացել էին կենդանի, որովհետև նահանջող թշնամին չէր կարողացել կռահել նրանց-

ով լինելը, իսկ քրդերն էլ, ելնելով իրենց շահերից, նրանց չէին մատնել թուրքերի ձեռքը։ Կոտորը գրավելու երրորդ օրը, այսինքն՝ մոտավորապես նոյեմբերի 19-ին, մեր գունդը, միացած ռուսական հետևակ մի գնդի և Լաբինսկի երկու էսկադրոն կոզակների հեծելազորի հետ, լեռնային թնդանոթներով, գնդացիրներով և բավական ռազմապաշարով, ըստ հրամանի սկսեց հետապնդել նահանջող թշնամուն։ Հետապնդելով թշնամուն, մենք հավատացած էինք, որ վատթարագույն դեպքում անգամ դեկտեմբերի սկզբին կգրավենք Վանը։ Օ՜, ի՜նչ վառ հույսեր էր կապված այդ անվան հետ, ի՜նչ երազանքներ... Ճանապարհին թե՛ Անդրանիկը և թե՛ իր զինակից ընկերները չէին դադարում մարտիկներին խրախուսել, բարձրացնել նրանց մարտական ոգին և միաժամանակ խստիվ զգուշացնելով՝ զերծ մնալ խաղաղ ազգաբնակչության հանդեպ բարբարոսություններ գործելուց և աշխատել մարդասեր լինել նրանց նկատմամբ։ Նման վարմունքի արդյունքը ակներև էր։ Մի քանի օր անց քրդական լքված գյուղերը կրկին կյանք առան, վախից փախուստի դիմած ազգաբնակչությունը վերադարձավ և հոժարակամ զինաթափվեց։ Նահանջող թշնամուն մենք հետապնդում էինք չափազանց դժվարին պայմաններում։ Մի՛ կողմից խիստ ցրտերը, մյո՛ւս կողմից անդադար տեղացող ձյունն ու բուքը խանգարում էին նախատեսված փութկոտությամբ հետապնդել նրանց։ Այդ դժվարությունների հետևանքով մենք մեր առաջխաղացման միայն չորրորդ թե հինգերորդ օրը հասանք թշնամուն։

Թուրք զորքի ստվար մասը ցրտահարվել էր, բացի այդ կային և բծավոր տիֆով տառապողներ։ Մեր շարքերում ևս երևացին ցրտահարության դեպքեր և թոքերի բորբոքումից տառապողներ, որոնց անմիջապես փոխադրում էին նա՛խ Կոտոր և ապա՛ Խոյի ռազմական հիվանդանոցը։ Հասնելով թշնամուն և մի օր հանգիստ տալով բանակին, ասորա-հայկական մի թափուր գյուղում, Անդրանիկը, միացած

ռուս զորամասի հրամանատարներին, նրանց հետ այդ գիշեր կազմակերպեց հաջորդ օրվա կռվի զորադասավորումը։ Հարձակումը տեղի ունեցավ հաջորդ օրը լուսաբացից առաջ։ Հանկարծակիի բերել թշնամուն, այդ Անդրանիկի սիրած տակտիկական ձևերից մեկն էր։ Եվ իրոք, մի անգամ արդեն աչքը վախեցած և նահանջի ճանապարհը բռնած թշնամու բանակի համար միանգամայն անսպասելի գիշերային հարձակումը՝ զուգորդված հրետանային համազարկերով, կատարյալ սարսափ պատճառեց նրա քնաթաթախ բանակին, որը կրկին դիմեց փախուստի՝ թողնելով մեզ բազմաթիվ հիվանդներ, ցրտահար եղած զինվորներ, մի քանի թնդանոթ և այլ ռազմամթերք։ Սարայը գրավված էր։ Այդ օրը Անդրանիկը իր մոտ հրավիրեց բժիշկներին և առանց ավելորդաբանությունների դարձավ նրանց հետևյալ հարցումով.

— Պարոնա՞յք բժիշկնե՛ր, դուք գիտե՞ք, որ ոջիլը լափում է մեր զինվորներին։

— Այո՛, սակայն ի՞նչ կարող ենք անել այսպիսի պայմաններում, որպեսզի վերջ տանք չարիքին։

— Որքան կհիշեմ Բալկանյան պատերազմից, ոջիլն է տարածում բծավոր տիֆի հարուցիչ միկրոբները, ատիկա ճիշտ է, թե՝ ոչ։

— Այո՛, այդպես է, բծավոր տիֆի վարակ տարածողը ոջիլն է։

— Աղեկ, հարգելի բժիշկնե՛ր, այժմ ևեթ սկսեք պայքար ոջիլի դեմ։ Նախ և առաջ մնացած հայուհիներու և ասորուհիներու ու երեխաներու օժանդակությամբ և մասամբ էլ մեր մարտիկներու աջակցությամբ կազմակերպեցեք սպիտակեղենի լվացում և բաղնիքի շենքի մեջ կազմակերպեցեք շինելներու, մուշտակներու ու անգամ թաղիքե կոշիկներու և իրերու հականեխում բարձր ջերմաստիճանով։ Միաժամանակ զինվորներու լողացման պարագային հրամայեցեք, որ փոխադարձ օժանդակությամբ բոլորն

ալ սափրեն իրենց մարմիններու բուսականությունը։ Այն շենքերը, ուր բնակված են եղել թուրքաց զորքը, կանխապես մաքրել, հականեխել ծծումբով և խոտի հաստ շերտ փռել հատակին և նոր միայն թույլ տալ մեր զինվորներին հոն բնակվելու։ Այս ամենի իրագործման համար տալիս եմ ձեզ 48 ժամ։

Բժիշկների հեռանալուց հետո Անդրանիկը անմիջապես հրավիրեց Սարայի հայ, ասորի և հրեա հոգևորականներին, ինչպես նաև քաղաքի ազդեցիկ մարդկանց և խնդրեց չմերժել իրենց կանանց, հարսների և աղջիկների օժանդակությունը զորքին ոջիլից ազատելու հարցում։ Միաժամանակ Անդրանիկը դիմեց անհետաձգելի միջոցների՝ եղած հիվանդներին, բացի թոքերի բորբոքումով տառապողներից, անմիջապես փոխադրելու Կոտոր։ Նրանց էլ տեղավորեցին մի մեծ, լուսավոր և տաք տան մեջ, որտեղ լավագույն խնամքի շնորհիվ մի քանի օրվա ընթացքում բոլորն էլ ապաքինվեցին։ Այս իրադարձությունների ընթացքում մենք անհամբեր սպասում էինք նոր հրամանի՝ կրկին հետապնդել դեպի Վան փախչող թշնամուն, բայց՝ ավա՜ղ։ Փոխանակ այդպիսի հրամանի, դեկտեմբերի 2—3-ին ստացանք Կոտոր նահանջելու հրաման։ Երեկո էր։ Անդրանիկը յուր զինակից ընկերներով և ռուսական զորամասի զույգ գնդապետների հետ նստած մի սեղանի շուրջ շախմատ էր խաղում և սպասում պատրաստվող ընթրիքին, երբ թարգմանեցին կորպուսի հրամանատար զորավար Չեռնոզուբովից ստացած հրամանի բովանդակությունը։ Նահանջը կատարվում էր օսմանյան պետության ռազմական ուժերի գերագույն հրամանատար արյունռուշտ Էնվեր փաշայի արկածախնդրական պլանների համաձայն, որն անցած մոտ 200 000-անոց թուրքական բանակի գլուխ, ձգտում էր Դերսիմի դժվարանցանելի անտառների վրայով թևանցել Կարնո դիմաց կանգնած ռուսական զորքերին, մի հարվածով գերեվարել նրանց ու վերջ տալ Կովկասյան ճակատի գոյությանը։

Լսելով հրամանի բացատրական մասը, սեղանի շուրջ քիչ առաջ զվարթ դեմքերով բազմած զինվորականները կաթվածահար եղածի պես մի պահ կարկամեցին։ Անդրանիկի դեմքը կարծես թե ծռվեց, աչքերը լցվեցին արյունով և բոցկլտացին խավարի մեջ փայլող կատաղած վագրի աչքերի պես, որ պատրաստ է հոշոտելու իրեն հետևող որսորդին։ Այդ պահին բոլորն իրենց հայացքը սևեռել էին Անդրանիկին, անհամբեր սպասելով նրա կարծիքին։ Նա բարձրացավ իր տեղից և, կատարելով երկու ծանրախոհ քայլ, կրկին մոտեցավ սեղանին և բռունցքներով հենվելով նրա վրա, խուլ ձայնով արտասանեց.

— Մի՞թե ատանկ անակնկալության համար դժվար էր հարյուր հազարանոց բանակ մը պահել Կարսում։ Բայց միևնույն է, ինչ ալ ուզում է թող ըլլա, սակայն էնվեր փաշային երբեք չի հաջողվի հասնելու իր նպատակին։ Ռուսական բանակի քաջությունը և Սարիղամիշի ցրտերը կհարկադրեն անոր բռնել նահանջի ճանապարհը մեր սակավաթիվ զորքերի առաջ։ Եթե իմ սվիններիի թիվը լիներ գոնե 5—6 հազար, հարկավոր քանակությամբ ռազմամթերք, ներառյալ նաև անհրաժեշտ թվով հրանոթներ, ես այդ հրամանին չէի ենթարկվի, կխիզախեի դեպի Վան, հուսալով, որ գրավելով Վանը, իմ բանակի թիվը կտասնապատկվեր, առանց խորհելու հետևանքի մասին, սակայն այսօր ինչ կարող եմ ընել ես 1600—1700 սվիններով։ Այժմ ճար չկա, պիտի հաշտվել ստեղծված դրության հետ։

Դեկտեմբերի 7-ի առավոտյան, ըստ այդ չարաբաստիկ հրամանի, մեր ուժերը ձգեցին Սարայը և բռնեցին Կոտորի ճամփան։ Մեզ հետ գաղթեցին նաև Սարայի, Հասբստանի և այլ գյուղերի ազգաբնակչությունը՝ բռնագրավումից ազատ մնացած իրենց անասուններով և շարժուն այլ կայքով։ Անդրանիկը հրամայեց մեզ հետ շարժվող ծերերին, մանուկներին և հղի կանանց վերցնել սայլերի և ձիերի վրա։ Թեև դադարել էր բուքը, բայց եղա-

նակը շատ ցուրտ էր։ Խեղճ գաղթականությունը, ըստ Անդրանիկի կարգադրության, տխուր տրտում քայլում էր զորքից առաջ, իսկ զորքը ապահովում էր նրա երթը թիկունքից։ Դեռ չհասած Կոտորին, կորպուսի հրամանատարությունից ստացվեց մի նոր հրաման՝ մինչ նոր կարգադրություն ստանալը, դադարեցնել նահանջը, զորքին տեղավորել քրդական Բելաջիկ և Կոտոր գյուղերում, ապահովելով խաղաղ ազգաբնակչության գաղթը մինչև Խոյ։ Հասնելով Բելաջիկ, Անդրանիկը զորավար Նազարբեկյանից հեռախոսով թույլտվություն խնդրեց ներկայանալու նրան, որի շտաբը գտնվում էր Բելաջիկից 12 կմ հեռավորության վրա՝ Կոտորում։

Զորավար Նազարբեկյանը հեռախոսով պատասխանեց, որ ինքն է մտադիր վաղն այցելել Բելաջիկ և կհանդիպի Անդրանիկին։ Հաջորդ օրը Նազարբեկյանը Անդրանիկի հետ տեսակցության ժամանակ մանրազնին խոսեց Սարայում ստացած հրամանի մասին, և ասաց, որ այդ լուրերը հաստատված են ռուսական հետախուզական խմբի տված ստույգ տեղեկություններով, որ իրոք թուրքական բանակի գերագույն հրամանատար Էնվերի և Իսխանի գլխավորությամբ 200 000-ի հասնող թուրքական բանակը Դերսիմի խիտ անտառներով շարժվում է դեպի Կարս և Ալեքսանդրապոլ, դրանով վտանգելով մեր դրությունը պարսկա-թուրքական սահմանագլխին։ Թեև զորավար Նազարբեկյանի հաղորդածը համոզիչ էր, սակայն այդ իրողության հետ Անդրանիկը ներքուստ հաշտվել չէր կարողանում։ Մեզ մնում էր զինվել համբերությամբ և սպասել նոր կարգադրությունների։ Մի պահ տանջալից լռությունից հետո Անդրանիկը Նազարբեկյանին ասաց՝ ինչ անենք, այլ ելք չկա.

— Այո, հոգյակս, իրոք որ այլ ելք չկա,— հաստատեց Նազարբեկյանը։

«Սակայն, ասացեք, գերագույն հրամանատարությունը այժմ աճապարո՞ւմ է թարմ ուժեր նետելու թշնամու այդ հզոր ուժերու դեմ, թե ոչ»,— հարցրեց Անդրանիկը Նազարբեկյանին խոսակցության վերջում։

«Ազնվությամբ պիտի խոստովանեմ, որ այդ մասին առայժմ ինձ ոչինչ հայտնի չէ»,— պատասխանեց գեներալը։

Այդ օրերին Անդրկովկասից մեզ հասան երկու օժանդակ խմբեր։ Նրանցից առաջինը գլխավորում էր դաշնակցության Արևելյան բյուրոյի անդամ Արշակ Ջամալյանը։ Նրա խումբը բաղկացած էր 50 մարդուց, որոնց մեծ մասը ուսանողներ էին և Ներսիսյան դպրոցի շրջանավարտներ՝ ներառյալ նաև Անաստաս Միկոյանը, Վահան Երեմյանը, Վահան Շահգալդյանը։ Ջամալյանի խմբից հետո ժամանող խումբը բաղկացած էր 250 մարտիկից։ Վերջիններս բացառապես բաքվաբնակ դարաբաղցիներ, զանգեզուրցիներ, մասամբ էլ նուխեցիներ ու շամախեցիներ էին։ Նրանց մի մասը բարոյալքված գող ավազակներ և բանտից փախած քրեական հանցագործներ էին, որոնց գլխավորում էր Բաքվի այսպես կոչված «զելյոնայա պարտիայի» ղեկավար, նուխեցի Թադևոս Ամիրյանը։ Անդրանիկը առաջին խմբին իր գնդի շարքերն ընդունեց ամենայն սիրով և համակրանքով, իսկ երկրորդ խմբից ջոկեց բարոյապես մաքուր և վստահելի դեմքերին. մնացածին, ներառյալ և Թադևոս Ամիրյանին, բարի ճանապարհ մաղթեց։

Ըստ Նազարբեկյանի ցանկության և Անդրանիկի անմիջական համաձայնության, բժշկապետ Ջավրևը ռազմական իրադարձություններին ավելի տեղյակ լինելու համար գտնվում էր Կոտորում իրեն հատկացված մի քրդացած հայի խրճիթում։ Ըստ բժշկի ցանկության նույն խրճիթում ապաստան էին գտել Պետերբուրգի պսիխո-նևրոլոգիական ինստիտուտի վերջին կուրսի ուսանող Հովհաննես Սաֆարյանը, Անաստաս Միկոյանը և տողերիս հեղինակը։

Մեզ սպասարկում էր բռնի իսլամացված մի դեռատի հայուհի, ամենքիս պաշտելի Ռեհանը, որը բարեբախտաբար դեռ չէր մոռացել իր մայրենի հայերեն լեզուն։ Ռեհանի սրտի և հոգեկան խորունկ ապրումների միակ թարգմանը աղեխարշ արցունքներն էին, որ ամեն պատեհ առիթի առատորեն հոր-

գում էին նրա սևորակ ու վշտահար աչքերից։ Թուրքերը նրա ծնողներին քշել տարել էին, իսկ ինքը կարողացել էր ազատվել, որովհետև թաքնվել էր գոմի խորքում փորած գարու հորի մեջ։ Ամեն օր վաղ առավոտյան կովը կթում, կաթը տաքացնում, բերում դնում էր քուրսու վրա և, վերցնելով ջրով լիքը կավե օշնակը, լռիկ սպասում էր, որ օժանդակի մեզ լվացվելու։ Ապարդյուն էին մեր թախանձանքներն ու հանդիմանանքը նման ծառայությունից հրաժարվելու մասին, Ռեհանը անդրդվելի էր... Հաճախ բժիշկ Զավրևը իր կոտրված հայերենով դառնում էր Ռեհանին՝ «դստրիկս, բավ է, բավ է, մենք կլվացվենք, դու հոգնած, գնա հանգիստ...»։ Ռեհանը առարկում էր բժշկին.

— Հայրիկ, չեմ երթա, չեմ երթա, պիտի քո ձեռաց ջուրը ես լցնեմ, որ դու լվացվես, խասկցա՛ր, չեմ երթա, չէ՛։

Սովորաբար մենք քնից արթնանում էինք շատ վաղ՝ մանավանդ Ռեհանն ու բժիշկը։ Մի օր էլ արթնանալով խրճիթում չգտանք բժշկին. այս կողմ, այն կողմ՝ բժիշկը չկար ու չկար։ Ռեհանը հանգստացրեց մեզ. «Մի անհանգստացեք, բժիշկը մի ռուս զինվորի հետ բարձրացավ դեպի քուրդ բեկի տունը»։ Մենք կռահեցինք, որ բժիշկը Նազարբեկյանի կողմից հրավիրված էր դիվիզիայի շտաբ։ Եվ իրոք, շատ չանցած բժիշկը վերադարձավ այնպես ոգևորված, որ պատահած կամավորին գրկում համբուրում էր գոչելով.

— Սիրելինե՛րս, այնտեղ, Սարիղամիշի անտառներում մեր քաջ քեռին (այսինքն՝ ռուսական զորքը) փշրեց Էնվեր փաշայի բանակը... Հաղթանակը մերն է... Թշնամուց վերցված է մեծ քանակությամբ գերի, որոնց թվում նաև Իսխան փաշան, հասկանո՞ւմ եք...

Բժիշկ Զավրևը գրկեց համբուրեց նաև մեզ և, գրպանից հանելով թղթադրամ, հանձնեց ինձ և խնդրեց գնել չոր մրգեղեն և երկու շիշ կոնյակ։ Այնուհետև նա կարգադրեց չոր միրգը բաժանել տեղի հի-

վանդ մարտիկներին, իսկ կոնյակը տանել Բելաջիկ՝ Անդրանիկին։

Բելաջիկ մեկնելուս պահին Զավրևը Անդրանիկին հանձնելու համար ինձ տվեց մի փակ ծրար։ Օրը սոսկալի ցուրտ էր։ Տղմուտի ակունքները պատել էր սառցե այնպիսի հաստ շերտով, որ բնավ ջրի հետք չէր երևում։ Հասնելով Բելաջիկ, ես այն պահին մտա շտաբ, երբ Անդրանիկը և իր զինակից ընկերները ճաշում էին։ Բժշկի գրած նամակը ռուսերեն էր։ Թարգմանվեց ծրարի բովանդակությունը, ամենքի մռայլ դեմքը փայլատակեց ուրախությունից, և բոլորը, հետևելով Անդրանիկին, ոտքի ելան հարգելու Սարիղամիշում թուրքական բանակի դեմ տարած հաղթանակի ժամանակ ընկածների հիշատակը։ Կրկին նստելով սեղանի շուրջը, փաշան դարձավ ինձ և հարցրեց.

— Տղա՛ս, ինչ հալի մեջ է ծերուկը, դեմքի մռայլությունը անցա՞վ, կխնդա՞, կապրե՞...

— Այո՛,— պատասխանեցի ես։

— Աղե՛կ,— ասաց Անդրանիկը,— նախ նստիր քիչ մը տաքացիր և հետո մեկնե Կոտոր։

— Անշուշտ,— շարունակեց Անդրանիկը,— թուրքերու Սարիղամիշի ահռելի բանակի պարտությունը պիտի վերագրել նաև Բարձր Հայքի կատաղի ցրտերուն, այլապես հազիվ թե մերոնց հաջողվեր այդքան դյուրին հաղթել թշնամուն։

— Ատիկա անհերքելի ճշմարտություն մըն է,— հաստատեցին Անդրանիկի զինակից ընկերները։

— Սակայն,— ավելացրեց Անդրանիկը,— այդ փառավոր հաղթանակը տեսնենք ինչ արդյունք կտա մեզ... Մեր անտեղի նահանջի փաստը կմնա՞ ուժի մեջ, թե, վտանգը անցած համարելով, թույլ կտան մեզ կրկին առաջանալ դեպի Վան։

Նույն օրը երեկոյան Բելաջիկից վերադառնալով Կոտոր, հակառակ սպասումիս, ես բժիշկ Զավրևին գտա մռայլ վիճակում։

Չհամարձակվելով բժշկին հարցնել իր տխրության պատճառը, դարձա Ա. Միկոյանին և բժիշկ Հ.

Սաֆարյանին, որոնք ինձ հաղորդեցին, որ հակառակ մեր սպասումին, այնուամենայնիվ հրամայված է նահանջել մինչև Ջուղա։ Այդ նահանջով մենք Սալմաստի և Խոյի հայությանը մատնում էինք գլխովին բնաջնջման։ Վտանգից խուսափելու նպատակով Անդրանիկը Ավոյին ուղարկեց Սալմաստ, որը պետք է հեծելազորի օգնությամբ կազմակերպեր Սալմաստի հայության գաղթը դեպի Արևելյան Հայաստան։ Դեկտեմբերի 25-ին առավոտից ռուսական զորամասերի հետ միասին սկսեցինք նահանջել նաև մենք. նա՛խ դեպի Խոյ, ապա՝ դեպի Ջուղա։

Կոտորից նահանջելու երկրորդ օրը, կեսօրից հետո, հասնելով Խոյ, մենք դժբախտություն ունեցանք տեսնելու Սալմաստից դեպի Արևելյան Հայաստան գաղթող հայ աղգաբնակչության հոծ բազմությանը։ Տեսարանը խիստ ողբալի էր, սրտաճմլիկ և սահմրռկեցուցիչ։ Դեկտեմբերյան այդ դժնդակ ցրտին նրանք թողած իրենց շեն գյուղերը, ապահովված օջախները, տանջված, փախչում էին կորիգլուխ, խաղաղ ապաստանի, շինարար, ստեղծագործ ապրուստի անդուսպ կարոտի վեհ գաղափարը սեղմած իրենց կրծքին։ Նրանցից ոմանք իրենց սայլերի վրա շարժական կայքի հետ տեղավորել էին ծերունիներին, պառավներին, երկունքով բռնված երիտասարդ կանանց և մանուկներին փաթաթել հաստ ու փափուկ վերմակների մեջ, ոմանք էլ իրենց ունեցած-չունեցածը բեռնել էին խոշոր եղջերավոր անասունների և գրաստների վրա։ Շատերն էլ, թվածս փոխադրական միջոցներից զուրկ լինելով, ունեցած ուտելու չնչին պաշարի հետ շալակել էին իրենց մանուկներին և, աղիողորմ լալով, մինչև ծնկները խրված ցեխի մեջ, անհույս ու վհատ՝ ասես հուղարկավորության մեծ թափորի հոգնատանջ մասնակից, դանդաղ քայլում էին դեպի Արաքսի ափերը, դեպի Ջուղա։ Այդ համատարած սգի մեջ միակ մխիթարությունը այն էր, որ նրանք ամեն կերպ օգնում, աջակցում էին միմյանց, որպեսզի հնարավորին չափ քիչ լինի զոհերի թիվը։ Որպեսզի գաղթը կրեր քիչ թե շատ

կազմակերպված բնույթ, և ժողովուրդը զերծ մնար ավելորդ զոհերից, Անդրանիկի միջնորդությամբ նա՛խ ամեն մի սայլի վրա բեռնվեց երկուական պարկ ալյուր՝ կարիքավոր գաղթականության համար և երկրորդ՝ հրամայվեց մեր հեծելազորի բոլոր ձիերը հատկացնել գաղթականությանը։ Բացի այդ, ամեն մի կամավոր, շալակն առնելով մի մանուկ, պարտավորվեց, առանց տրտունջի նրան հասցնել մինչև Արաքսի ձախ ափի բլուրներին թառած Նոր Ջուղա գյուղը։ Խոյից մինչև հայկական Ջուղա կարելի է ոտքով անցնել երկուսուկես օրում, սակայն գաղթականության պատճառով մենք այդ տարածությունը կտրեցինք երեք օրում։ Նոր Ջուղա հասնելուն պես անմիջապես տեղական գերեզմանատանը թաղվեցին ճամփին թոքերի բորբոքումից մեռած մի քանի ծերերի, պառավների և մանուկների։ Ջուղայում գաղթականությունը երկար չմնաց։ Ջանցած մի շաբաթ, նրանք հետզհետե չվեցին դեպի Նախիջևանի շրջանի հայկական գյուղերը, որոնց բնակիչների նախնիները, չնչին բացառությամբ, 1826—28, 1853—56, 1877—78 թթ. տեղի ունեցած ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների հետևանքով Խոյից և Սալմաստից ներգաղթել էին Նախիջևանի գավառ, այնպես որ դեռ թարմ էին նոր և հին գաղթականների բարեկամական և տոհմական կապերը։ Նոր Ջուղայում մեզ երկար պահեցին։ Ռուսական հրամանատարությունը ցարի հատուկ հրամանով պարգևատրել էր Անդրանիկին և նրա զինակից ընկերներին զանազան շքանշաններով։ Շքանշաններով պարգևատրվածների թվում էին նաև մի շարք ռազմիկներ, որոնք իրենց սխրագործություններով աչքի էին ընկել թշնամու դեմ մղված մարտերում։

Այդ օրերին զեյթունցի Հովնանի հրամանատարությամբ Ֆրանսիայից եկան և մեր գնդին միացան 300 արևմտահայ երիտասարդներ։ Նոր Ջուղայում մոտ երկու ամիս տևող դադարից հետո 1915-ի

փետրվարի 28-ին մեր գունդը հրաման ստացավ կրկին շարժվել դեպի Իրան։

Անցնելով Արաքսի մյուս ափը, մենք շարժվեցինք Մարանդ—Թավրիզ տանող խճուղով, որովհետև մեր կատարած նահանջից հետո թշնամին անարգել հասել, տիրել էր Թավրիզին։ Մեր առաջշարժման հաջորդ առավոտը Անդրանիկը դարձավ իր զորամասին հետևյալ խոսքերով.

— Սիրելի հայրենակիցնե՛ր, ի՛մ զինակից ընկերներ, մենք կրկին գտնվում ենք հյուսիսային Իրանի Ատրպատական նահանգում։ Թուրքական հրամանատարությունը, օգտվելով մեր նահանջից, մեր հետևից անարգել հասել է Թավրիզի շրջակայքը։ Մեզ վրա պարտականություն է դրված վռնդել նրան հոնտեղեն։ Ձեզմե յուրաքանչյուրն իր սեփական աչքերով տեսած և համոզված է, թե որպիսի աննախանձելի վիճակի մեջ կապրի այս երկրի թշվառ գյուղացիությունը։ Անոնք բոլորն ալ անխտիր անուս ու անզեն իրենց խաներու, սարդարներու և կալվածատերերու ձեռքով հալածված և ստրկացած, շատ բաներով մեզ բախտակից ժողովուրդ մըն են։ Ռուսական զորամասերը ըստ հրամանի պիտի շարժվեն խճուղով, իսկ մեզ հրամայված է գյուղերու և լեռնանցքներու վրայով կարճել ճանապարհը և կռվի ելնել Սոֆիանում դիրքավորված թշնամու դեմ։ Խըստագույնս կհրամայեմ ձեզ՝ գյուղերից անցնելու պարագային կամ թե գյուղերում գիշերելու դեպքում ոչ մի անախորժություն չպատճառել բնիկներուն։ Եղեք առաքինի և մարդասեր, ոչ մեկ վիրավորանք, ոչ մեկ խոշտանգում, ոչ մեկ անպատվաբեր վերաբերմունք դեպի այս ժողովուրդը չցուցաբերեք, հակառակ պարագային մեղավորը կստանա արժանի պատիժ, մինչև իսկ գնդակահարություն։

ՍՈՖԻԱՆԻ ԿՈՒՎԸ

Մարտի սկզբի օրերն էին։ Մեր գունդը, երեկոյան հասնելով պարսկական Քյոսա-Սարայ գյուղը, գիշերեց այնտեղ։ Երրորդ օրն էր, ինչ մենք դուրս էինք եկել Ջուղայից և ճանապարհին գրեթե ոչ մի տեղ հանգիստ չէինք առել։ Անդրանիկը, իր մոտ հրավիրելով գյուղի քեղխուդային և մի քանի ազդեցիկ ծերունիների, խնդրեց նրանցից իրենց տներում տեղ տալ գնդի զինվորներին, միաժամանակ հավաստիացնելով նոցա, որ ոչ մի անախորժություն չի լինի։ Գյուղի պետերը ուշիուշով Անդրանիկին լսելուց հետո միաձայն օրհնանքներով դրվատեցին փաշային և բոլորիս անտրտունջ տեղավորեցին։ Հյուրընկալությունը երկուստեք անցավ շատ խաղաղ. առանց որևէ միջադեպի։ Հաջորդ օրը վաղ արշալույսին, գյուղական աշուղների մի խումբ հազար ու մի գովերգների և նվագածության ուղեկցությամբ մեզ ճանապարհ դրեց դեպի Սոֆիան։ Առավոտը մի քիչ մառախլապատ էր, մեղմ անձրև էր մաղում, որը գնալով ուժեղացավ և փոխվեց ձյունախառն անձրևի։ Մթնոլորտային տեղումներին զուգընթաց փչում էր սառը քամի։ Ջափազանց դժվարամատչելի մի նեղ կածանով մենք բարձրանում էինք լեռն ի վեր։ Օրը պարզվելու ոչ մի նշան չէր նշմարվում, ընդհակառակը, գնալով եղանակը ավելի ու ավելի էր վատանում։ Երբ հասանք լեռան կատարին, գնդի մարտիկները մինչև ոսկորները թրջված էին։ Շուտով ձյունախառն անձրևը փոխվեց հեղեղի և սրան միացավ նաև սոսկալի փոթորիկը։ Հեծելազորը հարկադրված իջավ ձիերից։ Այլ կերպ հնարավոր չէր շարունակել ճանապարհը, որովհետև թե՛ հեծյալները և թե՛ ձիերը սառել-փայտացել էին և ցրտից դողում էին աշնան տերևի պես։ Տարիքավոր ռազմիկների բեղ ու մորուքից կախվել էին սառցե լուլաներ։ Փոթորիկը գնալով ավելի ու ավելի էր սաստկանում, ահարկու էր և կատարյալ մրրիկի բնույթ էր ընդունում։ Այն փամփուշտներով բեռնված մեր ուղտե-

րից երեքին պոկեց սարի կատարից և նետեց մի անդնդախոր ձոր։ Դրությունը բավական հուսահատական էր։ Անդրանիկի խորհրդով մրրկածուփ պտուտահողմի ժամանակ մարտիկներն անմիջապես երեսներն ի վար փռվում էին թաց ու սառը գետնին և մրրիկի դանդաղման պահին շտապում էին շուտ պոկվել գետնից և արագ վազել առաջ մինչև վրա կհասներ փոթորկի հաջորդ ալիքը։ Բնության այս տարերքը տևեց 6—7 ժամ, մինչև մենք հասանք լեռան հակառակ լանջը, որի ստորոտներում թառած էր բուսականությունից իսպառ զուրկ պարսկական Վարաղաջ գյուղը։

Պահանջվում էր 2—3 ժամ տևող հանգստություն, որպեսզի մարտիկները կարողանային չորացնել իրենց թե՛ հագի և թե՛ պահեստի հագուստները։ Բայց հազիվ էինք տեղավորվել զարաղաջցիների խրճիթներում և վառել նրանց թոնիրները, երբ Սոֆիանի հանդիպակաց բլուրներում դիրքավորված թշնամին մեր դեմ փոթորկալից թնդանոթամարտ սկսեց։ Անկախ ստեղծված աննպաստ կացությունից, հնչեց հարձակման փողը, և գունդը կայծակի արագությամբ մի մարդու նման դուրս թափվեց խրճիթներից և կանգնեց Անդրանիկի առջև։

— Արծիվնե՛րս,— դարձավ նա գնդին,— թող չվհատեցնի ձեզ այսօրվա դաժան եղանակը, ինչպես նաև թշնամու հանկարծակի թնդանոթամարտը, հավատացեք, որ վերջալույսը պիտի պսակվի մեր հաղթությամբ, եթե միայն ձեր երակներում մեջ չի դադարել մեր վեհ նախնիների արյունը, եթե միայն ձեր հոգու մեջ չի մարել մեր ազգային պատիվը։

Չանցած մի ժամ մենք հասանք թշնամուն։ Կռիվը երկար չտևեց։ Մեր հարձակումից թշնամին վերջալույսի վերջին ճառագայթների հետ ձգեց իր դիրքերը և դիմեց փախուստի՝ թողնելով մեզ երկու լեռնային թնդանոթ, բավական քանակությամբ փամփուշտ և 300 գերի, ինչպես նաև 30 սպանված. Սոֆիանն ազատագրված էր։ Մենք արդեն հաղթանակել էինք, որ խճուղով առաջացող ռուսական զորամասը

հասավ մեզ։ Գիշերը պարզ էր և աստղազարդ։ Մեր ռազմիկները գիշերային այդ պահին խարույկների շուրջը խմբված չորացնում էին իրենց թաց շորերը։

Թուրքերը Սոֆիան ավանը թալանել, կողոպտել, ավերել էին։ Նրանք նույնիսկ առևանգել էին պարսիկ երիտասարդ կանանց և դեռատի աղջիկներին։ Այս հանգամանքը մի ավելորդ անգամ հաստատում էր, որ օսմանյան բանակի համար գոյություն չուներ ոչ մի բարոյականություն։

Հաջորդ օրերին խումբ-խումբ վերադարձան թուրքական բանակից ճողոպրած Սոֆիանի բնակիչները և պատմեցին իրենց գլխով անցած մահասարսուռ վայրագությունները։ Նրանք ապշած էին մեր ռազմիկների կարգապահությունից և մարդասեր վերաբերմունքից։ Նրանք իրենց հոգևոր պետի առաջնորդությամբ տեղական մզկիթում աղոթք մատուցեցին ալլահին և Մուհամմեդին մեր և ռուսական զորքի հաջողության համար։ Վանելով թուրքական բանակին Սոֆիանի և Թավրիզի շրջաններից, մեր գունդը վերադարձավ Մարանդ քաղաքը և, թուրք գերիներին հանձնելով ռուսական տեղական կայազորին, գրեթե երկու շաբաթ մնաց Մարանդում, հետո՝ մոտ 2—3 կմ դեպի հյուսիս-արևմուտք գտնվող խանապատկան Եգան գյուղում։ Այդ օրերին չեմ հիշում ի՞նչ նպատակով, կամ ի՞նչ առիթով Անդրանիկը մեկ-երկու շաբաթով պիտի մեկներ Թիֆլիս և մեկնելուց երկու երեք օր առաջ գնդի հրամանատարությունը ժամանակավորապես թողեց մշեցի Սմբատ Բորոյանին։

Անդրանիկի Թիֆլիս մեկնելուց շատ չանցած, մեր գունդը Մարանդից և Եգան գյուղից մոտավորապես մարտի 15-ին, գնդապետ Տրեդինսկու զորամասի հետ շարժվեց դեպի Խոյ։

ԴՈՒՋԴԱՂԻ ԿՌԻՎԸ

Դեպի Ջուղա նահանջից հետո թշնամու մի ստվար զորամաս էլ գրավել էր պարսկական Դուզդաղ կոչվող գյուղի հանդիպակաց լեռնաշղթայի՝ Խոյի Գյա-

դուկի բարձունքները, որոնք որպես բնական պատնեշ բաժանում էին Խոյի գավառը Սալմաստից։ Թշնամին գրավելով այդ անառիկ բնաշղթայի բարձունքները, բնականաբար արգելակում էր մեր զորքերի առաջընթացը նա՛խ դեպի Սալմաստ և ապա՝ դեպի Վան։ Բանն այն էր, որ նախքան մեր կամավորական գնդի և գնդապետ Տրեդինսկու սահմանապահ գումարտակի տեղ հասնելը, Խոյի ռուսական զորամասը մոտ մեկ շաբաթ կռվել էր թշնամու դեմ, բայց ոչ մի հաջողության չէր հասել։ Նա չէր կարողացել թշնամուն դուրս վանել իր գրավածք իրոք շատ անառիկ դիրքերից։ Այդ նպատակին հասնելու համար մեր զորամասը, գնդապետ Տրեդինսկու գումարտակի հետ, Մարանդից շարժվեց Ավարայրի դաշտ։ Մեզ մի 3—4 օր հանգիստ տվին պարսկական Գուզդաղ գյուղում, որից հետո մոտավորապես մարտի 20-ի գիշերը, Սմբատի և գնդապետ Տրեդինսկու հրամանատարությամբ մեր ուժերը հրահանգ ստացան հարձակվելու թշնամու վրա և դուրս վանելու նրան իր գրավածք դիրքերից։ Կռիվը սկսվեց վաղ արշալույսին։ Այդ պահին ռուսական հրետանու հախուռն կրակի տակ մեր գունդը, որպես առաջապահ մաս, ցրված ամբողջ ճակատի լայնությամբ, սկսեց առաջ շարժվել դեպի թշնամու դիրքերը, առանց մի գնդակ արձակելու։ Ռուսական հետևակ զորամասը այդ օրը գտնվում էր արիերգարդում։ Մեր առաջխաղացող գնդի աջ թևից ասպատակում էին ռուս կոզակների զույգ էսկադրոնները, իսկ ձախ թևից՝ հայկական հեծելազորը Ավոյի հրամանատարությամբ։ Սմբատը նախապես Գրիգոր Ամիրյանի հրամանատարությամբ մի հիսնյակ հեծելազոր էր ուղարկել թևանցելու թշնամու աջ թևը և հանկարծակիի բերելու նրան։ Իսկ ինքը, նստած իր սև ձիուն, առաջնորդում էր իր գունդը դեպի թշնամու խրամատները։ Մեր հետևակը, արհամարհելով թշնամու կրակի տարափը, առանց կրակ բացելու շարունակում էր ձորակների միջով անվեհերաբար խիզախել։ Երբ մերոնք հասան թշնամու դիրքերին, լսվեց

ահեղազոչ ուռան, և կռիվը ավելի թեժացավ։ Այդ պահին մեր հեծելազորը, ռուսական կոզակների հետ, թշնամու աջ ու ձախ թևերից արդեն հասել էր նրանց բռնած լեռնաշղթայի կատարին և, հանկարծակիի բերելով նրան, օժանդակել մեր հետևակին հերոսաբար դուրս շպրտելու թշնամուն իր ամրություններից։ Մեր մարտիկները խուճապի մատնելով հակառակորդին, հարկադրեցին քրդական Եզդիքենդ գյուղի մոտով փախչել դեպի Կոտորի։ Ավոյի հեծելազորը կրնկակոխ հալածելով փախչող թշնամուն, նույն օրը կեսօրին գրավել էր Եզդիքենդը՝ գերելով 250 թուրք վիրավորների։ Բացի գերիներից, այդ օրը մեր ձեռքն անցան բավական ռազմամթերք, դեղորայք և մի երկու արկղ էլ հունական բարձրորակ ոգելից ըմպելիք, անգամ արևելյան երաժշտական գործիքներ։ Նույն օրը երևկոյան հետևակը ևս հասավ Եզդիքենդ, ուր մի քանի օրվա հանգստից հետո շարժվեցինք դեպի Սալմաստ։

ԴԻԼԻՄԱՆԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

1915-ի գարնանային գեղածիծաղ օրերից մեկն էր։ Դուզդաղի հաջող կռվից մի քանի օր անց Թիֆլիսից վերադարձան Անդրանիկը և Արշակ Ջամալյանը։ Հյուսիսային Իրանի երբեմնի պատմական Հայաստանին պատկանող Ատրպատական նահանգի Հեր և Ջարևանդ գավառների (այժմյան Խոյ և Սալմաստ) լեռնային գոտիների հարուստ արոտավայրերի անուշահոտ, փարթամ բուսականությունից արբեցել էր ինքը հրաշագործ բնությունը։ Գարնանային հեղեղներից հորդացած Տղմուտը, գահավիժելով Աղբակի, Կոտորի, Բելաջիկի, Հասբստանի և ուրիշ այլ վայրերի ձյունապատ սարերից, քրտնած ու փրփրած մոլեգնորեն ճողփում անցնում էր սրընթաց Խոյի մոտ 70—80 կմ երկարություն ունեցող կիրճը՝ կենդանություն շնորհելու արևից կիզվող Ավարայրի դաշտին և ցողելու ու խնկարկելու մեր դյու-

ցազն ու նահատակ նախահայրերի նշխարները։ Ավարայրի դաշտ... եթե ընթերցողը այս արտահայտության մեջ որոնելու լինի լոկ աշխարհագրական անուն, ապա չափազանց մեղանչած պիտի լինի մեր նախնիների սրբազան աճյունների առջև, որոնց դարեր առաջ թափած հերոսական արյան շիթերի վրա կռել, կոփվել, բարձրացել է մեր ազգային վերածննդի ազատամարտի փառահեղ պատմությունը։ Ավելին, Ավարայրը մեր ազգային քաջալերման, ընդվզումների, նրա հպարտության և արժանապատվության բարձրագույն կոթողներից մեկն է, որով դարեր ի վեր քաջալերվել են մեր սերունդները։ Ճիշտ է, այսօր ապարդյուն կլիներ այս դաշտի մեջ որոնել Նվարսակ գյուղը, ուր երբեմնի հզոր Պարսկաստանի ամբարտավան թագավորների արյունռուշտ զորավարներն ու մոգպետները հարկադրված եղան խոնարհելու իրենց հպարտ գլուխները հայկական քաջարի բանակի առջև։ Բնության տարերքից և հետագա դարերի անթիվ ու անհամար ցեղերի ու ազգերի ավազակաբարո հորդաների կատարած կռիվների ու ավերածությունների հետևանքով պատմական բազմաթիվ հուշարձանների հետ երկրի երեսից անհետացել է նաև այդ երբեմնի շեն ավանը՝ որի գեղջկական սրահներից մեկում, մեզնից մոտ 1500 տարի առաջ, մեր երևելի նախնիները իրենց անհամեմատ փոքրաթիվ բանակի հերոսական դիմադրությամբ հարկադրեցին զրադաշտական հավատքին երկրպագու պարսիկ սասաններին արձանագրելու իրենց խայտառակ պարտությունը։ Ծուրաքանչյուր ազգ, որի մատաղ սերունդները ընդունակ չեն հոգեպես սնվելու, դաստիարակվելու և քաջալերվելու իրենց արժանավոր նախնիների երևելի գործերով և ազգային ավանդներով, վաղօրոք կարելի է գուշակել, որ նման ազգի ապագան ողբերգությամբ է պարուրված, որ նման ազգին վիճակված է անհետանալու ազգերի գոյամարտի ասպարեզից՝ իր տեղը զիջելով իրենից ավելի կենսունակ և ավելի կորովի ազգերի։ Ընդունված ճշմարտություն է, ան-

ցյալ դարերի պատմության ճշգրիտ ուսումնասիրությամբ զբաղվող սերունդները, սովորաբար մատուցելով արժանի հարգանք իրենց երևելի նախնիներին, միաժամանակ խուսափում են կրկնելու նրանց կատարած սխալները։

Զինված ու զոդված այսպիսի գիտակցությամբ, այդ օրերին հայկական կամավորական առաջին գունդը ռուսական զորամասերի հետ բանակատեղի էր ընտրել Ուրմիո լճի հյուսիսարևելյան ափերը եզերող աննշան լեռներից մեկի փեշերին թառած պարսկական Սելեմլիկ կոչվող գյուղի բարձունքները։ Ամենառավոտ մեր առջև բացվում էր սքանչելի տեսարան։ Այդ հսկայական լիճը հյուսիսից Սալմաստի դաշտը եզերող վեհատեսիլ սարերից փչող վաղորդյան զեփյուռից, ոսկեհուռ արևի շողշողուն ճառագայթների տակ յուր ջրերի բազմերանգ կոհակների մեղմ ու չքնաղ ծփանքներով դեպի հարավ էր շտապում։ Ծովային հավքերի բազմաթիվ երամներ, ճախրելով առավոտյան ջինջ օդի մեջ և երբեմն սուր սլացքի պես իջնելով ծովը, փռում էին իրենց սպիտակ շեղ թևերը ջրի մեղմ ալիքների վրա, լողում որոշ տարածություն, երբեմն էլ ջրասույզ լինում ու կրկին խուլ կոնչոցով բարձրանում դեպի անհուն եթերը՝ վերստին ծովը սուզվելու համար։ Բայց ապարդյուն էր նրանց ջանքերը, աղերով խիստ հարուստ Կապուտանի ձկնազուրկ դառն ջրերը անզոր էին սնունդ մատակարարելու հեռավոր հյուսիսից հարավ ճախրած քաղցած հավքերի բազմաթիվ երամներին և զարմանալի չէր, որ արևը թեքվելուց ճայերի, կարապների, վայրի բադերի և սագերի երամները քաղց ղգալով, դանդաղորեն, մղկտալից կոնչոցներով դիմում էին դեպի Արճկա, Գայլատվա, Սևանի, Վանի և Հայաստանի այլ ձկնառատ լճերը։

Մեզնից դեպի հյուսիս-արևելք ձգվում էր Վասպուրականի լեռնաշղթան, որ, հասնելով Գոգ հովտին և Մակու անդնդախոր ձորին, յուր կանաչազարդ, զմրուխտաշող և բուրումնավետ ծաղկազարդ գլուխը խոնարհում էր ծնկաչոք լեռների արքա սպիտա-

կափառ Արարատի վեհատեսիլ գեղեցկության առջև, որն ասես առասպելական վիթխարի մեծությամբ մի արթուն պահակ հսկում էր դարերից ի վեր իրեն երկրպագող հայ ժողովրդի անդորրը։ Դեպի արևելք հեռավոր մշուշի մեջ նշմարվում էին մայր Արաքսի հոսանքին զուգընթաց Ղարադաղի լեռների գագաթները, որոնց մի շղթան, տեղավորվելով դեպի հարավ, եզրափակում էր Մարանդի և Սոֆիանի պըտղավետ դաշտերը։ Դեպի հարավ-արևմուտք տարածվում էին Սովուջ-Բուլաղի, Ռևանդուզի և Ուրմիայի քարձունքները, որ գնալով դեպի հյուսիս վերջանում էին Խանասորի սարավանդակին տիրող Զուխա-Գյադուկ կոչվող լեռան վիթխարի զանգվածով, որի անդնդախոր ձորերով դեպի հարավ սրընթաց հոսում է Տիգրիսի արևելյան ճյուղերից մեկը՝ Բոհտան սուն։ Լճի հյուսիսային եզերքին տարածվում էր Սալմաստի արգավանդ դաշտը յուր երբեմնի հայկական հարուստ գյուղերով, որոնց բնակիչները ընդամենը երեք-չորս ամիս առաջ ռուս-հայկական զորքերի ռազմագիտական դիտումներով կատարած նահանջի հետևանքով օր առաջ ձգել էին իրենց շեն գյուղերը, հարուստ այգիներն ու ցանքսերը և անասուններով ու շարժական գույքով գաղթել Արևելյան Հայաստան, իսկ այնտեղից էլ շատերը հասել էին Անդրկովկասի հայաշատ կենտրոնները, Հյուսիսային Կովկաս, Ռուսաստանի զանազան քաղաքներ և մինչև իսկ Միջին Ասիայի արևից հրկիզվող տափաստանները։ Այժմ այդ գյուղերը անմարդաբնակ էին։ Հարևան պարսիկ գյուղերի ավատապետական դաժան կարգերում տանջվող խաղաղասեր բնակիչները, հարգելով իրենց վաղեմի դրացի հայերի բարի դրացիական կապերն ու փոխհարաբերությունները, բնավ ձեռք չէին տվել գյուղերին՝ ո՛չ այգիներին և ո՛չ էլ ցանքսերին ու արոտավայրերին։ Երբ գիշերը յուր սև թևերը փռում էր երկրի վրա, և Սալմաստն էլ ընկղմվում գիշերային խավարի մեջ, այժմյան անմարդաբնակ հայ գյուղերի կավե պարիսպներից և դարեր առաջ սրբատաշ քարերից կառուցած ու

կերտած եկեղեցիների և մատուռների մամռապատ բարձր դմբեթների վրայից չարագուշակ բուերը իրենց զարհուրանքով լի մահասարսուռ վայոցներով գուժկանների պես սարսափ էին տարածում ամբողջ դաշտի վրա, և հայ մարտիկների սրտերը լցնում ազգային անեղր վշտի թախիծով։ Ա՜խ, նրանք բնության եղեռնամայրերն էին, որ առանց վարձի իրենց կուրացած աչքերով դիշերային խավարի միջից մեր ավերվող հայրենիքի հանգած ու հանգչող օջախների սուգն էին անում։ Թվում էր, թե հայ բնակչության հետ մեկտեղ չվել, չքացել էին նաև Սալմաստի դովքն անող թռչունները։ Սանամելիքի, Ղալասարի, անմահ Բաֆֆու ծննդավայր՝ Փայաջուկի և մանավանդ Հավթըվան և Սավրա գյուղերի փողոցներն ու պտղատու այգիների եզրերը զարդարող արծաթավուն սալվիներն ու բարդիները կարծես թե այս դարնանը զուրկ էին մնացել սովորաբար յուրաքանչյուր դարնանն իրենց ճյուղերին հյուրընկալող սոխակներից և վերջիններիս զարմանալի վարպետությամբ հյուսած բներից լսողին հիացմունք պատճառող գիշերային սիրո քաղցրահնչյուն դայլայլումներից։ Միայն արադիլներն էին մնացել հավատարիմ իրենց հավերժ հյուրընկալող գյուղերին և մասամբ էլ հատ ու կենտ քաղցից հյուծված թափառաշրջիկ, պառաված շները, որոնք խավարը ընկնելուն պես բարձրանում էին կավե խրճիթների հարթ կտուրներին և այնտեղից երկար ու ձիգ տխուր կաղկանձումներով խանգարում բնության գիշերային անդորրը և Սալմաստի հայ բնակչությունից թափուր մնացած գյուղերի մեռելային նիրհը։

Հայ մարտիկները արդեն ձանձրացել էին բավական երկար թվացող հանգստից։ Նրանք անհամբեր սպասում էին պատերազմական գործողությունների վերսկսմանը, մանավանդ որ այդ օրերին, ըստ լրագրական տեղեկությունների և Արևմտյան Հայաստանից դաղտնի սուրհանդակների միջոցով ստացած հաստատուն լուրերի, ի պատասխան արյունարբու Թուրքիայի հայահալած քաղաքականության, Վանի

նահանգի հայությունը ապստամբել էր և կռվում էր Ջեվդեթի ղեկավարած բազմաթիվ կանոնավոր զորքի դեմ և յուր օրհասական պայքարի օրերին անհամբեր սպասում էր իրենց օգնությանը։ Վանը եղակի չէր, Արևմտյան Հայաստանը բռնկված էր համատարած հրդեհով։ Պոլսից, Թուրքիայի մայրաքաղաքից մինչև Տիգրանակերտ ու Կիլիկիա հոսում էր անզեն ու անմեղ հայության արյունը։ Ի պատասխան այդ վայրագությունների, բոլոր այն վայրերում, ուր հայությունը նախապես փոքրիշատե զինված էր, սկսել էր ինքնապաշտպանական կռիվներ թուրքական ջարդարարների դեմ, իսկ որոշ վայրերում հաղթանակներ էր տարել։ Թուրքական կանոնավոր զորքերը, քրդական ուժերի աջակցությամբ, ամենուր կողոպտում, ավերում էին հայ ազգաբնակչության շեն գյուղերն ու քաղաքները, հրոճարակ դարձնում, սրի քաշում անզեն ժողովրդին։ Նրանք բռնի կերպով բնակչությանը տարագրում էին Միջագետքի և Սիրիայի կիզիչ անապատները։ Մեծ եղեռնի այդ օրերին, Բաղդադի, Հալեպի, Դամասկոսի և այլ քաղաքների շուկաներում ի շարս հարյուր հազարների հասնող հայ տարագիրների, հարություն էր առել ստրկավաճառությունը։

Մեր նախնիների կրած տառապանքները իրենց բոլոր սոսկումներով դալկացել, նսեմացել էին մեր ազգային նոր ողբերգության առջև։ Դեպքերի այսպիսի մռայլ իրադարձությունների շրջանում մեզ համար մահու և կենաց խնդիր էր օր առաջ էրգիր մըտնելը։ Մեր ժողովրդի օրհասական պայքարը և նրա կյանքի ճգնաժամային հուսահատ վիճակը հայ մարտիկների աչքերից խլել էր քունը։

Ահա այսպիսի իրադարձությունների պայմաններում վրդովված սրտով սպասում էինք հրաման ստանալու և առաջ շարժվելու։ Ապրիլի առաջին տասնօրյակը խիստ անձրևային էր։ Մեր զինվորական վրանները այլևս մեզ չէին փրկում հորդառատ և չդադարող անձրևներից։ Մենք ամբողջովին թրջվում էինք անձրևի ստեպ-ստեպ վարարող և կարճ ժամա-

նակով դադարող հեղեղից մինչև ծնկներս խրվում ցեխի մեջ։ Բարեբախտաբար, ապրիլի 11-ից անձրևը դադարեց, օրը պարզվեց, և թխպակալած երկինքը արեգակի ոսկեհուռ ճառագայթներից նոր կյանք ստացավ։ Բնությունը՝ երկիրը զուգելով զմրուխտի կանաչ և ալվան-ալվան ծաղիկներով, զվարթացրեց նաև ռազմիկներին. Ապրիլի 15-ին մեր հետախույզները, Կայծակ Ավոյի գլխավորությամբ, պարզեցին, որ թուրքական Գալի-պոլի կորպուսը, Խալիլ փաշայի հրամանատարությամբ երկու ամիս ճանապարհ կտրելուց հետո վերջապես դիրքավորվել էր Սալմաստի Զոլա գետի հոսանքն ի վար ընկած հայկական թափուր գյուղերի արվարձաններում, որոնց բնակիչները, ինչպես նշեցինք վերևում, երեք-չորս ամիս առաջ, գաղթել էին Արևելյան Հայաստան։ Կորպուսի գեներալ Զեռնոզուբովը հաջորդ օրը՝ ապրիլի 16-ին, Խալիլ փաշայի դեմ էր ուղարկել ռուսական մի գունդ, որը հարկ եղած պարագային պետք է պատնեշ հանդիսանար թշնամու դեմ՝ ապահովելով մեր զորքերի նահանջը դեպի Զուղա։ Ռուսական այդ գունդը, կռվի առաջին իսկ օրը տալով զգալի թվով զոհեր, խուճապի էր մատնվել։ Ստեղծված չափազանց վտանգավոր դրությունից դուրս գալու համար, ըստ գեներալ Նազարբեկյանի հրամանի, մեր գնդի I վաշտը, Սմբատի գլխավորությամբ հասավ տվյալ վայրը, ապրիլի 16-ի լույս 17-ի առավոտյան կարողացավ հարթել ստեղծված անհաճո դրությունը, սպասելով նոր ուժերի անմիջական օգնության։

Ռուսական կորպուսի հրամանատար զորավար Զեռնոզուբովի հրամանի համաձայն նույն օրը առավոտյան մեր զորամասը ռուսական հրետանու զորամասի հետ ձգելով մեր բանակատեղին, շարժվեց դեպի Սանամելիք հայկական գյուղի բարձրավանդակը։ Այդ օրը կտրել-անցել էինք բավականին մեծ տարածություն։ Երեկոյան մութն ընկնելուն պես անսպասելի լսվեց՝ դադար։ Զորամասը կանգ առավ մի կաթսայաձև սարահարթում և սկսեց ընթ-

րել, քիչ հետո երկինքը մռայլվեց, և մանրահատիկ անձրև տեղաց։ Ընթրիքից հետո անձրևը դադարեց։ Զորքը սպասողական դրության մեջ էր, վրաններ զարկելու հրաման չկար։ Արգելված էր նաև խարույկ վառելը։ Մենք տարակուսանքի մեջ էինք, երբ փոքր-ինչ անց խավարի միջից նշմարվեց խոյի կողմից դեպի մեզ եկող մի զորամաս։ Պարզվեց, որ այդ զորամասը բաղկացած է երկու հետևակային գումարտակից և չորս էսկադրոն Լաբինսկի կողակներից։ Զանցած մի քանի րոպե սարավանդակի ամենափոս ընկած կետում երևացին խարույկի բոցեր, որոնց արձակած լույսի տակ կանգնեցրին մի մեծ զինվորական վրան, որտեղ պիտի տեղի ունենար զինվորական խորհրդի արտակարգ նիստը՝ կորպուսի հրամանատար գեներալ-լեյտենանտ Ջեռնոզուբովի նախագահությամբ, դիվիզիայի հրամանատար զորավար Նազարբեկյանի և մի շարք շտաբական սպաների մասնակցությամբ։ Խորհրդին հրավիրված էր նաև Անդրանիկը իր թարգմանիչների ուղեկցությամբ (Աշխարհաբեկ Քալանթար և Արշակ Ջամալյան)։ Ինչպես նիստից հետո պարզվեց, կայացած խորհրդի միակ հարցն էր՝ դիմադրե՞լ Խալիլ փաշային, թե՝ նահանջել։ Կորպուսի հրամանատար զորավար Ջեռնոզուբովը, ահաբեկված Խալիլ փաշայի տարած նախկին հաջողություններից և նրա գերակշռող ուժերից, կարծում էր, որ միանգամայն անմտություն է դիմադրել թուրքական բանակին և գտնում էր առայժմ նահանջել Ջուղա, մինչև օժանդակ ուժերի հասնելը։ Նրա առաջարկին համամիտ էին խորհրդակցության ներկա բոլոր ռուս սպաները։ Միանգամայն հակառակ կարծիքի էր Անդրանիկը։ Խիստ առարկելով Ջեռնոզուբովի տեսակետին, նա պահանջում էր ոչ միայն դիմադրել Խալիլ փաշային, այլև առանց հապաղելու ջարդել և խուճապի մատնել նրա բանակը։ Սակայն Ջեռնոզուբովը ամուր էր կառչած իր կարծիքին և ընավ չէր կամենում զիջել Անդրանիկին։

Երկարատև վիճաբանությունից հետո վերջապես որոշվեց սկսել հարձակումը Խալիլ փաշայի կորպուսի դեմ։ Անդրանիկը, դիմելով Զեռնոզուբովին, ասաց. «Կերդվիմ թե՛ իմ և թե՛ ռուս ազգի բոլոր դարերում նահատակված հայրենասեր զավակներու սուրբ անուններով, որ վաղը կամ մյուս օրը այս ժամին մենք ձեզ հետ միասին Խալիլ փաշայի կորպուսի դեմ տարած մեր հաղթանակը պիտի նշենք հավուր պատշաճի։ Իսկ այժմ թույլ տվեք զիս ավելորդ ժամանակ չվատնել, որպեն թանկ է, պիտի շարժվել առաջ, քանի դեռ Խալիլին չի հաջողվել դիրքավորվել Սանամելիք գյուղի բարձունքներում...»։ Այս ասելով, Անդրանիկը, հրաժեշտ տալով ռազմական խորհրդին, դուրս եկավ Զեռնոզուբովի վրանից և քայլերն ուղղեց դեպի յուր գունդը։

Անձրևը վաղուց էր դադարել, հոգնած մարտիկները գարնանային աստղազարդ երկնքի տակ անուշ քուն էին մտել։ Արթուն պահակները հսկում էին նրանց խռովահույզ նինջը։ Շրջակա ճահիճների հավերժական բնակիչների (գորտերի) երեկոյան սիրային համերգը վաղուց էր լռել։ Մթնոլորտը հղի էր խորհրդավոր լռությամբ, միայն երբեմն-երբեմն մեր ձիերն իրենց եռանդուն խրխնջոցներով խախտում էին բնության այդ խորհրդավոր լռությունը։ Հյուսիսից երկնքի մի մասը պատած էր մութ ամպերով, և կարծես երկինքն ընդհուպ միացել էր երկրին՝ ողջագուրվելու լեռնային զանգվածների բարձր կատարների հետ։

Անդրանիկը մոտեցել էր իր գնդին, երբ հանկարծ մթության մեջ որոտաց նրա ձայնը՝ «պատրա՜ստ, արծիվնե՛րս...»

«Պատրա՜ստ»,— արձագանքեցին հանկարծ քնից արթնացած վաշտապետներն ավելի բարձր ու բամբ ձայնով։

Երբ զորագունդը կանգնեց շարքի, Անդրանիկը մարտիկներին և յուր զինակից ընկերներին դիմեց հետևյալ խոսքերով.

— Անվեհե՛ր քաջե՛ր, զինակից եղբա՛յրք, ձեզմե շատերը արդեն իրազեկ են վերջին օրերի իրադարձությանը։ Ձեզմե թաքցնելու ոչինչ չկա։ Ահա քանի մը օր է, ինչ Սալմաստի դաշտում է Թուրքական Գալիպոլի կորպուսը խալիլ փաշայի հրամանատարությամբ, որը Թուրքական կառավարության ռազմական գործերու նախարար և միաժամանակ բոլոր տեսակի ցամաքային և ծովային ուժերու գերագույն հրամանատար Էնվեր փաշայի քեռին է։ Անոր կորպուսը մարզված է գերմանական ականավոր ռազմագետներու կողմե։ Նա Թուրքական բանակի աչքն է։ Անոր վրա Թուրքական պետությունը և մասնավորապես անձամբ ինքը Էնվեր փաշան մեծ հույսեր է դրել։ Այդ կորպուսը երկու ամսեն ավելի է, ինչ դուրս է եկել Գալի-պոլից և իրենց անցած ճանապարհին արյան արցունքով հեղեղել հայաբնակ քաղաքներն ու գյուղերը և եկել հասել է մեզ։ Մեր ճակատի ընդհանուր հրամանատար զորավար Ջեռնոզուբովը, չկամենալով կռվի բռնվել խալիլ փաշայի կորպուսի դեմ, վճռել էր կրկին դիմել անմիտ նահանջի մինչև Ջուղա։ Այդ առթիվ քիչ մը առաջ տեղի ունեցած զինվորական խորհրդում մեզ հազիվ հաջողվեց համոզել Ջեռնոզուբովին հետ կանգնելու մեզ համար կորստաբեր այդ քայլեն։ Վերջապես շատ մեծ դժվարությամբ հաջողվեց որոշել չնահանջել, այլ ջախջախել, խուճապի մատնել թշնամուն։ Տեղի ունենալիք ճակատամարտի ամբողջ պատասխանատվությունը դրված է ինձ վրա։ Ես ամենայն ուրախությամբ հանձն առա այդ պատասխանատվությունը՝ վստահանալով ձեր քաջությանն ու գիտակցությանը, որ ձեզ պես անվեհեր ու անձնվեր առյուծասիրտ հերոսներ ունեմ։ Քաջե՛րս, թույլ տվեք հուսալ, որ ես սխալված չեմ ձեր վերաբերմամբ, որ ձեր հերոսությամբ մի անգամ ևս իրավունք կտաք հայ ազգին հպարտանալու իր անձնվեր զավակներու անուր անարգ թշնամուն դեմ տարած մի նոր փառավոր հաղթանակով։ Դուք գիտեք, որ մինչև այժմ թշնամին չի տեսել մեր թիկունքը, երաշխավորեցեք զիս

ձեր պատվո խոսքով, որ հետ այսու ալ մեր անա-
մոթ թշնամուն երբեք չի հաջողվի տեսնել մեր թի-
կունքը։ Չեմ ծածկում, թշնամին իր քանակով գերա-
կշռում է մեզ։

Եթե դուք վստահ չեք ձեր ուժերու վրան, ապա
կաղաչեմ ձեզ, բարձրացրեք ինձ և իմ զինակից ըն-
կերներուն ձեր սվիններու վրա և տարեք ա՛յ
հոնտեղ, ուր պատմական Տղմուտի աջ ափին բարձ-
րացող բլրի գագաթին կեցած մեծ մատուռի տակ
հավիտենական քնով հանգչում է Ավարայրի ճա-
կատամարտի, մեր ազգային փառքի դյուցազն Վար-
դան Մամիկոնյանը և կենդանի-կենդանի թաղեցեք
մեզ նրա կողքին, քան թե լքելով ճակատը անար-
գեք մեր հերոս նախնիներու շիրիմները։

— Հայրի՛կ, հայրի՛կ,— գոչեցին մարտիկները
միաբերան,— առաջնորդեք մեզ թեկուզ դեպի գե-
հեն, դեպի դժոխք, դեպի կրակ՝ միևնույն է, հա-
նուն սրբազան հայրենիքի ազատության պատրաստ
ենք մեռնել գիտակից մահով, քան թե լքել ռազմի
դաշտը և արատավորել մեր ազգի պատիվը։

— Ուրեմն, օ՛ն, հառա՛ջ, բազեներս, հառա՛ջ
դեպի Վան, թող ձեր գաղափարի ուղին լուսավորե
մեր մեծ նախնիներու անմահ անունները...

Մեր գունդը ուռա՜ գոչելով շարժվեց առաջ։ Մեզ
հետևեցին նաև ռուսական զորամասերը։ Գիշերը
ծպտյալ հասնելով արդեն անմարդաբնակ հայկա-
կան Սանամելիք գյուղի բարձունքները, մենք դիր-
քավորվեցինք սպասվելիք ճակատամարտի առաջին
գծի իրամատներում, որը նախապես պատրաստել
էր Սմբատը։ Պաշտպանության երկրորդ գիծը Անդ-
րանիկը հատկացրեց ռուսական հետևակ զորամասին՝
բաղկացած երեք հազար սվիններից։ Խորհրդակցե-
լով հրետանու փոխգնդապետի հետ, նա հրամայեց
վեց լեռնային թնդանոթներից կազմել երեք հրագիծ-
երկուական թնդանոթ աջ և ձախ թևերին, երկուսն
էլ պաշտպանության առաջին գծի կենտրոնական
մասում։ Այնուհետև խորհրդակցելով կոզակների
գնդապետի հետ, նա բաժանեց 250-ական թուր, աջ

և ձախ թևերին, ավելացնելով նրանց թվին 100-ական թուր հայկական հեծելազորից, 500 թուր դարանակալների և 150 թուր Կայծակ Ավոյի գլխավորությամբ ուղարկեց դեպի խանասորի կիրճը՝ դարան մտնելու, որպեսզի հաջողության դեպքում թուրքական նահանջող բանակին խուճապի մատնե գիշերային խավարի միջից։ Եթե ընթերցողն իր ձախ ձեռքը բարձրացնի օդի մեջ և դիտի նրա թիկունքի կողմից միմյանցից անջատված հինգ մատներին, ապա նա կարող է մոտավորապես պատկերացնել մեր բռնած դիրքերի տեղադրությունը։ Այդ դիրքերի աջ և ձախ թևերի պաշտպանության պատասխանատվությունը Անդրանիկը այս անգամ ևս վստահել էր իր ամենասիրելի և ամենաքաջ ընկերներին՝ աջ թևը Սմբատ Բորոյանին, իսկ ձախը՝ Սեպուհին, դիրքերի կենտրոնական մասը՝ ախալցխացի Արտաշես Սուճյանի, զեյթունցի Հովնանի և մալաթիացի Թադևոս Լովպազյանի վաշտերին, որոնք իրենց հերթին գտնվում էին Անդրանիկի անմիջական հսկողության տակ։ Ինչպես նշեցինք, պաշտպանության երկրորդ գիծը անմիջապես հանձնված էր ռուսական զորամասերին, որոնք խստիվ զգուշացված էին, որ մեր ուռայի՝ որպես սվինամարտի նախերգանք, ձայնը լսելուն պես նրանց հետևակի մի մասը պիտի բռնի մեր թողած դիրքերը, իսկ մյուս մասը դարանակալած հեծելազորի հետ պիտի նետվի ռազմի դաշտ՝ միասնական ուժերով ջախջախելու թշնամու խիտ շարքերը։

Մեր և թշնամու միջև ընկած տարածությունը, այսինքն՝ Զոլա գետի ձախ ափից մինչև Սանամելիք գյուղի բարձունքները մոտ երկու կիլոմետր էր։ Ինչպես ամբողջ Սալմաստի դաշտերում, այնպես էլ այդ տարածությունում փռված էր հացահատիկների մարդաբոյ արտերը, որոնք սկսել էին հասկակալել, և գարնանային զեփյուռից մեղմ ալիքավորվում, ծփում, ծածանվում էին։ Մեր գրաված բարձունքների ստորոտները զարդարվել, պճնվել էին բուրումնալից մանուշակի գույներով, կուժկոտրուկներով և գար-

նան վաղահաս այլ ծաղիկներով։ Հորիզոնը դեռ նոր էր շառագունել, երբ օդը լցվեց դեպի Կապուտան ծովը ճախրող ճայերի կոնչոցներով և արտերում բուն դրած լորերի, արտույտիկների և այլ հավքերի դայլայլներով։ Բնության այդ հոգեզմայլ խաղաղության նուրբ հմայքի տեսարանը հանկարծ մոայլվեց թուրքական բանակի հրետանու որոտընդոստ հոնդյուններով։ Թշնամին հարձակման էր դիմում։ Նրա վաշտերի խիտ շարքերը հետևում էին մեկը մյուսին, և հրացանների փողերը ուսերից ցած կախած արտերի կանաչ ծովի միջով շարժվում էին դեպի մեր դիրքերը։ Նրանց հարձակման շարժը մեր դեմ ապահովում էր իրենց մոտ 20-ի հասնող լեռնային և դաշտային թնդանոթների անդադար համազարկերով և սրերը մերկացրած հեծելազորով։

Մեզ հրամայված էր զինվել համբերությամբ, մինչև թշնամին մոտենար մեր դիրքերին այնքան, որ մեր ամեն մի համազարկը իզուր չանցներ։ Տարօրինակ էր, մեր բախտից նրանց թնդանոթների արկերը կամ չէին հասնում մեր դիրքերին, կամ սլանում անցնում էին դիրքերի վրայից և որ, ամենաէականն է, մեծ մասամբ դրանք չէին պայթում։ Այս երևույթի կարևոր պատճառներից մեկն էլ այն էր, որ ինչպես պարզվեց վերջում, թուրքական հրետանու ղեկավար կազմը մեծ մասամբ բաղկացած էր Ադանայի և աֆիոնգարահիսարցի թրքախոս հայերից՝ Ջեբեջի հայի հրամանատարությամբ, ինչպես նաև Անդրանիկի անձնական ծանոթ մակեդոնացի զինվորներից, որոնք որպես կամավորներ Անդրանիկի հրամանատարության ներքո 1908 թ. Բալկանյան պատերազմին բուլղարական բանակի շարքերում կռվել էին թուրքերի դեմ։

Մեր դեմ առաջացող թշնամու ջոկատների առաջին շարքերը թափվեցին գետնին, մեր հերոս զավակների գնդացիրների տարափից, որի հետևանքով հակառակորդի խիզախող շարքերի առաջին գրոհը անցավ ապարդյուն։

Մեր ճակատի աջ ու ձախ թևերի վրա սպասող թշնամու հեծելազորը, տեսնելով փախուստի մատնված հետևակին, մի պահ հրաժարվեց մեզ շրջապատելու մտքից և նժույգների գլուխները շուռ տվեց փախչող հետևակ վաշտերին կարգի բերելու։ Այդ պահին հայկական հեծելազորը, միացած ռուս կոզակներին, թրերը մերկացրած սրարշավ աջ ու ձախ թևերից կայծակնային արագությամբ հարձակվեց թշնամու հեծելազորի վրա և փախուստի մատնեց նրան։ Այդ օրը արևը թեքվելուն պես թշնամին մեկ անգամ ևս փորձեց մեզ շրջապատել, բայց նրա ջանքերը այս անգամ ևս ապարդյուն անցան։

Ապրիլի 18-ի լույս 19-ի գիշերը թշնամին խուսափեց գիշերային հարձակումից։ Բայց ապրիլի 19-ի լուսաբացին կրկին դիմեց նախահարձակման. այս անգամ ավելի հախուռն ու ավելի կազմակերպված։ Նրա հրետանու փոթորկալից կրակի հոնդյունից թնդում ու ճայթում էր օդը և դողում գետինը։ Թշնամու ջոկատների շարքերը և այրուձին, ոմանք «ղանլը վաթան» (արյունոտ հայրենիք) երգելով, ոմանք՝ ալլա՜հ-ալլա՜հ կանչելով, ոմանք մեր հավատքի հասցեին բազմաթիվ լուտանքներ թափելով, ոմանք էլ թմբուկ զարկելով, ամբողջ ճակատի լայնությամբ շարժվում էին մեր դեմ։ Առաջին օրը Անդրանիկը դիտավորյալ արգելել էր գործի դնել մեր հրետանին, և թշնամին մոլորվել էր կարծելով, թե մենք զուրկ ենք թնդանոթներից։ Ճակատամարտի երկրորդ օրը, նա ոգևորվելով այդ դրությունից, իր հրետանու դիրքերը տեղավորել էր ավելի առաջ, բաց դաշտի վրա, առանց որևէ քողարկման։ Երբ թշնամու զորասյունները ջոկատ առ ջոկատ, վաշտ առ վաշտ, մեկը մյուսի հետևից ցորենի կանաչ ալեծուփ արտերի միջով անհողդողդ քայլերով շարժվեցին դեպի մեր դիրքերը, այնքան, որ նրանց դեմքերը պարզ նշմարելի էին, այդ պահին օդը թնդաց մեր և թշնամու հետևակի համազարկերից, գնդացիրների կարկտի տարափից ու հրանոթների փոթորկալից հոնդյուններից։ Մեր հրետանու դիպուկ արկերից շու-

տով թշնամու 3—4 թնդանոթներ դադարեցին գործել, և նրանց հետևակի վերջին շարքերի առաջընթացի համար սկսվեց մի անել կացություն։ Այնուամենայնիվ, կեսօրին թշնամուն հաջողվեց գրավել Սանամելիք գյուղը։ Սակայն, թշնամին չկարողացավ իր ձեռք բերած հաջողությունը օգտագործել մեր դեմ։ Նրանց հեծելազորը, որ թվով 3—4 անգամ գերազանցում էր մեր և ռուսների հեծելազորին, նախորդ օրը հասնելով հաջողության փորձում էր մեկ անգամ ևս շրջապատել մեզ։ Բայց մեր զորամասերի համառ ու անսասան դիմադրության հետևանքով այս անգամ նա անզոր եղավ իրագործելու իր նպատակը։

Ճիշտ է, դրությունը երկու կողմից էլ օրհասական էր, սակայն Անդրանիկը և իր զինակից ընկերները համոզված էին, որ ճակատամարտը մենք կշահենք։

Արդեն օրը ճաշ էր դարձել։ Կռիվը շարունակվում էր, բայց նահանջի մասին ոչ ոք չէր խորհում, ո՛չ թշնամին և ո՛չ էլ մեր հրամանատարական կազմը։ Երկու կողմից էլ անդադար կրակ էր տեղում։ Թշնամին չէր համարձակվում շարժվել դեպի մեր դիրքերը։ Նա կարող էր մեզ դուրս քշել մեր բարձրադիր խրամատներից, եթե միայն նրան հաջողվեր իր հեծելազորով թևանցել մեր աջ ու ձախ թևերը։ Բայց այդ պարագան ևս վտանգավոր էր, որովհետև այդ դեպքում նրանք անպայման պիտի ընկնեին ծուղակի մեջ. մի՛ կողմից մեր թիկունքի երկրորդ գծի խրամատներում սպասող թարմ հետևազորի, դարանակալած հեծելազորի և մյո՛ւս կողմից՝ մեր աջ ու ձախ թևերի պաշտպան հեծելազորի և ճակատի առաջին գծի վրա հերոսաբար մարտնչող հայ կամավորների շեշտակի կրակի։ Հիրավի, կեսօրից հետո թշնամին մեզ շատ էր նեղում և ճիգ ու ջանք չէին խնայում հասնելու իրենց նպատակին, մերոնք էլ իրենց հանդուգն ու համառ դիմադրությամբ արգելում էին թշնամուն անցնելու մեր թիկունքը։

Թշնամու հույսերը վերջնականապես ի չիք եղան այն ժամանակ, երբ ըստ Անդրանիկի հրամանի, մեր աջ և ձախ թևերի լեռնային հրետանու փողերը ուղղվեցին դեպի թշնամու հեծելազորը, որոնք մեր հրանոթների փոթորկալից կրակի տակ հարկադրված շուռ տվին իրենց ձիերի գլուխները դեպի ետ։ Հաջողությունը ծնում է հաջողություն։ Գարնան այդ պարզ ու գեղածիծաղ արևոտ օրը հանկարծ որտեղից որտեղ, բոլորովին անսպասելի Սալմաստի դաշտերը եգերող սարերի դագաթները պատեցին թանձր ամպերը, արևը ծածկվեց ամպերով, սկսեց մրրիկ, փայլակ, կայծակ ու որոտմունք և ապա սոսկալի հեղեղ ու կարկուտ։ Անդրանիկն անմիջապես օգտագործելով բնության այդ տարերքը, երիվարեց իր ձին և բարձր գոռաց. «Ուռա՜... հառա՜ջ արծիվներս, օ՜ն, սվինամարտի» և իր թուրը մերկացրած առաջ նետվեց իր դիտակետից դեպի ցած, որին հետևեցին թե՛ իր զինակից ընկերները և թե՛ ամբողջ կամավորական դունդն ու հեծելազորը, ներառյալ նաև դարան մտած հեծյալների զորամասերը։ Մեր պաշտպանության երկրորդ դծի ռուսական հետևակը, Անդրանիկի հրամանի համաձայն, ուռա՜ գոչելով շտապեց դրավել մեր թողած դիրքերը, պաշտպանելու մեր թիկունքը։ Հեղեղը շարունակվում էր։ Տեսարանը աննկարագրելի էր։ Ահաբեկված թշնամին հանկարծակիի գալով անմիջապես խուճապի մատնվեց, ռազմի դաշտում թողնելով բազմաթիվ սպանվածներ ու վիրավորներ։ Ռուսական թիկնապահ զորամասը նկատելով, թե ինչպես խալիլ փաշայի բանակը խուճապի մատնված փախչում է դեպի Զոլա գետը, շտապ հետևեց մեզ, որպեսզի ավելի ուժեղացնի փախչող թշնամու հալածանքը։ Զոլա գետը կատաղել էր հեղեղից։ Նա հորդացել, դուրս էր եկել ափերից և դազանի պես մռնչալով փրփրաբաշ Տիգրիսի նման գահավիժում էր առաջ։ Գլուխը կորցրած թշնամին ժամանակ չուներ կամուրջ որոնելու։ Առանց մտածելու հետևանքի մասին, նետվում էր պղտոր ջրի ահավոր ալիքների դիրկը՝ փրկարար ափը ելնե-

լու համար։ Բայց, ավաղ, շատերին այդ չէր հաջողվում, մեծ մասամբ նրանք կամ խեղդամահ էին լինում, կամ մեր զորամասերի համազարկերից ու գնդացիրների տարափից սպանվում էին։ Երեկոն վրա հասնելուն պես օրը պարզվեց, շուտով չքացան ամպերը, և կաթնանման լուսինն ու գոհարանման աստղերը անվրդով շարունակեցին իրենց հավերժական ճամփան բարի գիշեր և հանգիստ քուն մաղթելով ընկածներին։

Ահաբեկված, գլուխը կորցրած, հուսահատ խալիլ փաշան, ձգելով ռազմի դաշտը, իր շտաբի անձնակազմի հետ գլխիկոր երիվարում էր դեպի Դիլիման խանասոր և ապա Բաշկալե։ Նրան կրնկակոխ հետևում էին իր բանակի մնացորդները՝ հազար ու մի անեծք թափելով իրենց հրամանատարության հասցեին՝ կռվի դաշտում թողնելով բազմաթիվ սպանվածներ, վիրավորներ, գերիներ և մեծ չափով ռազմական ավար. հրանոթներ, արկեր, գնդացիրներ, հրացաններ, փամփուշտներ, նռնակներ, մանր ու խոշոր եղջերավոր անասուններ, ալյուրի, ձավարի և պաքսիմատի պաշար։ Բարեբախտաբար գերիների մեջ էին մեր կողմն անցած մի քանի հայ և մակեդոնացի թնդանոթաձիգ զինվորներ՝ իրենց հրամանատար հայ Ջեբեջիի գլխավորությամբ։ Ինչպես միշտ, այս անգամ ևս Անդրանիկի առաջին հոգսն եղավ կերակրել բանակին և հոգ տանել վիրավորների և սպանվածների մասին։

Այնուհետև կարգադրեց մինչև լուսաբաց հոգալ մեր նահատակներու դիակները ռուսական զորամասի նահատակներու հետ փոխադրելու Ղալասարի հայկական եկեղեցու գավիթը՝ մյուս օրը հողին հանձնելու։ Ապա Անդրանիկը ասաց.

— Ո՞ւր են մեր բժիշկները, չեն երևում նոքա։

— Հոստեղ եմ, փաշա, թույլ տվեք զեկուցելու,— արձագանքեց Շվեյցարիայից հայրենիքի կանչին եկած զեյթունցի երիտասարդ բժիշկ, վաղամեռիկ Հայկազուն Նալբանդյանը,— մենք ունենք 48 թեթև և միջակ ծանրությամբ վիրավորներ, որոնց թվումն

է նաև մեր ամենիս սիրելի վաշտապետ ախալցխացի Արտաշես Սուճյանը։ Բոլոր վիրավորներն ալ արդեն տեղափոխված են Խոյի ռուսական ռազմադաշտային հիվանդանոցը։ Նահատակներու թիվը 14-ն է, որոնց թվում է նաև Թադևոս Լովպաղյանը, բոլոր նահատակներու դիակները փոխադրված են հոն, ուր ինքներդ եք կամենում, նշանակված են պատվո պահակներ։ Մեր զոհերեն զատ ռուսական զորամասերը տվել են ութը սպանված և քսան վիրավոր։ Ռուս վիրավորներն իրենց նահատակներու հետ փոխադրված են Խոյ։

— Ապրե՛ս, տղաս, այժմ ինձ հետաքրքրում է, թե ինչ է արված թշնամու տված զոհերու թիվը ստուգելու համար։

— Թշնամու կողմից սպանվածներու թիվը կհասնի մոտավորապես 920-ի, իսկ վիրավորներու թիվը՝ մոտ 1400-ի։ Սպանվածները ռուսական զորքերու և մեր բանակայիններու ջանքերով արդեն հանձնվում են հողին։ Թուրք վիրավորները նույնպես ուղարկված են Խոյ։

Մութն ընկնելու վրա էր, թուրքական նահանջող բանակի բռնած ճանապարհի հեռուներից լսվում էր հրացանների խուլ համազարկեր։

— Լսո՞ւմ եք, ախպարս, Ավոն մեր այսօրվա հաղթանակի պակասը կլրացնե խանասորի կիրճով խուճապի դիմած թշնամուն։

Այդ ընթացքում ռուսական զորամասերի շարքերը բռնեցին նախապես իրենց հատկացված առվույտի դաշտը։ Անդրանիկը թարգմանի միջոցով իր շնորհակալությունը հայտնեց ռուսական սպայակազմին և նրանց զորամասերին իրենց ցուցաբերած քաջագործությունների համար։ Տեսարանն այնքան ուրախալի էր, որ ռուս սպայակազմը, գրկելով Անդրանիկին, մի քանի անգամ իրենց ձեռքերի վրա բարձրացրած օդը նետեցին, գոչելով. «Բրա՛վո, բրա՛վո, հայրի՛կ, խալիլ փաշան առանց ետ նայելու փախչում է»։

Այդ օրվա մեր տարած հաղթանակի շնորհիվ ռուսական մի փոքրիկ զորամասի հաջողվեց հաջորդ օրը առանց դժվարության գրավել Ուրմիան, որտեղից նախապես փախուստի էր դիմել թշնամին դեպի Ջուլամերիկ։ Վերջապես վրա հասավ գիշերը, և հոգնած զորամասերը հնարավորություն ստացան հանգիստ քնելու։ Բացառություն էին կազմում միայն խոհարարական կազմը, պահակներն ու ինքը՝ Անդրանիկը, որը շրջում էր իր վրանի առջև ու մեղմ ձայնով երգում ինչ-որ ինձ անծանոթ, սակայն դուրեկան մի մեղեդի։

Ապրիլի 20-ի լույսը նոր էր բացվել, որ դիվիզիայի հրամանատար զորավար Նազարբեկյանը յուր շքախմբով կանգնեց Անդրանիկի առջև։ Պահակապետը, պատվո նշան բռնելով զորավարին, շտապեց արթնացնել Անդրանիկին, որ նոր էր գլուխը բարձին դրել։ Նա իսկույն ոտքի ելավ և զորավար Նազարբեկյանին հանդիպեց վրանի շեմին, նրանք գրկախառնվեցին։ Անմիջապես որպես թարգման հրավիրվեց Ա. Քալանթարը։ Զորավար Նազարբեկյանի դեմքի մռայլությունից Անդրանիկը իսկույն կռահեց, որ զորավարը դարձյալ անհաճո լուր պիտի հաղորդե, ուստի մռայլվեց նաև իր դեմքը։ Զորավար Նազարբեկյանը նա՛խ հայտնեց անձամբ իր և ռուսական սպայակազմի հիացմունքը Անդրանիկի՝ Խալիլ փաշայի դեմ տարած փառավոր հաղթանակի համար և ապա՛, հաղորդելով կորպուսի հրամանատար Ջեռնոզուբովի գրավոր շնորհակալությունը, տեղեկացրեց, որ ըստ գեներալի հրամանի առայժմ արգելված է հետապնդել նահանջող թշնամուն մինչև նոր հրաման ստանալը։ «Նախաճաշից հետո ձեր գունդը պետք է շարժվի,— շարունակեց Նազարբեկյանը,— Դիլիմանից ոչ հեռու գտնվող պարսկական Վարդանա կոչվող գյուղի հյուսիսային մասը, իսկ ռուսական զորամասերը պիտի բանակատեղի ընտրեն Դիլիման քաղաքի հյուսիսային արվարձանը։

— Սա ի՞նչ հանելուկ է, ախպարս, տեսնվա՞ծ բան է չհետապնդել փախչող թշնամուն... Ըստ իս

այդ գործում հապաղելը հանցանք է։ Անգամ մը զարկեցիր թշնամուդ, ապա առանց հապաղելու պիտի հետևես ու հալածես անոր այնքան, որ անիկա ժամանակ անգամ չունենա խորհելու կրկին անգամ ելնելու քո դեմ։

— Ոչի՛նչ,— առարկեց Նազարբեկյանը,— այս անգամ մեր հանգիստը երկար չի տևի։ Հենց որ օժանդակ գնդերը հասնեն Ջուղա, մենք առանց ժամանակ վատնելու կշարժվենք առաջ։

— Ձերդ գերազանցություն, իմ ցավն այն է, որ մենք շուտ հասնենք Վան, այլապես հոնտեղ սկսած հայկական ապստամբությունը, մեր հապաղման պարագային, գազազած խալիլ փաշան կարող է արյան բաղնիքի մեջ խեղդել։

— Իսկ դուք չե՞ք վախենում, որ հանկարծ խալիլ փաշան, թարմ ուժեր ստանալով, կարող է իսկույն իր գլուխը շուռ տալ մեր դեմ։

— Չեմ ժխտում, ատանկ խոհեր կանցնին նաև իմ մտքով, սակայն չեմ հավատար, անոնք լավ տեսան մեր ռազմունակությունը։ Անգամ մը թշնամուց ահաբեկված զինվորը այլևս լիարժեք ռազմիկ չէ, այլ կիսատ-պռատ վեհերոտ զինվոր մը։

— Դե՛, մի վրդովվեք. «Կամաց գնաս, շուտ կհասնես»,— այսպես է ասում ժողովրդական առածը։

— Ատիկա հաճախ լսած եմ իմ վաղ տարիքից մեր ծերերեն։ Բայց կա նաև ատոր հակառակը՝ «Մեծե երկաթը, քանի դեռ անիկա շիկացած է»։ Ուրեմն դուք սպասո՞ւմ եք օժանդակ ուժերու։

— Այո՛, այսօր կամ վաղը նրանք պիտի դուրս գան Թիֆլիսից և երբ հասնեն Ջուղա, մենք հանգիստ սրտով կսկսենք հետապնդել նահանջող թշնամուն։

— Էհ, թող այս անգամ ալ ձեր ըսածը ըլլա, միայն թե զիս կրկին չկանգնեցնեք նոր անակնկալներու առջև։

Այդ օրը մեր գունդը շատ վաղ նախաճաշեց և որպես ճանապարհի պաշար խաշած միս ստանալուց հետո կազմ ու պատրաստ շարժվեց դեպի Դիլիման։ Հասնելով հայկական Ղալասար գյուղի եկեղեցու

գավթին, որտեղ նոր փորված եղբայրական գերեզմանատան եզրին շարված էին մեր նահատակ զինակից եղբայրների դիակները, Անդրանիկը այլայլված դեմքով, աղեխարշ արցունքները աչքերին դամբանական ճառ ասաց, ապա ծնկի եկավ համբուրելու նահատակներին, նրան հետևեցին իր զինակից ընկերներն ու ռազմիկները։ Հայտնի պատճառով արգելված էին համազարկերը, որի փոխարեն նահատակվածների դիակները գերեզման իջեցնելիս գունդը երգեց.

Սմենայն տեղ մահը մեկ է,
Մարդ մի անգամ պիտ մեռնի,
Բայց երանի որ յուր աղգի
Ազատության կզոհվի։

Նահատակների թաղումը վերջացնելուց հետո գունդը համաձայն հրամանի շարժվեց դեպի պարսկա-թուրքական սահմանագլխի Վարդանա գյուղը՝ ճանապարհին հանդիպելով ռուսական հեծելազորին և հետևակին։

Անցնելով Դիլիման քաղաքը և հայկական Սավրա գյուղը, մենք կեսօրից հետո հասանք Վարդանա և բանակատեղի ընտրեցինք նրա արևմտյան արվարձանը։ Ռազմական ճամբարում օրերն անցնում էին միապաղաղ և տխուր։ Անդրանիկն ու իր զինակից ընկերները շատ էին մտահոգված Վանի վիճակով, նրանք շարունակում էին դժգոհել ռուսական հրամանատարության դանդաղկոտությունից։ Ըստ մեր հետախույզների հաղորդած տեղեկությունների, խալիլ փաշայի առաջապահ զորամասերը դիրքավորվել էին Վան տանող Բաշկալե գյուղաքաղաքի բարձունքներում և Ջուխա Գյադուկի արևելյան փեշերին, իսկ հետնապահ զորամասերը Բարդուղիմեոս առաքյալի վանքի հանդիպակաց Խանասորի սարավանդակի բլուրներին ու բարձունքներին։

Օգտվելով ժամանակավոր դադարից և բարենպաստ եղանակից, Անդրանիկը մի քանի օրվա ընթացքում նորոգել տվեց գնդի հեծելազորի ձիերի թամ-

քերը։ Մարտիկներին ասեղ ու թել բաժանելով, հրամայեց, որ ամեն ոք կարկատի իր հանդերձանքը, սափրվի և լողանա։ Միաժամանակ բժիշկներին կարգադրեց, որ վերջիններս մի քանի օգտակար բժշկական զրույցներ անցկացնեն գնդի ռազմիկների հետ սուր վարակիչ և տարափոխիկ հիվանդությունների մասին։ Հայագետներին էլ պատվիրեց իրազեկ դարձնել մարտիկներին հայոց պատմության այս կամ այն դարի նշանավոր դեպքերին և «Հայկական հարցին»։

Վերջապես ապրիլի 27-ին ռուսական զորամասերի հետ շարժվեցինք հետապնդելու փախչող թշնամուն։ Ինչպես միշտ, այս անգամ ևս առաջապահները մենք էինք։ Մեր առաջապահի ընթացքը նկատելուն պես թշնամին առանց դիմադրելու ձգեց խանասորի բարձունքները և, անցնելով Բոհտան սուն, շարունակեց իր նահանջը դեպի Բաշկալե և Ջուխա Գյադուկ։ Մեր զորամասերն էլ, անցնելով Բոհտան սուն, դիրքավորվեցին Բարդուղիմեոս առաքյալ վանքի աջակողմյան բարձունքներում, բացի Ավոյի հեծելազորից, որին հրամայված էր չափազանց զգույշ հետապնդել Բաշկալեի ուղղությամբ նահանջող թշնամու զորամասերին։ Ապրիլի 29-ին, դեռ լույսը չբացված, մեր հետևակը, ըստ Անդրանիկի հրամանի, բռնեց Ջուխա Գյադուկի գագաթները։ Նույն օրը մեր հեծելազորը Ավոյի հրամանատարությամբ մեկ-երկու ժամ տևող կռվից հետո գրավեց Բաշկալեն։ Պարտված թշնամին նահանջեց Խալիլ փաշայի գրլխավոր ուժերի կողմը։ Ըստ դիվիզիայի հրամանատար Նազարբեկյանի և Անդրանիկի համատեղ հրամանի, հաջորդ օրը, այսինքն՝ ապրիլի 30-ին, մենք պիտի նախահարձակ լինեինք թշնամու վրա, բայց ո՞վ զարմանք, թշնամին անսպասելի աճապարանքով ձգել էր դիրքերը և նահանջել անորոշ ուղղությամբ։ Նույն օրը երևկոյան Թիֆլիսից Անդրանիկի հասցեով ստացվեց հեռագիր հետևյալ բովանդակությամբ. «Վանն ազատագրված է, ապստամբությունը պսակ-

ված է լիակատար հաղթանակով։ Ջեվդեթ փաշան իր ռազմական ուժերով ամբողջ թուրք ազգաբնակչության հետ խուճապի մատնված ձգել է Վանը»։

Այդ ուրախ լուրը կայծակի արագությամբ տարածվեց բոլոր դիրքերում, և թնդացին խրոխտ ուռա՜նները։ Լույսը բացվելուն պես պարզվեց, որ Խալիլ փաշան, լսելով Վանի կուսակալ Ջեվդեթ փաշայի պարտությունը ապստամբ հայերից, շտապ փոխել է իր նահանջի ուղին և Կորդվաց լեռներով շարժվել դեպի հարավ-արևմուտք։ Այդ օրվանից մեր առջև ծառացավ մի կարևոր խնդիր՝ առաջ ընթանալ դեպի ազատագրված Վան, շարունակելով հետապնդել թշնամու բանակի մնացորդներին։ Ռազմագիտական նկատառումներից ելնելով էլ մեր հրամանատարությունը նախապատվություն տվեց դեպի Վան մեր երթին, որովհետև հակառակ պարագային սխալ կլիներ բռնել Վանի ճամփան, մեր թիկունքում թողնելով մի այնպիսի պատկառելի ուժ, որպիսին է Խալիլ փաշայի արդեն մեկ անգամ մեզնից ջարդ կրած կորպուսը։

1915-ի մայիսի 1-ի կեսօրին թե՛ մեր և թե՛ ռուսական զորամասերը մտան հեծելազորի կողմից գրավված Բաշկալե գյուղաքաղաքը։ Թեև վերջինս իր ծուռումուռ, նեղլիկ ու կեղտոտ փողոցներով և ցածրիկ կավածեփ խրճիթներով շատ էր հեռու անգամ գյուղաքաղաք կոչվելուց, բայց կանգնած լինելով Հնդկաստանից Իրան—Թուրքիա և ապա Եվրոպա տանող առևտրական խոշոր ճանապարհի վրա, ուներ մի քանի քարվանսարա, թանկարժեք պարսկական գորգերի, կաշվեղենի, բրդի, բամբակի, նռան կճեպի, չորացրած նպարեղենների բազմաթիվ հարուստ պահեստներ, եվրոպական կերպասեղենի և բրդյա գործվածքեղենի խանութներ, ոսկեղենի արհեստանոցներ և զոհարեղենի խանութներ։ Գյուղաքաղաքի հայ, ասորի և հրեա ազգաբնակչությանը, այն գրավելուց շատ առաջ, թուրքերը տեղահան էին արել։ Թուրքերն էլ քրդերի հետ փախել էին քաղաքը մեր գրավելուց 2—3 օր առաջ։ Ակներև է, որ քաղաքի թվածս հա-

թրստությունը մեզ զինամթերք մատակարարող հարյուրավոր ուղտերով փոխադրվեցին Խոյ՝ կորպուսի հրամանատար Զեռնոզուբովի տրամադրության տակ։

ԿՈՐԴՎԱՑ ԼԵՌՆԵՐՈՒՄ

(Տիգրիսի կիրճում)

Շատ շուտով մենք հասանք Առագ գյուղը։ Մայիսի 2-ի լուսաբացին նոր էինք պատրաստվում շարժվել Առագ գյուղից, երբ ցնցոտիապատ մի տղայեկ վազելով դեպի բժշկասանիտարական խմբի գիշերած փոքրիկ ձորակը, աղի արտասուքն աչքերին ասաց, թե ինչո՞ւ գիշերելու համար անպայման ընտրել ենք այս ձորակը և այն էլ հենց այն տեղը, որ երեկ թուրքերն ի թիվս շատ այլ հայերի մորթեցին նաև իր ծնողներին և թաղեցին հենց այստեղ, այս ձորակի մեջ, այս ավազի տակ։ Դժբախտ տղան 9—10 տարեկան հազիվ լիներ, խոսում էր համարձակ և բողոքող ձայնով Արճկա և Սալմաստի խառն բարբառով։ Մերոնք փշաքաղված լսածից, մոտեցան, գրկեցին տղային, շոյեցին նրա գանգուրները, փաղաքշեցին, մխիթարեցին նրան, ապա հարցրեցին. «Երեկ օրվա ո՞ր պահին սպանեցին քո ծնողներին»։

— Երեկ երեկոյան նրանք մորթեցին ոչ միայն իմ ծնողաց, այլև հմեն հայերին և ասորիներին։

— Հապա դու ինչպե՞ս ազատվեցիր այդ գազանների ձեռքից...

— Ես մտա մեր շան բունը և տապ արի... Նրանք շտապում էին, մեր գյուղի բնակիչների կեսն էլ փախավ Ջուլամերիկ...

— Եթե մենք վերցնենք քեզ մեզ հետ, կգա՞ս...

— Հապա չե՞մ գա... ինձ էլ զենք կտա՞ք...

Տղային անմիջապես կերակրեցինք, հագցրինք և վերցրինք մեզ հետ։ Նրան 1915-ի հուլիսյան նահանջի ու Վասպուրականի գաղթից հետո հասցրինք Արա-

բատյան դաշտ և տեղավորեցինք իր շատ բախտակից-ների հետ Աշտարակ գյուղի, թե Երևանի որբանոց-ներից մեկում։

Ահաբեկված թուրքական բանակը կորիգլուխ փախչում էր Կորդվաց լեռներով ու կիրճերով դեպի հարավ-արևմուտք։ Նրան կրնկակոխ հետևում էր հայ կամավորների առաջին զորագունդը։ Մեր ռազ-եղբայրների համար չափազանց դժվար էր լեռնային պայմաններում հետևել և հասնել հայ կամավորնե-րին։ Նրանցից շատերը անզոր էին թաքցնելու իրենց դժգոհությունը այդ դժվարանց ճանապարհներից։ Ամեն օր հետիոտն մագլցել երկնասլաց լեռների բարձունքները և կրկին իջնել դեպի անդնդախոր ձո-րը, որպեսզի նորից մագլցել մեկը մյուսից բարձր լեռների գագաթները, այն էլ կիսաքաղց վիճակում, այնքան էլ դյուրին գործ չէր։ Հիշում եմ, թե ինչպես հոգնածությունից խոնջացած, նրանք հասնելով մի որևէ լեռան կատարի և դիմացը նկատելով դեպի եր-կինք խայտացող ավելի բարձր լեռ, հենվում էին իրենց հրացաններին և հուսահատված գոչում. «Ա՜խ, Հայաստան, Հայաստան։ Լեռներ լեռների հետևից և ո՞վ է նրանց ստեղծել», հետո պառկում էին մեջ-քի վրա, ոտքերը բարձրացնելով և հենելով մասրի կամ կծախոտի թփերին, որպեսզի երակների մեջ լճա-ցած արյունը դյուրությամբ հոսի դեպի հոգնաբեկ սիրտը և թեթևացնի ոտքերի հոգնածությունը։

Չափազանց ծանր էր նաև փախչող թշնամու դրությունը։ Նրանցից ոմանք քաղցից ու հոգնածու-թյունից մեռնում էին ճամփին, ոմանք էլ թաքնվում քարանձավներում։ Պակաս չէր նաև նրանց թիվը, ովքեր հուսահատված գիտակցաբար հետ էին ընկնում իրենց բանակից, որպեսզի կամավոր գերի հանձնը-վեն մեզ՝ համոզված, որ մենք գերիներին չէինք սպանում։

Առագ գյուղից շարժվելուն պես, մեր հեծելազորի կողմից գերվեցին մոտ քսան թուրք զինվորներ, որոնց թվում և այն արյունռուշտ գազանը, որ ան-ցած օրը ի շարս շատ անզեն հայերի ու ասորիների

մորթել էր նաև մեր խեղճ որբուկի ծնողներին։ Զորագնդի կեսօրվա հանգստի պահին, երբ մարտիկները համախմբվել էին գերիների շուրջը, մեր որբուկը ճանաչեց իր ծնողների դահճին։ Նա հանկարծ սահմռկեցուցիչ մի ճիչ արձակելով, կորյունի պես ոստնեց իր տեղից, փորձեց իր թույլ թաթիկներով խեղդել գազանին, որի ամեն մի դաստակը հավասար էր ուզածդ տղամարդու զույգ դաստակի։ Այդ թուրքը նմանվում էր մի արտասովոր ածդահայի, որը ընդունակ էր խեղդելու, հոշոտելու և լափելու ամեն մի մարդու, որ կրում էր հայ անունը։ Վանդակն ընկած գազանը չհանդգնեց դիմադրելու որբացած մանկանը, իսկ վերջինս գազանի մատին նկատելով իր հոր յաղութ մատանին և արծաթե ժամացույցը, կրկին ճչաց և հարձակվեց նրա վրա՝ ցանկանալով կծել նրա դեմքը և թուլացած փռվեց գետնին։ Ապա դառնալով մեզ, հեկեկոցով թախանձեց մի դաշույն, որ իր ձեռքով լուծի իր նահատակ ծնողների արդար վրեժը։ Տղայեկին առաջնորդեցին Անդրանիկի մոտ և պատմեցին ողջ եղելությունը։ Անդրանիկը, ուշիուշով լսելով այդ պատմությունը, որբին քաշեց իր մոտ, գրկեց նրան, շոյեց, համբուրեց նրա գանգուրները և հայրական մի քանի խրատներով ու հորդորներով համոզեց տղայեկին վազն անցնել մարդասպանությունեն. «Այդչափ վաղ տարիքեն մարդասպանություն սովորելը շատ գեշ բան է, զավ՛կս։ Ճիշտ է, այդ գազանը մորթոտեց քո անզեն ու անմեղ ծնողներուն, բայց, հոգյակս, նայիր շուրջդ, տե՛ս, թե որքան քաջ հորեղբայրներ ունիս կանգնած քո թիկունքին, անոնք քո տեղ կլուծեն քո վրեժը, մի լա, գառնուկս...»

Գարնանային հեղեղներից հորդացած Տիգրիսը ահեղաշունչ մռնչյունով գահավիժում էր Կորդվաց լեռների անդնդախոր ձորերով՝ իր հորձանքի մեջ առնելով լեռնաշխարհի բարձրավանդակներից, լեռնաշղթաներից ու խորխորատ ձորերից սկիզբ առնող բյուր աղբյուրների, վտակների ու գետակների ջրերը։ Ջնայած արդեն մայիսն էր, բայց սարերի

ձյունները դեռ նոր էին հալ ընկել, բարձունքների ալպիական մարգագետինները ծածկված էին ձյան հաստ շերտով, մինչդեռ Տիգրիսի ժայռոտ հրվանդաններն ու հովիտն արդեն գունազարդվել, գարնան կենսուրախ արևի փայլից կանաչ էին հագել ու պճնվել բազմապիսի անուշահոտ ծաղիկներով։ Շատ տեղերում այդ խելացնոր գետը, սրընթաց գահավիժելով հսկա ժայռերի վրայով, կորցնում էր գետի սովորական պատկերը և դառնում մի ամեհի փրփրաբաշ ու ահռելի ջրվեժ և զարնվելով իր ապառաժոտ ափերին, վեր էր ածվում ջրափոշու, արևի ճառագայթներից երանգավորվում, ծիածանի տեսք էր ընդունում։ Տիգրիսը տեղ-տեղ էլ սողում էր ոլոր-մոլոր կիրճերով՝ ինչպես մի գերբնական օձ-վիշապ։ Նրա կեռմանների միջև եղած տարածությունը հասնում էր ոչ պակաս 7—8 կիլոմետրի։ Եվ պատահական չէր, որ հետապնդելով թշնամուն, մենք մի քանի օրվա ընթացնում հարկադրված էինք 6—7 անգամ կտրել ու անցնել նրա ահավոր ջրերը։ Այս հետապնդման օրերին, ի շարս շատ ու շատ հիշատակության արժանի դեպքերի, իմ հիշողության մեջ մնացել են երեք-չորս անջնջելի պատկեր, որոնց վրայից անզոր եմ լռությամբ անցնել։ Դրանցից առաջինը հետևյալն էր։

Օրը գարնանային էր, պայծառ։ Բժշկասանիտարական խումբը բժիշկ Հ. Նալբանդյանի ղեկավարությամբ ձիերին բազմած հետևում էր գնդի արիերգարդին։ Հանկարծ սթափվեցինք և տեսանք, որ գունդը չի երևում։ Թե ո՞ւր անհետացան, չիմացանք, այդքան անսպասելի ո՞ր ձորն իջան, ո՞ր լեռան հետևն անցան. մեզ համար հանելուկ մնաց։ Մեր ձախթևի խոր ձորով հոսում էր Տիգրիսը։ Մենք կռահեցինք, որ հավանաբար գունդը գետը անցնելու նպատակով իջել է ձորը, բայց թե որտեղի՞ց՝ չգիտեինք։ Հեռադիտակներով դիտելով Տիգրիսի ափերը, նկատեցինք մի խումբ կանանց՝ ձեռք ձեռքի տված կանգնած ուղիղ գետափին, և հատ ու կենտ քրդական տարազով տղամարդկանց ու երեխաների, որոնք վարանումով անցուդարձ էին անում գետափի գյուղի

փոքրիկ հրապարակում։ Նրանց խոսակցության ձայնը հազիվ էր հասնում մեզ և նրանց ազգությունը հեռվից որոշել բնավ հնարավոր չէր։ Մենք իջանք մեր ձիերից ու զգուշությամբ դանդաղ սկսեցինք առաջանալ դեպի գյուղը՝ քաշելով մեր ձիերի սանձերը։ Որքան մոտենում էինք գյուղին, այնքան նրանց ձայները մեզ համոզում էին, որ նրանք հայեր են և խոսում են Վասպուրականի բարբառով։ Մեր և նրանց միջև ընկած տարածությունը շատ չանցած հազիվ 200 քայլի հասավ։ Հանկարծ լսեցինք կանանց հուսահատ ճիչեր, որոնք, մեզ թուրքի տեղ ընդունելով, պատրաստվում էին իրենց Տիգրիսի հորձանուտ ջրերը նետել։ Մենք գոռացինք, բոլորս ծունկի իջանք, խաչակնքեցինք և միաբերան գոչեցինք.

— Քույրե՜ր, եղբայրնե՜ր, մենք հա՜յ ենք, հա՜յ, հա՜յ քրիստոնյաներ ենք...

Խեղճերը չհավատալով իրենց լսածին, մի պահ արձանացան։ Երբ նրանցից երկու տղամարդ երկընտրանքով մոտեցան մեզ, տեսարանը երկուստեք դարձավ այնքան հուզական, որի նկարագրելը վեր է իմ կարողությունից։ Աղջիկներն ու ջահել հարսները, որ քիչ առաջ պատրաստվել էին անլաց ու անմռունչ իրենց նետելու Տիգրիսը, հեկեկալով փաթաթվեցին մեզ մի այնպիսի գորովագութ կարոտով, որ քարերն անգամ կմղկտային։ Մեր հարցին, թե տեսե՞լ են թուրքի զորքը, նրանք պատասխանեցին անեծքով և հայտնեցին, որ նոքա 1—2 ժամ առաջ անցան Տիգրիսի վրայից և քշեցին հայերից թալանած մեծ քանակությամբ տավար ու ոչխար...

— Հապա ձեզ ձեռք չտվի՞ն...

— Մենք փախել էինք գյուղից և պահվել լեռների քարանձավներում...

— Իսկ հայոց զորքին չտեսա՞ք գետն անցնելուց։

— Քիչ առաջ այս գետի այն նեղ մասում զորք էր կանգնած՝ թուրքեր էին թե՞ հայեր, մենք չիմացանք, բայց նրանք էլ անցան գետը։

— Թուրքերը չխեղդվեցի՞ն գետում...

— Ճիշտն ասած մենք այդ չնկատեցինք... Քիչ ներքև կամուրջ կա, եթե դուք որոշել եք գետն անցնել, ապա լավ կանեք կամրջի վրայով անցնեք։

Հրաժեշտի ժամին նրանք հուսալքված դարձան մեզ.

— Հապա իմալ կեղնի մեր դրությունը առանց ձեզ, մեզ թողնում եք գազանի երախում և ո՞ւր եք գնում...

Բժիշկ Հ. Նալբանդյանը հակիրճ բացատրեց իրերի դրությունը և առաջարկեց շտապ կերպով Հայոց ձորի վրայով գաղթել Վան։ Նրանք լսելով Վանի ազատագրության լուրը՝ ուրախացան և խոսք տվին առավոտյան շարժվել դեպի Վան։ Բաժանվելով ահաբեկված և հուսալքված մեր դժբախտ եղբայրներից ու քույրերից, մենք մեր ձիերը քշեցինք Տիգրիսի աջափն ի վար ընկած քարքարոտ արահետով և շատ չանցած տեսանք, որ անդրբայկալյան կոզակների գունդը, իջած իրենց ցածրիկ ու կարճլիկ, բայց շափազանց դիմացկուն ու եռանդուն ձիերից, սպասում էին գետն անցնելու հրամանի։ Տիգրիսը գարնան հեղեղներից կատաղած, քշել էր բազմաթիվ մանր ու խոշոր եղջերավոր անասունների և նրանց խեղդամահ մարմիններով փակել լեռնային շափազանց նեղ այդ անցքը և գետը դուրս էր եկել իր ափերից։ Ահա այդ նեղ անցքի վրա էր զույգ գերաններից բաղկացած մասրի թփերով ծածկված այն կամուրջը, որ ձգել էին այդ լեռների խաշնարած ժողովուրդը իրենց խաշները հարուստ արոտավայրեր քշելու համար։ Այդ կամրջի վրայից, ինչպես պատմեցին մեզ անդրբայկալյան կոզակները, անցել էր մեր գնդի հետևակը։ Խոնջացած, հոգնաբեկ արեգակն իջնում էր հորիզոնի պայծառ եզրը, երբ մենք նստած մեր նժույգներին, նետվեցինք Տիգրիսի ծովացած գիրկը և մինչև կրծքներս թրջված հաջողությամբ դուրս եկանք մյուս ափը։ Քիչ անց մեզ հետևեց անդրբայկալյան կոզակների գունդը։ Կես ժամ անց մենք արդեն գտնվում էինք մեր զորագնդում, որը պատրաստվում էր ընթրելու։ Ինչպես պարզվեց, այդ օրը

գերվել էին նաև զանազան տարիքի քրդեր ու քրդուհիներ, անգամ քուրդ մանուկներ։ Մթնելուց առաջ Անդրանիկը հրամայեց քրդերին հավաքել իր մոտ և թարգմանի միջոցով դիմեց նրանց.

— Քուրդ եղբայրներ ու քույրեր, հարգելի դրացիներ, դուք ահաբեկված եք, քաղցած, հոգնած ու տանջված ինչպես և ձեր դժբախտ դրացի հայերը։ Մենք նամարդ չենք, մենք գիտենք հարգել և օգնություն ցույց տալ մեր հարևան քրդությանը, որոնց հետ կողք կողքի դարեր ի վեր ապրել են մեր նախնիները։ Միանգամայն ապահով եղեք, մենք ձեր մազին անգամ չենք դիպչի։ Դուք չեք մեր թշնամին, մեր երկուսիս թշնամին օսմանյան պետությունն է... որ ձեզ մոլորության մեջ է ձգել անզեն հայության վերաբերյալ։ Այնուամենայնիվ, ձեզնից որոնք կցանկանան հետևել թուրքաց բանակին և կրկին ու կրկին հավատալ թուրքերու խաբեությանը, կարող են հետևել անոնց առանց երկյուղի, իսկ որոնք չեն կամենա, թող ետ վերադառնան իրենց թափուր ու ավերված գյուղերը։ Հասկացեք վերջապես, որ միայն թուրք պետությունն է թունավորում մեր խաղաղ ապրելակերպը։ Այժմ ձեզ կկերակրեն տաք կերակուրով, ապահով եղեք և հանգիստ քնեցեք մինչև առավոտ, իսկ վաղը որ կողմը կկամենաք հոնտեղ ալ կերթաք։ Միայն խնամեցե՛ք ձեր ծերերին, պառավներին ու մանկտաց, որ չհիվանդանան, չմրսեն...

Անդրանիկը իր խոսքը դեռ չէր ավարտել, երբ քրդուհիներից շատերը իրենց գլխի շալերը աճապարեցին փռել փաշայի ոտքերի տակ գոչելով.

— Մատաղ լինենք սարերի անհաղթ առյուծ Անդրանիկ փաշային, մեր գլխին, մեր աչքերաց վրա թող փայլե նրա արևը...

Հաջորդ օրը, վաղ առավոտյան, քրդերը եկան և խմբովին կանգնեցին փաշայի վրանի առջև և խոնարհվեցին ու երախտագիտության գովերգներով վերադարձան թուրքերից ավերված իրենց գյուղերը։ Մեր գունդը ռուսական զորամասերի հետ շա-

ռունակեց իր ճամփան՝ հետապնդելով նահանջող թշնամուն։ Այդ օրը նշանավոր օրերից մեկն էր մեզ համար։ Մոտավորապես ժամը 12-ին մեր կամավորական գնդի առաջապահ մասը հասավ խալիլ փաշայի նահանջող կորպուսին այն պահին, երբ նա Տիգրիսի նեղ կիրճերից մեկում կառուցած Պոնտոն կամրջակի վրայով ավարտում էր իր զորքի փոխադրումը։ Թշնամու հեծելազորը բռնել էր գետի հակառակ ափի բարձունքները՝ ապահովելու Պոնտոն կամրջակի վրայով իրենց հետևակի անվտանգ անցումը։ Անդրանիկն առանց հապաղելու անցավ հարձակման։ Թշնամու հետևակի այն մասը, որին դեռ չէր հաջողվել անցնել գետի մյուս ափը, ահաբեկությունից կատաղած պիծակների պարսի նման միմյանց հրմշտելով ջանում էին մեկը մյուսից շուտ անցնել գետը։ Ըստ Անդրանիկի հրամանի, Սմբատի զորասյունը տեղավորվել էր մի ահռելի հրվանդանի գագաթին, որտեղից կամրջակից անցնող թուրք ասկյարներին գնդացրի կարկտային կրակի տարափի տակ ուղարկում էր Տիգրիսի կատաղած ալիքների գիրկը։ Քիչ անց օգնության հասավ ռուսական հրետանին։ Գետի հակառակ ափին գտնվող թշնամին պիտի անցներ մի թմբաձև լեռնային անցքով, որպեսզի փրկվեր իրեն հետևող հակառակորդից։ Անդրանիկը Կիևի համալսարանի ուսանող Արտավազդ Ղորղոմազյանի (Քեռու քրոջ որդին) թարգմանությամբ դարձավ ռուսական հրետանու հրամանատար կապիտանին՝ նշան բռնել թմբաձև լեռան անցքին։ Շտապեք, հոգիս, բոպեն թանկ է. նախ զարկև առաջ, ապա հետ և աջ ու ձախ և երբ թշնամին խրտնած հոտի պես կխմբվի մի կետում, զարկե կենտրոն, կենտրո՛ն, կենտրո՛ն։ Զույգ լեռնային թնդանոթի փոթորկային և դիպուկ կրակի արդյունքը սպասածից ավելին էր։ Թշնամին, վերջապես անցնելով Տիգրիսի հակառակ ափը, այնքան էր ահաբեկված, որ նույնիսկ չխորհեց օգտագործել իր ձեռնտու դիրքը... Նա հնարավորություն ուներ մեզ արգելելու անցնել Տիգրիսի այս դժվարին կեռմանի

անցքը՝ բազմաթիվ կորուստներ պատճառելով մեզ, բայց Գալիպոլի թուրքական առաջին կորպուսի նշանավոր ռազմագետ Խալիլ փաշայի խելքին չհասավ այդ և նա սարսափահար փախչում էր իր ուժերը փրկելու այդ լեռների դժվարամատչելի կիրճերից, իջնելու Սղերդ-Տիգրանակերտ տանող հարթավայրերը։ Մենք առանց զոհի անցանք Տիգրիսի այդ կեռմանը, նախապես համոզվելով, որ թշնամին մեր դեմ դարանամուտ չի։ Հասնելով թմբաձև լեռնանցքը, մենք տեսանք թշնամու բազմաթիվ դիակներ, որոնք ընկել էին ռուսական հրետանու անցած օրվա շեշտակի զարկերից։ Վաղ առավոտյան գարնանային արևի ոսկեհուռ շողերից հալվել էր լեռների բարձր լանջերը ծածկած ձյունը, կազմել փոքրիկ վտակներ, որ արծաթագույն կոհակներով թավալվելով վազում էր դեպի խոր ձորերը՝ միանալու Տիգրիսի ջրերին։ Ձնծաղիկները ողջունում էին արևի կենսաբեր լույսին։ Քիչ անդին, սարի լանջը զուգող թարմ կանաչ խոտի թավշանման գորգի վրա ընկած էր հրեշտակային գեղեցկությամբ արյունաթաթախ մի անմեղ առևանգված դիակ, որի խոցված-կապտած նուրբ ստինքներին սառել, անշնչացել էր այդ թշվառ հայուհու մոտ 5—6 ամսական արու զավակը...

Անդրանիկը լուռ ծունկի եկավ ղույդ նահատակների դիակների առջև և արցունքոտ աչքերով համբուրեց մոր և ապա մանկան ճակատը։ Նրան հետևեցին բանակայինները։ Այդ պահին մեր գնդի հերոս տղաներից մեկը՝ մշեցի կամավոր Ճազոն, հեկեկալով, դարձավ Անդրանիկին. «Կուլա՛ս, հապա հորի զիս կարգելես թշնամու խետ վարվել այդպես»։

Անդրանիկը գրկելով Ճազոյին պատասխանեց.

— Ջավակս, եթե ընդունակ ես անմեղ մարդկանց դեմ ատանկ գազանություններու, ապա դու և քեզ նմանները չեն կրնար տեղ ունենալ իմ գնդի շարքերում։ Հասկացիր վերջապես, որ նման վայրագություններու համար չենք եկած հոս։ Կհուսամ, որ օր մը մեր անարգ թշնամին պատասխանատվության

կկանչվի լուսավոր մարդկության արդարադատ դատարանի առջև...

Երրորդ, հիշատակության արժանի դեպքը տեղի ունեցավ մոտավորապես մայիս ամսի 18—20-ին, երբ մեր զորքերին վիճակված էր վերջին անգամ անցնել Տիգրիսի ամենախոշոր ճյուղերից մեկի վրայով, որ հայտնի է Մեծ Զաբ անունով։ Այդ անցքը իր շրջապատի բոլոր տեսարաններով հարկադրում էր ականատեսին կամա թե ակամա մոռացության տալ ռուս հռչակավոր գեներալիսիմուս անմահ Ա. Վ. Սուվորովի անցումը Ալպյան լեռներով։ Տիգրիսի այդ ահռելի ճյուղի վրայով ձգված էր մոտ 3—4 հաստ գերան՝ գետից մոտավորապես 25—30 մետր բարձրության վրա։ Գերանների երկարությունը 20 մետրից ավելի չէր լինի, նրանք ծածկված էին մասրի և կծոխուրի թփերով ու հողով, որի լայնությունը հազիվ երկու մետրի հասներ։ Այդ կամուրջ կոչվող անցքի տակով ահեղաձայն մռնչյունով շռընդալից գահավիժում էր Մեծ Զաբը, որի միայն փըրփուրն էր երևում։ Առաջինը այդ կամրջով խիզախեց Անդրանիկը իրեն շրջապատող զինակիցների հետ մերկացրած թրերով և ապա հեծելազորը՝ քաշելով իրենց ձիերի սանձերը, հետո էլ հրետանին ու հետևակը և, վերջապես, գումակը։ Վերջինիս ուղտերից երկուսը, որ բեռնված էին հրանոթի արկերով, կամրջից գետը գլորվեցին, որի հորձանուտի մեջ ուղտերի սիլուետները նշմարվեցին 300—400 մետր հեռավորության վրա և ապա չքացան մեր տեսադաշտից։ Ընթերցողը կարող է մտածել, թե ինչո՞ւ Խալիլ փաշան այդ կամրջից անցնելուց հետո չէր փորձել հետ կասեցնելու մեր անցումը նույն կամրջով և ինչո՞ւ չէր ոչնչացրել կամուրջը։ Դա պատահական չէր։ Ըստ երևույթին Խալիլ փաշան դիտավորյալ էր այդպես վարվել, որպեսզի մեր ուժերին իր հետևից քաշեր մինչև Բիթլիսի կամ Սղերթի մոտերքը և այնտեղ օժանդակ ուժերի միջոցով հաշվեհարդար տեսներ մեզ հետ։ Բայց, բարեբախտաբար, այդպիսի բան տեղի չունեցավ։ Հասնելով Կալամրուկ լեռան

ձյունապատ բարձունքներին, մեր ուժերը հետապնդեցին թշնամուն մինչև Ջուլամերիկի արևմտյան սահմանները, որից հետո նա խուճապի մատնված անցավ մի ինչ-որ լեռնային գետակ և անվերադարձ չվեց դեպի արևմուտք։

Երկար օրերով մենք հացի երես չէինք տեսել։ Եղած պաքսիմատի պաշարն էլ վաղուց սպառվել էր։ Հարևան գյուղերը անմարդաբնակ և դժվարամատչելի էին, փայտ էլ չկար, որ միս եփեինք կամ խորովեինք։ Բարեբախտաբար, փայտին որոշ չափով փոխարինում էին անցած տարվա վայրի բոխիի հաստ ցողունները, որոնց շտապ վառվող և նույնքան շտապ հանգչող կրակի վրա հնարավոր էր խորովել միայն անասունների լյարդը, երիկամները, սիրտն ու փայծաղը։ Բանակայիններից ոմանք սկսեցին սնվել հում մսով, մանավանդ լյարդով, այն էլ առանց աղի և առավել ևս հում կաթով։ Նույն վիճակի մեջ էր նաև հրամանատարական կազմը։ Նախանձելի չէր նաև ձիերի դրությունը։ Նրանք երկար ժամանակի քաղցածությունից ագահաբար հափշտակում, լափում էին փարթամ աճած վայրի բոխին, որից նրանց փորը անմիջապես ուռչում, փքվում էր և սատկում էին։ Հանգստի առաջին երկու-երեք օրը նման դժբախտ պատահարի դեպքերը բավական զգալի էին ռուսական հեծելազորի շարքերում։ Մեզ մոտ առաջին իսկ պատահարի դեպքում Անդրանիկը կանչեց իր մոտ խարբերդցի ամեն բան ձեռքից եկող առնական կազմը-վածքով Ղազար քեռուն և կատակով դարձավ նրան.

— Ջե՞ս տեսնի, թե ինչ է կատարվում ձիերի հետ, շուտ մի ճար գտիր, ախպարս, դեհ, ապա քեզ տեսնեմ, յավրում։

— Է, ինչ կրնամ ընել, փաշա, ջղարա չիկա, հաց չիկա, քյալլես չի աշխատի, քանի մը ձիերու փըրկեցի սատկելուց ինգլիզ դուզով, ան ալ վերջացավ, ալ ինչ ընեմ՝ չեն լսի զիս, ասացի թող բռնեն իրենց ձիերու սանձերը և արածեցնեն երեքնուկով փռված դաշտում, ուր չիկա վայրի բոխի, ինչու կբերեն այս գետի ափին ի վար բսած վայրի բոխիի քով։ Շուտ

հրամայե ձիավորներուն կատարելու իմ առաջարկը...

Այս դեպքերից շվարել էին նաև ռուսական անասնաբույժները։ Անդրանիկը այդ առաջարկը իսկույն հասցրեց նաև նրանց ականջին և ստեղծված անել դրությունը վերջացավ Ղազար քեռու խորհրդով

Մի քանի օր հանգիստ առնելուց հետո մեր զորամասերը Կալամրուկ լեռան բարձունքներով շարժվեցին դեպի ազատագրված Վան։ Վան վերադառնալու ճանապարհը, շնորհիվ հայ և ասորի վալադների, զգալիորեն կրճատվեց և ավելի դյուրին թվաց, քանի հանջող թշնամուն հետապնդելու ժամանակ։ Անդրանիկի հրամանով մի առանձին վաշտ քշում էր տասնյակ հազարի հասնող մանր ու խոշոր եղջերավոր անասուններ։ 4-րդ օրը մեր բոլոր զորամասերը հասան Հայոց ձոր։ Նույն օրը երեկոյան Անդրանիկը դիմեց իր գնդի զինվորներին հետևյալ խոսքերով.

— Քաջե՛ր, չըլլա թե հանկարծ հարձակվիք հացի վրա։ Քանի շաբաթ է, որ մենք հացի երես տեսած չենք։ Մենք հյուծված ենք, հյուծվել են նաև մեր ազիքները, զգույշ, միանգամից շատ չուտեք, թե չէ կհիվանդանաք։

Եվ իրավ, հաջորդ օրը, երբ Հայոց ձորից ռուսական բանակի հետ մեկտեղ շարժվեցինք դեպի Վան, դեռ չհասած Շամիրամա գետին, Վանի ազատագրված հայությունը մեզ ուղարկել էր 10 ֆուրգոն լիքը լավաշ հաց։ Հացը ուղարկված էր ոչ միայն մեզ, այլև ռուսական զորամասերի համար։ Նույն օրը, հասնելով Վանա լճի հարավային լեռնագոտու բարձունքներին, մեր առջև բացվեց մի այնպիսի զմայլեցուցիչ տեսարան, որի գեղեցկությունը կարող էր նկարագրել միայն խոշորագույն մի վիպագիր, բայց ոչ երբեք նվաստս։ Այն, ինչ հետագայում վիճակվեց ինձ կարդալ հայ գրականության էջերում այդ չքնաղագարդ երկրամասի գովքը նկարագրող հեղինակների գեղարվեստական գործերում՝ վերցրած թե՛ առանձին-առանձին և թե՛ ի մի գումարած, ցավոք սրտի

պիտի խոստովանել, որ նրանք անզոր են հագուրդ տալու իմ հոգեկան այն խորունկ ապրումներին, որի ծնունդն է Վասպուրականի նահանգն ընդհանրապես և մասնավորապես Վանը յուր շրջապատով։ Իմ կարդացածը Վասպուրականի և մասնավորապես Վանի դյութական գեղեցկության մասին շատ է մեղանչում իրականության դեմ։

Շամիրամա գետի ափին ռուսական զորամասերը, ստանալով իրենց հասնող հացի բաժինը, շարժվեցին ուղիղ դեպի Վան, իսկ մեր կամավորական գունդը դեպի Վարագա վանք և տեղավորվեց Խրիմյան Հայրիկի տնկած սաղարթախիտ պուրակում։ Բնության այս վեհատեսիլ անկյունում, որտեղ այնքան մաքուր էր օդն ու ջուրը և սննդի առատությունը, 5—6 օրվա ընթացքում գունդն այնպես հանգրաստացավ ու կազդուրվեց, որ իսպառ մոռացավ Կորդվաց լեռներում իր քաշած դառնությունները։

Վարագում հանգստության երրորդ օրը մեզ դիմավորելու եկան Վանի հաղթական ապստամբության մասնակիցներից մի խումբ մարդիկ։ Նրանք մնացին մեզ մոտ մինչև հաջորդ առավոտ։ Այդ կարճ ժամանակվա ընթացքում տեղի ունեցավ գաղտնի խորհրդակցություն Վանից եկողների, Անդրանիկի իր զինակից ընկերների, ինչպես նաև գնդի մեկերկու այլ հեղինակավոր անձանց միջև։ Խորհրդակցությունը տեղի ունեցավ վանքի տաճարում, դռնփակ։ Թե ինչ հարցերի շուրջը խոսվեց այնտեղ, հայտնի չեղավ։

ԱՆԴՐԱՆԻԿԻ ՄՈՒՏՔԸ ԱՋԱՏԱԳՐՎԱԾ ՎԱՆ

1915-ի հունիսի 7-ին թե 8-ին մեր զորագունդը վաղ առավոտյան կազմ ու պատրաստ սկսեց իջնել Վարագա լեռան լանջերից և շարժվել դեպի Վան, որին շրջապատող երկնի անհուն կապտության մեջ կորած սարերի գագաթները համբուրում էին ամռան

արևի ոսկե ճառագայթները։ Առավոտյան սարերի ստորոտներն ու լանջերը կապած էին ծիածանի ողջ գույներով՝ կապույտ, մանուշակագույն, կարմիր, կանաչ, դեղին, նարնջագույն... Որքան արևը խոյանում էր դեպի վեր, այնքան անգամ այդ հոգեզմայլ պատկերը չքանում էր մեր տեսադաշտից։ Այդ անզուգական տեսարանի առջև ավելի վեհատեսիլ էր բիբլիական սպիտակափառ Արարատի և քառագագաթ Արագածի կրտսեր եղբայր սեգ Սիփանի հավերժական ձյունով ծածկված գագաթը, որն իր փառահեղ դիրքով Վանա ծովի հյուսիսային ափից խոյացած էր դեպի վեր։ Տոսպա ծովը առավոտյան մեղմ զեփյուռից իր վետ-վետ ալիքների ծփանքով շտապում էր ողջունելու Սասնո լեռներին և հայկական Տավրոսի բարձունքներին՝ ցողելու և խնկարկելու նրանց անդնդախոր ձորերում նահատակված մեր անտեր ու անթաղ մեռելների սուրբ մասունքները։ Որպես եղեռնամայրեր խուլ կոնչյունով ծովն էին նետվում հազարավոր ճայերի երամներ և իրենց շեղթևերը փռում էին նրանց կապույտ ջրերի հարթության վրա։ Բազմաթիվ աղբյուրների գոհարանման սառնորակ ջրերը զվարթ խոխոջյունով ու քչքչոցով թավալվում էին ծաղկափթիթ, ցողոտ-շաղոտ արտերի ու արոտների միջով դեպի ծովը։ Օդի բարձր եթերի մեջ ճախրում էին արտուտիկներն իրենց ուրախ ճռվողյունով, արտերի մեջ վախկոտ լորերն էին երգում՝ վը՛տ-վը՛տ, վը՛տ-վը՛տ, իսկ սարերի լանջերին կաքավներն էին կաքավում՝ կակղա՛-կակղա՛ կանչում։ Բազմաթիվ ու բազմապիսի ծաղիկների բուրմունքը շոյում, զվարթացնում էին ռազմիկների հպարտ ու հաղթական դեմքերը։ Հայրենիքի սրբազան կարոտից նրանց սրտերը բաբախում էին։

Նախքան մեր գնդի մուտքը Վան, Իգդիր—Բայազետ—Աբաղա գծով ռուսական զորամասերի հետ Վան էին մտել հայկական կամավորական 2-րդ, 3-րդ, 4-րդ գնդերը։ Վերջիններիս հաջողվել էր գրեթե առանց կռվի մտնել Վան նրա միամսյա ազատամարտի լիակատար հաղթանակից մի քանի օր հետո

միայն։ Մեր Վան մտնելու օրը թե՛ ռուսական զորամասերը, թե՛ հայկական կամավորական գնդերը և թե՛ Վանի երկսեռ հասարակությունը ծովափնյա այգիների մոտ եկել էին դիմավորելու ազգային հերոս Անդրանիկի զորագնդին։ Դիմավորողները կանոնավոր շարքերով կանգնել էին մեր երթի ճամփի աջ և ձախ կողմերին հետևյալ կարգով. նախ Վանի սպառազինված ժողովրդական մարտիկները իրենց փողային նվագախմբով, սրանց դիմաց, ճանապարհի հակառակ կողմում, կանգնած էին հայ օրիորդների և երիտասարդ տիկնանց պատկառելի խումբը՝ գլուխները զարդարած թարմ ծաղկեպսակներով, ձեռքներին բարձր բռնած ազգային փողփողացող դրոշը։ Նրանց կողքին կանգնած էին ծերունիների, տարեց կանանց, փոքրիկ տղաների ու աղջիկների ստվար խմբեր։ Ըստ հերթի՝ Վանի ժողովրդական ազատարար կռվողների կողքին հայ կամավորական գնդերի զորաշարքերը՝ իրենց հրամանատարներով, և վերջապես ռուսական դիվիզիաները։

Անդրանիկը բազմած իր արծաթագույն նժույգին, արծվային բոցկլտացող հայացքը հառած դիմավորողներին, դեռ նոր էր երևացել, երբ թնդացին նրանց զինվորական նվագախմբի փողերը՝ «Զեյթունցիների քայլերգը», ժողովրդական հախուռն ու սրտաբուխ ուռա՜ն, Անդրանիկին ձոնված «Իբրև արծիվ սավառնում ես լեռ ու դաշտ» երգը։ Երգողները միաժամանակ բազմաթիվ ծաղկեփնջեր էին նետում դեպի Անդրանիկը և դեպի իրենց քաջամարտիկ եղբայրները, որ շարքերով հետևում էին Անդրանիկին իրենց խրոխտ դեմքերով։ Ժողովրդական այս խանդավառության պահին հանկարծ թնդաց մի ահեղ ձայն՝ «Բանակ ուղի՛ղ, հայացքներդ դեպի աջ, պարոնայք սպանե՛ր...— շարքերում կրկնվեց— պարոնայք սպանե՛ր...» Անդրանիկը իր հերթին գոչեց՝ «Ողջո՛ւյն, արի արանց քաջերի՜ն»։ «Ողջո՜ւյն քաջաց քաջի՜ն»,— գոչեցին հայ կամավորական գնդերը։ Անցնելով հայկական զորամասերից, նույնը կրկնվեց նաև ռուսական զորամասերում։

Հազիվ էր ավարտվել զինվորական խանդավառ դիմավորման պաշտոնական կողմը, երբ Անդրանիկին և իր զինակից ընկերներին շրջապատեցին հայ կամավորական գնդերի հերոս հրամանատարները՝ Քեռին, Վարդանը և ուրիշները, ինչպես նաև Վանի ազատարար բանակի ղեկավարները։ Նրանք երկար ողջագուրվում էին ինչպես տասնյակ տարիներով իրարից անջատված և միմյանց կարոտից տառապող հարազատ եղբայրներ։ Ռուսական այն սպաները, որոնք Անդրանիկի անունն ու նրա կատարած հերոսությունների մասին լսել էին հեռվից, բայց չէին տեսել՝ նույնպես խառնվել էին հայերին, մոտիկից տեսնելու և ողջագուրվելու Անդրանիկի հետ։ Վանի երկսեռ ժողովուրդը, մանավանդ օրիորդները խառնվել էին մեր գնդի վաշտերին և ուրախության արցունքներով ծաղկեփնջեր էին նվիրում իրենց քաջարի եղբայրներին, իսկ ծերունիներն ու տարեց կանայք գրկում, համբուրում էին իրենց հերոս զավակներին, նրանց հազար ու մի փաղաքշական խոսքեր և օրհնանքներ հղելով։ Մինչ շարունակվում էր այդ տեսարանը, Վանի երկսեռ հայության մի ստվար բազմություն էլ զբաղված էր օջախների վրա հարմարեցրած մեծ-մեծ պղնձե կաթսաների մեջ համեղ խորտիկներ պատրաստելով։ Ծովափնյա շքեղ այգիներից մեկում եղբևանիների և վարդենիների թփուտների միջև հրամանատարական կազմի համար սրղեն պատրաստված էր մի հարուստ և ճոխ ճաշասեղան։ Կանաչ խոտով ծածկված սեղանին փռված էին սպիտակ սփռոցներ։ Սեղանի շուրջը բազմել էին ռուսական բանակի հրամանատարությունը, հայկական կամավորական գնդերի ղեկավարները իրենց զինակիցների հետ, Վանի ազատարար բանակի ղեկավարները, ներառյալ նաև Վասպուրականի թեմական առաջնորդ վարդապետն ու ասորի ժողովրդի քրիստոնեական եկեղեցու պետ Մարշիմոնը։ Անդրանիկին և իր թարգմաններին ռուսական հրամանատարությունը բազմեցրել էր սեղանի գլխավերևը։ Չէր անտեսված նաև զորքը։ Նոքա գունդ

առ գունդ, վաշտ առ վաշտ կարգով տեղավորվել էին հարևան այգիների խոտերի վրա։ Նրանց սպասարկում էին իրենց տասնապետները, ինչպես նաև հայ աղջիկներն ու երիտասարդ կանայք՝ առատությամբ մատուցելով ոչխարի թարմ խաշած միս, հայկական փլավ և Շահբաղի լավագույն խաղողից պատրաստած գինի։

Հրամանատարական սեղանի շուրջը ճաշկերույթը սկսվեց Անդրանիկի բաժակաճառով։ Նախքան իր բաժակաճառին անցնելը, նա անհրաժեշտ համարեց խիստ զգուշացնելու իր թարգմաններին. «Այսօր պիտի թափեմ սրտումս դիզված մաղձը ռուսական հրամանատարության և անոր գահակալ թագավորի վրա, կանխապես կզգուշացնեմ ձեզ առանց որևէ պատճառաբանության կամ աղճատման ու աղավաղման թարգմանել իմ ըսելիքները այս սեղանի շուրջը բազմած ռուս հարգելի հրամանատարության»։

«Ձերդ գերազանցություն, պարոնայք զորավարներ և պարոնայք սպաներ. նոր չէ, որ իմ ազգը պատմական ձախորդ իրադարձություններու հետևանքով իր բախտը կապել է ռուս պետականության և անոր ազնիվ ու քաջարի ժողովրդի զենքի հաջողություններու հետ։ Նվաստս պատմագետ չէ և ոչ ալ դիվանագետ կամ քաղաքական գործիչ. ես լոկ զինվոր մըն եմ իմ թշվառ հայրենիքի ազատության համփին, սակայն գիտակցությամբ ի վիճակի եմ զգալու և ամբողջ սրտով ու հոգով համամիտ ըլլալու իմ նախնիներու դարեր առաջ դեպի Մեծն Ռուսիո տածած ջերմ ու անկաշառ սիրո, որոնք ապավինելով նրա հզորության ձգտել են անոր եղբայրական աջակցությամբ ազատագրվել պարսկական և թուրքական անարգ լծեն և հիմք դնելու մեր ազգային վերածընության։ Այդ ուղղությամբ իմ ազգի երախտիքը Մեծն Ռուսիո հայրենիքի և անոր պետության առջև շատ է մեծ։ Իմ ազգի եղբայրական ազնիվ ու անկաշառ սերը դեպի Մայր Ռուսաստանը առաջին անգամը չէ, որ կապացուցե թե՛ զենքով և թե՛ դիվանա-

գիտությամբ։ Բազմաթիվ են հայ ժողովրդի անկաշառ և անդավաճան ծառայությունները ռուս պետականության առջև։ Անկախ այն հանգամանքեն, որ իմ փոքրիկ ազգի միայն արևելյան հատվածը այսօր տրված է 260 000-են ավելի կանոնավոր զորք և արևմտյան հատվածը հազարների հասնող կամավորական գնդերի ուժ մը։ Սակայն այժմ մենք ցավով պիտի նշենք ռուս հրամանատարության մեջ եղած առանձին անհատների դեպի հայերը ունեցած անբարյացակամ վարքագիծը։ Դուք անտեսության կմատնեք, որ հանուն Ռուսիո լիակատար հաղթանակի ռուսական բանակներու շարքերում կողք կողքի հավասարապես արևմտյան ճակատի ահեղ մարտերում չեն խնայում իրենց կյանքը նաև հայ ժողովրդի զավակները, հայ զորավարներն ու սպայակազմը։ Հակառակ այս ամենուն, համաշխարհային այս ահեղ պատերազմի սկզբին իսկ ակնհայտ եղավ մեզ, որ ռուսական պետությունը բոլորովին տրամադիր չէ արդարացնելու մեր հույսերն ու ակնկալությունները իրմե։ Ասացեք, ինչին վերագրել մեր մինչ այդ չպատճառաբանված, հետևապես անհիմն նահանջներն ու դանդաղկոտությունը։ Միթե ձեզ, սեղանին շուրջը նստած զորավարներուդ համար ակնհայտ չէ, որ ամեն մի շինծու նահանջի հետևանքով բնաջնջվել են հազարավոր հայ ընտանիքներ օսմանյան արյունարբու պետության կողմե։ Մի՞թե ռուս դիվանագիտությանը հայտնի չէ, որ այդ անմեղ նահատակները մեռնելիս անգամ «ռուս» անունը սեղմած են իրենց շրթանց վրա որպես նվիրական սրբություն։ Մի՞թե դուք համոզված չեք, որ մեր այս ուժերով մենք ի վիճակի էինք գրավելու ամբողջ Արևմըտյան Հայաստանը նախքան այն սպանդը, որ օրհնությամբն Գերմանիայի կազմակերպեց թուրքական պետությունը՝ բնաջնջման մատնելով ամբողջ թուրքահայությանը։ Խնդրեմ ձեր հայացքները ուղղեք դեպի հարավ-արևմուտք, հոն ավերված հայկական գյուղերից բարձրացող ծխերու քուլաներին, ատիկա ռուս պետականության վրա մեծ հույսեր դրած

իմ խեղճ ազգության արյուն արցունքի մուխն է, որ կբարձրանա երկինք որպես անեծք չարագործներու դեմ»։

Վերջում Անդրանիկն ասաց՝ կեցցե՞ ռուս ժողովուրդը։

Անդրանիկի այս բաժակաճառին հետևեցին ռուս զորավարներ Նիկոլաևի, Տրուխինի, Աբացիևի և այլոց բաժակաճառերը, համեմած Անդրանիկի ու իր կամավորական գնդի հերոսությունը մեծարող խոսքերով և կատարված նահանջներն ու ռուսական բանակի դանդաղկոտությունը արդարացնող պատճառաբանություններով։

Վերջում ելույթ ունեցավ նաև ասորական եկեղեցու հոգևոր պետը՝ Մարշիմոնը։

ԴԵՊԻ ԲԱՂԵՇ

Ճաշկերույթը վերջանալուն պես Անդրանիկն իր զորագնդով շարժվեց Վանից ոչ շատ հեռու գտնվող ծովափնյա հայտնի Արտամետ գյուղի այգիները՝ սպասելու նոր հրամանի։ Չքնաղ էր Արտամետն իր այգիներով։ Նրա ղիրքը, սառնորակ աղբյուրներն ու փարթամ այգիները, որոնց ծովափնյա պտղատու ծառերի ճյուղերը, խոնարհվելով ծովի վրա, արտացոլվում էին նրա կապուտաչյա ջրերի հայելանման ծոցում։ Այնտեղ օդը ջինջ էր։ Լազուր երկնքի հովանու տակ մարդն արբենում էր վարդերի բուրմունքից։ Կեռասն արդեն հասել էր և նրա ծառերի կատարները օրորվում էին առավոտյան մեղմ զեփյուռից։ Նրա հնուց հռչակված խնձորենիները դեռ բոլորովին չէին ծաղկաթափվել և ծովից, Խոռխոռունյաց լեռներից ու Սիփանի գագաթից փչող առավոտյան մեղմ քամուց նրանց սպիտակ-կարմրերանգ ծաղիկների պսակաթերթերը, որպես ճյան խոշոր փաթիլներ կամ ինչպես թիթեռնիկների անհոգ բազմություն թափվում էին այգիների երեքնուկներով և խլածաղիկներով համեմված կանաչ գետնին։ Բնության

այդ չքնաղագեղ անկյունում մարդու հոգին դյուրթող բազմաթիվ հավքերի դայլայլներից գիշերները քնել չէր լինում... Մի՛ կողմից աղբյուրների կարկաչյունը, մյո՛ւս կողմից մարդու խռովված հոգին օրորող ծովի գիշերային մակընթացությունը, մերձակա ծաղկավետ սարերից զեփյուռի բերած ծաղիկների բուրմունքը, մի այնպիսի համանվագ էին, որի ներդաշնակ ելևէջներից մարդու հոգում ծնունդ էին առնում այն վեհ ու վսեմ գաղափարները, որ կոչվում են հայրենասիրություն և մարդասիրություն։

Արտամետ հասնելու չորրորդ թե հինգերորդ օրը Անդրանիկն իր զինակից ընկերներին, Վանից իրեն այցի եկած հայ կամավորական զորամասերի հրամանատարներին և զորամասի մտավորականությանը հրավիրեց իր վրանը։ Նա նախ իր թարգմաններին հարցրեց. «Խնդրեմ ազնվորեն խոստովանեք, դուք ճշգրիտ կերպով թարգմանեցի՞ք ռուսական սպայակազմին իմ այն ավուր ճաշասեղանի շուրջը արտասանած բաժակաճառը թե՝ ոչ»։

Թարգմաններից մեկը պատասխանեց.

— Փաշա, ձեզնից գաղտնիք պահելու հարկ չկա, թե՛ ես և թե՛ Քալանթարը հայտնի պատճառով խուսափեցինք տառացիորեն թարգմանելու ձեր խոսքերը, բայց ընդհանուր առմամբ հասկացնել տվինք ձեր դժգոհությունը ռուսական հրամանատարությունից։

— Ատանկ ալ ես կկռահեի։ Ճիշտ է, ես ալ կխոստովանիմ, որ չափազանց կոպիտ էր իմ ելույթը և անիկա մազաչափ անգամ չէր փոխեր դեպի լավը ռուս պետության հայերի հանդեպ վարվող քաղաքականությունը, սակայն այլ ելք չիկար, սիրտս վառված էր, համբերությանս գավաթն ալ լցված։ Բայց հիշեցնք իմ խոսքերը, թեև ռուս միահեծան պետության խախուտ հիմքերը ամրացնելու համար ամեն օր խունկ ու կնդրուկ ծխելու ալ ըլլանք, միևնույն է, մեզի փրկություն չիկա ո՛չ անորմե և ո՛չ ալ անոր դաշնակից պետություններու կողմե անգամ այն պարագային, եթե անոնց հաջողվի լիակատար հաղթա-

նակով դուրս գալ սկսած այս պատերազմեն։ Մեր ազգի և հայրենիքի փրկությունը ինձ կթվա, թե կախված է միայն ու միայն մի այլ ուժից, և այդ ուժը ըստ իս հեղափոխությունն է։ Թե երբ և ուրկից պիտի նա առաջին անգամ պայթե, դժվար է կանխատեսել, բայց անիկա կպայթե և անոր հզոր հունդյունեն միայն կրնա փրկել մեր հայրենիքը։ Հույս դնել անկե զատ մի այլ ուժի վրա, մեծ անմտություն կըլլա և որքան շուտ լսենք այդ փրկարար ուժի հունդյունի ձայնը, այնքան շուտ կիրականանա մեր ազգի դարավոր երազը։

Անդրանիկի այս հայտարարությունը, չնչին բացառությամբ, հավանություն տվին խորհրդակցությանը ներկա գտնվողների մեծ մասը, որոնց թվում նաև «Հայոց Քեռին»։ Այն էլ ասենք, որ դեմ ոչ ոք չարտահայտվեց։

— Այժմ դառնանք խնդրի մեկ այլ կողմին,— շարունակեց Անդրանիկը,— ի՞նչ եք կարծում, ցարի և անոր դաշնակիցներու հաղթության պարագային մենք կփրկվենք Թուրքիայի լծից, կամ թե չէ բուռ մը հող կտան մեզի Արևմտյան Հայաստանեն վառելու հոն մեր մարված օջախի կրակը։ Գոնե ես հավատք չունիմ այդ խնդրում, իսկ լավագույն պարագային այդ տալիք կտոր հողն ալ իր բնակչությամբ պիտի միացնեն Արևելյան Հայաստանին և այդպիսով միանգամայն փակեն մեր հաշիվներն ու ազգային երազանքները։ Ախպարս, ինչու չեք հասկնար, որ մեր թշվառ հայրենիքը թուրքական հայահալած քաղաքականության զոհ ըլլալեն զատ զոհն է ռուս-բրիտանական, ռուս-գերմանական և առհասարակ մյուս մեծ պետություններու գաղութային քաղաքականությանը, անոնց կովախնձորն է։ Է, այսքանը հասկնալեն վերջը, այժմ ի՞նչ կմնա մեզ ընելու։ Ըստ իս, մտել ենք հարսանյաց հանդեսի մեջ, այլ ելք չիկա, պիտի պարենք մինչև վերջ, որպեսզի առիթ չտանք մեր թե՛ բարեկամներուն և թե՛ չարակամներուն խնդալու մեզ վրա։ Մենք ուզենք չուզենք պիտի շարունակենք քաջաբար կռվել մեր անողոք թշնամու դեմ այնպես,

ինչպես մինչև այժմ։ Լավ թե վատ, պատմության այս ժամանակի հատվածը մեզմե կպահանջե նախապատվություն տալ երկու չարյաց փոքրագույնին, մինչև աշխարհի զարկված ու զրկված ժողովուրդները բախտ կունենան լսելու և ողջունելու համաշխարհային հեղափոխության շնչորի հզոր ու հաղթական ձայնը։ Հիրավի, մեզ համար դժվար է համբերել մինչև այդ ցանկալի օրվա արևածագը, բայց կկրկնեմ, այլ ելք չիկա մեզ համար։ Մենք պիտի զինվինք առյուծի համբերությամբ, տոկալու այն բոլոր վիրավորանքներն ու զրկանքները, որ կպատճառեն մեզ ռուս միահեծան ցարը և անոր դաշնակից պետությունները։ Օրինակի համար շատ հեռուն չպետք է վազել. ի՞նչ ենք մենք շնթռկել հոս, խո մենք չենք եկել հոս խնամախոսության կամ հանգստանալու ամառանոցում։ Ի՞նչ կարիք կա հապաղելու, ինչու չենք շարժվում առաջ, դեպի Բաղեշ։ Թշնամու կողմից ի՞նչ լուրջ ուժ կա կանգնած մեր դիմաց։ Չէ որ Դիլիմանի ճակատամարտում ջախջախված և խուճապի մատնված Խալիլ փաշան մրափած չէ մեզ պես։ Անիկա օգտվելով մեր դանդաղկոտությունեն այժմ արդեն վերակազմած ու վերադասավորած կըլլա իր բանակը նոր և թարմ ուժերով և վաղը կրկին հանդես պիտի գա չափվելու մեզ հետ իր արատավորված հեղինակությունը բարձրացնելու համար նախքան մեր բանակի Բաղեշի արվարձաններուն հասնելը։ Աս ամենը պատահականություն չէ բնավ։ Ինչպես ասկե քանի մը օր առաջ, մեզ Վարագը այցի եկած Վանի ապրիլյան ապստամբության հերոսամարտի ղեկավարներուն ասացի, նույնը կկրկնեմ և ձեզ, հավանականությունեն դուրս չէ, որ մենք կանգնած ենք նոր և ավելի աղետաբեր շինծու նահանջներու և այլ դաժան իրադարձություններու առջև։ Մեր կարճատև ուրախությանը վիճակված է ճաշակել նոր դառնություններ։ Հավանաբար մեկ-երկու օրեն ետքը կհրամայեն հայկական կամավորական ուժերուն շարժվելու առաջ դեպի Բաղեշ, խոստանալով, որ մեզ պիտի հետևին նաև ռուսներու ուժերը։ Մենք կամա թե

ակամա պիտի կատարենք անոնց հրամանները, կշարժվինք առաջ, կհանդիպենք խալիլ փաշայի վերակազմած բանակին, կկռվինք և կրկին կհաղթենք անոր, բայց այդ պահին Վանում զվարճացող ռուսական սպայակազմն ու զորամասերը հանկարծ, առանց պատճառի և առանց խղճի խայթի կուտանան հրաման՝ ձգել Վանը և նահանջել դեպի Արարատյան հարթավայր՝ թողնելով մեզ մեն-մենակ Կարնո, Բաղեշի և Տիգրանակերտի կողմերեն դեպի Վան արշավող թուրքական նոր ուժերու օղակի մեջ։ Պատկերացնելով այս ամենը, պահ մը հուզմունքից և արդար ցասումից կխեղդվիմ, սակայն այլ ելք չիկա, ինչ ընեմ հապա։

Այդ օրը Անդրանիկից հետո ելույթներ ունեցան և ուրիշները, որոնց թվում նաև Քեռին, Վարդանը. Անդրանիկի օգնական Սմբատը և այլք, որոնք հաստատում էին հայ ժողովրդական հերոս Անդրանիկի ասածները։

Կեսօրն արդեն անցել էր։ Վանից եկած այցելուները ճաշեցին և ապա, հրաժեշտ տալով ամենքին, կրկին նստեցին իրենց ձիերը ու վերադարձան քաղաք։ Շատ չանցած երեկոն նորից փռեց իր թևերն երկրի վրա, և ամենքը քուն մտան։ Շոգից ես և վաղամեռիկ ընկերս՝ ամասիացի Նիկոլայոս Ամիրյանը քնում էինք Անդրանիկի և իր զինակից ընկերների վրաններից մի քանի քայլ հեռու դրված թուրքական երկար սոփաների վրա։ Խուրջինս ծառայում էր որպես բարձիկ, այծենակաճս որպես ներքնակ, վերմակի հարկ չկար։ Կեսգիշերը նոր էր անցել, հեռվից լսվում էր շարագուշակ բուի աղետաբեր կռնչոցը։ Քունս խռովվեց, աչքերս բացի և մթի մեջ նկատեցի մի մարդու ստվեր, որը, ձեռքերը հետևին դրած ճեմում էր ետ ու առաջ վրանների և մեր պառկած տեղի ծառաստանի հարթության վրա։

Նրա քայլվածքից ես իսկույն կռահեցի, որ Անդրանիկն է։ Ըստ երևույթին նա երկար էր քայլել և այս անգամ էլ մի քանի քայլ անելուց հետո, խորունկ հառաչանք արձակելով գնաց նստեց մի կտրված

ընկուզենու հաստ բնի վրա։ Այդ պահին սիրտս ճմլվեց և առանց ինձ հաշիվ տալու համարձակվեցի ելնել տեղիցս և զգույշ քայլերով մոտենալ նրան. չոքեցի նրա առջև և արևմտահայ բարբառի կեբկերուն ձայնով թախանձեցի. «Ալ կրավե՛, հայրիկ ջա՜ն, ալ կբավե՛»...

Նա գլուխս առավ իր զույգ ափերի մեջ և մթության մեջ մի պահ նայեց իմ լացակումած աչքերին ու ասաց.

— Բարձրացի՛ր տղաս, բարձրացի՛ր և գնա քնիր, ինքս ալ հիմա կերթամ քիչ մը մոռացության տալու վիշտս, եթե միայն ատիկա հաջողվի ինծի։

Եթե այս տողերիս ընթերցողը կկարծե, թե այս ամենը իրականություն չի եղել, այլ արդյունք է իմ երևակայության, ապա չարաչար մեղանչած պիտի լինի իր խղճի առջև։ Հաջորդ օրն առավոտյան, երբ մարտիկները վերջացրին ծովում լողանալը, մարգանքը և նախաճաշը, Անդրանիկը դարձավ իր ռազմիկներին հետևյալ խոսքերով.

— Կտրիճնե՛րս, ամենուդ ալ քաջ հայտնի է, որ ցարդ ոչինչ թաքցրած չեմ ձեզմե։ Ես այն համոզմունքն ունիմ, որ մեր սկսած չափազանց մեծ գործի հետ առնչություն ունեցող բոլոր իրադարձություններուն պիտի հավասար չափով իրազեկ ըլլա ձեզմե ամեն մեկը։ Այն ցավն ու վիշտը, որ կտանջե զիս ու իմ զինակից ընկերներուս թերևս ավելի մեծ չափով կմորմոքե ձեր հայրենասեր սրտերը։ Մեր գերի հայրենիքի և մեր ազգային թշվառության առջև հավասարապես պատասխանատու է մեզմե ամենը՝ ըլլա անիկա պարզ շարքային զինվոր, թե զորավար։ Եթե ճգնիմ հավաստիացնելու ձեզ, թե մոտ է մեր խոշտանգված հայրենիքի ազատության արշալույսը՝ չհավատաք երբեք։ Միայն զենքով չէ, որ փոքր ազգերը ի վիճակի կըլլան թոթափելու իրենց շլինքեն օտար բռնակալներու լուծը։ Այդ նպատակին հասնելու համար մեր ապրած դարաշրջանում գոյություն ունեն և այլ ազդեցիկ միջոցներ, այլ անարյուն ուղիներ, որոնցմե զուրկ է մեր ազգը։

Քաղաքականություն-դիվանագիտություն ասած բանը պոռնկություն մըն է, սակայն վայ այն ազգին, որ զուրկ է նման ընդունակություններեն օժտված զավակներե։ Ահա թե ինչու նվաստս ստիպված է կրկնելու և նույնիսկ հավատացնելու ձեզ, որ ինչպիսի վախճան ալ ունենա այս պատերազմը ցարական Ռուսաստանի և իր դաշնակիցներու համար, միևնույն է, մեր հայրենիքը չի ազատվի աշխարհի գիշատիչներու ճանկերեն։ Բայց կան ճշմարտություններ, որոնց շուրջը խոսելը մեզ շատ հեռուն կտանի։ Սակայն հերոսներս, մի՞թե այս ամենը պիտի պատճառ ըլլան ձեր հոգու մեջ ծագեցնելու երկընտրանք, հիասթափություն, վհատություն և ապա ռազմունակության թափի անկում, հանդեպ հայրենիքի հնարավոր ազատության վեհ գաղափարի։ Վհատությունը հատուկ է թույլերուն. մի՛ վհատվեք... Ինչպիսի անարդարություններու ալ ականատես ըլլալու լինեք, միևնույն է, այլ ելք այժմ չիկա. պիտի արիությամբ շարունակենք մեր ռազմական գործողությունները հանդեպ մեր անարգ թշնամուն։ Թող աշխարհի հզոր գաղութարար պետությունները շարունակեն բզկտել մեզ և մեզ բախտակից այլ ազգերուն իրենց անասնական երջանկության համար, բայց այդ ալ ունի իր վախճանը։ Աշխարհում գոյություն ունեն այլ ուժեր, այլ հզոր ազգակներ, որոնք կոչված են հրի ու սրի ճարակ դարձնելու այդ մարդակերպ արյունարբու գազաններու ոհմակներուն։ Ահա այդ ուժերու բարձրանալիք փոթորկի ժայթքումից է, որ պիտի վերածնվի նաև մեր արյամբ փրկված հայրենիքը։ Ատիկա լավ հիշեցեք, զավակնե՛րս։ Թող օրհնվի, խնկարկվի ձեր պայքարի ուղին մեր քաջարի նախնիներու վեհ անուններով...։

Ժամանակը մեզ երկար սպասեցնել չտվեց տեսնելու և համոզվելու Անդրանիկի մարգարեական նախատեսությունները։ Զանցած երեք, չորս օր, հայկական կամավորական զորամասերը համախմբվեցին Անդրանիկի հրամանատարության տակ, ըստ ռուսական բանակի ընդհանուր հրամանատար, կոր-

պուսի գեներալ Տրուխինի հրամանի, և շարժվեցին դեպի Բաղեշ։

Վանում գտնվող ռուսական հրամանատարությունը Անդրանիկի տրամադրության տակ էր դրել չորս լեռնային թնդանոթ՝ իրենց ռազմական ուժերով։ Մենք շարժվում էինք որպես ավանգարդ։ Ըստ հրամանի մեր հետևից երկու օր հետո պիտի շարժվեին նաև Վանում տեղակայված ռուսական բանակի գլխավոր ուժերը։ Վանից դեպի Բաղեշ տանող ճանապարհի երկայնության վրա ընկած հայկական գյուղերն ու ավանները ավերված էին և անմարդաբնակ՝ ամենուր, սրախողխող արված ծերերի ու մանուկների դիակներ էին։ Հրկիզված շատ գյուղեր դեռ շարունակում էին ծխալ։

Մենք հազիվ էինք անցել կես ճանապարհը, երբ Սորբի և Զևինի շրջակայքում հանդիպեցինք դեպի Վան արշավող թշնամու առաջապահ ուժերին։ Նոքա փորձեցին լուրջ դիմադրել մեզ, բայց հենց կռվի առաջին օրը մեր ուժերի կողմից հետ շպրտվեցին և խուճապի մատնված շտապ բռնեցին նահանջի ճանապարհը։ Պարտված թշնամին նահանջեց ոչ թե դեպի Բաղեշ, այլ դեպի Դատվան, որն ընկած էր Վանա ծովի արևմտյան ափին։ «Դժբախտաբար,— ասաց Անդրանիկը,— այժմ եթե մենք փորձենք հետևելու թշնամու դեպի Դատվան նահանջող ուժերին, ապա Բաղեշի կողմից դարան մտած Խալիլ փաշայի գլխավոր ուժերը վաղը կամ մյուս օրը կրնան մեզ ձգել ծուղակի մեջ և գերել մեր ուժերը։ Բաժանել մեր առանց այդ էլ փոքրաթիվ ուժերը երկու մասի՝ մի մասը Խալիլ փաշայի գլխավոր ուժերի դեմ, իսկ մյուս մասով հետևել դեպի Դատվան նահանջող թշնամուն, միևնույն է չենք կարող խուսափել վտանգից, անգամ եթե մեզ հաջողվի վերջնականապես ջախջախել Դատվանում դիրքավորված թշնամու ուժերը, մանավանդ դեպի Դատվան շարժվող մեր ուժերը նույնպես կրնան լինել շրջապատված Տարոնից դեպի Դատվան շարժվող թուրքական օժանդակ ուժերու կողմե։ Առանց ուշադրություն դարձնելու դեպի Դատվան նա-

հանջած թշնամուն և գնալ Խալիլի կորպուսի դեմ մեր սակավաթիվ ուժերով, նույնպես մեծ պատասխանատվություն է, որովհետև Դատվան նահանջած թշնամին այս պարագային անպայման կզարկե մեր թիկունքին։ Ինձ չլսեցին ռուս զորավարները։ Ես նրանց դեռ Վան եկած ատենս խնդրեցի շտապ զորամաս մը ուղարկել ծովու հյուսիսային ափերով մինչև Դատվան, իսկ անոնք երկար ու անմիտ առարկություններեն վերջը խոստացան ամրացնել միայն Ալջևազը։ Ըստ ինձ տրված հրամանի բովանդակության Վանի ռուսական բանակի գլխավոր ուժերը վաղուց պիտի հասած լինեին մեզ, սակայն, ինչպես կտեսնեք, անոնք մինչև օրս ալ շարունակում են մնալ Վանում և ամենայն հավանականությամբ չեն էլ խորհում մեզ օգնության գալ։ Նահանջել դեպի Վան, ատիկա խայտառակ անպատվություն է, հաշտվել չեմ կրնար այդ մտքի հետ։ Եղած փոքրաթիվ ուժերով հարձակվել երեք կողմից՝ Մշո դաշտեն, Դատվանեն և Բաղեշեն մեր դեմ արշավող թշնամու հրաշալի սպառազինված գերակշռող ուժերու դեմ և բաց աչքերով ընդունել անոնց թակարդը՝ նույնպես անմտություն է...

Այսպիսի պայմաններում թեպետև հապաղումը մահացու է, սակայն ստիպված ենք սպասել կորպուսի հրամանատար Տրուխինի վերջնական պատասխանին։ Կհուսամ, որ վաղը կամ մյուս օրը մենք իրազեկ կըլլանք մեր շուրջը կատարվող իրադարձություններուն հետ»։

Եվ, իրոք, երկրորդ օրը կեսօրին Վանից վերադարձած մեր սուրհանդակները հաղորդեցին, որ ռուսական զորքը սկսել է ձգել Վանը։ Այժմ ոչ միայն Վան քաղաքի բնակչությունը, այլև ամբողջ Վասպուրականի հայությունը խուճապի մատնված փախչում էր դեպի Արևելյան Հայաստան։

Անդրանիկի շուրջը համախմբված կամավորական ջոկատների հրամանատարները Վանից վերադարձած սուրհանդակների գույժը լսելուն պես կարծես մի պահ փայտացան և ապա, հանկարծ սթափվելով,

փրենց հայացքները ուղղեցին Անդրանիկին՝ լսելու նրա կարծիքը։ Անդրանիկը, կռահելով իր շուրջը համախմբված զինակից ընկերների միտքը, դարձավ նրանց հետևյալ խոսքերով՝ «Զինակից եղբայրք իմ, համոզված եմ, որ այսօրվա ձեր լսած դառնագույն լուրը նորություն չէ ո՛չ ինձ և ո՛չ էլ ձեզ համար։ Ատիկա հանելուկ մը չէ, որ պահանջե լարել մեր միտքն ու գիտակցությունը բացատրելու անոր իմաստը։ Ինչպես միշտ, այսօր ալ կշեշտեմ, որ ամեն մի ազգի և առավել ևս մեր ազգի ողբերգությունը պիտի համարել անմիջական հետևանք-հեռատես, փորձված, ձևոներևց և ճկուն քաղաքագետ զավակներու բացակայությամբ։ Եթե մենք ունենայինք մեկ երկու տասնյակ ատանկ քաղաքագետ զավակներ, մենք երբեք չպիտի այս ձևով մասնակցեինք այս համաշխարհային սպանդին։ Հարկավ, առանց կամավորական խմբեր կազմելու էլ Թուրքիան կկոտորեր անզեն հայերուն, սակայն մեր հայրենիքը այս աստիճան չէր վերածվի սպանդի, և հիմնովին չէր բնաջնջվի Արևմըտյան Հայաստանը, որի ականատեսն ենք մենք։ Ամեն ինչ պարզ է, սակայն այժմ ժամանակը չի ներում նման հարցերով զբաղվելու համար։ Այժմ կառաջարկեմ ես այս գիշեր ևեթ մեր ուժերը բաժանել երկու հավասար մասի, որոնցից մի մասը մեր եկած ճամփով պիտի շտապի դեպի Վան՝ ապահովելու գաղթը քրդական ուժերու ոտնձգություններեն, մյուս մասն ալ իմ ղեկավարությամբ գիշերային հանկարծակի հախուռն հարձակումով ձգտի փշրելու և փախուստի մատնելու Մուշ-Դատվանում դիրքավորված թշնամուն և ապա ծովի հյուսիսային ափերով, Ալջևազ ավանի վրայով դուրս գալ Բերկրի, ուրև մենք կմիանանք իրար»։

Վաղ լուսաբացին, հրաժեշտ տալով իրար, շարժվեցին դեպի Վան կամավորական զորամասերի մի մասը, իսկ մյուս մասը դեպի Դատվան՝ ռուսական հրետանու հետ միասին։ Որպես հայկական կամավորական միացյալ զինված ուժերի հրամանատարի Անդրանիկի նպատակն էր նա՛խ փրկել թշնամու յա-

թաղանից մազապուրծ եղած Վանա լճի շրջապատի՝ Ոստանի, Ոզմի, Խիզանի, Արճեշի, Շատախի, Ալջևազի և այլ շրջանների կենդանի մնացած հայությանը, երկրորդ՝ արգելել Դատվանի թուրքական զորամասերին դժվարին կացության մեջ դնելու Ալջևազի ռուսական զորամասին և վերջապես երրորդ՝ օգտվել առիթից մի անգամ ևս հարվածելու թշնամուն այնպես, որ նա երբեք չձգի մեզ իր մտքից։

ԴԱՏՎԱՆԻ ՕՊԵՐԱՑԻԱՆ

Դատվանի ընդհանուր դիրքը վաղուց էր ծանոթ Անդրանիկին և իր զինակից ընկերներից շատերին։ Անդրանիկի հրամանով շուտով մեր ճարպիկ հետախույզները, թաքերդաղցի Ավոյի գլխավորությամբ, պարզեցին թշնամու դիրքավորված տեղամասի բոլոր մանրամասնությունները։ Ի շարս այլ կարևոր տեղեկությունների, Ավոն հաղորդեց նաև, որ Դատվանի ծովածոցում խարսխված են երկու ապրանքատար առագաստանավեր և մի քանի մակույկներ, որոնց վրա որոշակի նկատվում է թշնամու ուժերի եռուզեռ։

— Ատիկա հաճելի չէ, բայց ոչինչ, հրետանային կրակի մի քանի նպատակասլաց արկերով կարելի է խորտակել և՛ նավերը, և՛ մարդկանց,— ասաց Անդրանիկը։

Կռիվը սկսվեց մեր շարժման երրորդ օրը՝ վաղ առավոտյան։ Մեր լեռնային հրետանու բացած փոթորկային կրակից և հետևակի ու հեծելազորի երկարատև հախուռն ուռայից սարսափահար, թշնամին արթնացավ։ Բայց մինչև նրանք ուշքի կգային, ծովախորշում հրկիզված առագաստանավերից լեղապատառ ծովն էին թափվում ծովային ջոկատները, որոնցից ոմա՛նք անմիջապես խեղդամահ էին լինում, ոմա՛նք էլ ընկնում էին մեր գնդացիրների կրակի տարափից և հրետանու արկերից։ Քիչ անց, երբ արևի վաղորդյան ճառագայթները սկսեցին ոսկեզօծել Սի-

փանի, Նեմրութի բարձրաբերձ գագաթները, սթափված թշնամին փորձեց ետ մղել մեր առաջապահ ուժերը և կտրել դեպի Արճեշ տանող ճանապարհը խիզախող մեր հեծելազորի երթը, բայց իզուր, մերոնք կանխեցին թշնամուն և սրարշավ անցան նրանց ձախ թևը՝ տիրելով Արճեշի ճանապարհը։ Այժմ մեզ ծովից ոչ մի վտանգ չէր սպառնում։ Դեպի Արճեշ տանող ճանապարհը մեր ձեռքին էր, և մեր ուժերը ամբողջ ճակատի երկայնությամբ թշնամու դիրքերի դեմ կանգնած առյուծաբար մարտնչում էին։ Բայց բավական էր ցուցաբերել մի փոքրիկ դանդաղկոտություն, որպեսզի մեր դրությունը վտանգի ենթարկվեր թշնամու Բաղեշից սպասվող օժանդակ ուժերի կողմից, որոնք հարվածելով մեր թիկունքից, կարող էին մեծ աղետ պատճառել մեզ։ Նկատի ունենալով այդ հանգամանքը, Անդրանիկը երեկոյան շտապ վերադասավորեց իր ուժերը այնպես, որ կռվի հաջորդ օրը դեռ լույսը չբացված գրոհեինք թշնամու վրա և հարկադրեինք նրան փախուստի դիմել։ Այդպես էլ եղավ։ Հաջորդ օրը, դեռ նոր էր լույսը բացվել, երբ մեր աջ և ձախ թևերի թնդանոթները սկսեցին ռմբակոծել թշնամու դիրքերը։ Թշնամին ետ չմնաց մեզնից, նա ևս գործի դրեց իր հրետանին, որը մի քանի աննըպատակ համազարկերից հետո դադարեցրեց իր կրակը։

Անդրանիկը առաջինը կռահեց. «Թշնամին դիմած է փախուստի նախքան մեր հարձակումը... Ուրեմն հառա՜ջ, քաջե՛ր, հառա՜ջ...»։ Մեր հեծելազորը առաջինը եղավ, որ գրավեց թշնամու լքած խրամատները և հաստատեց փաշայի կարծիքն ու սկսեց հետապնդել նրա նահանջող ուժերին, որին հետևեց մեր հետևակը։ Անդրանիկի կարգադրությամբ մեր հրետանին նոր դիրքեր գրավեց և սկսեց անդադար ռմբակոծել փախչող թշնամու առաջապահ ուժերին՝ ապահովելով մեր հետևազորի առաջընթացը։

Թշնամին նահանջում էր դեպի Մուշ։ Ռազմական տակտիկան պահանջում էր, որ մեր հեծելազորը շարունակի հետապնդել նահանջող թշնամուն

մի որոշ տարածություն և մութն ընկնելուն պես խարույկներ վառի ու հետ դառնա թշնամուց գրաված դիրքերը, որպեսզի հաջորդ օրը ըստ կանխատեսված պլանի շարժվենք նա՛խ դեպի Արճեշ և ապա՝ Ալչեվազի վրայով Բերկրի։ Այդ ամենը կատարվում էր Անդրանիկի կարգադրությամբ, որին իր զինակից ընկերներից ոչ ոք չէր առարկում։ Մեր ուժերի Դատվանից դեպի Արճեշ շարժվելու երկրորդ օրվա երեկոյան միայն հետախույզները լուր բերին, որ Բաղեշից դեպի Դատվան ձգվող ճանապարհով մեծ քանակությամբ զորք է շարժվում։ Այլևս կասկածից վեր էր, որ դրանք Խալիլ փաշայի Բաղեշից ուղարկած օժանդակ ջոկատներն էին, որոնք շտապում էին օգնության գալու Դատվան դիրքավորված և մեր կողմից արդեն փախուստի մատնված իրենց եղբայրներին։ Բարեբախտաբար, նրանց դանդաղկոտությունը մեզ ազատեց սպառնացող անխուսափելի վտանգից, որին ամեն վայրկյան սպասում էինք մենք։

Մեր բանակի Ալչևազ հասնելու նախօրյակին այնտեղ դիրքավորված ռուսական ջոկատի հետախույզները հեռվից նկատելով մեր զորագնդի առաջխաղացումը, սխալմամբ թշնամու տեղ դնելով մեզ, պատրաստվել էին ձգելու իրենց դիրքերը, բայց մեր ուղարկած սուրհանդակները, հասնելով նրանց, հաղորդել էին, որ եկողները մենք ենք և ոչ թե թուրքերը։ Ոգևորված այդ հաճելի լուրից, ռուսական ջոկատի հրամանատարությունը անմիջապես պատրաստություն էր տեսել հավուր պատշաճի դիմավորելու մեզ։ Ալչևազի ռուսական ջոկատի մի քանի սպաներ, որոնց ազգանունները ժամանակը մատնել է մոռացության, ցավով իմացան Վանի նահանջի պատմությունը։ Նրանցից շատերը դժվարանում էին հավատալ մեզ համար չափազանց ճակատագրական նշանակություն ունեցող այդ լուրին։ Սակայն նրանք ոչ մի բանով չէին կարող թեթևացնել մեր վիշտը։

Մի երկու օրից հասնելով Բերկրի, Անդրանիկը իր առաջին պարտքը համարեց առանց պաշտոնական թույլտվության հանդիպել կորպուսի հրամանատար

գեներալ-լեյտենանտ Տրուխինին։ Նա անսպասելի մտնելով գեներալի վրանը և անզոր լինելով զսպել յուր արդար ցասումը, երկու շտաբական սպանների ներկայությամբ ապտակում է նրան և պոկելով նրա ուսադիրները շտապ դուրս գալիս վրանից և ասում.

— Եթե ցանկանում եք իմանալ իմ վարմունքի պատճառը, երեկոյան բարեհաճեցեք իմ վրանը գալ և հոն ես կպատասխանեմ...

Այս ցնցող դեպքը կարող էր վերջանալ եղբայրասպան արյունահեղությամբ, եթե շտաբի զույգ սպաները չվախենային գեներալի վրանի առջև սպասող Անդրանիկի երկու տասնյակ, մինչև ատամները զինված թիկնապահներից՝ բազմած իրենց կատաղի նժույգների վրա։

Նույն օրը երեկոյան, սովորականի պես, երբ նոր էր վերջացել ընթրիքը, Քեռին, Վարդանը և կամավորական գնդերի այլ հրամանատարներ և մտավորականներ համախմբվել էին Անդրանիկի շուրջը և զբաղված էին ենթադրություններ անելով օրվա պատահած արտակարգ դեպքի հետևանքի մասին, երբ հերթապահ զինվորներից մեկը, ներս մտնելով վրան, հաղորդեց, որ կորպուսի շտաբի պետը ցանկանում է այցելել Անդրանիկին։ Շտաբի պետը գնդապետի աստիճան ուներ։ Անդրանիկի կարգադրությամբ նրան հրավիրեցին ներս։ Ներս մտնելով, նա բացառիկ քաղաքավարությամբ մեկիկ-մեկիկ սեղմեց բոլորի աջը և դիմեց նրանց հետևյալ խոսքերով.

— Պարոնայք, ամենքդ էլ իրազեկ եք այսօրվա պատահած արտակարգ և նույնքան անախորժ դեպքին։ Նախապես պիտի ասեմ, որ ես չեմ եկել ձեզ մոտ այդ առթիվ կշտամբելու կամ բարոյախոսական խրատներ կարդալու ձեզնից որևէ մեկին։ Քավ լիցի։ Մենք ռուս սպաներս խորապես հասկանում ենք ձեզնից յուրաքանչյուրի հոգեկան այն դառը վիճակը, որ սերտորեն առնչված է ձեր սիրելի հայրենիքի ողբերգական ճակատագրի հետ։ Սակայն, հավատացեք, մենք, սպաներս դիվանագիտության հետ ոչ մի

կապ չունենք։ Մենք լոկ վերից եկող հրամանների և կարգադրությունների հլու-հնազանդ կատարածուներն ենք։ Եթե թույլ տաք կասեմ ձեզ ավելին՝ այդ շարաբաստիկ հարցում հազիվ թե որևէ բան կախված լինի նույնիսկ Կովկասյան ճակատի գերագույն հրամանատարից։ Ներկա դեպքում նրան թերևս կարելի է մեղադրել լոկ որպես Պետրոգրադից ստացվող կառավարական հրամանների և շրջաբերականների եռանդուն և անսխալ կատարածուի։

Ձեր դժգոհությունը մեր դեմ համարում ենք միանգամայն օրինական և իրավացի։ Հիրավի, ձեր համբերության բաժակը լցվել է և ձեր այսօրվա վարմունքը հատկանշական է ամեն մի ազնիվ ու անվաշառ ազգասերի, որպիսին եք դուք ձերդ գերազանցություն Անդրանի՛կ և ձեր շուրջը բազմած ձեր վաղեմի զինակից ընկերներն ու ձեր քաջ մարտիկները։ Ձեր վերքերը խորն են, ձեր սրտի կսկիծը՝ առայժմ անբուժելի։ Այսօր հայ ազգային հերոս Անդրանիկից վիրավորված բանակի կորպուսի հրամանատար գեներալ լեյտենանտ Տրուխինը այժմ պառկած է անկողնում։ Նա միայն կարողացավ խնդրել ինձ շտապել խիստ վարագուրելու այդ վարկաբեկ դեպքը, և խնդրեց վերադարձնելու իր ուսադիրները, որ հուսով եմ չեք մերժի...

— Պարոն գնդապետ,— պատասխանեց Անդրանիկը,— Դուք կխոսեք ձե՞ր անունեն, թե՞ որպես կորպուսի շտաբի պետ նաև Կովկասյան ճակատի ընդհանուր հրամանատարության անունեն։ Բայց իմացած եղեք, երկու դեպքում ալ մեզ համար միևնույն է, իրերու դրությունը չի փոխվում, մենք հեռու ենք հզորի դեմ արդարանալու մտքից, վասնզի գայլի առջև մեղավորը միշտ անմեղ գառը կըլլա։ Հարկավ, այժմ ռուսական հրամանատարությունը անզոր է քողարկելու իր կատարածը մեր տեսադաշտեն և դուք ճգնում եք արդարացնել մեր այսօրվա անզուսպ ցասման հետևանքով տեղի ունեցած տհաճ պատահարը։ Խորապես զգացված եմ։ Գեներալ Ձեռնոզուբովը, ինչպես հայտնի է ձեզ, սույն թվի ապ-

բիլ ամսին փորձեց չկռվել Խալիլ փաշայի Դիլիման հասած կորպուսի դեմ, և գերադասեց նահանջել Խալիլ փաշայի առջևից մինչև Ջուղա՝ առանց խորհելու նման նահանջի անպատվաբեր հետևանքների մասին և ապա որպեսզի միջոց տա մեր անարգ թշնամուն անարգել կերպով բնաջնջելու Վասպուրականի բովանդակ հայությանը։ Բայց ատիկա չհաջողվեց անոր, մենք մեր համառ կամքով և պերճախոս փաստերով ապացուցեցինք հակառակը։ Ջեռնոզուբովը հարկադրված առերես համաձայնվեց մեզ հետ, կռվելու Խալիլ փաշայի կորպուսի դեմ՝ ձգելով ճակատամարտի ամբողջ պատասխանատվությունը մեզ վրա, այն հույսով, որ անպայման ես պիտի գլխովին պարտվեմ թշնամուց և գերեվարվեմ իմ գնդով նրա գերակշռող ուժերու կողմե։ Սակայն մենք մեր սակավաթիվ ուժերով ջախջախեցինք և խուճապի մատնեցինք Խալիլ փաշայի կորպուսին, իսկ Ջեռնոզուբովը այդ հաղթանակից հետո կրկին արգելեց մեզ կրնկակոխ հետևել խուճապի մատնված թշնամուն։ Սակայն իրերի բերումով Վանի թուրքերու դեմ ապստամբած հայության ժողովրդական բանակի հաղթանակը և Խալիլ փաշայի դանդաղկոտությունը բարեբախտաբար կրկին արգելք հանդիսացան թուրքական ուժերին իրագործելու իրենց նպատակները։ Ահաբեկված Խալիլը վազն անցավ դեպի Վան արշավելու մտադրությունից։ Նա գերադասեց բռնել Կորդվաց լեռներով դեպի հարավ տանող չափազանց դժվարին ճանապարհը՝ քաշելով մեզ իր հետևից Տիգրիսի կիրճերով՝ մինչև պատմական Ասորեստանի լեռնաշխարհի սահմանները։ Հիրավի, այլևս անմտություն էր և վտանգավոր մեզ համար հետևել թշնամուն մինչև Բաղեշ կամ Սղերդ։ Մենք վերադարձանք աղատագրված Վան, ուր և բախտ ունեցանք ծանոթանալու աղ ու հացի սեղանի շուրջ ռուս զորամասերու քանի մը զորավարներու և հանդիպելու Արարատյան դաշտեն ռուսական զորքերու հետ Վան հասած հայկական կամավորական ջոկատներու հրամանատարներու հետ։ Մենք այն հույսն ունեինք,

որ առանց ժամանակ վատնելու միացյալ և միահամուռ ուժերով շտապ պիտի շարժվենք Բաղեշ և դեպի Մուշ՝ արգելելու արյունարբու թշնամուն այն վայրերում բնաջնջելու հայության վերջին բեկորները։ Բայց իրականում տեղի ունեցավ հակառակը։ Ռուսական զորքերու զորավարները, ինչպես կանխագուշակած էինք մենք քանի մը օր Վանի շրջակայքում մեզ պահելուց հետո, հրամայեցին հայկական կամավորական ջոկատներին շարժվել դեպի Բաղեշ, տալով մեզ չորս լեռնային թնդանոթ՝ սպասարկող ռազմակազմով, խոստանալով մեր հետևից մի երկու օր հետո նույն ուղղությամբ շարժման մեջ դնել նաև ռուսական մնացած ռազմական ուժերը։ Ռուսական հրամանատարությունը, փոխանակ կատարելու իր խոստումը, մեր դեպի Բաղեշ շարժվելեն քանի մը օր վերջը հանկարծ, առանց որևէ հարգելի պատճառի, լքեց Վանը և բռնեց Արարատյան դաշտի ճանապարհը՝ խուճապի մատնելով ազատագրված Վասպուրականի հայ հոծ ազգաբնակչությանը։

Սա ինչ մանվածապատ առեղծված է, ախպարս, գուցե դո՞ւք բացատրեք, պարոն շտաբի պետ։

— Պարոն Անդրանիկ, ես նախապես ասացի ձեզ, որ սովորաբար ռուսական բանակի սպայակազմը հեռու է դիվանագիտական գործերից։ Տվյալ դեպքում ես բացառություն չեմ կազմում, ես ևս հեռու եմ դիվանագիտության ասպարեզից։

— Դարեր շարունակ մեր նախնիները սիրել, փայփայել և անկեղծորեն փարվել են ռուս աշխատասեր ու մարդասեր ժողովրդին և խորին հարգանք տածել դեպի անոր պետությունը։ Հայ ազգն իր խոշտանգված ու շղթայակապ հայրենիքի ազատության զարթոնքն ու վերածնունդը սերտորեն կապել է ռուս քաջարի և գթասատ ժողովրդի ու նոցա ռազմաշունչ մարդկանց հաղթական սվիններու ու թրերու ծայրին ընդդեմ երիցս անիծյալ օսմանյան Թուրքիայի՝ լինելով խորապես համոզված, որ միայն Ռուսաստանը կրնա փրկել Հայաստանն ու հայ ժողովուրդը իսպառ բնաջնջումեն արյունարբու սուլթաններու յաթաղա-

նեն։ Բայց այս պատերազմի ժամանակ ցարիզմի հայահալած քաղաքականությունը հարկադրեց մեզ հիասթափվել։ Այո, գաղտնիք չէ, մենք հիասթափված ենք ցարիզմի դեպի հայերը վարած քաղաքականությունն, բայց ոչ երբեք ռուս աշխատավոր ժողովրդեն։

Շտաբի պետը իսկույն ոտքի ելավ և, հետևելով զինվորական կարգին, քաղաքավարի սեղմեց ներկա եղողների աջը և հրաժեշտ տալով բոլորին, քայլեց դեպի կորպուսի շտաբը։

Ժամանակը ուշ էր, բացի այդ բոլորն էլ հոգնած էին, ուստի շտապ ցրվեցին իրենց վրանները քնելու, զրույցի շարունակությունը թողնելով հաջորդ օրվան։ Գիշերը, հուլիսյան ցերեկվա տապին ու խորշակին շուտով փոխարինեցին Հայաստանի բարձրաբերձ սարերի զով հովերը։ Հոգնատանջ գաղթականությունը կանգ առավ Վանից դեպի Արարատյան հարթավայր տանող ճանապարհի եզրերի սառնորակ աղբյուրների և վտակների շուրջը՝ հանգիստ տալու իրենց խոնջացած մարմիններին ու վշտաբեկ սրտերին։ Ամառային աստղազարդ գիշերվա այդ ուշ պահին լսվում էր անհոգ ծղրիդների դուրեկան սիմֆոնիան։ Հեռվից լսվում էր աղիողորմ ձայնով երգվող մի երգ.

Մի գեղեցիկ պարզ գիշեր էր,
Երկինքը լի աստղերով.
Եվ լուսինը մեղմ փայլում էր
Կաթնանման յուր լույսով։

Նա նայում էր լռիկ-մնջիկ,
Իբրև մի կույս դեպի Վան,
Նորա աչքին երևում էր
Բյուր ցավալի տեսարան...

Հանրածանոթ էր մեզ այդ աղեկտուր երգի թախծոտ եղանակը։ Ըստ երևույթին երգողները կա՛մ քույր ու եղբայր էին, կա՛մ ուխտյալ սիրահար սրտեր, կա՛մ էլ երիտասարդ ամուսնական զույգ, որոնց մելամաղձոտ ձայնից գերվելով ունկնդիրներից շա-

տերը հորդ արցունքներ էին թափում։ Այդ պահին մեզնից ոչ ոք չէր կարող ասել, թե այն որ ամենակարող ուժն է, որ կոչված է վերջ տալու հայի տառապանքին...

Վաղ լուսաբացին գաղթականությունը կրկին բրոնեց դեպի անորոշ հեռուները տանող իր ճամփան։ Օրը բացվելուն պես, Անդրանիկի շուրջը հավաքվեցին հայկական կամավորական զորագնդերի հրամանատարներն ու մտավորականները։ Շատ չանցած միանգամայն անսպասելի և առանց ուղեկցի նրա վրանը մտավ նաև Նազարբեկյանը, և ողջագուրվելով շատերի հետ, նստեց Անդրանիկի մոտ։ Մի պահ լռությունից հետո նա դարձավ Անդրանիկին.

— Այդչափ էլ համարձակությո՞ւն, ինչ հարկ կար, մինթե՞ մեր ցավը կարելի է բուժել մի ապտակով...։

Զորավարը խոսում էր ռուսերեն, նրա թարգմանը հնչակյան Ա. Քալանթարն էր։ Անդրանիկը պատասխանեց.

— Սիրելի հայրենակից, կատարված իրողությունների հետո, ես նոր միայն սթափվեցա, որ անմիտ քայլ էր իմ ըրածը։ Այո, մեկ, երկու զորավարի ապտակելով, վիրավորելով մենք չենք բուժի մեր վերքերը։ Ինչ ըրած, ալ եղածը եղած է և առանձնապես մնշանչելու տրամադրություն չունիմ և ոչ էլ խոկալու։ Ալ համբերությանս բաժակը լցրին ադ շան վատուկները։ Այդչափ ալ տմարդությո՞ւն։ Մեզմե յուրաքանչյուրն այնքան հուզված է, արդար ցասման այնպիսի վիճակի մեջ է, որ հավանականությունն դուրս չէ ձեզ վկա ըլլալու պատահածից ավելի վատթարին... Իմ սիրելի ավագ եղբայր, մի՞թե դուք մինչև այժմ այդչափ անճար եք եղածն ըմբռնելու ապիկար ցարի և անոր քաղաքական ու զինվորական հայտնալած քաղաքականության իրողությունը։ Վանի վիլայեթի հայությունը, Վան քաղաքի բնակչությունը կարողացավ նախքան ռուսական զորքերի մուտքը Վան, շնորհիվ տարիների ընթացքում զարտուղի ճանապարհներով ձեռք բերած զենքերի, ապստամբել Թուրքիո դեմ և փշրելով անոր տեղային կայազորի

և վերջինիս օգնության հասած ռազմական օժանդակ ուժերուն՝ փրկել Վասպուրականի հայությանը արյունաթաթախ յաթաղանեն։ Յարական Ռուսաստանի հրամանատարությունը, փոխանակ ուրախանալու, ընդհակառակն, շտապեց կազմակերպել անհիմն ու ողբալի նահանջը, որպեսզի Վասպուրականի ազատագրված հայությունը հարկադրված ըլլա լքելու իր սիրելի էրգիրը։ Հավատացած ձեր ազնվությանը, նախապես կուզեմ հաղորդել ձեզ, սիրելի տոհմակից, որ ցարական զորքերը Արևմտյան Հայաստանը ձեռքից թողնողը չեն։ Անոնք որոշ ժամանակեն ետքը կհրամայեն մեզ ռուսական մի սրևէ զորամասի հետ նահանջել դեպի Արարատյան դաշտ, որ մի որոշ ժամանակից հետո նորից շարժման մեջ դնեն իրենց զորքերը վերստին գրոհելու Վանը, Կարինը և հայկական այլ վիլայեթներ, մեզ ևս առնելով իրենց շարքերուն մեջ։ Նոքա լավ գիտեն, որ թշնամու աչքը այնքան վախեցած է ռուսեն, որ նա երկար ատեն չի հանդգնի և առհասարակ կխուսափի կրկին հետ գրավելու մեր գրաված վայրերը։

— Այդ ամենը, սիրելի Անդրանիկ, երազ է, և այդ հարցի շուրջը իմ ունեցած կարծիքը ևս ակներև է ձեզ մեր ծանոթության առաջին իսկ օրից, բայց այժմ ինչ կրնանք անել, այլևս եղածը եղած է և ըստ իմ կարծիքի պետք է խուսափել ռուս հրամանատարության դեմ ընդվզումներից, որովհետև հակառակ պարագային նման վարմունքով դուք կարող եք վտանգել նաև արևելահայերու վիճակը։ Համբերեցեք, համբերեցեք, եղբա՛յր իմ, տեսնենք ինչով պիտի վերջանա այս պատուհասը։

— Այո՛, համաձայն եմ ձեր մտքերու հետ, սիրելի հայրենակից, առայժմ ուրիշ ելք չիկա մեզ համար։ Մենք զինված համբերությամբ կսպասենք ամենակարող ժամանակին, տեսնենք, թե ինչ ցանկալի կամ արգահատելի անակնկալություններու առաջ կկանգնեցնի անիկա մեզ։

— Որ այդպես է, ես գոհ եմ,— պատասխանեց Նազարբեկյանը։— Դուք ճիշտ եք կռահել, այսօր

երեկոյան կստանաք հրաման՝ իջնելու Արարատյան դաշտ։ Ձեր ջոկատների հանգստավայրը նշանակված է Քանաքեռ ավանի մերձակայքը, դեհ, առայժըմ, ցտեսություն...

Զորավար Նազարբեկյանի գնալուց հետո մերոնք շարունակեցին իրենց զրույցը մինչև ճաշ։ Սակայն բացի Անդրանիկից, նրանցից և ոչ մեկի մտքով չէր անցնում Ռուսաստանում սպասելիք հեղափոխության հնարավորության մասին։ Միայն նա էր, որ խորհում էր այդ կարևոր հարցի շուրջը՝ կապելով հայության հնարավոր ազատությունը գալիք հեղափոխության հաղթանակի հետ։

— Ես ամեն լսածս հալած յուղի տեղ չեմ ընդուներ։ Եռանդամոլ աստվածասեր բժ. Հակոբ Զավրևը միանգամայն հոռետես էր և լսել անգամ չէր կամենա ռուսական հեղափոխության մասին։ Խեղճ ծերուկը թեև ինքը խոշոր սեփականատեր չէր, բայց կասրսափեր հեղափոխությունեն։

— Ո՞վ գիտե երբ պիտի ժայթքի այդ հեղափոխությունը և ինչպիսի հետևանք կունենա անիկա մեզ, հայերուս համար,— երկար լռությունից հետո ասաց Քեռին։

— Մեծ ախպար,— պատասխանեց Անդրանիկը,— մեր խորհած ռուսական հեղափոխության ժայթքման լավագույն առիթը հենց ինքը այս կործանարար պատերազմն է։ Եթե ռուս ինքնակալ ցարեն դժգոհ ժողովուրդներու հոծ զանգվածներու ղեկավարները բաց թողնեն ձեռքից այս ամենահարմար առիթը, ապա ցավոք սրտի պիտի նորից սպասել մի այսպիսի հարմարավետ առիթի, որի ընթացքում հավանականությունեն դուրս չէ, որ մենք իսպառ կոչնչանանք։

Ռուսական կորպուսի շտաբից նույն օրը երեկոյան ստացած հրամանի համաձայն, հաջորդ օրը հայկական կամավորական զորասյուները ռուսական մի գնդի հետ շարժվեցին դեպի Արարատյան դաշտ։ Երկու-երեք օրից հասնելով Իգդիր ավանը, որտեղ գաղթականության բազմությունից ասեղ գցելու տեղ չկար, մենք շարժվեցինք դեպի Քանաքեռ, իսկ ռու-

սական գունդը մնաց Իգդիրում։ Հասնելով Քանաքեռ, ապա Ավան գյուղը, մենք պետք է այդտեղ հանգստանայինք և սպասեինք նոր հրամանի։

Արարատյան դաշտում գաղթականության վիճակը բառիս ամենալայն իմաստով ողբերգական էր։ Սովից, որովայնային, բծավոր տիֆից, դիզենտերիայից, մալարիայից և սուր վարակիչ այլ հիվանդություններից ամեն օր հարյուրավոր մարդիկ էին մեռնում։ Այդ աղետին վերջ տալու համար, ի շարս շատ այլ կարևոր միջոցների, զգացվում էր նաև բժիշկների, բուժակների և գթության քույրերի մեծ կարիք։ Ավան հասնելու երկրորդ օրը Անդրանիկը հրավիրեց բժիշկ Հայկազուն Նալբանդյանին և, նրա տրամադրության տակ դնելով իր գնդի բժշկասանիտարական խումբը, հրամայեց ժամանակավորապես ձգել գունդը և մեկնել Էջմիածին՝ օգնելու մեր ապաբախտ ու բնավեր հայրենակիցներին։ Էջմիածին մեկնող բժշկասանիտարական խմբի մեջ էր գտնվում նաև տողերիս հեղինակը՝ որպես բուժակ։ Աղգային այդ ահավոր աղետի առաջն առնելու համար մենք Էջմիածնում հանդիպեցինք մոտ մի տասնյակ գիտակից հայ բժիշկների, որոնք ամեն օր առավոտվանից մինչև ուշ գիշեր անսպառ եռանդով ձգտում էին փրկել աղետյալներին սպառնացող մահաբեր հիվանդություններից։ Այդ հայրենասեր և մարդասեր բժիշկներից այժմ համարյա թե ոչ ոք կենդանի չէ, և ես ավելորդ չեմ համարում հիշատակել նրանցից մի քանիսի անունը, որոնք անձնուրաց կերպով իրենց կյանքը չխնայեցին հանուն ժողովրդի փրկության սրբազան գործին։ Ահա՛ նրանք, բժիշկներ՝ Մանդինյան, Բուլբուլյան, Ասրիև, Մարգարյան, Բաղալյան, Նալբանդյան, Արշակ և Էդվարդ Տեր-Ստեփանյաններ, բժշկուհիներ՝ Զալյան և Հունանյան։

Անցավ 1915-ի աղետալի ամառը, և վրա հասավ աշունն ու Հայաստանի բքաբեր ձմեռը։ Արևելահայաստանի գյուղացիությունը իր նահապետական հարկի տակ ապաստան տվեց իր բնավեր եղբայրներին, իսկ որբացած մանուկներին տեղավորեցին նրանց

համար բացված որբանոցներում։ Այդ ժամանակ ես որպես բուժակ աշխատում էի Աշտարակ գյուղում Մոսկվայի Հայկական կոմիտեի բացած որբանոցների ցանցում, բժիշկ Հայկազուն Նալբանդյանի ղեկավարած բժշկասանիտարական խմբում։ Կարծեմ հոկտեմբերի վերջն էր, բոլորովին անսպասելի Անդրանիկը իր քրոջ որդու՝ Երվանդի, ուղեկցությամբ մի քանի օրով եկավ Աշտարակ։ Նա տեղավորվել էր մի գյուղացու նորակառույց երկհարկանի քարակերտ տան վերին հարկի սենյակներից մեկում, որը գտնըվում էր Աշտարակից դեպի Օշական տանող խճուղու ձախ կողմում։ Բժիշկ Նալբանդյանը առաջինը լսեց նրա ժամանումը և շտապ ժողովեց մեզ՝ միասին գնալու, բարի գալուստ մաղթելու մեր սիրելի փաշային։ Մենք երեք-չորս հոգով նոր էինք աստիճաններից բարձրացել դեպի Քասախ գետի ձորը նայող պատշգամբը, երբ Անդրանիկը, իր սենյակից պատշգամբ դուրս գալով, մեղմ ժպիտը դեմքին համարյա թե միանգամից իր գիրկն առավ մեզ բոլորիս, սեղմեց իր կրծքին և բացականչեց.

— Է՜, սիրելիք իմ, առո՞ղջ եք... Կորովի՞ եք աշխատելու... Եկե՛ք, եկե՛ք, ներս մտեք սենյակ...

Օրը շաբաթ էր. մենք միասին ընթրեցինք, որին մասնակցում էր նաև տանտերը։ Մի քանի զվարճալի նախադասություններ փոխանակելուց հետո Անդրանիկը դարձավ բժիշկ Նալբանդյանին։

— Այժմ խնդրեմ կարճառոտ կերպով զիս իրազեկ դարձնել ընդհանրապես գաղթականության և մասնավորապես որբանոցներում զետեղված որբերու սնընդի, հագուստի, բնակարանի, ուսման, դաստիարակության, բժշկական օգնության և այլ կարևոր հարցերուն։

Բժիշկ Նալբանդյանը մանրակրկիտ պատմեց այդ մասին և բավարարեց փաշայի պահանջը՝ վերջում ավելացնելով.

— Փաշա, եթե հայրենասիրական գիտակցությունն և մարդասիրական զգացմունքներն զուրկ ըլլային մեր ռուսահայ եղբայրները, հատկապես գյու-

ղացիական խավերը, ապա գաղթականներու դրութիւնը ցարդ կշարունակվեր մնալ ողբալի վիճակում։

— Շատ ճիշտ կխորհիս, սիրելի՛ս,— պատասխանեց Անդրանիկը,— ես ալ հակված եմ ատանկ խորհելու։ Հակառակ քաղաքներու կարճամիտ ու հաստատփոր ունևոր հայերու, մեր գյուղացիութիւնը ավելի գիտակից, ավելի ազգասեր ու սրտաեռ գտնվեցավ դեպի իր տառապյալ եղբայրները։ Ատիկա աներկբայելի ճշմարտութիւն մըն է, ամեն ազգ կենդանի է ու կորովի նախ և առաջ իր գյուղացիութիւնամբ։

Բարի գիշեր մաղթելու պահին բժիշկ Նալբանդյանը խնդրեց փաշային առավոտյան գալ մեզ մոտ նախաճաշելու։

— Ո՛չ, չեմ կրնար, ատիկա անհարմար է։ Չէ թե չեմ ցանկանար, այլ պարզն ըսած ամոթեն կխուսափեմ հանդիպում ունենալ մասնավոր անհատ-անհատ մարդկանց հետ։ Ես ինքս կսպասեմ ձեզ նախաճաշելու ինձ մոտ և քիչ մըն ալ զբոսնելու սա դիմացի այգեպատ ձորերում (Քասախ գետի ձորում)։

Բայց հաջորդ օրը առավոտյան դեռ չնախաճաշած, Աշտարակ և Օշական գյուղերի երկսեռ բազմութիւնը արդեն անհամբեր սպասում էր Անդրանիկի հյուրընկալած տան առջև, ասելով.

— Մենք եկել ենք տեսնելու մեր ազգային պանծալի հերոսին, թող չմերժե նա մեզ և դուրս գա պատշգամբ։

Տանտերը, անզոր լինելով հակառակելու ժողովրդի պահանջին, ներս ընկավ սենյակ, իր տան պատվավոր հյուրին երկյուղածութիւնամբ հայտնեց բազմութիւնի պահանջը։

Անդրանիկը, նախքան պատասխանելը տանտիրոջը, մի պահ իր զննող հայացքը դարձրեց դեպի մեզ և մեր հայացքից անմիջապես կռահեց, որ մենք ևս կողմնակից ենք, որ նա բավարարի հանրութիւնի իղձը։

— Ատանկ ալ կնախազգայի,— ասաց Անդրանիկը և շարունակեց։— Աղեկ, ալ ճար չիկա, պիտի կատարել ժողովրդի ցանկութիւնը։

Տանտերը ուրախացած դուրս թռավ սենյակից իր տան հակառակ կողմի պատշգամբը, ազդարարելու բազմությանը, որ փոքր-ինչ համբերեն։ Անդրանիկը բարձրացավ իր աթոռից և քայլերն ուղղեց դեպի փողոցի վրայի փոքրիկ պատշգամբը։ Մենք ուղեկցում էինք նրան։ Պատշգամբը թառած էր Աշտարակից Օշական տանող խճուղու վրա, ուր և անհամբեր սպասում էր զույգ գյուղերի երկսեռ բազմությունը։ Անդրանիկը մոտեցավ պատշգամբին, և դիմեց ժողովրդին.

—Ողջույն ձեզ, սիրելի հայրենակիցներ... (ներքևում օդը թնդաց բազմության որոտընդոստ ուռաներով՝ «Կեցցե՛, կեցցե՛ ազգային հերոս Անդրանիկը...»)։

Անդրանիկը հուզմունքից այլայլվեց և մի պահ ոչինչ չկարողացավ ասել, բայց քիչ հետո, կրկին բացականչեց.

— Բարև ձեզ, սիրելի հայրենակիցներ, հարազատ եղբայրք, մայրեր ու քույրեր... Ես անզոր եմ ողջագուրվելու ամենուդ հետ առանձին-առանձին։ Թույլ տվեք հանձինս ձեզ, զիս իր հարկին տակ տեղավորած ամենքիդ ծանոթ համագյուղացու հետ համբուրվելու։

Այս ասելով նա գրկեց իր քովը կանգնած կապույտ չուխայով տանտիրոջը և ջերմ համբուրեց։ Կրկին ու կրկին օդը թնդաց բարձրաձայն ուռա՛նեերով։

Անդրանիկն իր աջը պարզեց դեպի բազմությունը և վերջինիս շարքերում իսկույն տիրեց լռություն։

— Գիտեմ,— շարունակեց Անդրանիկը,— ձեզնից ամեն ոք այսօր ընդհանրապես մտահոգված է մեր ազգի տխուր վիճակով և մասամբ ալ պատերազմի վախճանով։ Ձեզնից թաքցնելու ոչինչ չունեմ, վասնզի համոզված եմ, որ այն վիշտը, որ սև որթի մը պես կկրծե իմ սիրտը, կկրծե նաև ձեր սիրտն ու հոգին։ Գիտեմ, որ ձեր ընտանեկան հոգսերուն զուգահեռ դուք բոլորդ ալ խորապես մտահոգված եք նաև ազ-

գային վշտով։ Արևմտյան Հայաստանը գնաց մեր ձեռքեն։ Հոն բնակվող հայ ազգաբնակչության մի մասը իսպառ բնաջնջվեցավ, իսկ մյուս մասին ալ դարավոր թշնամին վտարեց մեր հայրենի հողեն դեպի Արաբիայի տափաստանները։ Այդ ամենը կատարվեցավ աշխարհի հզոր պետություններու աչքի առջև։ Ձեր գիտակցությունը կծառայի որպես հզոր երաշխիք ու գրավական հուսալու, որ դուք չնք լքի ձեր հայրենիքը և պիտի բաղմապատկեք ձեր եռանդը, լարեք ձեր բոլոր ուժերը որբերին և գաղթականությանը պահելու համար։ Գերի հայրենիքը կարելի է փրկել ոչ միայն զենքով, այլև գիտությամբ և առանց հրդեհի։ Կաղաչեմ ձեզ ձեր տղաներուն և աղջիկներուն անուս մի թողնեք։ Սնեցեք անոնց ոչ միայն ձեր քրտինքի և արյան գնով, այլև գիտությամբ, ռազմունակությամբ և վստահ եղեք, որ անոնք ժամանակին կգտնեն նոր ուղի, նոր ճանապարհ ամենիս դարավոր երազը իրագործելու համար...»

Օդը նորից թնդաց Անդրանիկի նկատմամբ ունեցած հարգանքի և համակրանքի աղաղակներով։ Ամբոխի միջից մի կորացած պառավ կին գոչեց— Քեզ ծնած ու սնած մոր կաթին մատաղ, Անդրանիկ...

Մի քանի օր Աշտարակում մնալուց հետո Անդրանիկը կրկին վերադարձավ բանակ։ Այո, կարճատև օրերի ընթացքում նա մի քանի անգամ այցելեց որբանոցները, հետաքրքրվեց երեխաների վիճակով և ընձեռած կրթական բոլոր միջոցներին զուգահեռ առաջարկեց երկսեռ երեխաներին նաև մարզվել սովորեցնել։ Հրաժեշտի օրը նա հոր պես ողջագուրվեց մեզ հետ և ասաց.

— Հուսով եմ, որ հետայսու ալ սիրով պիտի աշխատիք պաշտպանելու մեր ժողովրդի առողջությունը։ Հատուկ ուշադրություն և խնամք տարեք որբերու վերաբերմամբ։ Գիտցե՛ք, որ անոնցմեն շատերին է վերապահված պատիվը այս կամ այն կերպ վրեժխնդիր ըլլալու մեր այսօրվա թշնամիներեն, որոնք պատճառեցին մեզ այսքան տառապանք։

Աշտարակից նրա մեկնելուց մի քանի օր հետո մեր առանք, որ հայկական կամավորական զորամասերը կրկին շարժվեցին դե՛պի Էրգիր, դե՛պի ռազմադաշտ։ Մեր բժշկասանիտարական խումբը մնաց բանակից կտրված։ Այս անգամ Քեռին իր ուժերով շարժվեց դեպի Քրդստանի Սուչ-Բուլաղ-Ռևանդուզ գիծը, Իշխան երկայնաբազուկ Արղությանը՝ իր ուժերով դեպի Սալմաստ, Անդրանիկը՝ դեպի Վան, իսկ ոմանք՝ դեպի Բագրևանդ-Խնուս-Մանազկերտ, Հայկ Բժշկյանն էլ՝ իր ուժերով դեպի Կարին։ Հարկավ, Կովկասյան ռազմաբեմի բոլոր ուղղություններով հայկական կամավորական ջոկատները շարժվում էին ռուսական զորքերի հետ, բայց մերոնք, հայտնի պատճառներով, միշտ և ամենուր առաջապահի դեր էին կատարում։ 1915—1916 թվականների ձմռան ամիսներին թշնամու դեմ համարյա թե առանց լուրջ ընդհարումների ռուսական զորքերին և հայ կամավորականներին հաջողվել էր վերագրավել Կարինը, Վանը, Խնուսը, Մանազկերտը և եթե հիշողություններս չի դավաճանում գարնան սկզբին՝ նույնիսկ Բաղեշը։

Ինչպես վերը նշեցինք, այս անգամ ես մնացել էի խոր թիկունքում։ Բայց բավական հետաքրքիր է բանակում մնացած իմ սիրելի ավագ ընկերների վկայությունը, որ ի շարս այլ հետաքրքիր անցքերի՝ վերաբերում է Բաղեշի գրավման հակիրճ պատմությանը, որը գրեթե մանրամասնորեն բերում եմ ստորև, մանավանդ, որ այն սերտորեն կապված է Անդրանիկի ցուցաբերած քաջագործության հետ։

Ինչպես կանխազգում էր Անդրանիկը, մեր երկրորդ առաջխաղացման ժամանակ Բայազետից մինչև Վան մենք թշնամու երես համարյա չտեսանք։ Վանից դեպի Բաղեշ շարժվելու օրը Անդրանիկն ասաց.
— Հազիվ թե մենք մինչև Բաղեշ հասնելը հակառակորդին հանդիպենք։ Այդպես էլ եղավ։ Այն օրը, որ պիտի պաշարեինք Բաղեշը, նա՛խ ռուսական զորքերը սովորականի պես 3—4 ժամ տևող տարածություն ետ էին մնացել մեզանից, երկրո՛րդ խիստ մառախուղ էր և սար ու ձոր, դաշտ ու դուրան պա-

տած էր ձյունով, և օրը բավականին ցուրտ էր։ Այդ ժամանակ Անդրանիկի առաջին հոգսը եղավ սուրհանդակների միջոցով լուր ուղարկել ռուսական զորքին՝ արագացնելու հրետանու զորամասի շարժը դեպի Բաղեշ։ Երբ գիշերվա կեսին հասանք Բաղեշի մերձակայքին, նա բոլորիս հրամայեց մեր հագուստի վրայից հագնել սպիտակ շապիկ ու վարտիք և փորսող տալով գնալ դեպի թշնամին, հետևել նրա գիշերային պահակներին առանց մի գնդակ արձակելու։ Երրորդ, նույն ձևով մոտենալ քաղաքի գլխավոր դարպասին առջևի հրապարակում առկայծող խարույկների շուրջը թշնամու թնդանոթների վրա մրափած զինվորներին և բոլորին դաշունահար անել։ Չորրորդ՝ թշնամու հանկարծակի սթափման և նրա բարձրացնելիք ճիչերի պարագային գործադրել նրոնակներ և վերջինիս ահաբեկիչ թնդյունների տարափի տակ խուճապի մատնել նրանց և տիրել թնդանոթներին։

Մենք հազիվ էինք վերջացրել մեր վրա դրված պարտականությունները և պատրաստվում էինք քաղաքի պարսպի հետևից մեզ վրա տեղացող թշնամու գնդակների տարափի տակ փորձել հրդեհված դարպասի բոցերի միջով ներխուժել քաղաք, երբ հանկարծ մեր թիկունքում որոտացին ռուսական թընդանոթների փոթորկալից կրակի համազարկերը՝ փլցնելով քաղաքի դարպասներն ու հրդեհված դարպասը։ Այդ պահին մենք նկատեցինք Անդրանիկին՝ թուրը բարձր բռնած, ասպանդակելով իր ձին դեպի քաղաքի ներսը, մարտիկների առջևում, առյուծի նման մռնչալիս. «Հառա՜ջ, հառա՜ջ, խիզախեցե՛ք, արծիվներս, ձեր արևուն մատաղ, հառա՜ջ...»

Անդրանիկին արձագանքում էր իր զինակից ընկեր մշեցի Սմբատը, որի խրոխտ ձայնից՝ «Հառա՜ջ զավակներս, հառա՜ջ, ուղիմ ձեզի, հառա՜ջ»։

Մենք քաջալերված, ուռա գոռալով խուժեցինք ահաբեկված թշնամուց լքված Բաղեշը։

Խուճապի մատնված և դեպի Սղերդ ու Տիգրանակերտ նահանջող թշնամու ուժերին հետապնդում

էին ռուսական և հայկական հեծելազորը։ Այդ օրը ի թիվս ստվար ռազմավարի, թշնամու կողմից բավական թվով սպանվածների և վիրավորների, մեր ձեռքն անցան նաև մի քանի հարյուր գերիներ, որոնց թվում զինվորական հոսպիտալը իր հիվանդներով, բժշկասանիտարական կազմի աշխատակիցներով, քաղաքի թուրք ընտանիքների և ամերիկյան միսիոնների օրիորդաց դպրոցի մի խումբ հայ աղջիկներ։ Անդրանիկի առաջին հոգսն եղավ խստագույն կերպով զգուշացնել իր ռազմիկներին՝ չհամարձակվել որևէ ոտնձգություն ցուցաբերել գերիների դեմ։ Երկու-երեք օր անց փաշային հաջողվեց ստանալ ռուսական հրամանատարության համաձայնությունը՝ Տիգրանակերտ ճանապարհել թուրք խաղաղ բնակիչների ընտանիքներին, հիվանդներին և վիրավորներին տեղավորել թշնամուց գրաված ռազմական հոսպիտալում, իսկ զենք կրելու ընդունակ գերիներին համփել խոր թիկունք՝ Անդրկովկաս։

Բաղեշը գրավելուց հետո, ինչպես հետագայում պատմում էին իմ ընկերները, ռուսական հրամանատարությունը ոչ մի տրամադրություն չուներ շարժվելու դեպի Տիգրանակերտ։ Բաղեշը ըստ երևույթին նրա նվաճողական գործողությունների վերջին կետն էր, ուր և կանգ առավ նա երկարատև հանգստի ընդհուպ մինչև 1917 թվականի փետրվարյան հեղափոխությունը։

1916 թվականի մոտավորապես մայիսի սկզբներին,— շարունակեցին պատմել ընկերներս,— կրկին անգամ տեղի ունեցավ մի անախորժ դեպք, մի ընդհարում Անդրանիկի և ռուսական զորքերի հրամանատար գեներալ Աբացիևի միջև։ Ազգությամբ օսեթ, դավանանքով մահմեդական, ռուսական այդ գեներալը Բաղեշի ծայրամասում, բոլորից գաղտնի իր հովանու տակ էր առել մի ինչ-որ ծեր թուրք գեներալի և վերջինիս ընտանիքին, որ բնակվելիս են եղել իրենց բավական հոյակապ առանձնատանը՝ շրջապատված ամուր պարսպով ու մրգատու հրաշալի ծառերով։ Գեներալ Աբացիևը նրա ընտանիքի կյանքը

ապահովելու համար, ռուս զինվորներից պահակ էր նշանակել։ Մի օր էլ քաղաքի շրջակայքում զբոսնելու ժամանակ մեր մշեցի տղաների ուշադրությունն է գրավում այդ բացառիկ գեղեցիկ տունը իր ճոխ այգիով և, ինչպես է պատահում, ռուս պահակի համաձայնությամբ նրանց հաջողվում է անարգել մտնել այդ տան բակը։ Այդ պահին տան բնակիչները սկսում են կրակել մեր տղաների վրա։ Մերոնք, բնականաբար, դիմելով ինքնապաշտպանության, սպանում են թուրք գեներալին և թուրքական բանակի սպա՝ նրա երիտասարդ որդուն, առանց ձեռք տալու ընտանիքի մյուս անդամներին։ Մեր տղաները շտապում են Սմբատի միջոցով իրազեկ դարձնել այդ մասին Անդրանիկին։ Կատարվածի լուրը կայծակի արագությամբ հասնում է նաև գեներալ Աբացիևին։ Վերջինս իր շուրջը հավաքած մի քանի շտաբական սպաների և մոտ երկու հարյուր զինված կոզակների հետ շտապում է դեպի հայկական կամավորական զորամասի բանակատեղին, Անդրանիկի վրանը և առանց երկար ու բարակ խոսելու Անդրանիկին հրամայում է զինաթափել գունդը։

Լսելով գեներալ Աբացիևի ամբարտավան հայտարարությունը, Անդրանիկը ցատկում է տեղից և ապտակի հարվածով գետնին է տապալում գեներալին։ Կոզակները, որ պաշտելու չափ սիրում էին Անդրանիկին, որպես իսկական հերոսի, կրտրականապես մերժում են Աբացիևի՝ մեր կամավորական գնդի վրա կրակ բացելու հրամանը։ Այդ վայրկյանին տեղի է ունենում մի չտեսնված հուզիչ տեսարան՝ կոզակները, գցելով իրենց զենքերը, վազում են դեպի հայ կամավորների շարքերը և եղբայրաբար գրկախառնվում նրանց հետ։ Կոզակներին քաջալերում էր հայկական ծագում ունեցող սպա Սրքեն, որի մասին մենք առիթ ունեցանք խոսելու մեր հուշերի սկզբնական էջերում։

Գեներալը չկարողանալով տանել այդ վիրավորանքը, նույն օրը գիշերը՝ գաղտնի ձգում է իր բանակը և դիմում դեպի Թիֆլիս։ Զանցած երկու շաբաթ Կով-

կասյան ռազմական ընդհանուր շտաբի կարգադրությամբ Թիֆլիս է մեկնում նաև Անդրանիկը։ Նրա բացակայության ժամանակ գնդի հրամանատարությունը անցնում է Սմբատին։ Այդ ժամանակը համընկնում է Սև ծովի վրայով, մի խարխուլ մակույկով, թուրքերի արյունարբու յաթաղանից հրաշքով ու հերոսությամբ ազատված սեբաստիացի (սվազցի) Մուրադի Անդրկովկաս գալուն։ Վերջինս փոխարինում է Անդրանիկին, և անմիջապես մեկնում է Բաղեշ՝ գլխավորելու հայկական կամավորական առաջին գունդը և իր բացառիկ ընդունակություններով կարճ ժամանակում վերջ է տալիս բոլոր անախորժություններին։ Անդրանիկը այլևս չի վերադառնում բանակ։ Նա իր քայքայված առողջությունը փոքր-ինչ կազդուրելուց հետո ձեռնամուխ է լինում հասարակական գործի՝ հրատարակելով «Հայաստան» թերթը, որի խմբագիրն էր Ամերիկայից նոր վերադարձած, տաղանդավոր երիտասարդ արձակագիր Վահան Թոթովենցը։

1916-ի գարնանը ես ձգեցի Աշտարակը և, ի շարս մի քանի այլ ընկերների, մեկնեցի Ալաշկերտի հովիտ աշխատելու թե՛ որպես բուժակ Արարատյան հարթավայրից դեպի երկիր ներգաղթած ժողովրդին սպասարկելու, և թե՛ այնտեղ տարվող հասարակական աշխատանքներին օժանդակելու համար։ Հարկ եմ համարում կրկին անգամ շեշտելու, որ երկրորդ արշավանքի մասին վերը շարադրածս իրադարձությունների հակիրճ պատմությունը հիմնված է բանակում մնացած իմ ավագ ընկերների՝ նախ Անդրանիկի անմիջական օգնական մշեցի Սմբատի և ապա վերջինիս զինակից ընկերների՝ Հասրաթ Բորբորյանի և Արտաշես Միրզոյանի (նույնպես մշեցիներ) բանավոր հաղորդության վրա։ Այս մարդիկ այնքան վստահելի դեմքեր էին, որոնց ասածներին երբեք չէր կարելի չհավատալ։

ԻՐԱԿԱՆԱՆՈՒՄ Է ԱՆԴՐԱՆԻԿԻ ՆԱԽԱԳՈՒՇԱԿՈՒՄԸ

Որոշ ժամանակ անց ռուսական Կովկասյան ճակատի գերագույն հրամանատարությունը զորքերին հրաման տվեց, և կարճ ժամանակվա ընթացքում, առանց թշնամու կողմից լուրջ դիմադրության հանդիպելու վերագրավեց և գրավեց Կարնո, Երզնկայի, Սվազի, Խարբերդի, Վանի, Բաղեշի և Տրապիզոնի վիլայեթները։ Դյուրությամբ գրավելով պատմական Հայաստանին պատկանող այդ հսկա երկրամասը, ցարական ռազմական ուժերի հրամանատարությունը այլևս չհամարձակվեց շարունակել իր առաջընթացը։ Ո՛չ թե այն պատճառով, որ ցարական բանակն այլևս ի վիճակի չէր նոր երկրամասը պոկելու Թուրքիայից, այլ այն պարզ պատճառով, որ համաձայն Ռուսիո և իր դաշնակիցներ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի միջև նախապես կնքված գաղտնի պայմանագրի ռուսները այլևս իրավունք չունեին կանխապես սահմանված գծից մի թիզ անգամ առաջ շարժվելու։

Դաշնակից պետությունների լիակատար հաղթանակի պարագային, Թուրքիան որպես առանձին պետություն պիտի դադարեր գոյություն ունենալ, իսկ նրա տարածքը պետք է բաժանվեր Ռուսաստանի, Անգլիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի միջև՝ հայտարարելով Պոլիսը միջազգային քաղաք։

Դաշնակցական կուսակցությունը մեծ հավատք էր ընծայում և մեծ հույսեր կապում դաշնակից պետությունների, հոգեվարքի մեջ գտնվող Հայաստանին խոստացած «անկախության» հետ, առանց կռահելու, որ այդ լոկ քաղաքական խորամանկ քայլ էր ուղղված ո՛չ միայն հայության, այլև՝ առաջին հերթին Ռուսաստանում ծնունդ առած Հոկտեմբերյան Մեծ հեղափոխության դեմ։

— Ախպարս, այդ քաղաքակիրթ պետություններուն ոչ մի հավատք չպիտի ընծայել, ալ կբավե, անոնք հավատարիմ իրենց գաղութային քաղաքա-

կանության, երբեք կանգ չեն առնի ոչ մի ստոր միջոցի առջև տապալելու ռուսական հեղափոխությունը, բայց չարաչար կսխալվեն անոնք. Ռուսաստանը Թուրքիան չէ... Սակայն ապշելու չափ կզարմանամ, թե ինչպես չեն հասկնար դաշնակ ղեկավարները այդ ճշմարտությունը։ Ասել եմ, ասում եմ, և պիտի հանապազ կրկնեմ՝ որ մեր ավերված հայրենիքի և անոր բազմաչարչար ժողովրդի միակ փրկությունը ռուսական հեղափոխության հաղթանակի մեջն է...— հաճախ կկրկներ Անդրանիկը Թիֆլիսում 1917-ի փետրվարյան հեղափոխության օրերին։

Հայտնի է, որ 1917-ի փետրվարին Ռուսաստանում տեղի ունեցած բուրժուադեմոկրատական հեղափոխության հետևանքով տապալվեց ցարական ինքնակալությունը։ Ի՞նչ էր կատարվում այդ օրերին ռուսական բանակի գրաված Արևմտյան Հայաստանի երկրամասում։ Ռուսական բանակի զինվորները, լսելով թագավորի գահընկեցության լուրը, անմիջապես երես թեքեցին ցարական զինվորական կարգապահությունից և աճապարեցին սպայակազմից վրեժխնդիր լինել իրենց կրած անտեղի և ստորացուցիչ վիրավորանքների համար։ Կովկասյան ամբողջ ճակատի երկայնությամբ սկիզբ առավ ամենակոպիտ անիշխանություն։ Զինվորների ձեռքով սպանվեցին զգալի թվով սպաներ։ Ահաբեկված սպայակազմը առաջինը եղավ, որ աճապարեց լքել ճակատը, որոնց տարերայնորեն հետևեց նաև զորքը։ Նոքա խումբ-խումբ, վաշտ-վաշտ, սակավ դեպքերում նաև ամբողջ գումարտակներով և գնդերով լքեցին թե՛ Արևմտյան և թե՛ Արևելյան Հայաստանը և շարժվեցին դեպի մայր Ռուսաստան։

Այդ լքումը կատարվեց այնպիսի խելակորույս փութկոտությամբ, որ նույնիսկ աչքաթող արին ճակատի զանազան ռազմական կետերում՝ Վանում, Ալաշկերտում, Կարինում և այլ վայրերում կուտակված հարյուրավոր միլիոնների արժողությամբ ոչ միայն ռազմամթերք, այլև պարենի, հագուստի, գյուղատնտեսական մեքենաների, ճանապարհաշինական

գործիքների խոշոր պահեստները։ Ճակատ լքողները ոչ միայն ռուսներն էին, այլև բանակի շարքերում գտնվող հայ, վրացի, թաթար, հրեա և այլ ազգերի զինվորները։ Անդրկովկասի քաղաքներից ճակատ մեկնած զանազան քաղաքական հոսանքների ներկայացուցիչների թափած ջանքերը՝ վերականգնեցնելու կարգը ճակատը լքող բանակայինների և սպայակազմի շարքերում, բոլորովին ապարդյուն անցան։ Դրությունը չափազանց օրհասական էր։ Պատերազմի սպանդից մազապուրծ եղած արևմտահայության խղճուկ բեկորները նորից կանգնած էին գլխովին բնաջնջվելու ահավոր վտանգի առջև։ Նույն վտանգը սպառնում էր նաև արևելահայ հատվածին։ Անմտություն կլիներ այդ ժամանակ հույս դնել ռուսական բանակի վրա։ Այլևս նրա հետքն անգամ չէր երևում ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ Անդրկովկասում։

Ի՞նչ էր մնում անել հայությանը։ Նա այլ ելք չուներ ստեղծված վտանգի առաջն առնելու, քան շտապ կերպով կամավորելու և զինելու մի քանի գնդեր և, ժամանակ դահելու նպատակով, համարձակ դուրս գալու թշնամու բազմիցս գերազանց ուժերի դեմ։ Կարին-Երզնկա գծի ուղղությամբ շարժվեց Անդրանիկի զորամասը, Ալաշկերտ-Մուշ գծի ուղղությամբ՝ Սմբատ Բորոյանի ուժերը, իսկ Վան-Բաղեշ գծի պաշտպանության պատասխանատվությունը վերապահված էր Վանի նահանգապետ Կոստյա Համբարձումյանին (հանգուցյալ բժիշկ Սաքո Համբարձումյանի եղբայրը), որի տրամադրության տակ էր դրված Վանի գունդը։ Այս երեք գծի վրա գործող հայերի ռազմական ուժը հազիվ թե հասներ 30 000 սվինի։ Պիտի ասել, որ թվածս բոլոր ուղղություններով մեկնած զորամասերը զուրկ էին կանոնավոր թիկունքից, մի հանգամանք որն ունեցավ չափազանց աղետալի վախճան մեզ համար։ Ճիշտ է, այդ բացը ծածկելու համար ժամանակավոր կառավարության արտոնությամբ թույլատրվեց ռուսական բանակի շարքերում Գերմանիայի դեմ կռվող կենդանի մնա-

ցած հայ զինվորներից հապճեպ կազմակերպել 3—4 հավաքական գունդ և փոխադրել Հայաստան։ Բայց մինչդեռ վերջիններս դանդաղորեն կպատրաստվեին էրգիր մտնելու, ամբողջ ճակատի լայնությամբ թշնամին կանխեց մեզ և իր գերակշռող ուժերի նախահարձակումով մեր զինված ուժերին հարկադրեց բռնելու նահանջի ճանապարհը մինչև Արևելյան Հայաստանի սահմանները։ Նահանջը սկսվեց Կարին-Սրզնկա գծից։ Ճակատի լքման գլխավոր պատճառներից մեկը պիտի վերագրել նա՛խ կանոնավոր թիկունքի բացակայությամբ, երկրո՛րդ արդեն մի անգամ գաղթելու պատուհասը ճաշակած ու նորից ներգաղթված բնավեր ժողովրդի ահաբեկությամբ, որ տարերայնորեն խուճապի մատնված սկսեց լքել թիկունքը՝ կազմալուծելով զինվորի ռազմական ոգին և նրա դիմադրական ուժը և, երրորդ՝ թշնամու ունեցած գերակշռող ուժերը։

Այս տեսակետից ուշագրավ է Շիրակի դաշտից դեպի Կարին շարժվելու նախօրյակին Ալեքսանդրապոլում տեղի ունեցած միտինգում Անդրանիկի ելույթը։

— Հակառակ մեր բաղձանքներուն ու ձգտումներուն մենք առանց հեղափոխական Ռուսաստանի ռազմական ուժերու օժանդակության ի վիճակի չենք ըլլար ետ կասեցնելու թշնամու, մեր դեմ պատրաստվելիք առաջխաղացումը՝ նախ որ թվով թշնամուց շատ ենք փոքր, երկրորդ՝ որ զուրկ ենք կանոնավոր զորքեն և զինվորական անհրաժեշտ կարգապահությունեն, երրորդ՝ որ մենք զուրկ ենք նաև կանոնավոր ամուր թիկունքեն և չորրորդ՝ որ պետականորեն դեռ կազմակերպված ժողովուրդ չենք։ Սակայն հակառակ այս ամենուն, ուզենք-չուզենք պիտի ամեն կերպ ջանանք գեթ միաժամանակ արգելել թշնամուն առաջխաղացումը, մինչև որ ռուսական հեղափոխության ղեկավարները ի վիճակի կըլլան հոգալու նաև Անդրկովկասի և մասնավորապես Հայաստանի մասին։

Ինչպես վերահաս իրադարձությունները ապացուցեցին, Անդրանիկի կանխագուշակությունները իրա-

կանացան նախքան սովետական ազատարար բանակի մուտքը Անդրկովկաս և ապա Հայաստան։

Ալաշկերտ-Բաղնոց-Մանազկերտ-Մուշ ուղղությամբ Սմբատի գլխավորած զորամասի դեմ սկզբում նշանավոր կռիվներ չեղան։ Միայն երբեմն-երբեմն տեղի էին ունենում թեթև ընդհարումներ, որոնք, շնորհիվ սասունցի և մշեցի անվեհեր հերոսների, միշտ էլ վերջանում էին մեր հաղթանակով։ Մնացած դեպքերում սովորաբար գործը վերջանում էր փոխադարձ հրաձգությամբ։ Թե ինչ էր կատարվում Վան-Բաղեշ ուղղությամբ, մենք բոլորովին տեղյակ չէինք։ Կարին-Երզնկա գծից սկսած Նահանջի հետևանքով Անդրանիկի հրամանը Սմբատին աղաղակում էր. «Փութացեք անհետաձգելի կերպով և առանց խուճապի արագ կազմակերպել ժողովրդի տեղահանությունը ձեր բռնած գծից դեպի Արարատյան դաշտ։ Ստիպեք գաղթականությանն իրենց սայլերուն, ձիերուն և խոշոր եղջերավոր անասուններուն բեռնելու ալյուր, շաքար, հագուստեղեն, կոշկեղեն, իրենց պետքերու համար և հնարավորին չափ անպայման նաև ռազմամթերք՝ հրետանու արկեր, փամփուշտ և նռնակներ հայրենիքի պաշտպանության համար։ Նույնը հաղորդեցեք Վան։ Զմոռանաք ապահովել գաղթականության ճանապարհը մինչև Բարդողյան լեռները։ Զգիմեք նահանջի և չձգեք էրգիրը մինչև Վանի զորամասն ու գաղթականությունը չհասնի Բայազետ։

Սմբատը ճշտությամբ կատարեց Անդրանիկի կողմից իր վրա դրած պարտականությունները։ Մեր առաջապահ ուժերը չձգեցին Մեղրագետի ափերը, մինչև տեղահան եղած ժողովուրդը մեր ուժերի օգնությամբ շուտ չհասավ Բարդողյան լեռնաշղթայից դեպի Արարատյան դաշտ։

Օրերը թռչում էին արագությամբ։ Բարձր սարերի ստորոտները, հովիտներն ու դաշտավայրերը արդեն ազատվել էին ձյան հաստ շերտից և զուգվել-զարդարվել ձնծաղիկի գորգերով։ Վանից դեռ ոչ մի

լոր չկար, դաշտային հեռախոսը չէր աշխատում, ինչ կասկած, որ թշնամին ոչնչացրել էր հեռագրալարերը։ Ավաղ, մենք ենթադրեցինք, որ Վանը նահանջում է Արճակ-Սարայ-Կոթորի գծով դեպի Խոյ, այնտեղից էլ Ջուղա։ Մարտի վերջին օրերն էին, Անդրանիկը Ալեքսանդրապոլից հեռախոսեց Սմբատին.

«Այլևս սպասելը վտանգավոր է և կորստաբեր, անմիջապես նահանջեցեք»։

1918 թվի ապրիլի սկզբներին Սմբատը ժամանեց Ալեքսանդրապոլ։ Թե այդ օրերին ինչ էր կատարվում սահմանամերձ քաղաքում, թշնամիս չտեսնի... Անօթևան, քաղցած, մերկ ու անօգնական բազմահազար գաղթականություն, հարյուրավոր մեռնողների լալահառաչ, աղեկտուր, սրտամորմոք ձայներին միացել էր քաղցած, երկար ճամփա կտրած հոգնաբեկ անասունների բառաչյունը։ Գարնանային ձյունախառն անձրևներից մարդիկ և անասունները խրվել էին ցեխի մեջ և նրանցից շատերը այդ վիճակում անլաց և անմռունչ հրաժեշտ էին տալիս լույս աշխարհին՝ անիծելով իրենց ծնունդը։

Մոտենում էր թուրքական բանակը։ Ռազմական միացյալ խորհրդի արտակարգ նիստի որոշման համաձայն Անդրանիկը մոտ 5000 հոգուց բաղկացած զորաջյունով շարժվեց դեպի Ախալքալակի շրջան, իսկ ռուսական արևմտյան ճակատից Հայաստան փոխադրված հայկական գնդերը, միացած ժողովրդական ուժերի հետ, մի քանի հայ զորավարների հրամանատարությամբ ամրացան Ջաջուռի և Սպիտակի բարձրություններում՝ կասեցնելու թուրքական բանակի առաջխաղացումը։ Այդ օրերին ինձ կրկին վիճակվել էր միանալ Անդրանիկի զորամասին։ Մեզ սպասող գալիք ճախողությունների հիմնական պատճառներից մեկը պիտի վերագրել մի քանի տասնյակ հազարի հասնող գաղթականության այն հոծ բազմությանը, որ տարերայնորեն կրնկակոխ հետևում էր Անդրանիկի բանակին և ոչ մի կերպ հնարավոր չէր ազատվել նրանց ներկայությունից։

Դիմել բռնի միջոցների՝ արգելելու նրանց հետևելու բանակին, չէր լինի, որովհետև այդ հավասարազոր էր, որ մենք մեր իսկ սեփական կամքով մեր ժողովրդին հանձնած կլինենք արյունառուշտ թշնամուն... Անդրանիկը մի պահ խորհեց օգտվել հանգամանքից՝ այդ բազմության միջից ընտրել զենք կրելու ընդունակ երիտասարդներին և միացնել մեր շարքերին, բայց դա հնարավոր չեղավ, նա՛խ, որ ժամանակը չէր ներում զբաղվելու այդպիսի կազմակերպչական լուրջ աշխատանքով, երկրորդ՝ նրանց մեջ եղած տղամարդկանց մեծ մասը ոչ միայն ծանրաբեռնված էին ընտանիքներով, այլև նրանցից շատերը տարիքով էին և չէին կարող միանալ մեր զինված ուժերին։

Մեր ձախողման մեծագույն պատճառներից մեկն էլ այդ շրջանի կաթոլիկ և բողոքական գյուղացիության մեր դեմ ցուցաբերած անբարյացակամ վերաբերմունքն էր։ Չնայած այդ բոլորին, մեր ունեցած առաջին գոտեմարտում մենք առանց դժվարության հետ շպրտեցինք թշնամու գերակշռող ուժերը, զգալի կորուստներ պատճառելով նրան։ Սակայն ուժաշատ թշնամին չդադարեց մեզ հետևել և, զարտուղի ջրանցքով անցնելով մեր աջ թևի թիկունքը, մեզ հարկադրեց քաշվել մեր դիրքերից դեպի «Բոզ յոխուշ» լեռնանցքը, այդտեղից էլ իջնել «Վորոնցովկայի դաշտը» և ապա «Ջալալօղլի» (Ստեփանավան)։ Թշնամին մեզ հետևում էր դանդաղ և զգուշությամբ։ Ասենք, որ նա առանձնապես շտապելու կարիք չէր զգում, որովհետև շրջանի դավանափոխ, ազգուրաց և հայրենադավ ֆրանկ-գյուղացիությունը լայն բացել էր իր տան դռները թշնամու զինվորների և սպայակազմի առջև։

Մեր բանակը և գաղթականությունը բավականին դժվարություններ կրելով հասավ Ջալալօղլի։ Անդրանիկին պաշտոնապես հաղորդեցին, որ Ղարաքիլիսայի (Կիրովական) ուղղությամբ մեր դեմ արշավող թշնամին մեծ կորուստներ տալով նահանջում է դեպի Ալեքսանդրապոլ։ Անդրանիկի մոտալ դեմքը

մի պահ պայծառացավ, բայց նույն վայրկյանին կըրկին մռայլվեց և դարձավ մեզ հետևյալ խոսքերով.

— Հարկավ, այդ հաղթանակը ողջունելի է, սակայն հաղիվ թե այն երաշխավորե մեզ ազատվելու ստեղծված տխուր կացությունեն։ Թշնամին չի հանդուրժի իր գերակշռող ուժերով անվրդով ըմպելու մեր հրամցրած թունալից գավաթը։ Մեկ երկու օրեն անիկա նոր ուժերով նորեն կհարձակվե մեր սակավաթիվ ուժերու վրա և կգրավե իր լքած դիրքերը։ Գրավելով Ղարաքիլիսան, անիկա իր գլխավոր ուժերը պետք է շարժե Դիլիջանի կիրճով։ Աղստև գետի հոսանքն ի վար հասնելու Ղազախ և Աղստաֆա։ Մի զորամաս ալ Ղարաքիլիսա-Թիֆլիս երկաթուղով պիտի ձգտի մի օր առաջ գրավելու Քոլագերան (Թումանյան) երկաթուղային կայարանը՝ կտրելու մեր ճանապարհը և արգելելու մեզ Դսեղի վրայով հասնել Դիլիջան։ Արդ, անհրաժեշտ է օր առաջ ստանալով Երևանի համաձայնությունը, փորձել քաշել թշնամուն Դիլիջանի կիրճը և մեր միացյալ ուժերով ջախջախել անոր այդ դժվարամատչելի անտառապատ լեռնաստանի ձորերուն մեջ անանկ, որ այլևս ի վիճակի չըլլա խորհելու իր արյունաշաղախ երազներն իրականացնելու մասին, այլապես մենք կորած ենք անհետ... կզարմանամ, թե ինչ կխորհի մեր եղբայրակից Վրաստանը։ Միթե անոր որդիները ի վիճակի եղան այդքան շուտ մոռացության տալու անցյալի պատմությունը։ Մի՞թե Թուրքիան Հայաստանի հետ յուր հաշիվը մաքրելեն ետքը պիտի հանդուրժի Վրաստանի անկախությունը։ Չգիտեմ, ատիկա իմ հավատքին չի գա։ Իսկ եթե մենք մեր նախնիներու պես միանանք, թև-թևի տանք, կազմենք մի կուռ ուժ և միասնական ուժերով դիմադրենք մեր երկուսիս դարավոր թշնամուն, հավատացած եմ, որ դրությունը անմիջապես կփոխվի հօգուտ մեր եղբայրության։ Չեմ հասկնար, ի՞նչ արգելարիթ հանգամանքներու հիման վրա ցարդ չի կիրառված մեր եղբայրությունը։ Եթե մեր եղբայր Վրաստանը հետ այսու ալ մնալու հանդիսատեսի դերում հայության կրած ու կըր-

վող տառապանքներու դիմաց, ապա ինչ կասկած, որ այդպիսով ավելի ծանր վտանգի կենթարկի նաև իր հայրենիքը։ Եթե անոնք չեն կռահի ժամանակի պահանջը, մեր երկու ժողովուրդների եղբայրացման անհրաժեշտությունը, հապա այդ ուղղությամբ ի՞նչ կխորհեն Երևանում բազմած մեր ազգային ջոջերը։

...Հավատացեք, եթե մենք, ապավինած մեր լեռներին, այս քանի օրը ի վիճակի չեղանք դուրս վանելու թուրքին գոնե Արևելյան Հայաստանի սահմաններեն, ապա կվախենամ, որ թշնամին, հավատարիմ իր արյունարբու նախնիներու բարբարոսության, պիտի Վրաստանից պահանջե ոչնչացնելու հայ գաղթականության այն հատվածին, որ կփորձեոտք դնել Վրաստանի սահմանները և դեպի անոր երկրի ներսը...։

Ջալալօղլիում երկար չսպասեցինք։ Անդրանիկը շտապեց օր առաջ հասնել Քոլագերան կայարան և այնտեղից բարձրանալ Դսեղ գյուղը, հուսալով, որ, համաձայն յուր խոստման, մեծատաղանդ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը կապստամբեցնե Լոռվա ամբողջ հերոս ժողովրդին ընդդեմ մեր թշնամու։ Բայց ավաղ, հասնելով Դսեղ, Անդրանիկը համոզվեց, որ մեծ բանաստեղծը ի վիճակի չէր կատարելու իր խոստումը։ Դսեղում մի երկու օրից հետո մենք լուր առանք, որ թուրքական զորքերին մեծ դժվարությամբ հաջողվել է գրավել Ղարաքիլիսան։ Այդ դառնալից լուրը լսելու հաջորդ օրը մեր բանակը հապճեպ շարժվեց դեպի Դիլիջան։ Մեր բանակը և թշվառ գաղթականությունը հազիվ էր հասել Մարցի գեղատեսիլ անտառին, երբ սկսվեց մի կարկտախառն հեղեղ, որը տևեց մինչև ուշ գիշեր։ Բոլորովին հնարավոր չէր շարժվել։ Ըստ Անդրանիկի հրամանի զորքն իր զինվորական վրանները զարկեց սաղարթախիտ հաստաբուն ծառերի տակ՝ փրկելու մանուկների, ծծմայր կանանց և ծերերի կյանքը։ Ողջ գիշերն անցկացրինք անքուն, ապավինած այս կամ այն թփին, քարին կամ թե չէ դարավոր հաստաբուն

ծառերի փչակներին։ Հեղեղը դադարելուն պես ժողովուրդն ու զորքը հսկա խարույկների շուրջը չորացրին իրենց հանդերձանքը և արևը ծագելուն պես կրկին բռնեցին իրենց ճանապարհը դեպի Դիլիջան։ Ինչպես միշտ, այս անգամ ևս Անդրանիկը չմոռացավ կարգադրել հեծելազորին տրամադրելու իրենց ձիերը մանկատեր ընտանիքներին, հղի կանանց ու ծերերին։ Նա պատվիրեց, որ ամեն մի հետևակ զինվոր իր շալակն առնի մի-մի երեխա մինչև Պողոս-քիլիսա գյուղը։ Այս կարգադրությունը ոչ մի դժգոհության առիթ չտվեց, ընդհակառակն, յուրաքանչյուր զինվոր իր պարտքը համարեց ամեն կերպ աջակցել տառապողներին՝ թեթևացնելու նրանց տանջանքները։

Բայց կարծես մեզ հետ թշնամացել էր նաև բնությունը։ Մեծ շարշարանքով հազիվ էինք հասել Պողոս-քիլիսա գյուղի բարձունքները զարդարող շքեղ անտառին, երբ երկինքը փայլատակեց, երկիրը դողաց, որին անմիջապես հետևեց կարկտախառն հեղեղն ավելի ուժեղ, քան Մարցի անտառում։ Այդ սոսկալի պահին մարտիկները բազմապատկեցին իրենց կորովը՝ փրկելու թշվառ գաղթականությանը բնության տարերքից և հասցնելու նրանց Պողոս-քիլիսա, իսկ այնտեղից էլ՝ Դիլիջան։

Դիլիջան հասնելուն պես Անդրանիկը ոտքից մինչև գլուխ թրջված բանակի և գաղթականության տեղավորման հոգսը ձգելով իր օգնականների՝ Սըմբատի և բժիշկ Բոնապարտյանի վրա, ասպատակեց իրձին և շարժվեց դեպի ռազմադաշտային շտաբ։ Այդ միջոցին նա տեսավ, թե ինչպես երկու հայ սպա կառքով ուղեկցում են աչքերը կապած մի թուրք բարձրաստիճան սպայի դեպի հայկական ռազմադաշտային շտաբ։ Ինչպես պարզվեց, վերջինս Ղարաքիլիսան գրաված թուրք հրամանատարության կողմից լիազորված էր հայ հրամանատարության հետ բանակցություններ վարելու ռազմական գործողությունների դադարեցման շուրջը։

Թշնամու առաջադրած զինադադարի նպատակն էր ապահովել Նուրի փաշայի բանակի անարգել ու անվտանգ առաջխաղացումը Դիլիջանի կիրճով դեպի Ադրբեջան, առանց որի իրավամբ թշնամին չէր համարձակվում դիմել այդ քայլին։ Եթե հիշողությունս չի դավաճանում, հայկական ռազմադաշտային շտաբում վհատված տրամադրությամբ նըստած էին մի քանի բարձրաստիճան սպաներ, որոնց թվում նաև մեզ ծանոթ զորավարներ Նազարբեկյանը և Արարատյանը։ Անդրանիկի անսպասելի այցից ներկա եղողները մի պահ սթափվեցին և, ելնելով իրենց աթոռներից, հերթով ողջագուրվեցին նրա հետ։ Նազարբեկյանը խնդրեց Անդրանիկին գրավել իր մոտի աթոռը։ Անդրանիկը պատասխանեց. «Մեծ ախպարս, վազ անցեք այդ ձևականությունեն՝ ազգն ու հայրենիքը ձեռքից գնացին, շուտ զիս միացրեք Երևան, դաշնակցության ջոջերու հետ, ըսելիք ունիմ անոնց»։

Հեռախոսի լսափողը վերցնելով, Անդրանիկը գոչեց.

— Արամ, դո՞ւն ես, Անդրանիկն է խոսողը։ Ժամանակը խիստ թանկ է, ստեղծված անել կացության մասին երկար ու բարակ բացատրություններն ալ կհամարիմ ավելորդ։ Դուք վճռել եք թշնամուն առանց կռվի թույլ տալ անարգել կերպով Դիլիջանի կիրճով անցնելու Ադրբեջա՞ն, առանց խորհելու հոն բնակվող հայության մասի՞ն։ Ատիկա դավաճանություն է։ Ես հիմնովին դեմ եմ այդ քայլին։ Կխընդրեմ գեթ անգամ մը ունկնդրել զիս։ Սարդարապատը ապացուցեց, որ մեր ժողովուրդն ի վիճակի է հրաշքներ գործելու։ Թույլ տվեք ինձ փշրել թուրքական բանակին Դիլիջանի կիրճում։ Ես կանխօրոք խոսք եմ տալիս արդարացնել բոլորիդ հույսը, միայն թե դուք ալ երաշխավորեք ինձ ձեր կողմեն ցույց տալիք եռանդուն օժանդակությունը... Ի՞նչ, ախպարս, այդչափ ալ հոռետես ըլլալը անմտություն է, այդ ձևով ժամանակ շահիլն ալ վերջ կդնե մեր հոգեվարքին հօգուտ թշնամու։ Մեր միակ հույսն ու փրկու-

թյունք արևմտյան պետությունները չեն, վաղ անցեք անոնցմե, մեր միակ փրկությունը ռուսական հեղափոխության հաղթական երթի մեջ պիտի որոնել, անոր բանակներու մուտքը մեր երկիր, անիկա էլ շատ կուշանա... Իմ առաջարկի հաջող ելքի պարագային, որ երբեք չեմ երկմտի, մենք ջլատած կըլլանք թշնամու գլխավոր ուժը, ապա շահած կըլլանք մեր ցանկացած ժամանակը, բարձրացրած կըլլանք մեր ժողովրդի և բանակի ռազմական ոգին և վերջապես օրինակ և խթան կհանդիսանանք արագացնելու հայ-վրացական եղբայրությունը՝ միասնական ուժերով մեր էրգրեն դուրս վանելու թշնամուն։ Ի՞նչ, նվաստս ուշացել է իր առաջարկությունո՞վ։ Բյուրոն չի կրնար խախտել իր վճի՞ռը... Ախպարս, ատ ի՞նչ անհեթեթ տրամաբանություն է, իսկ բյուրոյին ո՞վ է լիազորել հայ ազգի գլխովին բնաջրնջման վճռին տակ ստորագրելու... Այս անգամ ես չեմ խնդրում, այլ պահանջում եմ լսել զիս, հարգել իմ առաջարկը՝ այո՛, կամ ո՛չ։ Ո՞չ... Աղե՛կ, այսուհետև համարեցեք զիս վերջնականապես հեռացած ձեր մեղապարտ շարքերեն։ Պատմությունը որպես ամենաանաչառ դատավոր կապացուցե, թե մեզմե ով է արդարը...

Այս ասելով Անդրանիկը հեռախոսի լսափողը կախեց և իր արծվային բոցկլտացող հայացքը նետեց սեղանի շուրջը նստած շտաբականներին, սպասելով նրանց հավանությանը և համաձայնությանը՝ կենսագործելու իր առաջարկը՝ դաշնակցության բյուրոյից անկախ։ Ստեղծված լռությունը խանգարեց զորավար Նազարբեկյանը. «Սիրելի Անդրանի՛կ,— ասաց նա,— ուշացած է ձեր առաջարկը։ Այսուհետև մենք ի վիճակի չենք իրականացնելու ձեր բաղձանքը, մեր զորքը լքված է, Ռուսաստանից եկող լուրերը մոլորեցնում են նրանց, և բացի այդ չի ներում նաև ժամանակը»։

—Սիրելի հայրենակիցնե՛ր,— պատասխանեց Անդրանիկը,— բայց մի՞թե ժամանակը կներե թշնամուն թույլ տալ անարգել անցնելու մեր թիկունքը,

ան ալ այնպիսի անմատչելի մի կիրճով, որպիսին Դիլիջանն է, ուր մեր մեկ զինվորը կրնա մարտնչել թշնամու 10—30 զինվորի դեմ։ Դուք պահ մը կերևակայե՞ք, թե պատմությունը ինչպիսի դատավճիռ պիտի հանե ձեր դեմ։ Դուք չեք նախատեսել, թե մեր գալիք սերունդները ինչպիսի նողկանքով պիտի խոսին մեր մասին... Սպասում եմ ձեր դրական պատասխանին, կաղաչեմ ձեզ մեր ծվատվող սուրբ հայրենիքի և անոր մորթոտվող մանուկներու անունեն, վազ անցեք այդ բյուրոյի ամոթաբեր և ստրկաբարո կործանարար վճիռեն, կորչում ենք մենք, կհասկընաք, թե չէ...

— Իզուր ջանքեր են, և այն էլ ուշացած, իսկ հետևանքը ավելի ողբերգական,— կրկնեց Նազարբեկյանը։

— Գեներալ, ձեր խորհած ողբերգությունը սկսած է այն օրեն, երբ ռուսաց զորքը իր մայր երկրում ծայր առած հեղափոխության հետևանքով ձգեց Կովկասյան ռազմաբեմը, իսկ արևելահայ մտավորականությունը այնքան տհաս գտնվեցավ քաղաքականության մեջ, որ անզոր եղավ կազմակերպել մեր թիկունքը և պատճառ դարձավ այս ողբերգությանը։ Հանուն հայրենիքի փրկության նրանք չկամեցան զեթ ժամանակավորապես ձգել Թիֆլիսի գեղեցիկ փողոցները... Այժմ էլ ուշ չէ, միայն ցանկություն է պետք, անդուլ եռանդ, անընկճելի կամք, անկաշառ հայրենասիրություն, կհասկնաք, անկաշառ հայրենասիրություն։

Մի պահ ընդհանուր լռությունից հետո Նազարբեկյանն ասաց.

— Սիրելի Անդրանի՛կ, ես ձեզ հասկանում եմ ավելի քան դուք կերևակայեք։ Սակայն ես հոռետես եմ ձեր առաջարկի հաջող ելքի վերաբերմամբ։

— Եթե դուք ամենքդ ալ համոզված եք, որ այդ ձևով միայն կրնաք փրկել հայության վերջին բեկորները արյունարբու թշնամու յաթաղանեն, ինձի կմնա միայն սրտանց մաղթել ձեզ հաջողություն և իմ ուժերով հեռանալ ձեզմե մի անորոշ ուղղու-

թյամբ, որովհետև ոչ ոքից գաղտնիք չէ, որ ի շարս այսպես կոչված ժամանակավոր զինադադարի և այլ պահանջների, թշնամին վճռել է պահանջել զինաթափել նաև իմ զորամասը և զիս ալ կենդանի-կենդանի հանձնելու անոր ձեռքը որպես թե պատանդ։ Դե՛հ, մնաք բարյավ...

Այս ասելով Անդրանիկը շտապ թողեց շտաբը, դուրս եկավ փողոց, հեծավ իր ձին և իր թիկնապահների ուղեկցությամբ սրարշավ սլացավ դեպի իր զորամասը, որ գաղթականության հետ կողք-կողքի տեղավորվել էին Երևան տանող խճուղու երկու կողմերը։ Այդ օրվա պարզկա գիշերվա լուսաբացին ողջունեց մեզ ապրիլյան ոսկեզօծ արևը և մեր զինված քարավանը շարժվեց դեպի Սևանա լճի ափին գտնըվող Ելենովկա (Սևան) ավանը։ Զորքը և գաղթականությունը առանց շտապելու շարժվում էր առաջ՝ արևի տակ չորացնելով իրենց թաց շորերը։ Որպեսզի մեր երթը ապահով լինի, Անդրանիկը նախապես կարգադրել էր մեր հեծելազորին և հրետանու ջոկատին բռնել Ծաղկունք գյուղի հյուսիսային բարձունքները, որոնց թնդանոթների փողերը ուղղված էին Բոզի գյուղից դեպի Դիլիջան ձգվող խճուղին, այսինքն՝ Ղարաքիլիսան գրաված թշնամու հնարավոր առաջխաղացման դեմ։ Հավանականությունից դուրս չէր, որ թշնամին ցանկացած պարագային Ծաղկունքի վրայով կարող էր գրոհել և առանց մի դժվարության գրավել Երևանը։ Սակայն դժվար չէ կռահել, որ նա խուսափեց այդ վտանգավոր քայլից շնորհիվ Անդրանիկի բանակի, որն ինչպես շեշտեցինք, նախապես գրավել էր այդ գծի պաշտպանության լավագույն դիրքերը։ Այս տեսակետից Անդրանիկի շըրջահայացությունը նշանավոր էր նաև նրանով, որ նա համառորեն շարունակեց պահել իր ուժերը վերը հիշած դիրքերում այնքան, մինչև իսպառ չանհետացավ նշածս գծով թշնամու դեպի Երևան գրոհելու վտանգը։ Գազազած թշնամին, քաջալերված իր ժամանակավոր զինադադարի պայմանից սպասելիք

հաղթություններով, իր զորքերը Դիլիջանի անդնդախոր ձորերով անարգել տարավ դեպի Ադրբեջան՝ Ղազախ, Աղստաֆա, այնտեղից էլ՝ Գանձակ ու Բաքու, որոնց անհուն խանդաղատանքով սպասում էին մուսաֆաթի պարագլուխներն ու պանթուրքիզմի գաղափարախոսները։

Այդ դադարից հետո Անդրանիկի բանակը, ձգելով Ծաղկունքի դիրքերը, Ելենովկայից շարժվեց դեպի Նոր Բայազետ։ Հազիվ էինք հասել այդ գավառական քաղաքի արվարձանին, որ դարձյալ երկինքը խռովեց մեր գլխին և մեզ բոլորիս ոտքից մինչև գլուխ լողացրեց հորդառատ անձրևը։ Քաղաքի բնակչության և մերձակա գյուղերի ազգաբնակչության ընդունելությունը այնքան սրտառուչ էր և այնքան հոգատար, որ վեր էր թե՛ բանակայինների և թե՛ գաղթականության սպասելիքներից։ Մենք կտրվեցինք Երևանից և Դիլիջանի հայկական զորամասերից։ Թե ինչ էր կատարվում Երևանում կամ թե Շիրակի դաշտից դեպի Երևան շարժվող գծի վրա, լուր չունեինք։

Նոր Բայազետից ռազմագաղթականական քարավանը շարժվեց դեպի Վայոց ձոր։ Ճանապարհի երկայնության ընկած լճամերձ հայ գյուղերի ազգաբնակչության մեզ տված լուրերի համաձայն պարզվեց, որ 4—5 օր մեզանից առաջ նույն այդ ճանապարհով դեպի Ղարաբաղ էր անցել զորավար Մելիք-Շահնազարյանը ղարաբաղցի իր ռազմիկների հետ։ Մեր բանակը զուրկ էր նյութական բոլոր միջոցներից, որ պակաս հոգս չէր պատճառում Անդրանիկին։ Կարծեմ Երանոս թե Դալի-ղարդաշ գյուղումն էինք, երբ Երևանից կառքով մեզ հասավ Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանը, որ Անդրանիկին հանձնել էր Ազգային խորհրդի ուղարկած 50 000 ռուբլի թղթադրամ՝ բանակի կարիքների համար, մի՛ չնչին դումար, որ այն ժամանակվա գներով հազիվ մի շաբաթ բավականացներ զորամասին։ Թեև արքեպիսկոպոսի՝ Անդրանիկի հետ ունեցած գաղտնի խոսակցության մանրամասնությունը մինչև վերջ էլ անհայտ մնաց մեզնից շատ-շատերին, բայց դժվար-

չէր կռահել, որ նա՛խ Տեր-Մովսիսյանը տքնել էր Անդրանիկին հաշտեցնել դաշնակցության բյուրոյի և Արամ փաշայի հետ, երկրորդ՝ խնդրել նրան թողնել Իրանի վրայով Հայաստան մտած թուրքերին թիկունքից հարվածելու միտքը և, վերջապես, խնդրել Անդրանիկին բավականանալ իր ուժերով պաշտպանելու Նախիջևանի գավառը օսմանյան թուրքերի ներխուժումից։ Արքեպիսկոպոսի մեկնելուց հետո Անդրանիկի պատահական արտահայտություններից կարելի էր որոշակի կռահել, որ նա այլևս չէր խորհում անգլիացիներին միանալու մասին և ամբողջապես մտահոգված էր Նախիջևանի պաշտպանության հոգսով։

Շարունակելով մեր ճամփան, անցնելով Ներքին և Վերին Ղարանլուղ գյուղերը և կտրելով Ագրիջայի սարահարթը, մենք հասանք Սելիմի լեռնանցքի բարձունքներին, որտեղից դեպի Վայոց ձոր դիտողի տեսադաշտի առջև բացվում էր բարձրությամբ մեկը մյուսին չզիջող լեռնային զանգվածների շարան, որոնց անդնդախոր ձորերն ու լանջերը ջանասեր Վայոց ձորի հայ գեղջուկը իր ճակատի թափած անհատնում քրտինքի կաթիլներով դարձրել էր կատարյալ դրախտ։ Նրա տնկած այգիներում ինչպիսի պտուղ ասես, որ չէր հասունանում՝ խաղող ու թուզ, փշատ ու նուռ, տանձ ու խնձոր, թութ, կեռաս, բալ ու սալոր և այլ հյութեղ քաղցրահամ պտուղներ։ Եվ ո՞վ կարող է հերքել, որ այս ամենը արդյունք չեն XIII դարի հայկական համալսարանի՝ Գլաձորի վանքի ներհուն և իմաստասեր հայ գիտնականների և նրանց տաղանդավոր աշակերտության սրտաբուխ հորդորներին ու դաստիարակության, որոնք որպես հայրենի մշակույթի անկաշկանդ զարգացման ջահակիրներ՝ չեն խնայել իրենց գիտությունն ի նպաստ հայ գեղջուկի։

Սելիմի լեռնանցքից մինչև Քեշիշ-քենդ հասնելը տևեց երկու օր։ Այդ ավանը ընկած էր Արփա գետի ձախ ափին, դեպի արևելք, և այն ժամանակ հա-

մայն Վայոց ձորի վարչական և ռազմական իշխանության կենտրոնն էր, ու փաստորեն այդ լեռնաշխարհի տերն ու տնօրենը գորիսեցի խմբապետ Համբարձումն էր՝ Յապոն մականունով։ Վերջինս որպես բդեշխ Երևանից լիազորված էր արտակարգ իրավունքներով։ Այդ միանգամայն անգրագետ ու գռեհիկ հայդուկի ամեն մի խոսքը օրենք էր բոլորի համար, անգամ այն կադրային հայ սպաների, որոնք եկել էին ռուսական Արևմտյան ճակատից և որոնց Երևանը դրել էր Յապոնի տրամադրության տակ։ Յապոնը օր առաջ իրազեկ լինելով Անդրանիկի զորամասի առաջխաղացմանը նախապես պատրաստություն էր տեսել պատշաճ հարգանքով ընդունելու, և ինքն անձամբ իր թիկնապահների հետ եկել էր ընդառաջ։ Հանդիպումը տեղի ունեցավ Արփա գետի աջ ափին գտնվող հայկական Կոթուր գյուղի այգեստանում։ Կեսօրից քիչ անց էր։ Յապոնը իր թիկնապահներով մեզ առաջնորդեց Արփա գետի ձախ ափին ընկած վիթխարի ընկուզենիների հովասուն պուրակը։ Անդրանիկը շատ էր ծարավ։ Նա դիմեց իրեն տեսության եկած գյուղացիությանը.

— Կրնա՞ք քիչ մը սառը ջուր բերել խմելու։

Մի քանի րոպեից հետո գյուղացիներից մեկը ջրով լի կավե սափորը իջեցրեց ուսից Անդրանիկի բաղմած օթոցի առջև, ապա գրպանից հանելով մի կլայեկած արծաթափայլ պղնձե թաս և, մի քանի անգամ ջրով ողողելուց հետո, լցրեց սառը ջրով ու մեկնեց նրան։

Իր ծարավին հագուրդ տալուց հետո Անդրանիկը շնորհակալությամբ թասը վերադարձնելով գյուղացուն, հարցրեց նրան.

— Ասա, ախպարս, ի՞նչ արժե ասանկ սափորը ձեզ մոտ։

Գյուղացին չկռահեց, թե ինչ բան է սափորը։ Ներկա եղողները հասկացրին գյուղացուն, որ խոսքը կժի մասին է։ Գյուղացին աճապարեց պատասխանել, որ նոր կուժը կարելի է գնել մի փութ գետնախնձորով։ Անդրանիկը չբավարարվեց, կրկին հարցրեց.

— Հապա մեկ փութ գետնախնձորն ի՞նչ արժե։

— Փաշան ապրած կենա,— պատասխանեց գյուղացին,— մի փութ գետնախնձորը մեզ մոտ կարժենա երեք աբասի։

— Իսկ կուժի ճեղքվածքը կոծկել տալու համար որքա՞ն ես վճարել վարպետին,— շարունակեց Անդրանիկը։

— Հե՛չ, կես մանեթ, փաշան ապրած կենա...։

Մի պահ ներկա եղողների դեմքին ժպիտ երևաց։

— Է՛,— շարունակեց Անդրանիկը,— ըսել է 50 կոպեկ տվել ես կուժը կոծկելու համար։ Հապա ավելի լավ չէ՞ր լինի մի տասը կոպեկ ալ ավելացնեիր և գնեիր նոր կուժ, քան թե կոծկել տայիր այդ կուժը ատանկ թանկ դնով։

— Ախպարս, չէ որ այդ կոծկած կուժին ճեղքվածքում բազմապիսի ու անհամար միկրոբներ կվրխտան, որ կրնան ըլլալ պատճառ բռնկվելու անանկ սուր վարակիչ հիվանդություններու համաճարակ, որի հետևանքով անմեղ տեղը կմեռնին հազարավոր մարդիկ։

Օրերը զդալի չափով երկարել էին և տաքացել։ Վայոց ձորը զուգվել-զարդարվել էր զմրուխտե կանաչով։ Դեպի նախիջևան ճանապարհվելուց մի երկու-երեք օր առաջ փաշան հրամայեց կիրակի և երկուշաբթի հայտարարել սանիտարական օրեր՝ զորամասը կարգի բերելու, սափրելու, խուզելու, սպիտակեղենները լվանալու, լողանալու և պատառոտված շորերը կարկատելու համար։ Այդ աշխատանքին եռանդուն աջակցություն ցուցաբերեցին մեր գաղթականուհի մայրերն ու քույրերը։

Վայոց ձորում մի քանի օր տևող հանգստի ժամանակ Անդրանիկի վրանը դարձել էր ուխտատեղի, շրջակա գյուղացիության համար։ Նրանք գալիս էին խմբերով՝ բոլոր տարիքի և սեռի ներկայացուցիչներ։ Անդրանիկն իր շրջահայացությամբ կարողանում էր բոլոր եկվորների համար քաջալերիչ բառեր գտնել։ Երբեք չպիտի մոռանամ, թե ինչպես նա

նկատելով դեպի իր վրանը մոտեցող աղավնաձորցիների խմբի մեջ ցուպը ձեռքին կորացած մի պառավ կնոջ, շտապեց ընդառաջ գնալ նրան և թևանցուկ արած առաջնորդեց իր վրանը ու նստեցրեց իր օթոցին։ Պառավը հոգեկան խոր ապրումներից դողում էր աշնան տերևի պես։ Անդրանիկը նույնպես նստեց և դարձավ պառավին.

— Մա՛րս, ի՞նչ կարիք կար այդքան նեղություն կրելու լոկ զիս տեսնելու համար...

Պառավ կինը ըստ երևույթին կուահեց փաշայի խոսքերի միտքը և ուրախ բացականչեց.

— Ուրեմն դո՞ւ ես Անդրանիկ փաշան, բա ես քու ջան ու ջիգյարին մատաղ, բոլոր սրբերին ուխտի կերթամ, աստծուց խնդրելու, որ քո կյանքը երկարացնի մեր խեղճ հայոց ազգի համար։

Եվ դողդոջուն ձեռքը տարածելով դեպի Անդրանիկի պարանոցը, կուացավ և օծեց իր մայրական ջերմ համբույրով նրա ալեհեր մազերով գլուխը։ Պառավը 78 տարեկան էր։ Անդրանիկը չհամբերեց, շտապեց համբուրել պառավի կոշտացած աջը և ասաց.

— Շնորհակալ եմ և երախտապարտ ձեզ ամենուդ, որ նեղություն եք կրել ոտքով գալու ինձ տեսության։ Ալ ինչ ըսեմ ձեզ. բարի եկաք և բարի երթաք ձեր տները։ Գիտցեք, ազնիվ մարդու համար հայրենիքից վեհ բան չիկա աշխարհում։ Դաստիարակեցեք ձեր զավակներուն սիրել ու պաշտել Հայաստանը և պատրաստ լինել հարկ եղած դեպքում մեռնել հանուն անոր սիրուն...

ՆԱԽԻՋԵՎԱՆ

Մայիսյան մի առավոտ Անդրանիկի հրամանով հանգստացած ու կազդուրված մեր բանակը Վայոց ձորից շարժվեց դեպի Նախիջևան։ Սովորականի պես գաղթականության հոծ զանգվածը հետևում էր մեզ։ Յապոնը իր մի քանի սպաների հետ ուղեկցում էին

մեր բանակին։ Նրանք բավական տարածություն մեզ ուղեկցելուց հետո ողջագուրվեցին բանակի հրամանատարական կազմի հետ և վերադարձան կրկին դեպի Քեշիշ-քենդ։

Հաջորդ օրը կեսօրից անց էր, երբ մենք հասանք Նախիջևան։ Միանգամայն անսպասելի էր մեր հանկարծակի մուտքը Նախիջևան թե՛ թուրք և թե՛ հայ ազգաբնակչության համար։ Անդրանիկը կարգադրեց իր բանակը տեղավորել ռուսների լքած զորանոցներում։

Կրկնակի քանակությամբ պահակներ նշանակվեցին թե՛ զորանոցի և թե՛ զինանոցի շուրջը, ուր պահվում էր բավական քանակությամբ ռազմամթերք, մանավանդ լեռնային և հաուբից հրետանիի համար շատ արկեր։ Կես ժամ անց մենք Նախիջևանի հայության ներկայացուցիչներից իմացանք, որ ընդամենը 3—4 օր է, ինչ ժամանակավորապես փոխադարձ համաձայնությամբ դադարեցված է տեղի հայերի և թուրքերի միջև տեղի ունեցած եղբայրասպան ընդհարումները։ Ինչպես հաստատում էին տեղի հայերը, քաղաքը չեզոք գոտիով բաժանված էր երկու թաղամասերի՝ հայկական և թուրքական։ Բնականաբար, մեր բանակի անսպասելի մուտքից Նախիջևանի ահաբեկված թուրք բնակչությունը մեզ երկար սպասեցնել չտվեց՝ հայտնելու իր խաղաղասիրական հնազանդությունը։ Մեր տեղ հասնելուց շատ չանցած նրանց պատգամավորությունը ընդառաջ եկավ Անդրանիկին՝ ձեռքներին բռնած սպիտակ դրոշակ և մի սկուտեղի մեջ՝ աղ ու հաց։

Իր թիկնապահներով շրջապատված Անդրանիկը, տեղացի մի քանի ականավոր հայերի ուղեկցությամբ, շտապեց դեպի քաղաք։ Թուրք պատգամավորությանը հաջողվեց փաշային դիմավորել ճանապարհի այն մասում, որտեղից սկսվում էր քաղաքի շենքերը։ Նրանք կանգ առան որոշ տարածության վրա և, խոնարհելով ճերմակ դրոշը մինչև գետին, դանդաղ ընդառաջ եկան Անդրանիկին՝ մատուցելով աղ ու հաց։ Անդրանիկը հանեց գլխարկը և, խաչակնքե-

լով երեսը, ճաշակեց սկուտեղի աղն ու հացը։ Այդ դեպքից ուրախացած թուրք պատգամավորները միաբերան բացականչեցին.

— Յաշասըն, մին յաշասըն, Անդրանիկ փաշա, ալլահ օմուր վերսուն, խոշ գայալդըզ, բիզիմ գոյդ ուստա գյալդզ[1]։

Անդրանիկը, թուրք պատգամավորությանը շնորհակալություն հայտնելով, առաջարկեց հետևել մեզ։

Մի թաղամաս ևս, և մենք հասանք մեզ ուղեկցող հայերից մեկի տունը, որտեղ Անդրանիկը դարձավ տանտիրոջը և խնդրեց իր ասելիքը թարգմանել թուրքերեն։

— Ասացեք այս մարդկանց, որ ես խորապես զգացված եմ և ուրախ իրենցմեն, եթե միայն այս ամենը հիմնված է աղնվության վրա։ Այժմ հոգնած եմ, ալ շատ ասելիք չունիմ, բայց թող անոնք վերադառնան իրենց պատգամախոսության ուղարկած ժողովրդի մոտ՝ հավաստիացնելու նրանց, որ մենք բոլորովին հեռու ենք թշնամություն սերմանելու երկու դրացի ժողովուրդներու՝ հայի և թուրքի միջև, միայն թե իրենք պատճառ չըլլան արյունահեղության։

Թուրք պատգամավորությունը, քաջալերված Անդրանիկի խոսքերից, շտապեց շռայլորեն մեծարել Անդրանիկին, որպես իսկական ժողովրդական հերոսի, խոստանալով, որ այլևս երբեք չի կրկնվի այն աղետը, որ տեղի է ունեցել մեր այնտեղ հասնելուց մի քանի օր առաջ։

Ուշ երեկոյան մեզ հյուրընկալող տանտիրոջ դահլիճում բացված սեղանի շուրջը հավաքվել էին Նախիջևանի հայության ներկայացուցիչները, որոնց թվում նաև ագուլիսցի Աշոտ Մելիք-Մուսյանը և հայտնի դերասան Ամո Խարազյանի եղբայր՝ կապիտան Խարազյանը։ Բոլորն էլ մտամոլոր ու անհամբեր սպասում էին հարևան սենյակներից մեկում

---

1 Կեցցե՜, կեցցե՜ Անդրանիկ փաշան, աստված նրան երկար կյանք տա, բարով եկաք, մեր աչքի վրա եկաք։

քնած փաշային։ Մինչ նրա արթնանալը ներկաներին զբաղեցնում էր մշեցի Սմբատը, որը դեռևս 1905 թվականից նախիջևանցիներին հայտնի էր «Վարիչ» մականունով։

Վերջապես ներս մտավ Անդրանիկը ու գրավեց իրեն հատկացրած ազատ աթոռը։ Թեյում էինք ու զրուցում։ Հանկարծ նա դարձավ դեպի Ա. Մելիք-Մուսյանը.

— Ասացեք, խնդրեմ, ո՞վ է նախահարձակ եղել տեղիս ընդհարումներին՝ մերո՞նք թե՞ թուրքերը...։

— Թուրքերը,— խմբովին պատասխանեցին նախիջևանցիները։

— Դրդապատճա՞ռը...։

— Ստույգ հայտնի չէ։

— Անոնց շարքերում օսմանցի սպաներ կամ զինվորներ չե՞ք նկատել։

— Հապա ոնց, փաշա՛,— բացականչեց մի առույգ և համակրելի դեմքով երիտասարդ, որն ըստ երևույթին վայելում էր սեղանի շուրջը ներկա եղող տարեց նախիջևանցիների սերն ու համակրանքը։— Փաշա, ով է օսմանյան թուրքի զորքի առաջը կըտրողը, սահմանապահ զորք չունենք. ուզածդ օրը նրանք էնդից անցնում են դես, էսդից էլ էնդին...— հաստատեցին մյուսները։

— Այո, ճիշտ է,— ասաց կապիտան Խարազյանը,— տեղական թուրքերի կապը օսմանցիների հետ Արաքսի վրայով շատ սերտ է։

— Աղեկ, ի՞նչ ելք կարելի է գտնել, որպեսզի այլևս չվերսկսվեն այդ երկուստեք աղետալի, անմիտ և կորստաբեր ընդհարումները։

— Փաշա,— պատասխանեց Ա. Մելիք-Մուսյանը,— վճռապես այդ հարցին պատասխանելը դըժվար է։ Իհարկե, տեղիս թուրք ազգաբնակչության ստվար մասը, ինչպես նաև շրջակա թուրք գյուղացիությունը դեմ է արյունահեղության և ջերմ կողմնակից խաղաղ դրացիական փոխհարաբերությունների, բայց ցավոք սրտի նրանց մեջ պակաս չէ և այնպիսի խարդախների թիվը, որոնց մտածելակերպը

այլ է։ Այդպիսիներին դեպի արյունահեղություն հրահրողը օսմանցին է, որ եկել շնթռկել է Արաքսի աջ ափին և դրախտ է խոստանում տեղիս թուրքերի պարագլուխ Շահթախտինսկի, Նախիջևանսկի և Օրդուբաթլու խաներին։ Եթե մենք մեր երեսուն օրվա ընդհարումների ժամանակ չցուցաբերեինք հարկ եղած մարտունակություն, ապա հազիվ թե բախտ ունենայինք այսօր տեսնվելու։ Մեր փոքրաթիվ ուժերի մարտունակությունը միայն հարկադրեց նրանց գերազանց ուժերին մատնել խուճապի և ստիպել երկարացնելու իրենց աջը մեզ՝ ժամանակավորապես դադարեցնելու աղետալի ընդհարումը։ Թուրք խաներն ու աղալարները մեր դեմ շատ են բորբոքված։ Նրանց նպատակն է մեր մեջ կայացած ժամանակավոր զինադադարը օգտագործել՝ մեծ քանակությամբ օսմանյան օժանդակ ուժեր ստանալու, որպեսզի վերստին վերսկսեն կռիվը այն հույսով ու հավատով, որ նրանց կհաջողվի վերջնականապես ջախջախել մեզ և տիրել մեր շարժական ու անշարժ կայքին։

— Աղեկ, ատկե զատ ուրիշ տարաձայնություններ չիկա՞ն ձեր միջև։

— Փաշա, ուրիշ ինչ տարաձայնությունների մասին կարող է խոսք լինել մեր մեջ։ Մենք միշտ էլ գերադասել ենք խաղաղությունը՝ կռվից, և բարեկամությունը՝ թշնամությունից։ Նույն անդրդվելի համոզմունքն ունենք և այսօր։ Մենք մեր դրացու ունեցածի վրա աչք չունենք, բայց երբ նա ձգտում է ուժով հափշտակել քո տունն ու տեղը... էլ ինչ է մնում անելու մեզ, եթե ոչ դիմելու ինքնապաշտպանության։

— Դուք, ինչպես հասկացա ձեր ասածներեն, ամեն ինչ կվերագրեք օսմանյան թուրքերուն և տեղական թուրք խաներուն և անոնց մոլլաներուն, բայց մի՞թե այդ ժողովուրդը զուրկ է մտավորականներե, որոնց բռնած դիրքը ոչ պակաս չափով զիս կհետաքրքրե։

— Ցավոք սրտի, փաշա, մեր գավառի թուրքերը զուրկ են այնպիսի ազդեցիկ մտավորականներից, որոնք ի վիճակի լինեն փոխելու ստեղծված իրադարձությունների ընթացքը՝ դեպի խաղաղություն։ Եթե անգամ գտնվեն նրանց միջև մեկ-երկու պայծառ դեմք, միևնույն է, նրանք կխուսափեն ընդդիմանալ խաներին ու բեկերին, որովհետև ուժը այդ սեհարյուրյակայիններին ձեռքին է, որոնք հարկ եղած դեպքում, ի հեճուկս խաղաղ կյանքի կողմնակիցների, չեն զլանա ֆիզիկապես վերջ տալ նաև նրանց կյանքին։

— Ձիս առանձնապես կհետաքրքրե իմանալ ձեր կարծիքը մուսավաթի բռնած դիրքի մասին...

— Փաշա, մուսավաթ ասածդ արդեն հենց նույն խաները, բեկերն ու մոլլաներն են, որոնց մասին մենք արդեն խոսեցինք։ Երևույթը այնքան ցավալի է, որ եթե մի պահ հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման գաղափարը իրենց ծրագրից դուրս նետվի, ապա հավանական է, որ այլևս մուսավաթը որպես այդպիսին ինքնըստինքյան լուծարքի կենթարկվի։

— Ցավալի է, սակայն անկախ այդ ամենեն մենք կաշխատինք այլ դիրք բռնել մեր հարևաններու վերաբերմամբ։ Եթե ուրիշ ասելիք չունեք, ապա խընդրեմ լուր տարեք թուրքերուն, որ Անդրանիկը ցանկություն ունի վաղը իրենց թաղի հրապարակում քիչ մը զրուցելու անոնց հետ, իսկ առայժմ բարի գիշեր ամենուդ, ես պիտի երթամ զորանոց՝ գիշերելու հոն։

ԱՆԴՐԱՆԻԿԻ ԵԼՈՒՅԹԸ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԹՈՒՐՔԱՑ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ

Հաջորդ օրը, մոտավորապես ժամը 10-ին, մի էսկադրոն հեծելազորի ուղեկցությամբ Անդրանիկը մեկնեց թուրքաց թաղամասի հրապարակը, որ գըտնըվում էր քաղաքի հարավային մասում։ Քաղաքի թե՛ թուրք և թե՛ հայ ազգաբնակչության երկսեռ

բազմությունը այդ օրը առավոտյան սպասում էր, թե ինչ պիտի ասի Անդրանիկը հասարակությանը։ Բնորոշ է, որ երկու ազգության իգական սեռը որպես հարազատ քույրեր բռնել էին կավաշեն տների կավե կտուրները՝ այնտեղից դյուրին կերպով տեսնելու առասպելական հերոսին և լսելու նրա ձայնը։

Շատ չանցած, հանկարծ բազմության սպասողական լռությունը խանգարեցին չարաճճի տղայեկների աղաղակները՝ «Գյալդի հա գյալդի, Անդրանիկ փաշա գյալդի...»[1]։

Այդ պահին Անդրանիկը բազմած յուր նժույգին, իր թիկնապահների ուղեկցությամբ հասավ հրապարակին։ Տղայեկների աղաղակը ամբոխը ընդունեց որպես ազդանշան ինքնաբերաբար կոչելու՝ «Ցաշասըն, մին յասաշըն Անդրանիկ փաշա»[2]։

Անդրանիկը վար ցատկելով իր նժույգից և ձիու սանձը տալով մարտիկի ձեռքը, հպարտ ու համարձակ քայլերով մոտեցավ հրապարակի կենտրոնում փայտից կառուցված պատվանդանին։ Նրան հետևվեցին երկու թիկնապահ զինվոր և երկու քաղաքացի թարգմաններ՝ թուրքերենին տիրապետող մի՛ հայ և հայերենին տիրապետող մի՛ թուրք։ Նրանցից մե՛կը կանգնեց Անդրանիկի աջ կողմը, իսկ մյուսը՝ ձախ։ Բազմությունը լռեց։ Նոքա խորին ակնածությամբ և անհամբեր սպասողությամբ իրենց հայացքը հառեցին դեպի հայ դյուցազնը։ Անդրանիկը, մի պահ իր արծվային հայացքը սևեռելով դեպի բազմությունը, բարձրաձայն գոչեց.

— Սալամ գարդաշլար...[3]։ Նախ պիտի հավաստիացնեմ ձեզ, որ նախքան իմ Նախիջևան գալը բնավ տեղյակ չեմ եղել այստեղ հայի և թուրքի միջև տեղի ունեցած աղետալի ընդհարումներին։ Կեղծելու հարկ չիկա, եթե այդ տեղեկությունն ունեցած ըլլայի, անպայման կշտապեի ձեզ մոտ՝ հանգցնելու հրդեհը։

---

1 Եկա՜վ, եկա՜վ, Անդրանիկ փաշան եկավ։

2 Կեցցե՜, հազար կեցցե՜, Անդրանիկ փաշային։

3 Բարև, եղբայրնե՛ր։

Մեր նախնիները դարերի ընթացքում ձեռք-ձեռքի տված միասին կվայելեին իրենց ճակատի քրտինքով վաստակած հացը։ Հայն ու ադրբեջանցին դարեր շարունակ եղբայրաբար վայելած են իրարու սփռոցի վրա դրած աղն ու հացը։ Այդ ի՞նչ պատահեց ձեր միջև, որ առանց որևէ հարգելի պատճառի անխղճորեն կմերկացնեք ձեր թրերը իրարու դեմ։ Ամոթ չէ՞... Ինչո՞ւ բարի դրացիական փոխհարաբերություններու, խաղաղ, շինարար ու ստեղծագործ աշխատանքի փոխարեն կգերադասեք իրարու միս լափել արյունահեղ կռիվներով... Օսմանցիներու ձեզ խոստացած դրախտը խաբեություն է և դժոխք, եղբայրք իմ, այդ լավ հասկացեք։ Դուք փոխանակ միասնական ուժերով պայքարեք այդ չարիքի դեմ, ընդհակառակն՝ տարված հավատքի մոլեգնությամբ, անգիտակցաբար, մոլորված հոգով կձգտեք ստրկության շղթաները փաթաթել ձեր վզին։ Ձեզմե գաղտնիք չէ, դուք ինքներդ ալ լավ գիտեք, որ մենք հայերս հնուց ի վեր ջերմ ջատագով ենք խաղաղ կյանքի։ Մենք բնավ չենք ցանկանում կռվել օսմանցու դեմ։ Մեր դժգոհությունը օսմանյան ժողովրդի դեմ չէ, այլ անոնց ապիկար փաշաներու սարքած անարդար պետականության և նույնքան անարդար կարգերու դեմ։ Ախպրտիքս, չէ որ դուք ալ մեզ նման աշխարհ տեսած, փորձված, բանիմաց մարդիկ եք։ Ասացե՛ք, հապա, որ ջուրն ընկնի հայը օսմանցու ձեռքից։ Մենք կշինենք, օսմանցին կավերե, մենք տանջանքի գնով հաց կվաստակենք, օսմանցին բռնի ուժով կհափշտակե, կկողոպտե, կվայելե մեր ճակատի քրտինքը։ Մենք եղբայրության ձեռք կերկարենք օսմանցուն, անիկա մեր անզեն ժողովրդին սրախողխող արավ, մեր աղջիկներուն ու կանանց առևանգեց, քշեց լցրեց իր հարեմները, իսկ արու մանուկներուն ալ թլպատելով իսլամացրեց։ Ասացե՛ք, ուր երթանք մենք մեր պապենական հողեն, ում դիմենք, եթե ոչ միայն զինված ինքնապաշտպանության... Ինչ վաստակեց օսմանյան պետությունը տմարդիորեն բնաջնջելով իր պե-

տության սահմաններում ապրող հայությանը, բացի այն, որ ամայացրեց շեն երկիրը, որի քրտնաջան ժողովրդի արդար վաստակով կհղփանար ինքն ու իր բանակները։ Ատիկա դեռ բավական չէ, այժմ էլ, օգտվելով ռուսներու ժամանակավոր բացակայությունից, կձգտե հիմնովին բնաջնջել ոչ միայն Արևելյան Հայաստանը, այլև եղբայրական Վրաստանը, որպեսզի դյուրին կերպով տիրապետի այդ երկրներին, եւ կասեի նույնիսկ ատոնց թվում անգամ իր դավանակից Ադրբեջանին։ Օսմանցիներու ախորժակը մեծ է շատ, նոքա կխորհին նույնիսկ ցնորամիտ համաթուրքական գաղափարով տիրել մինչև Բայկալ լիճը։ Հավատացե՛ք, սիրելի բարեկամներ, հայ և ադրբեջանցի եղբայրներ, շնորհիվ Ռուսաստանում ծայր առած հզորագույն սոցիալիստական հեղափոխության, այս երկրին սպասվում է երջանիկ ապագա և անիկա հեռու չէ, քիչ մըն ալ համբերեք և ինքներդ ձեր սեփական աչքերով կտեսնեք և կճաշակեք անոր քաղցրությունը։ Կրկին կգան ռուսները, բայց ոչ այն ռուսները, որոնք պակաս հոգս չեն պատճառել մեզ, այլ այն ռուսները, որոնք կբերեն մեզ նոր պատգամներ՝ ազատության, եղբայրության, հավասարության պատգամներ, Լենինի պատգամներ։ Ուրեմն, եկեք վերջ դնենք եղբայրասպան արյունահեղ կռիվներուն, ոչնչացրեք ձեր այդ շինծու չեզոք գիծը, վերանորոգեցեք հրանոթային կրակով փլցրած ձեր տաճարներու գմբեթները, ամոթ է, ամո՛թ, մի խաբվեք օսմանցիներու ստահակ հրամանատարության խոստումներուն։ Ես չեմ եկել հոս իմ ձեռքերը շաղախելու ձեր անմեղ արյան մեջ, ո՛չ։ Սակայն կզգուշացնեմ, ձեր հետագա անմիտ վարք ու բարքով չհարկադրեք զիս հակառակ իմ կամքին և գիտակցությանը, դիմելու զենքի անոնց դեմ, որոնք կգերադասեն եղբայրասպան արյունահեղությունը խաղաղությունեն։ Եթե դուք չեք ցանկանա մեզ հետ միասին արգելք հանդիսանալ օսմանյան բանակի ոտնձգություններուն, գոնե պաշտպանեցեք ազնիվ չեզոքություն, մի խառնվեք մեր գործերուն, մի օգնեք օսմանցիներուն թու-

նավորելու այն աղն ու հացը, որ դարեր շարունակ ճաշակել և հավատարմության երդում են տվել իրարու մեր նախնիները։ Իմ բանակը երկար չի մնա ձեզ մոտ, բայց կանխապես երկու-երեք խնդիր ունիմ դեպի ձեզ։ Նա՛խ կխնդրեմ ստանալ մեզմե այն խոշոր եղջերավոր անասուններու արժեքը, որ այսօր առտուն ձեր մարդիկ չգիտեմ ինչ պատրվակով կամ թե ինչ նպատակով քշել, բերել հանձնել են իմ բանակի գումակի պետին։ Երկրորդ՝ խոսք տվեք, որ իմ զորամասը ձեր քաղաքեն հեռանալուց հետո, նորեն չեք վերսկսի ձեր եղբայրասպան ընդհարումները և երրորդ՝ մշտնջենապես կխզեք ձեր կապերը օսմանցիներուն հետ։ Կեցցե՛ Անդրկովկասի երեք ազգություններու՝ հայերու, ադրբեջանցիներու և վրացիներու եղբայրական խաղաղ գոյակցությունը։ Կորչեն խռովարարները, կեցցե՛ խաղաղությունը, կեցցե՛ ռուսական մեծ հեղափոխությունը, որ կբերե մարդկությանը երջանիկ ապագա, կեցցե՛ Մեծ Լենինը։

Անդրանիկի ելույթի վերջին բառերը ծածկվեցին ժողովրդի երկսեռ բազմության որոտընդոստ և երկարատև բացականչություններով։

Քաղաքում նույն օրը ևեթ վերացվեց չեզոք գիծը, վերականգնվեց խաղաղ առօրյան, ամեն տեղ և ամենուր սկսեց եռուզեռ, չքացավ մարդկանց դեմքի մռայլությունը։ Անդրանիկը վերադարձավ զորանոց և կարգադրեց իր մոտ կանչել բանակի պաթենավորման պետին և, հանձնելով վերջինիս Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանի Երևանից բերած 50 000 ռ. թղթադրամը, պատվիրեց թուրքերու բերած անասունների հաշիվը մաքրել իր ներկայությամբ, այնպես որ ոչ մի դժգոհություն չըլլա անոնց կողմեն։— Կարելի է ասել, որ մենք ապահովված ենք զենքով, մսի պաշարով և մասամբ էլ հագուստով,— շարունակեց Անդրանիկը, մնում է ամենակարևորը և ամենադժվարինը՝ ապահովել թե՛ զորամասին և թե՛ գաղթականությանը հացով և ձիերը՝ վարսակով կամ գարիով։

Անդրանիկը ներկաներին հայտնեց, որ զորքը պետք է շարժվի դեպի Ջուղա և պարզաբանեց պատճառները։ Առաջինը, հետախուզական նկատառումներով, պետք է գնար Ահարոնի էսկադրոնը։

Ահարոնի էսկադրոնի մեկնելուց երկու օր հետո փաշայի հրամանով գիշերը դեպի Ջուղա շարժվեց նաև ամբողջ բանակը։ Երկինքը պատված էր սև ու մութ ամպերով։ Հեռուներում, ըստ երևույթին, Արարատի սպիտակափառ գագաթին և Վասպուրականի լեռնաշղթայի բարձունքներում ժայթքում էին ամպրոպներ ու փայլակներ։ Շատ չանցած նույնը տեղի ունեցավ նաև շրջակա լեռների կատարներին, որոնց հետևեց կարճատև, բայց հորդառատ անձրև։ Հաջորդ օրը կեսօրին բանակը հասավ Նոր Ջուղա գյուղը։ Քաջամարտիկ ջուղացիները եղբայրական այնպիսի սիրով ընդունեցին մեզ, որ վեր էր ամեն տեսակ երևակայությունից։ Նույն օրը ուշ երեկոյան Ջուղայից եկավ Ահարոնը և իր հակիրճ բանավոր զեկուցումով հավաստիացրեց Անդրանիկին, որ նրա հրամանը կատարված է ճշտությամբ։ «Ուրեմն մեկ երկու օրեն առանց վարանումներու կրնանք ապահով շարժվել դեպի Սալմաստ»։

— Այո՛, փաշա, կրնանք...

ԱՆՑՈՒՄ ԱՐԱՔՍԻ ԿԱՄՐՋՈՎ

Նիստից հետո վաղ առավոտյան, երբ արևելքում հորիզոնը նոր էր շառագունել, մեր բանակը կազմ ու պատրաստ, լուռ ու մունջ անհամբեր սպասում էր անցնելու Արաքսի կամրջի վրայով դեպի պարսկական Ջուղա։ Այդ պահին Արաքսը սովորականից շատ էր հորդացած։ Ըստ երևույթին Բարձր Հայքում, Շիրակի և Արշակունյաց լեռնաշխարհում շարունակում էին հորդառատ անձրևներ տեղալ։ Օրվա այդ ժամին Արաքսի հովտից վեր սլացող մեղմ զեփյուռը քնքշորեն շոյում, զովացնում էր մարտիկների դեմքը։ Շրջապատի խուլ լռության միջից լսելի էր մայր Արաք-

սի ջրերի հավերժական քչքչոցը, որոնք օղակ-օղակ օձանման գալարվում էին։ Արաքսը հայ բազմաչարչար ժողովրդի հավերժական վկան է։ Նա լուռ, ականատես է եղել շատ ու շատ իրադարձություններին։ Այդպիսի մտորումների մեջ էի խորասուզված, երբ մեր շարքերում անցավ մի շշուկ՝ բանակ, պատրա՛ստ, առա՛ջ, քայլով մա՛րշ... Անդրանիկի այս հրամանը բերնե-բերան հաղորդվելով կայծակի պես սլացավ մեր շարքերի միջով։ Բանակի առջևից, որոշ տարածության վրա, բազմած իրենց կատաղի նժույգները, առաջ էին գնում երեք առնական հերոս երիտասարդ՝ սևծովյան ափերի լազերի տարազով։ Նրանց ետևից, որոշ տարածության վրա, հետևում էր ինքը հերոս Անդրանիկը՝ բազմած իր արծաթավուն նժույգին, շրջապատված իր անձնակազմով, որոնք բոլորն էլ թուրքական բանակի շարքերը լքած Ադանայի և աֆիոն-գարահիսարցի թրքախոս հայ հերոսներ էին՝ լցված ազգային վրիժառությամբ, որոնք իրենց վիթխարի կազմվածքով, հրաշունչ և բոցավառ աչքերով կարծես թե ընձառյուծներ լինեին, որ սարսափ էին ազդում ամեն մի դիտողի։ Հասնելով կամրջին, նրանք դիմացի թշնամու պահակներին, մոլորեցնելու միտումով, հանկարծ սկսեցին խմբովին երգել ու նվագել թուրքաց լեզվով՝ «Ղանլի վաթան» երգը։ Արաքսի կամրջի հակառակ ծայրին կանգնած թուրքական պահակները, ընդունելով մեզ թուրք զինվորի տեղ, կանգնել էին շփոթված՝ առանց որևէ դիմադրության։ Լույսը արդեն բացվում էր, երբ մեր բանակը առանց մի գնդակ արձակելու գրավեց պարսկական Ջուղան, թուրքերից վերցնելով բավական գերիներ։ Հանկարծակիի եկած թշնամու ուժերը փախչում էին Խոյ-Սալմաստի ուղղությամբ, իսկ մենք կրնկակոխ հետևում էինք նրանց։ Այդ օրը կեսօրին մի ուշագրավ դեպք տեղի ունեցավ, որը չեմ կարող մոռացության մատնել։ Չգիտեմ ինչպես էր պատահել, նահանջող թշնամու հեծելազորի զինվորներից մեկի նժույգը սկսեց փախչել դեպի մեր կողմը։ Թուրք զինվորը հրաման ստացավ, ինչ գնով էլ ուզում է լինել բռնել

իր ձին և թույլ չտալ նրան անցնելու մեր կողմը։ Զինվորը շնչակտուր հետևում էր դեպի մեզ փախչող ձիուն։ Մերոնք տեսան այս ամենը և Անդրանիկի հրամանով անմիջապես բռնեցին կատաղի ձիուն։ Թուրք զինվորը հևիհև, առանց երկնչելու մոտեցավ մեզ։ Նրան զինաթափելուց հետո կանգնեցրին Անդրանիկի առջև. «Տղա՛ս, դարձավ Անդրանիկը թուրք զինվորին, մի՞թե դու չգիտես ովքեր են հետապնդում ձեզ։ Չվախեցա՞ր, որ քեզ կարող են սպանել։ Ինչո՞ւ մի ձիու համար կյանքդ վտանգի ենթարկեցիր»։

— Փաշան սաղ մնա, ես հայրենիքի և հրամանի գերին եմ... Մեկ էլ ես համոզված եմ, որ ձեզ պես քաջ հրամանատարը կնվիրի ինձ իմ կյանքը...

Անդրանիկի հրամանով վերադարձրին թուրք զինվորին իր ձին ու զենքերը և որպես նվեր մի հատ ատրճանակ։

— Առ, որդի՛ս,— ասաց Անդրանիկը,— սա ալ ինձնից քեզ հիշատակ, նստիր ձիդ, հասիր քո զորամասին, դու արժանի ես ապրելու, աֆերի՜մ, զավակ։

Թուրք զինվորը փութկոտությամբ նստեց իր ձին և ապա, դառնալով Անդրանիկին, ասաց.

— Բաբա, Անդրանիկ փաշան դո՞ւք եք։

— Ուրկի՞ց իմացար...

— Ձեր հայրական ու հերոսական վարմունքը վայել է միայն Անդրանիկ փաշային, որի անունը շատ եմ լսել, բայց չեմ տեսել։ Ես բախտավոր եմ ձեզ տեսնելու իմ սեփական աչքերով և կպատմեմ մեր թուրքերին ձեր մասին։

«Հայրենիքի և հրամանի գերին» ուրախ երիվարում էր իր ձին դեպի թուրքական բանակ, իսկ Անդրանիկը դառնացած դարձավ դեպի մեզ և ասաց. «Քաջե՛րս, ես դժգոհ չեմ ձեզմե, բայց կուզեմ հավաստիացնել ձեզ, որ եթե յուրաքանչյուր հայ մարտիկ զոդված ըլլա այդպիսի գիտակցությամբ դեպի իր հայրենիքը, ինչպես այդ թուրք զինվորը, ապա հազիվ թե որևէ ուժ ի վիճակի ըլլա ընկճելու անոր

կամքն ու կարողությունը՝ ազատ կյանք, ազատ հայրենիք ստեղծելու պայքարի ճամփին»։

Վերջալույսի բոսորագույն ճառագայթները հրաժեշտ էին տալիս պատմական Հեր (Խոյ) գավառի լեռ ու դաշտին և նրա սահմանները եզերող անջրդի ավազոտ անապատին, երբ բանակը հասավ Կարմիր գետի խանձված ափին։ Բանակին կարճատև հանգիստ տրվեց։ Ձիերն ու մարդիկ ճապաղել էին ծարավից և օրվա շոգից։ Ի լրումն այս բոլորի փչում էր հարավային խորշակը և էլ ավելի տանջում թե՛ մարդկանց և թե՛ կենդանիներին։ Մինչ բանակը կկերակրվեր ու հանգիստ կառներ, Անդրանիկը ծառերի հովանու տակ փռված գորգին թիկն տված բանակի հրամանատարական կազմին տալիս էր առաջիկա կռվի հրահանգները։

— Թշնամու գործող ուժերը դիրքավորված են Կարմիր գետի աջ ափն ի վար։ Անոր վերջապահը զբաղեցրած է գետից 3—4 կմ դեպի Խոյ տանող խճուղու աջ եզրին գտնվող, ձեզնից շատերուն ծանոթ պարսկական փոքրիկ գյուղի ջրաղացներուն սպասարկող առվի ափերը զարդարող ուռենիներու տակ։ Թշնամու ռազմական շտաբը կգտնվի ասկե 6—7 կմ հեռավորության վրա գտնվող հայկական այժմյան անմարդաբնակ Սրբավայր կամ ինչպես պարսիկները կկոչեն՝ Սեյգավար գյուղում։ Կհրամայեմ այս գիշեր ժամը 4-ին խավարի միջից հանկարծակիի բերել թշնամու ուժերին։ Մեր նպատակն է՝ ոչ միայն դուրս վանել թշնամուն իր բռնած դիրքերից, այլև, պատճառելով զգալի կորուստներ, գերի վերցնել կռվող ուժերուն և առաջին հերթին անոր ռազմական շտաբին։

Արդ, հրամայում եմ Հասրաթի էսկադրոնին նշանակյալ ժամին անցնել Կարմիր գետը, շրջանցել թշնամու ձախ թևը և գերի վերցնել թշնամու շտաբը։ Փիլոսի էսկադրոնին հրամայում եմ աչալուրջ հետևվել դեպի Կարմիր վանքը տանող ճանապարհը՝ նեցուկ հանդիսանալ Հասրաթի էսկադրոնի աջ թևին։

Ահարոնի էսկադրոնին կհրամայեմ նույն ժամին

գիշերային հախուռն հարձակումով գրոհել թշնամու աջ թևը՝ արգելելու անոր արգելք հանդիսանալու Հասրաթի էսկադրոնի փութկոտ առաջխաղացմանը։

Այս ամենը պիտի կատարվի կայծակի արագությամբ և այնպիսի թափով, որ թշնամու վերջապահի վիճակի չըլլա փախչելու, այլ հարկադրված անձնատուր ըլլա։

Բժիշկ Բոնապարտյանի հեծելազորը նույն ժամին նույն թափով պիտի հարձակվի թշնամու աջ թևին վրա։ Այդ նույն պահին մեր ամենուս սիրելի Սըմբատը իր հետևակային ուժերով մեր հրետանու փոթորկալից կրակի տակ գրոհելով պիտի անցնի Կարմիր գետի կամուրջը և հարկ եղած պարագային դիմի սվինամարտի ու թրամարտի թշնամու կենտրոնական դիրքերում տեղավորված ուժերուն դեմ և որոտընդոստ ուռաներով ազդարարի լիակատար հաղթանակ։ Ամենուդ մաղթում եմ հաջողություն։

Մեր նախահարձակումը թշնամու վրա տեղի ունեցավ ճիշտ գիշերվա ժամը 4-ին։ Չհանդիպելով թըշնամու կողմից լուրջ դիմադրության, մերոնք կարճ ժամանակամիջոցում ամբողջ ճակատի լայնությամբ գրավեցին հակառակորդի դիրքերը։ Պարզվեց, որ թշնամին իր գլխավոր ուժերով ուշ երեկոյան փախուստի է դիմել դեպի խոյ՝ թողնելով մեր դեմ հետևակի և հեծելազորի մի մասը և հրետանիներից երեքը՝ քողարկելու իրենց նահանջը։ Լույսը բացվելուն պես մեր ուժերը հանգստանում էին հայկական Սրբավայր գյուղի այգիներում։ Այդ օրը մեր ձեռքն անցան մոտ 300 թուրք գերիներ, որոնց թվում նաև մի քանի թուրք սպաներ և մեկ գեներալ։ Բացի այդ, մեզ հաջողվեց թշնամուց խլել երկու լեռնային թընդանոթ, չորս գնդացիր և բավական քանակությամբ այլ ռազմամթերք։

Առավոտը գեղեցիկ էր ու զով, օդը ջինջ։ Խոյի մերձակա երփներանգ ծաղիկներով հարուստ սարերից շնկշնկում էր մի թարմ զեփյուռ, որ կարծես թե անմիջապես թարմացնում, զվարթացնում էր ռազմիկների հոգնած, քնակարոտ մարմինները։ Սըր-

բավայր գյուղի այգիներից մեկում, ուր զարկած էին Անդրանիկի և իր զինակից ընկերների վրանները, հաճելի զրուցելով ճեմում էին Անդրանիկն ու Սրմբատը։ Նրանցից մոտ 100 քայլ հեռավորության վրա, հսկողության տակ, նստել էին թուրք գերիները՝ վատ տրամադրությամբ և դժգույն դեմքերով։ Անդրանիկը նրանց հրամայեց՝ լվացվել մոտիկ առվակի սառը ջրով, ապա կատարել իրենց նամազը և պատրաստվել նախաճաշի։ Միաժամանակ բանակի տընտեսվարին կարգադրեց, որ մարդավայել կերակրի գերիներին, իսկ գեներալին հրավիրեց իր վրանը՝ միասին նախաճաշելու։

Նախաճաշի ժամանակ Անդրանիկը դարձավ թուրք գեներալին.

— Խնդրեմ, վայելեք մեր համեստ նախաճաշն այնպես, ինչպես հարազատ ընկերոջ սեղանից։ Ես ձեր դեմ ոչինչ չունեմ։ Հարգելով ձեր զինվորական աստիճանը, անգամ չեմ թույլ տա զիս ձեր ռազմական ուժերու մասին որևէ տեղեկություն հարցնելու, վասնզի ատիկա կհամարեմ անհարմար և անվայել։ Սակայն եթե ձերդ գերազանցությունը կցանկանա մեզ իրազեկ դարձնել պարսկա-տաճկական սահմանագլխին խմբավորված թուրքական ուժերու մասին, հապա մենք կաճապարենք հայտնելու անոր մեր շնորհակալությունն ու երախտիքը։

— Առանձին գաղտնիք չկա ձեզնից ծածկելու, փաշա։ Ձեր նշած գծի ուղղությամբ թուրքերն ունեն չորս դիվիզիա, որոնցից երկուսը այժմ կռվում են Սալմաստի և Ուրմիո շրջանում ապստամբ ասորիների դեմ, որոնց ղեկավարում է Մարշիմոնը և մասամբ էլ նրա քույրը։

— Իսկ ուրկի՞ց ասորիները կստանան ռազմամթերք։

— Նրանք մասամբ կմատակարարվեն ինգլիսներու կողմից, մասամբ էլ այն զենքերով, որոնք ձգեց Ուրմիայի ռուսական կայազորը։

— Է՜, աղեկ, ձեր կարծիքով ինչո՞վ կվերջանա այդ ապստամբությունը...

— Հարկավ, թուրքերի հաղթանակով և այն էլ ոչ ուշ քան այսօր կամ վաղը։

— Աղեկ, իսկ մնացած երկու դիվիզիան՝ ո՞ւր կգտնվի...

— Այդ երկու դիվիզիաներեն մեկը այժմ խոյում է, որ կռվում է ձեր դեմ, մեկն էլ այս քանի օրը պիտի շարժվի դեպի խոյ։

— Ինչ, չըլլա՞ թե Թուրքիան հարմար առիթ է համարում գրավել պարսկական Ատրպատականը։

— Բնավ երբեք։ Մեզ հրամայված է շարժվել դեպի Նախիջևան, նա՛խ միանալու Ալաշկերտ-Բայազետ-Մակու-Շահ-Թախտի արշավող բանակի հետ և ապա՛ գրավել Երևանը, միանալու Բաքվի մուսավաթական կառավարությանը, պատնեշ ստեղծելու ռուսական հեղափոխության առաջ, թույլ չտալու նրանց բանակներին գրավելու Անդրկովկասը։

Նախաճաշը վերջանալուն պես թուրք գեներալը աճապարեց հայտնել Անդրանիկին յուր շողոքորթությամբ պարուրված շնորհակալությունը և, դուրս գալով վրանից, մեր պահակի ուղեկցությամբ գնաց յուր նախկին տեղը։

Հեծելազորի հրամանատար բժիշկ Բոնապարտյանի, գերիներին ուղղած այն հարցին, թե ուրկից կճանաչընաք դուք Անդրանիկ փաշային, նրանք միաբերան պատասխանեցին.

— Է, ով չի լսել ու ճանաչում Անդրանիկ փաշային, որ մենք չճանաչենք...

Գերիներից ոմանք էլ իրենց ծոցի գրպանից հանեցին Անդրանիկի լուսանկարը, որի գլուխը թուրքական բանակի հրամանատարությանը ներկայացնողին նախատեսված էր վարձատրել մեծ գումարով և պարգևներով։ Այդ տեսարանին ներկա էր Վանում Ա.Մ.Ն-ի նախկին հյուպատոսի որդին, որը լավ տիրապետում էր հայոց լեզվին և հին բայազետցի Արսեն Կիտուրի ուղեկցությամբ ձգտում էր մի կերպ հասնել Բաղդադ՝ միանալու անգլիական բանակին։

Հեր դավառ, Ավարայրի դաշտ, Տղմուտ գետի հովիտ, հայկական ժողովրդական բանակ, ահա վայրեր ու նվիրական շատ անուններ, որոնք մինչև այսօր էլ պահվել են մեր սրտերում։ Պատմության մեջ այդ նվիրական աշխարհագրական տեղանունները և գործող անձանց վեհ անունները ըստ երևույթին հետ այսու էլ երբեք չեն չքանա մեր սերունդների սրտերից, քանի կա ու կենդանի է Հայաստանն ու հայորդին։

Պատմական իրադարձությունները, որ ամբողջ 15 դար հետո մեզ կրկին բերել հասցրել էր նույն Ավարայրի դաշտը, կարելի է առանց երկբայելու ասել, որ իր ամբողջությամբ համարյա թե նույնն էր, ինչոր Վարդան Մամիկոնյանի օրով։ Հայ ժողովրդական բանակին, ազգային հերոս Անդրանիկի և իր զինակիցների հրամանատարությամբ վիճակված էր անմահ Վարդան զորավարի պես պաշտպանել անդունդի եզրին կանգնած մեր սրբազան հայրենիքը օտար բռնակալների վերջնական ավերումից։

Մեր, թվով 5000-ի հասնող ժողովրդական զորամասի դեմ կանգնած էր թշնամու հսկայական կանոնավոր զորքը։ Նույնը կարելի էր ասել նաև սպառազինության մասին. մեր վեց թնդանոթի դիմաց թշնամին ուներ 20—25 թնդանոթ։ Մենք զուրկ էինք թիկունքից, թշնամին ապահովված էր թիկունքով։ Մենք զուրկ էինք պետական վարչաձևից, թշնամին հոխորտում էր մեր դեմ իր ավելի քան յոթ հարյուր տարվա կյանք ունեցող պետական վարչաձևով։ Մեր ունեցած ռազմապաշարը սահմանափակ էր, իսկ թշնամին ապահովված էր ռազմապաշարով։ Ահա թե ճակատագրական ինչպիսի անագորույն պայմաններ էին վիճակված մեզ դոտեմարտելու ահեղ թշնամու բազմիցս գերակշռող ուժերի դեմ։

Անդրանիկը քնած չէր։ Նա վանդակն ընկած կատաղի ընձայուծի պես ամբողջ օրը զբաղված էր առաջիկա ճակատամարտի հոգսերով։

Արաքսի ափից մեր կողմից քշված թուրքական բանակի առաջապահը, Կարմիր գետի ափին պարտվելով, շտապել էր միանալ Խոյում գտնվող դիվիզիային և դիրքավորվել Տղմուտ գետի աջակողմյան բլուրների գագաթներին, որոնք արևմուտքից ձգվելով դեպի արևելք հետզհետե ցածրանում, հավասարվում էին բաց դաշտի հարթությանը։ Արևմուտքից թշնամու ձախթևի հսկողության տակ էր Խոյից դեպի Սալմաստ հասնող խճուղին՝ ներառյալ Տղմուտի քարակուի հնադարյան կամուրջը և Խոյին կից անմարդաբնակ հայկական Թադեր գյուղը։ Թշնամու թիկունքում ընկած էին պարսկական մի շարք շեն գյուղեր, ինչպիսիք էին՝ Դիզադիզ, Դուզլուկ և այլն։ Հնադարյան պարբսպապատ Հեր քաղաքում տեղավորված էին թշնամու պարենի, ռազմամթերքի պահեստները և ողորմելի հոսպիտալը, որը պաշտպանվում էր թուրքական մի ստվար զորամասի կողմից։ Քաղաքի բոլոր դարպասներն էլ ամուր փակված էին և գտնվում էին պահակային զորամասերի խիստ հսկողության տակ։ Քաղաքի շուրջը եղած խորխորատը բարեբախտաբար զուրկ էր ջրից։

Թշնամու խոր թիկունքը հետախուզելու նպատակով, Սրբավայր մտնելու առաջին օրը, համաձայն Անդրանիկի հրամանի, հիսուն հոգուց բաղկացած մի խումբ հեծյալներ ծպտյալ պիտի հարավից շրջանցեին մեր դեմ դիրքավորված թշնամու աջ թևը և հասնեին Խոյի Գյադուկ կոչվող սարի բարձունքին։ Այստեղ նրանք պետք է բաժանվեին երկու հավասար խմբի, որոնցից մե՛կը Եզդիքենդ կոչվող քրդական գյուղի աջակողմյան լեռներով պետք է հետախուզելու մեկներ Կոթուր և Տղմուտի խորխորատ կիրճը, իսկ մյուսը՝ հասնելով մեզ արդեն ծանոթ Սանամելիք հայկական թափուր գյուղի բարձունքներին, պիտի հետախուզեր Սալմաստի դաշտը։

Նրանք, հաջողությամբ կատարելով իրենց վրա դրված պարտականությունը, չորս օր հետո վերադարձան՝ գերեվարելով հինգ քուրդ։ Առանձին-առան-

ձին գերիները հաստատեցին թուրք գեներալի հաղորդած տեղեկությունները։

Իրոք թշնամու գլխավոր ուժերը կենտրոնացած էին Սալմաստում և Կոթուրում ու պատրաստվում էին շարժվելու դեպի Խոյ, իսկ Սալմաստում ու Ուրմիայում ասորական ժողովրդական զինված ուժերը Մարշիմոնի հրամանատարությամբ մի քանի համառ կռիվներից հետո թշնամու կողմից գլխովին ջախջախված էին։ Սպանվածների թվում էր նաև հենց ինքը Մարշիմոնը։ Պարզելով իրերի դրությունը, Անդրանիկն ասաց.

— Այլևս հապաղելն անմտություն է և քանի դեռ մեր դիմաց դիրքավորված թշնամին օգնություն չի ստացել Սալմաստից և Կոթուրից, անհրաժեշտ է այս գիշեր նախահարձակ ըլլալ։

Զինակիցներին անհապաղ հրավիրելով իր վրանը, հայտարարեց.

— Հրամայում եմ. Սմբատին՝ այս գիշեր ևեթ գրավել Խոյ քաղաքը և, խուճապի մատնելով թշնամուն, ապահովել մեր աջ թևն ու թիկունքը թե՛ թշնամու կանոնավոր ուժերեն և թե՛ տեղական ելուզակ խաներու ու քրդերու խուժանեն։ Քաղաքը պիտի գրաված հենք հյուսիսային դարպասից, այսինքն՝ այն կողմից, ուսկից թշնամին չի սպասում։ Կենտրոնացնելով Տղմուտի ձախ ափն ի վար մեր գլխավոր ուժերը, նա՛խ զրկած կըլլանք մեր դեմ դիրքավորված թշնամուն խորհել աջակցություն ցույց տալու Խոյի իր ուժերին, երկրորդն ալ, թերևս այդպիսով գրգռած ըլլանք անոր ախորժակը ճակատի այդ տեղամասում նախահարձակ ըլլալու մեր գլխավոր ուժերու դեմ։ Այդ հրաշալի առիթ կհանդիսանա մեզ համար հաջող կերպով փշրել նրան մեր և անոնց միջև ընկած ճահիճներում, չալթուկի դաշտերում և Տղմուտի ծանծաղուտներում։ Եթե հակառակ մեր սպասումներու, երկու դեպքումն ալ թշնամին կգերադասի խոհեմությունը և նախքան Կոթուրից կամ Սալմաստից օգնություն ստանալը ոչինչ չձեռնարկի մեր դեմ, ապա Խոյը գրավելուց հետո, մեր ուժերը ցուցադրաբար

կազմակերպելով թշնամու ձախ թևի դեմ և դիմադրելով ու սևեռելով թշնամու ուժերի ուշադրությունը, կնպաստենք հրետանու շեշտակի կրակի տակ մեր հեծելազորի սրարշավ անցումը Տղմուտը և համարձակ գրոհը թշնամու կենտրոնական դիրքերու դեմ՝ դյուրացնելով մեր հետագա ապահով անցքը դեպի Տղմուտի աջ ափը։ Համբերեցեք, ատիկա դեռ բոլորը չէ։ Մեր հեծելազորից էսկադրոն մը Փիլոսի հրամանատարությամբ ծպտյալ կերպով շրջանցելով թշնամու աջ թևը, պիտի դարան մտնի պարսկական Դիզադիշ գյուղի այգիներում, որպեսզի, պահանջյալ հարկին հարվածելով թշնամու թիկունքեն, հանկարծակիի բերի անոր և թերևս հարկադրի նրան անձնատուր ըլլալու։ Եթե հանկարծ սպասածից ավելի շուտ վրա հասնեն թշնամու գլխավոր ուժերը Սալմաստեն և Կոթուրեն ու ռազմաճակատի իրադրությունը փոխվի ի վնաս մեր ուժերու այն աստիճան, որ մենք հարկադրված ըլլանք բռնել նահանջի խայտառակ ուղին, ապա անհրաժեշտ է նա՛խ կանխել խուճապը և ապա ձեռք առնել բոլոր միջոցները, որպեսզի առանց զոհի հասնենք Արաքսի հակառակ ափը, կորուստներ պատճառելով մեզ հետապնդող թշնամուն։ Այդ ուղղությամբ կարգադրեք գաղթականության լիազորներուն. չհամարձակվել առայժմ Կարմիր գետի կամուրջից անցնել այս կողմը և անոնց մեջ զենք առնելու շատ թե քիչ ընդունակ տղամարդկանցեն կազմակերպել մի վաշտ՝ ղեկավարելու նահանջը մեզնից հրաման ստանալուն պես։

Նույն օրը երեկոյան Սրբավայր գյուղի խոշոր այգիներից մեկում տեղի ունեցավ Անդրանիկի ելույթը իր բանակի առջև։

— Սիրելի հայրենակիցնե՛ր, իմ առյուծասիրտ քաջեր, ասկե մոտ 1500 տարի առաջ հայազգի քաջն զորավար, անմահ Վարդան Մամիկոնյանը անցած հայ բանակի գլուխ, նույն այս Ավարայրի դաշտում, Տղմուտ գետի ափին իր զորքով Սասանական Իրանին հարկադրեց միանգամ ընդմիշտ հրաժարվելու Հայաստանին տիրելու և նրա քաջարի ժողովրդին

վերջնակ՚անապես ստրկացնելու ու պարսիկներու հետ ձուլելու մտքեն։ Դարեր են գլորվել իրար ետևեն, բայց շնորհիվ մեր նախնյաց Ավարայրի ճակատամարտում պարսկական հզոր բանակներու դեմ ցուցաբերած հերոսության, հայությունը, հետագայում էլ, չենթարկվելով օտար ազգերու վայրենի հորդաներու հալածանքներուն, պահեց իր ազգը մինչև մեր օրերը։ Նույնը Թուրքիայի կողմից կրկնվում է մեր դեմ այսօր ,մի տարբերությամբ միայն, որ մեր ապրած ժամանակը բոլորովին այլ է մեր արժանահիշատակ նախնիներու ապրած ժամանակեն։ Շնորհիվ ռուս ազգության հայրենիքում ծագած աշխարհում մինչ այժմ չտեսնված հզոր հեղափոխության, մենք այժմ անհույս վիճակի մեջ չենք։ Վասնզի այդ հեղափոխության փրկարար ալիքներու հորձանքները շուտով պիտի ողողեն նաև Անդրկովկասի բազմաշարշար ու ազատատենչ ժողովուրդներին, խորտակելով անոնց բռնակալական լուծը, որոնց թվում նաև բարբարոս Թուրքիայի լուծը՝ փրկելով մշտնջենապես մեզ ազգովին բնաջնջվելու ահավոր վտանգեն։ Այս երազը իրականություն դարձնելու համար մենք պիտի ջանանք մեր պանծալի նախնիներու պես պարզերես դուրս գալ Ավարայրի այս ճակատամարտեն։ Ձեր հայացքները ուղղեցեք դեպի հարավ-արևմուտք, հոն, Տղմուտի աջ ափին վեր խոյացող բլուրներու մեկու գագաթին նշմարվող գմբեթաձև շինությանը։ Հոն, այդ մատուռ-դամբարանի խորքում ամփոփված է ինքը՝ անմահ Վարդան Մամիկոնյանը։ Ծունկի գանք անոր սուրբ աճյունի առջև և երդվինք պատվով, որ Ավարայրի այս ճակատամարտում պատերազմի դաշտը լքողը առաջինը մենք չենք ըլլար...

Անդրանիկը և իր զինակից ընկերները առաջինը եղան, որ, հանելով իրենց թրերը պատյանից, ծնկի եկան, որոնց հետևից և ամբողջ բանակը։

— Թող մեր դյուցազն նախնիներու վեհ անունները քաջալերեն ու առաջնորդեն մեզ՝ մի նոր Ավարայր արձանագրելու մեր ազգային պատմության փառահեղ էջերում։

Նույն օրը երեկոյան, մութն ընկնելուն պես, մեր բանակի յուրաքանչյուր զորամաս շարժվեց դեպի Ճակատ՝ դիրքավորվելու նախապես իրեն հատկացված տեղամասում։

Կեսգիշերն անց մերոնք նախահարձակման անցան Խոյի հյուսիսային կողմից։ Մեր լեռնային հրետանու ռմբակոծումից հրկիզվեց, ջարդ ու փշուր եղավ քաղաքի հյուսիսային դարպասը և, մեր հետևակն ու հեծելազորը ներխուժելով քաղաք, իրենց նետած նռնակների հռնդյունի տարափի տակ թշնամու զորամասերը քշեցին դեպի քաղաքի հարավային դարպասը։ Վերջինս արդեն բացված էր, և ահաբեկված, խուճապի մատնված թշնամին փախչում էր դեպի Սալմաստ տանող խճուղին՝ միանալու Տղմուտի աջ ափին դիրքավորված իրենց գլխավոր ուժերին։ Գլուխը կորցրած թշնամին փախչում էր հենց մեր հեծելազորի առաջ, իսկ մեր լեռնային հրետանին Խոյ քաղաքից դուրս գտնվող ռուսական հյուպատոսարանի շուրջը տարածվող հարթության վրա չտեսնված առատ հունձ էր կատարում թշնամու փախչող ուժերի շարքերում։ Մեր ձախ թևը դեռ լուռ էր։ Քիչ անց որոտաց նաև Տղմուտի աջ ափին դիրքավորված թշնամու հրետանին։ Նկատելի էր, թե ինչպես թշնամու շարքերում շտապ տեղաշարժ էր կատարվում օգնության հասնելու Խոյը լքած իրենց եղբայրներին։ Ահա այդ պահին էր, որ որոտացին նաև Տղմուտի ձախ ափին դիրքավորված մեր թընդանոթները, և մեր հեծելազորը, սրարշավ անցնելով Տղմուտը, սկսեց խիզախել դեպի թշնամին՝ գրոհելով նրա դիրքերը և ապահովելով մեր ձախ թևի հետևակի դժվարին անցքը դեպի Տղմուտի աջ ափը։

Թուրքական ռազմական շտաբը տեղավորված էր ռուսական հյուպատոսարանի թափուր մնացած շենքի վերին հարկում։ Տեսնելու բան էր, թե ինչպես Անդրանիկը իր մուգ կարմիր նժույգի վրա, շրջապատված թիկնապահներով, թուրը մերկացրած մի պահ իր ձիու գլուխը շրջեց դեպի թուրքական ռազ-

մական շտաբը և, հասնելով շենքին, ցատկեց ձիուց ու առյուծի մռնչյունով ներքևից սաստեց թշնամու շտաբականներին՝ «Թեսլի՛մ, թեսլի՛մ...»[1]։

Ապա կայծակի արագությամբ բարձրանալով սանդուղքներով իր թիկնապահներով, առանց մի զոհի տիրեց շտաբին։ Թուրք հրամանատարությունը կարծես հիպնոսացած էր։ Այդ նույն ժամին Սմբատ Բորոյանը, բազմած իր վիթխարի ձիուն, հետևելով փախուստի մատնված թշնամուն, հորդորում էր յուր քաջերին՝ «Հառա՜ջ, հառա՜ջ, կորյուններս, հառա՜ջ, հառա՜ջ, ձգի մեռնիմ, հառա՜ջ...»։

Կեսօրվա մոտ կռիվը գնալով թեժանում էր, իսկ հաջողությունը դեռ մեր կողմն էր։ Մեր ուրախությունը քառապատկվեց, երբ թշնամին, հանկարծակիի եկած իր թիկունքից հարվածող Դիզադիզ գյուղի այգիներում դարան մտած խնուսցի Փիլոսի էսկադրոնի համազարկերից, ահաբեկված լքեց իր դիրքերը և բռնեց նահանջի ճանապարհը։ Թվում էր, թե հաղթանակը մոտ է և թշնամին իր բոլոր ուժերով պիտի գերի ընկներ մեր ձեռքը։ Սակայն մեր ուրախությունը կարճատև եղավ և կանխահաս։ Մինչ թշնամին կնահանջեր դեպի Դուզդաղ, հանկարծ հեռվում, Խոյի Գյադուկի կեռմաններում պարզ նշմարելի դարձան Սալմաստից դեպի Խոյ ասպատակող թշնամու հեծելազորի և հետևակի գնդերը, որոնք շտապում էին դեպի Խոյի ռազմաճակատ՝ օգնելու յուրայիններին։ Համարյա նույն այդ պահին երևացին նաև Կոթուրից Տղմուտի ափն ի վար արշավող թշնամու այլ ուժեր, որոնք նույնպես աճապարում էին մեր դեմ։ Անդրանիկի հրամանով մեր ուժերը այժմ գրավեցին նահանջող թշնամու լքած դիրքերը։ Սալմաստից և Կոթուրից նահանջող թշնամու օգնության շտապող ուժերը մի քանի անգամ գերակշռում էին մեր ուժերին։

Անդրանիկը սլացավ թշնամուց գրաված մեր նոր խրամատները։ Նա ռազմիկներին հորդորում էր.

---

1 Հանձնվե՛ք, հանձնվե՛ք։

— Քաջե՛ր, ձեր արևուն մատաղ, չընկճվեք թշնամու գերակշռող ուժերու առջև։ Ատիկա նորություն չէ մեզ համար։ Մեր նախնիներն ալ միշտ քաջաբար մարտնչած են մեր թշնամիներու գերազանց ուժերու դեմ և միշտ էլ պարզերես դուրս են եկած կռվի դաշտեն։ Կուզեք հաղթություն, ապա աննպատակ գընդակ մի նետեք։ Աղմուկ մի բարձրացրեք, այլ վագրի համբերությամբ սպասեք, որ ոսոխը ինքն իր ոտքով մոտենա ձեր դիրքերուն ընդհուպ և նոր միայն անդադար կրակի տարափով ձեր դիպուկ հրացանաձգությամբ ձեր հաշիվը մաքրեք անոր հետ՝ նոսրացնելով անոր խիտ շարքերը։ Մի՛ վախենաք, ես և իմ զինակիցները ձեզ հետ ենք։ Համոզվեցեք, որ թշնամին ևս մեզի պես մարդ է, անոր երակներու մեջ ևս կհոսի նույնանման արյուն, որը կհոսի նաև մեր երակներուն մեջ։ Բայց կհաղթե ավելի համարձակը, ավելի տոկունը և երկաթե կամք ու կորով ունեցողը, նա, որ երդվել է հաղթել, բայց ոչ երբեք խորհիլ պարտվելու մասին։

Երեկոն վրա էր հասնում։ Սալմաստից ու Կոթուրից դեպի Ավարայր արշավող թուրքական գնդերը շտապ մոտենում էին նահանջող ուժերին։ Շատ չանցած նրանց հաջողվեց կանգնեցնել ու հետ տալ նահանջողներին՝ վերականգնելով իրենց աննպաստ դրությունը այն աստիճան, որ ամբողջ ճակատի երկայնությամբ անցան հարձակման։ Մինչ մութն ընկնելը նրանց հրետանին անդադար ռմբակոծում էր մեր դիրքերը, բայց մերոնք լուռ էին. մեր դիրքերում մեռելային լռություն էր տիրում։ Սակայն թշնամու ո՛չ հեծելազորը և ո՛չ էլ հետևակը չգիտես ինչու չէին համարձակվում առաջ գալ դեպի մեր դիրքերը։ Մութը ընկնելուն պես թշնամու բազմաթիվ հեծելազորը ճիգ արեց շրջանցելու մեր աջ ու ձախ թևերը, բայց, հանդիպելով ուժեղ դիմադրության, անզոր եղավ՝ իրականացնելու իր նպատակը։ Դրան հակառակ մշեցի Հասրաթ Բորբորյանի էսկադրոնը, որին Անդրանիկը կանխապես ծպտյալ ուղարկել էր թշնամու թիկունքը՝ միանալու խնուսցի Փիլոսի էսկադրոնին,

հանկարծ գիշերային խավարի միջից գրոհեց թշնամու թիկունքից և հանկարծակի բերելով հարկադրեց ոչ միայն լռել, այլև կրկին անգամ փախուստի դիմել Դուզդաղի ուղղությամբ։ Այդ գիշերը անցավ համեմատաբար խաղաղ։ Լռեց թշնամու հրետանին, մեր բանակը ընթրեց, և վաշտերը հերթով քուն մտան։

Տղմուտի ձախ ափից ճակատամարտի ընթացքին հետևող՝ վերը նշածս, Վանում ԱՄՆ-ի հյուպատոսի որդին, երեկոյան դեմ հասնելով մեր առաջավոր դիրքերին, բացականչեց. «Հավատացե՛ք, ես ապշած եմ և հիացած ձեր բանակի քաջագործությամբ... Այդպիսի քաջարի մարտիկներով հայերը վաղուց ի վիճակի պիտի ըլլային ազատվել թուրքական լծից, եթե միայն դուք թվով քիչ մը շատ ըլլայիք...»։

Հաջորդ օրը վաղ լուսաբացին վերսկսվեց կռիվը։ Նախահարձակվողը թշնամին էր։ Նրա հրետանու փոթորկալից թնդանոթամարտի ահեղաձայն արձագանքից դղրդում էր սար ու ձոր։ Թշնամու հետևակը և հեծելազորը խիտ շարքերով ամբողջ ճակատի երկարությամբ շարժվում էին դեպի մեզ, մեր հասցեին ուղղելով բազմաթիվ լուտանքներ։ Մեզ սարսափ ազդելու համար նրա հեծելազորի առաջավոր շարքերը արշավում էին մեր դեմ նիզակավորված, իսկ հետին շարքերը՝ մերկացրած թրերով։ Մեզ հրամայված էր պահպանել սառնասրտություն, մինչև թշնամին մոտենար այնքան, որ մեր գնդակները անվրեպ լինեին։ Մերթընդմերթ գործում էր նաև մեր հրետանին և համարյա միշտ՝ նպատակասլաց։ Թշնամու առավոտյան գրոհը անհաջող անցավ։ Նրա խիտ շարքերը ետ շպրտվեցին մեր կողմից՝ պատերազմի դաշտում թողնելով մեծ թվով սպանվածներ և վիրավորներ։ Կեսօրին անհաջողության մատնվեց նաև թշնամու ձեռնարկած երկրորդ գրոհը։

Երբ արևի ճառագայթները սկսել էին թեքվել դեպի հորիզոնի հակառակ կողմը, թշնամին վերսկսեց իր երրորդ գրոհը։ Նա այժմ իր ուժերի մեծ մասը զետեղել էր մեր աջ և ձախ թևերի դեմ։ Անդրանիկը,

նախապես կռահելով թշնամու մտադրությունը, հեծելազորով ամրացրել էր մեր աջ և ձախ թևերը։ Կատաղած թշնամին այլևս չէր կամենում կանգ առնել։ Նա մահն աչքի տակ առած համառորեն շարժվում էր մեր դեմ իր խիտ շարքերով, առանց ուշադրություն դարձնելու ընկածների վրա։ Եվ ահա, երբ նրա շարքերը հասնելու վրա էին մեր դիրքերին, Անդրանիկը թուրը մերկացրած ընկավ իր քաջերի առջևն ու մռնչաց. «Ուռա՜, ուռա՜, առյուծնե՛րս, օ՜ն հառա՜ջ, սվինամարտի»։ Թշնամին մի պահ ահաբեկված փախուստի դիմեց, բայց շուտով, զգաստացած, գլուխը կրկին շուռ տվեց դեպի մեզ և սկսվեց սվինամարտն ու թրակռիվը...

Երկու կողմից էլ լռեցին հրետանիները և հրացանների ու գնդացիրների ճարճատյունը։ Ստեղծվեց մի այնպիսի սպանդ, մի այնպիսի ժխոր ու իրարանցում, որ դժվար էր թշնամուն ջոկել յուրայիններից։ Եղեռնագործությունը հասավ այն աստիճանի, որ ոմանք՝ հայ թե թուրք, ցնցված տեղի ունեցող արյունահեղությունից, խելացնոր կանգնել էին այդ կրակի մեջ կամ ծիծաղում, կամ հռհռում էին ցնդածի պես, կամ փետտում իրենց մազերը, պատառոտում հանդերձանքը։ Մարդկային վայնասունից կարծես դողում էր երկիրը... Զանցած մեկ ժամ, թշնամու կողմը կարծես թե խոսքը մեկ արած զգաստանալ սկսեց և բռնեց նահանջի փրկարար ուղին՝ թուրքերը դեպի Սալմաստ, իսկ հայերը դեպի Ջուղա։

Ճակատամարտի վերջին պահին սպանվեց Սմբատի ձին և նա, շնորհիվ իր տարոնցի մի բուռ քաջերի, հազիվ ազատվեց սպանվելուց։ Հերոս տասնապետ Տիրո մականունով Տիգրանը ցատկեց իր կատաղի նժույգից և հրամայական տոնով առաջարկեց Սմբատին իր ձին հեծնել։ Վերջինս փորձեց մերժել, բայց հավատարիմ Տիրոն, մաուզերը ուղղելով դեպի Սմբատը, կրկին գոռաց. «Նստեցե՛ք իմ ձին, որ առաջնորդեք մեզ դեպի հաղթանակ, կաղաչեմ, այլապես ինքս կսպանեմ ձեզ...»։

Այդ պահին կռվող կողմերի ուժերից ռազմադաշտը շտապ դատարկվում էր ու ամայանում, մնալով ծածկված բազմաթիվ դիակներով ու աղիողորմ ձայնով հեծեծացող ծանր վիրավորներով։ Բայց դեռ երկու կողմից հատ ու կենտ հերոսներ շարունակում էին կռվել մինչև իրենց արյան վերջին կաթիլը։ Ի շարս այլոց մեր կողմից նմանների թվում էր նաև անմահ Տիրոն, որն իր տասնոցի վերջին գնդակը խփել էր իր ճակատին և ընկել իր նախապապ Վարդան զորավարի դամբարանի մոտ։

Թե որքան էր մեր զոհերի թիվը, դժվար էր ասել, բայց ճշմարտությունը խեղաթյուրած չլինելու համար կարելի է ասել ամենայն համարձակությամբ, որ թշնամու կողմից սպանվածների թիվը քառապատիկ էր. այլ կերպ նրանք առաջինը չէին դիմի նահանջի։

Կարևոր է նշել, որ մեր սանիտարական ուժերը թե՛ կռվի թեժ պահին և թե՛ թշնամու նահանջի ժամանակ, հնարավորին չափ, սպանվածներին պատգարակներով իջեցրել էին Տղմուտ գետի հովիտը, այնտեղից էլ սանիտարական երկանիվ սայլերով փոխադրել մեզ ծանոթ հայկական Սրբավայր գյուղի գերեզմանատուն՝ հողին հանձնելու, մինչդեռ թուրքերը չէին էլ խորհում այդ մասին։ Պատիվ ու հարգանք նրանց, ովքեր հավերժական քնով նիրհում են Սրբավայր գյուղի եղբայրական գերեզմանատանը։

Մեր բանակի նահանջը կատարվում էր ըստ նախատեսված պլանի, առանց խուճապի։ Նշանակալից է, որ այդ օրը մեզ հետ, մեր շարքերում հայտնաբերվեցին մոտ երկու տասնյակ խելակորույս ու ցնորամիտ թուրք ասկյարներ, որոնք սվինամարտից սարսափած կորցրել էին իրենց գիտակցությունը և խառնվել մեզ՝ առանց հասկանալու, թե որտեղ են գտնվում կամ ուր են գնում։ Ամենայն հավանականությամբ մեր բանակից ոմանք էլ խառնվել էին նահանջող թուրքաց բանակին։ Հետագայում մեր այս ենթադրությունը մեզ հասած լուրերի հիման վրա ճշտվեց։ Մենք իրազեկ դարձանք, որ մերոնցից

ոմանց նույնիսկ հաջողվել է ճեղքել թշնամու ճակատը և գնալ հասնել Բաղդադ, անգլիական բանակին։

Նահանջի երկրորդ օրը հասնելով հայկական Ջուղա, բանակայիններից ոմանք հիվանդացան խոլերայով, որը զուգորդվում էր խիստ փբսխումով, ջերմության բարձրացումով և ընդհանուր թուլությամբ ու արագ հյուծումով։ Բացի այդ, մալարիան էլ իր հերթին նոսրացնում էր մեր շարքերը, որն ըստ երևույթին, մեզ էին նվիրել Տղմուտի ծանծաղուտների չարաբաստիկ բնակիչները՝ մալարիային մոծակները։ Դրությունը վտանգավոր էր, բայց Անդրանիկը չհապաղեց դիմել կտրուկ միջոցների՝ իր զորամասը փրկելու պատուհասից։ Նա անմիջապես հրավիրեց բժշկասանիտարական խմբին և խստագույնս պատվիրեց դիմել բոլոր միջոցների՝ արմատախիլ անելու սկսված համաճարակը։ Միաժամանակ հրամայեց բանակը Արաքսի ձախ ափով շտապ շարժել դեպի Գողթան գավառի Ցղնա գյուղի հովասուն, կանաչազարդ և զով աղբյուրներով բարձունքները՝ խստիվ արգելելով ճահճային ջրերի և պտուղների օգտագործումը։ Նա միաժամանակ աճապարեց իմաց տալ Արաքսի ձախ ափին ընկած թուրք գյուղերի ազգաբնակչությանը, որպեսզի վերջիններս առանց վախի շարունակեն իրենց խաղաղ աշխատանքը։ Սակայն հակառակ մեր զգուշացման, ցավով պիտի նշեմ, որ այդ գյուղերի բնակիչներից ոմանք, հավատք չընծայելով մեր խոստումներին, իրենց անասուններով հապճեպ անցան Արաքսի պարսկական ափը։ Մենք ականատես եղանք ավելի տխուր իրադարձության, երբ աղջիկների և երիտասարդ կանանց մի խումբ ձեռք-ձեռքի տված իրենց նետեցին Արաքսի ջրերը և կուլ գնացին նրա կատաղի ալիքներին։ Թող ներեն մեզ այդ անմեղ զոհերն ու նրանց հարազատները, վասնզի մենք բնավ մեղք չունեինք նրանց ողբերգական մահվան մեջ։

Հասնելով Ցղնա, Անդրանիկը հրամայեց՝ ջոկել հիվանդներին և տեղափոխել մի հովասուն այգի։

Ձեռք բերել մեծ քանակությամբ սխտոր, ու բանակի կթի մաքիներից ստացած կաթը մածուն մերել և կերակրել հիվանդներին սխտորախառն քամած մածունով, ոչխարի թարմ մսից պատրաստած սպասով և յուրաքանչյուր հիվանդի օրական կես շիշ հին գինով, որով հարուստ էր Ցղնան։ Նա միաժամանակ պահակներ կարգեց այգու շուրջը, որպեսզի արգելի հիվանդների և առողջների միջև տեղի ունենալիք շփումը։ Բայց նույն օրը երեկոյան դեմ ծանր հիվանդացավ ինքը՝ Անդրանիկը։ Նա տեղավորված էր Բաքու-Ջուղա-Թավրիզ ձգվող երկաթուղու վարչության բավական հարմարավետ բնակարանում։ Բարեբախտաբար այդ բնակարանը զուրկ չէր նաև զույգ վաննաներով լողարանից։ Ես և երկու սանիտար խնամում էինք նրան։ Տան առջևի սքանչելի պարտեզում տեղավորված էին կայազորի թիկնապահների խումբը։ Անդրանիկը գիտեր ըստ արժանվույն լսել ու հարգել մասնագետներին։ Նա ուշի-ուշով լսեց բժշկի պատվերները և շնորհակալություն հայտնելով նրան ասաց.

— Դե, հոգի՛ս, աճապարեցեք, ինչ անելու եք, արեք, բայց չմոռանաք սխտորախառն մածունը, կոնյակը և վաննաները։ Երբ ձեռք առած միջոցները վերջացրինք և վաննայի մեջ մարմինը խոզանակով, տաք ջրով շփեցինք և վերջն էլ տեղավորեցինք անկողնում, նա նվաղած ձայնով ասաց. «Զավակնե՛րս, ալ կբավե, իմ կյանքը փրկելու համար դուք ամեն բան ըրիք, այժմ թողեք զիս հանգիստ, կհուսամ, որ օրգանիզմիս բնական ուժերը չեն դավաճանի զիս, իսկ ձեր թափած ջանքերը ապարդյուն չեն անցնի»։

Գիշերը մի քանի անգամ նրան կամֆորայի յուղ սրսկեցի և կոֆեինի լուծույթ։ Ամեն անգամ նա ասում էր. «Զգացված եմ, զավակս»։

Լույսը չբացված բժիշկ Ռ. Տեր-Ստեփանյանի ուղեկցությամբ եկան նաև Սմբատը, բժիշկ Բոնապարտյանը և Հասրաթ Բորբորյանը։ Անդրանիկը հավաստիացրեց բոլորին, որ այժմ բավական լավ է զգում

 ԵՒ, հայտնելով յուր շնորհակալությունը այցելուներին, խնդրեց թողնել իրեն փոքր-ինչ քնելու, որ հազվադեպ էր մոտ գալիս իր աչքերին։ Բոլորն էլ ուրախացան և անմիջապես ձգեցին սենյակը։

Մի երեք-չորս օրից բանակի հիվանդ մարտիկների դրությունն էլ զգալի լավացավ։ Ուրախալին այն էր, որ նա՛խ դադարեցին հիվանդության նոր դեպքերը և երկրորդ՝ հիվանդացածներն էլ շնորհիվ ձեռք առած բոլոր միջոցների, սկսեցին արագ կազդուրվել առանց մահվան դեպքերի։ Զանցած մի շաբաթ ոտքի ելավ նաև զորավարը, որ մեծ ուրախություն պատճառեց ամենքիս։

Անմոռանալի է հետևյալ հետաքրքիր դեպքը. Անդրանիկը 1916-ի գարնանը գործով Թիֆլիս մեկնելու ժամանակ գտնելով, որ իր Ասլանը (նժույգը) ծերանալու վրա է, համբուրելով աչքերը, Ջուղայում նվիրում է մի հայ գեղջուկի և խնդրում, որ երբեք համետ չդնի Ասլանի մեջքին, չօգտագործի որպես գրաստ։ Գյուղացին թեև խոստանում է կատարել զորավարի խնդիրքը, բայց ինչ-ինչ պատճառներից դրդված մի որոշ ժամանակից հետո ստիպված է լինում Ասլանին թանկ գնով վաճառել մի ցղնացու։ Վերջինս առաջին իսկ օրից համետում է Ասլանին և որպես գրաստ շահագործում։ Հիվանդությունից ապաքինվելու երկրորդ օրը առավոտյան դուրս գալով փողոց Անդրանիկը հանկարծ նկատում է իր Ասլանին համետած և երկու պարկ ցորեն բեռնած։ Նրա սիրտը ճմլվում է և իսկույն կանգնեցնում է գյուղացուն, հարց ու փորձ անում ու համոզվում, որ ցորենով բեռնված ձին իրոք իր սիրելի Ասլանն է։ Գյուղացին համառում է և բազմաթիվ երդումներով հերքում։ Վերջապես համբերությունը հատած զորավարը դառնում է գյուղացուն.

— Է, աղեկ, այսքան մարդկանց մեջ դուն ալ կանչիր՝ Ասլան, ես ալ, տեսնենք որուս ձայնի վրա կխրխնջա ձին։

Գյուղացու կանչին Ասլանը մնում է անտարբեր, բայց երբ քիչ անց Անդրանիկն է կանչում, ձին իսկույն ականջները սրելով, վրնջում է։

— Իսկ՝ այժմ ի՞նչ կասես։ Հո ես քեզ առանց գրաստի չեմ թողնում, համեցեք գնանք մեր գումակը և ուզածդ ձին վերցրու, իսկ Ասլանին զիջիր ինձ։ Ես չեմ կրնար տեսնել իմ ձիուս որպես գրաստ։ Կանխիկ դրամ ալ կուտամ, մի սրտմտիր։

Գյուղացին համաձայնում է, Անդրանիկը Ասլանի փոխարեն, նրան տալիս է նոր ձի և դրամ։ Գյուղացին գոհ է մնում։

Շնորհիվ ձեռք առած միջոցների և լավագույն խնամքի, երեք-չորս շաբաթից հետո Ասլանը դառնում է նույնը, ինչ որ նախկինում էր։

Հուլիս ամսվա վերջերն էր, բայց մեր բանակը տակավին ժլատ, մեծամիտ և անհամբեր ցղնացիների գյուղումն էր։ Այդ ժամանակ Օրդուբադի թուրքությունը ահաբեկված աճապարանքով իբրև նվեր մեր զորամասի համար ուղարկել էր մի քանի ջորաբեռ ցորեն, որպեսզի այդպիսով կասեցնի մեզնից սպասելիք վտանգը այդ հարուստ ավանի վրա, չնայած Անդրանիկը երբեք այդպիսի նպատակ չուներ։ Փաշան կարգադրեց, որ ցորենը հետ ուղարկվի, իսկ ծայրահեղ պարագային այն ընդունել և արժեքը տալ բերողներին՝ համաձայն գավառում գոյություն ունեցող գների։ Սակայն թուրքերը լսել չուզեցին այդ և աճապարեցին շտապ թափել բեռները և, նստելով իրենց գրաստները, վերադարձան Օրդուբադ։ Հաջորդ օրը զորավարը ցղնացի երկու հայ գյուղացիներից և հիսնապետներից բաղկացած մի պատգամավորություն ուղարկեց օրդուբադցիների մոտ նրանց հավաստիացնելու, որ ինքը սկզբունքորեն հեռու է դրացի ժողովուրդների դեմ կռվելու մտադրությունից, եթե միայն իրենք թուրքերը առիթ չտան նման անցանկալի աղետի։ Չնայած մեր բանակատեղին բավական հեռու էր Նախիջևան քաղաքից, բայց շնորհիվ տեղական ուժերի միշտ կապ էինք պահում այնտեղ գտնվող Աշոտ Մելիք-Մուսյանի և կապիտան

Խարազյանի հետ, որոնք փաշայի խորհուրդներով ուշի-ուշով դիտում էին իրենց շուրջը տեղի ունեցող բոլոր անցուդարձը և հաղորդում Անդրանիկին։ Մի քանի օր անց կապիտան Խարազյանը անձամբ ինքն էր շտապել Ցղնա, Անդրանիկի մոտ, որովհետև դրությունը օրըստօրե դառնում էր վտանգավոր։ Նրա բերած լուրերից պարզվեց, որ թուրքական զորամասերը Հին Բայազետից Մակվի վրայով շարժվում են դեպի Շահթախտիի դիմացի Արաքսի վրայի կամուրջը, հավանաբար շարժվելու դեպի Նախիջևան։ Թշնամու ավելի մեծ ուժեր խալիլ փաշայի հրամանատարությամբ Սալմաստ-Խոյի վրայով շարժվում էին դեպի պարսկական Ջուղա, նպատակ ունենալով արշավել Նախիջևանի վրա։ Բացի այդ, վերջին օրերս Նախիջևանի խանների, աղալարների և թուրք հոգևորականության դեմքերին նկատելի էր ինչ-որ անքողարկելի ուրախության նշաններ։ Իսկ մի քանի օր առաջ Կզնութ գյուղի հանդում հայտնաբերված էր երեք երիտասարդ հայերի դաշունահարված դիակներ։

Այս լուրերը լսելուն պես, նույն օրը հրավիրված զինվորական խորհուրդը, Անդրանիկի նախագահությամբ, վճռեց հուլիսի 12-ին մեր ուժերը շարժել դեպի Նախիջևան արշավող օսմանցիների դեմ։ Մենք Ցղնայից շարժվեցինք նա՛խ դեպի Նոյաջուր հայկական գյուղը, այնուհետև՝ Նախիջևան։ Հուլիսի 16-ին Անդրանիկը հայկական Աբրակունիս գյուղի փոստ-հեռագրատան բաժանմունքից հեռագրեց Բաքու Ս. Շահումյանին.

«Կովկասյան զորքերի հրամանատարությանը, 14 հուլիսի

Անառարկելիորեն ենթարկվելով Բրեստ-Լիտովսկու պայմանագրին, Նախիջևանի գավառը, ուր ներկայումս գտնվում եմ իմ ջոկատով, հայտարարել եմ ռուսական հանրապետության անբաժան մասը։ Խնդրում եմ հայտնել ում որ հարկն է, որ ես իմ ջոկատով այսօրվանից գտնվում եմ Ռուսաստանի Կենտրոնական կառավարության տրամադրության տակ և

ենթարկվում եմ նրան։ Կաշխատեմ արգելակել թուրքական զորքերի մուտքը Նախիջևանի գավառը։

Սպասում եմ պատասխանի և կարգադրության

№ 57

Գեներալ-մայոր ԱՆԴՐԱՆԻԿ»։

ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԿՌԻՎԸ

Հուլիսի կեսն էր։ Նախիջևանում մարդիկ խեղդվում էին շոգից։ Մեր բանակը Գողթանի Ցղնա գյուղից հասնելով Նախիջևանի շրջանի Նոյաջուր գյուղը, երկու օր հանգիստ առավ։ Ա. Մելիք-Մուսյանն ու կապիտան Խարազյանը տեղի հայ երիտասարդությունից կազմեցին մի գումարտակ, որոնք փոքր-ինչ ավելացրեցին մեր ուժերի թիվը։ Արդեն կասկածից վեր էր առաջին գոտեմարտը, սակայն Անդրանիկը խուսափում էր նախահարձակ լինելուց։ Թշնամու ուժերը անարգել հյուսիսից և հարավից մոտենում էին Նախիջևանին։ Անդրանիկը մեր բանակին հրամայեց շարժվել դեպի Նախիջևան քաղաքը արևմուտքից եզերող բլուրները։ Ռազմաճակատի գիծը բավական երկար էր, այդ տարածության վրա օսմանցիները մեր դեմ էին հանել հրաշալի սպառազինված մոտ երեք կանոնավոր դիվիզիա։ Բացի այդ, նրանց թիկունքը միանգամայն ապահովված էր տեղական թուրքերով, իսկ մենք ոչ միայն զուրկ էինք թիկունքից, այլև թվով մի քանի անգամ քիչ էինք թշնամուց։ Եթե հիշողությունս չի դավաճանում, կռիվը սկսվեց հուլիսի 17-ի կեսօրին և նրա առաջին աղդանշան տվողը Մեհրամ գյուղի թուրքերն էին։ Պիտի ասել, որ նրանք եղան պատճառը, որ մեր բանակի զորամասերից մեկը երկու ժամվա ընթացքում որպես պատասխան մեհրամցիների (որոնք հարձակվել էին տեղական հայերի վրա) ոչնչացրին մեկ-երկու թուրքական գյուղերի զինված ազգաբնակչությանը։ Պիտի նշել, որ այդ աղետի պատճառը տեղական թուրքերի վերնախավերն էին, որոնք չհա-

վատալով մեր ազնվությանը, հրահրել էին օսմանյան բանակին բնաջնջելու Նախիջևանի հայությանը։ Այս տեսակետից ամենամեծ մեղքն ու հանցանքը պիտի վերագրել մեհրամցիներին, որոնք հրահրել ու հորդորել էին նշածս գյուղերի բնակչությանը և փորձում էին խանգարել մեր երթը ընդդեմ օսմանյան բանակի, որոնց շլինքին և պիտի փաթաթել այդ գյուղերում զոհված մարդկանց մեղքը։

Մեր բանակի աջ թևի հրամանատարն էր Սմբատը, որի զորամասը բռնել էր Նախիջևանի հյուսիսային արվարձանի բլուրներին փորված խրամատները։ Սմբատի զորամասի դիրքերից դեպի ձախ և դեպի հարավ ընկած ռուսական նախկին զորանոցների պաշտպանության գծի վրա դիրքավորված էին կապիտան Խարազյանի հրամանատարության ներքո գտնվող նախիջևանցիներից ժողովված գումարտակի ռազմիկները։ Քաղաքի դիմաց և նրա հարավային ծայրամասի դիրքերը պաշտպանում էին Հասրաթ Բորբորյանի, բժիշկ Բոնապարտյանի, Փիլոսի, Արտաշես Միրզոյանի, Արիստակես Ասլեյանի և այլոց վաշտերն ու էսկադրոնները։

Կեսօրին թշնամին մեր բռնած դիրքերի ամբողջ երկարությամբ հրետանային փոթորկալից կրակ բացեց։ Մեր ունեցած վեց թնդանոթները հավասար քանակությամբ բաժանված էին (երկուական) աջ թևի, կենտրոնի և ձախ թևի ուժերի միջև։ Թշնամու ձեռք առած բոլոր ջանքերը գրոհելու և խուճապի մատնելու մեր ուժերին՝ անհաջողության մատնվեց։ Թուրքական զորքերի բոլոր գրոհները ետ շպրտվեցին մեր կողմից՝ զգալի կորուստներ պատճառելով նրանց։ Մութն ընկնելուն պես երկուստեք դադարեցին ռազմական գործողությունները։

Տապից, տեղ-տեղ էլ ջրի իսպառ բացակայությունից, մեր բանակայինների մաշկը չորացել, խանձվել էր։ Նրանք ծարավից և հրաշեկ արևի խորշակից թոշնել, թառամել, ուժասպառ էին եղել։ Գիշերային ժամանակավոր դադարի ժամանակ մեզ հաջողվեց լողա-

Նալ մեր դիրքերից ոչ շատ հեռու գտնվող այգիների միջով հոսող փոքրիկ գետակում։

Գիշերը Անդրանիկը իր թիկնապահներով, Աշոտ-Մելիք-Մուսյանի և տեղին ծանոթ մի քանի նախիջևանցի հեծյալների ուղեկցությամբ շրջագայում էր իր բանակի դիրքերը և անհրաժեշտ հրահանգներ տալիս ճակատի տեղամասերի յուրաքանչյուր հրամանատարի։ Միաժամանակ նա քաջալերում, խրախուսում էր ռազմիկներին ոչ մի պատահարի առջև չմոլորվելու և չընկճվելու։ Հասնելով մեր բռնած դիրքերին, նա գրկախառնվեց Սմբատի հետ և ապա կարճատև խոսակցությունից հետո ասաց.

— Երեք կետեն մեզ կսպառնա վտանգ։ Թշնամին իր բազմաթիվ հեծելազորով դյուրությամբ կրնա շրջանցել մեր աջ ու ձախ թևերը, եթե միայն անիկա կռահի այդ։ Մեր դրությունը կվտանգվի և անգամ կդառնա անհուսալի նաև այն դեպքում, եթե թշնամու խիտ շարքերուն հաջողվի պատռել մեր նոսր շղթան ճակատի կենտրոնում։

Երբ զորավարը պատրաստվում էր մեկնել ձախ թևից հարավ ընկած նախիջևանցիների գումարտակի բռնած դիրքերը, Սմբատը բռնեց նրա թևը և ասաց.

— Մեծ ախպար, հավատացած եմ, որ երեկվանից դու ինձ պես նշխար չես դրել բերանդ, նստիր պրտուչ մը խաց ուտենք միասին։

Անդրանիկը նոր միայն հիշեց, որ իրոք երեկվանից հացի երես չի տեսել և լուռ, իր ձիու սանձը հանձնելով զինվորներից մեկին, նստեց գետնին փռած զինվորական շինելի վրա Սմբատի և այլոց հետ վայելելու համեստ ընթրիքը, որը բաղկացած էր մսից և արևից չորացած լավաշից։ Խեղճ մարդ, մտածում էի ես այդ պահին, հոգեկան ինչպիսի դառն խոհեր են մորմոքում քո անաղարտ, անբասիր և անկաշառ հայրենասիրությամբ ալեկոծվող սիրտը... Այդ պահին դյուրությամբ կարելի էր կարդալ նրա մռայլ դեմքին բովանդակ հայության մարմնացած վիշտը և նրա արծվահայաց բոցկլտացող աչքերի մեջ տեսնել մարտիրոսագրությունը մեր ցեղի...

Օգտվելով գիշերային խավարից, թշնամին գաղտնի իր ուժերը քաշել, կենտրոնացրել էր ուղիղ մեր դիրքերի տակ այն նպատակով, որ լույսը գեռ չծագած գրոհի մեր դեմ։ Բայց այդ վտանգավոր խաղը թանկ նստեց նրա վրա։ Աքաղաղների երկրորդ կանչը սկսվելուն պես մեր դեմ որոտաց թշնամու հրետանին, և հակառակորդն իր խիտ շարքերով սկսեց գրոհը, որպեսզի, դուրս քաշելով մեզ մեր դիրքերից, խուճապի մատնի։ Բայց մեր թնդանոթների նետած դիպուկ արկերից, գնդացիրների կարկտից և ռազմիկների հանդուգն ու համառ հրացանների անդադար կրակից նրանք ետ նետվեցին՝ թողնելով կռվի դաշտում բավական սպանվածներ և ծանր վիրավորներ։ Նույն հաջողությանն էին հասել նաև մեր ձախ թևից դեպի հարավ դիրքավորված բանակի մյուս զորամասերը։ Այդ օրը կեսօրին թշնամին մի անգամ ևս դիմեց գրոհի, բայց կրկին ետ շպրտվեց իր նախկին դիրքերը։ Վերահաս գիշերը անցավ համեմատաբար խաղաղ։ Սակայն կատաղած թշնամին մեզ երկար սպասեցնել չտվեց։ Կռվի երրորդ օրը նա, իր ունեցած պահեստային ուժերի հաշվին, կրկին դիմեց գրոհի, այս անգամ կարողացավ նույնիսկ շրջանցել մեր աջ թևը և ձգտում էր որևէ կետում պատռել մեր շղթան, որպեսզի հարկադրած լինի մեզ ձգել մեր բռնած դիրքերը և բռնել նահանջի ուղին։ Ցավով պիտի խոստովանեմ, որ այդ հաջողվեց նրան։

Շնորհիվ իր մեծաքանակ հրետանու փոթորկալից կրակի, մոտավորապես ժամը 15-ին նրան հաջողվեց ռմբակոծել-հրդեհել և պայթեցնել ռուսական զորանոցների թնդանոթային արկերի պահեստը և խուճապ առաջացնել այդ տեղամասի պաշտպան նախիջևանցիներից կազմված գումարտակի շարքերում։ Մի բան, որ երբեք չէինք սպասում ցարական նախկին բանակի շարքերում եղած նախիջևանցի զինվորներից։

Եվ այդպես, մեր շղթան պատռված էր։ Նախիջևանցիները խուճապահար փախչում էին և ոչ մի ուժ

չէր կարող կանգնեցնել նրանց։ Մեր թափած բոլոր ջանքերը ապարդյուն էին, որի հետևանքով ստիպված էին նահանջել նաև մեր բանակայինները։ Մենք միայն կարողացանք մեզ հետ տանել տեղի հայ ազգաբնակչությանը, որպեսզի փրկեինք նրանց օսմանյան բանակի հայաջինջ յաթաղանից։ Մենք նահանջեցինք Շոռութ և Փառակա գյուղերով դեպի Բիստ, իսկ այնտեղից էլ Մարվանիս լեռնային փոքրիկ գյուղի վրայով դժվարամատչելի կածաններով իջանք Ողջի ձորի Քաջարան գյուղը։ Լեռնային համանուն գետի եզերքն ի վար տանում էր պղնձահանքով հրուշակված Ղափան ավանը։ Նահանջի ճանապարհին թե՛ զորամասի ունեցած երկանիվ սայլերը և թե՛ գաղթականության ունեցած սայլերն ու ֆուրգոնները օգտագործվեցին միայն մինչև Բիստ հասնելը, քանի որ այնտեղից դեպի վեր այլևս հարմար ճանապարհ չլինելու պատճառով հնարավոր չէր օգտվել սայլերից։ Սկսած Շոռութից ու Փառակայից մեր ձիերը անխտիր տրամադրված էին թշվառ գաղթականությանը։ Նախիջևանի շրջանի գաղթականությանը ծանոթ չէր տանջալից ճանապարհը, որին արդեն ընտելացել էր Բարձր Հայքից մինչև Ավարայրի դաշտ մեր բանակին կրնկակոխ հետևող արևմտահայ գաղթականության հոծ բազմությունը։ Որպիսի՞ կամք, կորով և համառություն էր պետք, որ այդ բազմությունը կարողանար դիմանալ բնության տարերքին, ցրտին, սովին և ուրիշ այլ զրկանքների, տե՛ր իմ... Որքան նորածիններ՝ Վահագնի դեմքով և Անահիտի չքնաղությամբ, որոնց աշխարհ գալու առաջին ճիչը կարծես թե հուսադրում էր իրենց ծնողներին՝ «Մի՛ վհատվեք, մենք պիտի ապրե՛նք, մենք պիտի հաղթե՛նք և թքե՛նք բարբարոս թշնամու ճակատին»։

Զյունախառն անձրևի տակ նորածինների աղեկտուր ճիչերին արձագանքող դժբախտ ծծմայրերը սրտակեղեք հառաչանքներով խունացած լաթերի մեջ բարուրում էին իրենց մանկտանց, սեղմում կրծքներին, փաղաքշում։

Օ՜, դաժան ժամանակից և անագորույն թշնամուց հալածված քույրե՜ր, դուք, որ անտուն, անոթի Հայոց լեռների բարձր կատարներին և նրանց անդընդախոր ձորերում մեր արյունարբու թշնամու հրետանու կրակը արհամարհելով ցեղին կյանքը շարունակելու գիտակցությամբ զինված, աշխարհ բերիք մի նոր սերունդ... Դո՜ւք էիք, դո՜ւք, իմ հերոս քույրեր, դո՜ւք էիք մեր գալիք ազատության արշալույսի, մեր խոշտանգված, գլուխը մահվան սնարին հենած հայրենիքի վերածնության հզոր հենքն ու զորավիգը և ձեր անաղարտ վեհության առջև խոնարհում եմ իմ ձյունածածկ գլուխը։

Մի՞թե կարելի է մոռանալ հայ ժողովրդի ապրելու և ստեղծագործելու անսպառ եռանդի թափն ու թռիչքը, նրա ազգային գիտակցության և չվհատվող մարդասեր հոգու լայնասրտությունը...

«Հին գաղթականներ, օգնեցե՜ք նոր գաղթականներին, ով ինչով կարող է՝ խացով, աղանձով, փոխինդով»։— Կանչում էին բարձրաձայն արևմտահայ գաղթականության հատվածի լիազորները Շոռոթի և Բիստի միջև ընկած սարի փեշերին, և նրանց խոսքը օրենք էր բոլորի համար։

Երեկոն հեռու չէր... Գաղթականության հոծ բազմությունը բանակի հետ դանդաղ շարժվում էր դեպի լեռնային գեղատեսիլ Բիստ գյուղը։ Նրա առաջապահ մասերը արդեն հասել էին Բիստին, իսկ մյուսները դեռ նոր էին դուրս գալիս Շոռոթից ու Փառակայից։ Գաղթականության թիկունքն ապահովված էր մեր զորամասերով։ Բացի այդ, թշնամին չէր հանդգնում հետևել մեզ։

Երբ ձիուս նստեցրած հղի և դեռ 3—4 տարեկան մանչուկին էլ գրկած քրոջս հասցրի Բիստի արևմըտյան կողմի սարի գագաթին, ձիուս սանձը զիջեցի նրա 10—12 տարեկան բավական աչքաբաց ու ժիր եղբորը՝ Արամիկին շարունակելու ճանապարհը, մինչև գյուղը, իսկ ինքս թեքվեցի լեռնային կեռման կածանից մի քանի քայլ դեպի աջ և սոս-

կումով դիտեցի գաղթականության վայրէջքը դեպի Բիստ գյուղը և փշաքաղվեցի այդ աղետավոր, սրտաճմլիկ տեսարանից։ Նույն պահին հանկարծ նկատեցի իմ կողքին կանգնած Աշոտ Մելիք-Մուսյանին՝ այդ զուլում պատկերը հեռադիտակով դիտելիս։ Ես ականատես եղա, թե ինչպես նա խոր վշտից փղձկաց որդեկորույս հոր պես և սկսեց բարձրաձայն հեկեկալ ինչպես մի անմեղ մանուկ։ Ես անմիջապես գրրկեցի նրան և հազիվ կարողացա նստեցնել քարափի ծայրին ընկած մի քարի։ Նա փետտելով իր գլխի մազերը արցունքների միջից բացականչեց.

— Ա՜խ, այս ի՞նչ պատուհաս հասավ մեր ժողովրդին...

ՍՅՈՒՆՅԱՑ ԼԵՌՆԵՐՈՒՄ

Լեռնոտ, անտառապատ Ղափանը աղքատ էր հարուստ արոտավայրերից և անզոր էր բավարարելու մեր հեծելազորի պահանջը։ Ապարդյուն էր խորհել գարու կամ վարսակի մասին։ Ձիերի միակ կերը խոտն էր։ Հունձը նոր էր վերջացել, բայց Ղափանը հացով էլ հարուստ չէր, ուստի թե՛ բանակին և թե՛ գաղթականությանը այնտեղ երկար պահել հնարավոր չէր։ Սակայն Սյունյաց աշխարհի այդ գողտրիկ գավառը ուներ մի առավելություն, որ հանգստացնում էր Անդրանիկին։ Շնորհիվ Գենվազի, Արևիկի, Կապուտջուղի, Արամազդի և նման լեռնային այլ բնական պատնեշների, թշնամին չէր հանդգնի ներխուժել Սյունիքի սիրտը։ Դեպի Սյունյաց բարձրավանդակը առաջխաղացման միակ շատ թե քիչ տանելի ճանապարհը մնում էր Նախիջևանից դեպի Սիսիան տանող Բիչանակի կիրճը, և իզուր չէր, որ Անդրանիկը աճապարեց իր ուժերը Ղափանից շտապ տեղափոխել Գորիս՝ հարկ եղած պահին թշնամուն դիմադրելու։

Զանգեզուրի Ազգային խորհուրդը, որի կենտրոնը Գորիսն էր, գրկաբաց, ուրախությամբ ընդունեց ժողովրդական հերոսին, նրա բանակին և գաղթականու-

թյանը։ Բարեբախտաբար այդ տարի բերքը Զանգեզուրում և մանավանդ Սիսիանում առատ էր։ Բուն Զանգեզուրի և մանավանդ Սիսիանի հայ բնակչության մեջ հազվագյուտ էր այն տունը, որ եղբայրաբար իր հարկի տակ հյուրընկալած չլիներ մի գաղթական ընտանիքի։ Տեսնելով այդ սրտառուչ վերաբերմունքը, գաղթականությունն էլ իր հերթին զինված մանգաղով ու գերանդիով իրենց հյուրամեծար ընտանիքի անդամների հետ ուրախությամբ ձեռնամուխ եղան առատ հնձին և ընդամենը մի քանի օրում բոլոր տեսակի հացահատիկները՝ ցորենը, գարին, վարսակն ու կորեկը հնձեցին, կալսեցին, և բերքն ամբողջությամբ լցրեցին շտեմարանները՝ ձմեռը ապահով անցկացնելու համար։

Անդրանիկի տրամադրությունն այժմ բավական բարձր էր։

— Ես այսօրվանից, շնորհիվ Սյունյաց մարտունակ, ազատատենչ և ազգային գիտակցությամբ օժտված ժողովրդի, իմ բանակին կրնկակոխ հետևող թշվառ գաղթականության կնճռոտ հարցը այլևս վերջնականապես պիտի համարեմ լուծված,— հաճախ կրկնում էր նա։

Եվ իրո՞ք, ընդամենը մի քանի օրվա ընթացքում թե՛ սյունեցիք և թե՛ եկվոր աստանդական հայերի ընտանիքները անչափ ընտելացան, անչափ սիրեցին իրար, ինչպես երկար տարիների ընթացքում իրարից անջատված արյունակից հարազատներ։ Միայն բարբառն էր, որով կարելի էր ջոկել սյունեցուն իր եղբայր Բարձր Հայքեցուց, իսկ մնացած դեպքերում՝ թե՛ նիստ ու կացով, թե՛ բարքերի նահապետական անաղարտությամբ ու հատկություններով, դժվար էր նրանց ջոկել իրարից։ Նման գովասանքի արժանի և սրտաճմլիկ տեսարանի ես ականատես եմ եղել նաև Վանի 1915-ի հուլիսյան նահանջի օրերին, երբ Վասպուրականից, Տարոնից, Խնուսից, Մանազկերտից և Բագրևանդից 300 000-ի հասնող գաղթականությունը լցվել էր Արարատյան հարթավայր և օթևան էր փնտրում Երևանի մերձլեռնային գյուղերում

բնակվող իրենց եղբայրների՝ կոտայքցիների, ապարանցիների և այլոց հարկերի տակ։

Զանգեզուրի Ազգային խորհրդի կայացրած որոշումները պարտադիր էին ամբողջ ազգաբնակչության համար։ Անկախ կուսակցությունների, նրա ղեկավար մարմինների միջև գոյություն ուներ երկու հիմնական հոսանք։ Նրանցից մեկը ձգտում էր ժողովրդի և երկրի վիճակը ապահովել զենքի միջոցով ընդդեմ տեղական դրացի թուրքերի, իսկ մյուսն, ընդհակառակն, ոչ միայն դեմ էր նման անմտության, այլև կողմնակից էր խաղաղ ճանապարհով, առանց արյան լուծելու դրացիների միջև բոլոր վիճելի հարցերը՝ հանուն սերտ փոխհարաբերությունների, հանուն խաղաղ նիստ ու կացի։ Առաջին հոսանքը գլխավորում էր երկարամյա մանկավարժ Գեղոն Տեր-Մինասյանն ու Արշակ Շիրինյանը, իսկ երկրորդը՝ գորիսեցի Նիկոլայ Հովսեփի Բակունցը։ Անդրանիկը հարեց վերջինիս կողմը և քաջալերեց նրան։

Զանգեզուրի Ազգային խորհրդի և Գորիսի քաղաքապետարանի վարչության ջանքերով Անդրանիկի պատվին կազմակերպած ճաշկերույթի ժամանակ Անդրանիկն իր բաժակաճառում ասաց.

— Սիրելի հայրենակիցնե՛ր, քանի դեռ գինին չի տաքացրել մեր գլուխները, թույլ տվեք նկատելու, որ մեր հավաքույթը կրնար տեղի ունենալ ավելի համեստ սեղանի շուրջ։ Ներեցեք զիս, այսօր կերուխումի ժամանակ չէ, այլ անդուլ աշխատանքի օրեր, որի ընթացքում պիտի խորհել, թե ինչպես անել, որպեսզի ի վիճակի ըլլանք կերպ մը ապահովելու մեր ժողովրդի ֆիզիկական գոյությունը մինչև ռուս հեղափոխական ազատարար բանակի հաղթական մուտքը մեր երդիր։ Համոզված եմ, իմ այս միտքը կրնա ձեզնից շատերին դուր չգալ, սակայն պատմական իրադրությունների հետևանքով ստեղծված իրողությունը այդ կթելադրի մեզ, վասն զի այժմ փրկության այլ ուղի չիկա մեզի համար և անոնք, որոնք որամադիր են այլ կերպ խորհելու, շարաշար սխալ-

ված են, անոնք կխաղան մեր ժողովրդի խղճուկ բեկորներու կյանքի և գոյության հետ։ Նվաստս մասնակցած չէ տեղիս Ազգային խորհրդի նիստերուն, բայց իմ ականջին հասած թռուցիկ լուրերեն կկռահեմ, որ ձեր գործունեությունը հոն կընթանա ոչ բարենպաստ և առողջ մթնոլորտում։ Անոնք, որոնք կողմնակից են հայ-թուրքական բարիդրացիական փոխհարաբերությունները արյամբ ներկելու, նոքա չարաչար կսխալվին, և մենք թույլ չենք տա նրանց ի կատար ածելու իրենց չափազանց կորստաբեր սկզբունքները։

Անշուշտ, թուրքերու մեջ ևս պակաս չեն մարդիկ, որոնք կողմնակից են արյունահեղության և պատահական չէ, որ մուսավաթի գործակալները կվխտան ամեն տեղ և ամենուր։ Պատահական չէ նաև այն, որ տեղական թուրքերը զինված են ավելի լավ, քան հայ գյուղացիությունը։ Ո՛չ, կռիվ պետք չէ։ Արյունահեղության փոխարեն ես կառաջարկեմ հրավիրել գավառիս հայ-թուրքական համատեղ խորհրդակցություն մը և ջանալ հավատացնել մեր դրացիներուն, որ եթե իրենք ընդառաջ չգնան Նախիջևանում բուն դրած օսմանյան ռազմական նենգ ուժերու գործակալներու և մուսավաթի ագենտներուն, ապա մենք բնավ չենք խորհի դիմելու զենքի։ Ախպարս, ինչո՞ւ կռվել, քանի որ հնարավոր է և խաղաղ կյանքով ապրել։ Այս ասելով նվաստս միանգամայն հեռու է ձեզ զինաթափելու մտքեն։ Ո՛չ, մենք պիտի զինվենք ինքնապաշտպանության համար ընդդեմ օսմանյան բանակի ոտնձգություններուն, բայց ոչ երբեք նախահարձակ ըլլալու տեղական թուրքերու դեմ։ Իսկ եթե հակառակ մեր բարիդրացիական խաղաղ կյանքի համար ձեռք բերած բոլոր միջոցներին օսմանյան զինված ուժերու և մուսավաթի արյունկզակ գործակալներու շնորհիվ չհասնինք ցանկալի հետևանքներու, ապա այն ատեն խնդիրը պարզ է, մենք լուռ հանդիսատեսի դերում չենք մնա։ Ավելին, մենք չենք սպասի, որ թշնամին հանկարծակիի բերի մեզ,

այլ միշտ զգոն և պատրաստ պիտի ըլլանք դիմադրելու նրա բոլոր ոտնձգություններուն։

Բայց ինչպես հետագա օրերի փորձը ցույց տվեց Զանգեզուրի Ազգային խորհրդի գործադրած խաղաղասիրական բոլոր միջոցները անցան ապարդյուն։ Անդրանիկի առաջարկած հայ-թուրքական համատեղ խաղաղասիրական խորհրդակցությունը, ցավոք, տեղի չունեցավ, որովհետև երկու ժողովուրդների աշխատավոր գյուղացիական զանգվածների խաղաղ կեցության գաղափարի ուղն ու ծուծը անչափ խեղաթյուրել էին տեղական թուրքերի ազգայնամոլ առաջնորդները, որոնք, հավատք չընծայելով մեզ, կտրականապես մերժեցին մեր առաջարկները։ Այդ ժամանակամիջոցը համընկնում էր այն պահին, երբ Նախիջևանի և Գողթան գավառի Ագուլիսի և նրա շրջակա հայ գյուղերի բնակչության բնաջնջման եղեռնագործ պատմության արյունարբու հեղինակ Խալիլ փաշայի գործակալները օսմանյան բանակի փոխգնդապետ Օմար Շյուքրիի ղեկավարությամբ և մուսավաթի կառավարության էմիսարների միատեղ գործունեությամբ, շրջելով թուրքական գյուղերը, զինում էին գյուղացիությանը և երկու ժողովուրդների միջև օրնիբուն թշնամություն սերմանում։

Այդ տխուր երևույթը մի ավելորդ անգամ հաստատում էր այն փաստը, որ Նախիջևանում բանակ դրած օսմանյան հրամանատարությունը, վերը նշածս Խալիլ փաշայի ղեկավարությամբ, պատրաստվում էր գրավելու նաև Սյունյաց լեռնաշխարհը։ Խալիլ փաշան, այդ նպատակին հասնելու համար արդեն սկսել էր իր գնդերը քաշել դեպի Բիչանակի լեռնանցքը, որպեսզի առիթը ներկայացած պահին անցնի այդ համարյա թե անմատչելի կիրճը և առաջին հերթին տիրի Սիսիանին և ամբողջ Սյունյաց լեռնաշխարհին։

Հայաստանի դաշնակցական կառավարությունը, մտահոգված այդ ահավոր վտանգի լուրերից, Վայոց ձորի վրայով գնդապետ Տիգրան Բաղդասարյանի հրամանատարությամբ շտապ Զանգեզուր է ուղար-

կում Վանի գունդը՝ բաղկացած հերոս սասունցիներից և Վասպուրական նահանգի արճեշցի, շատախցի, վանեցի, ոզմեցի և այլ քաջամարտիկներից։ Մեր բանակի հետևակի մի մասը այդ ժամանակ հսկում էր բուն Զանգեզուրը Սիսիանից բաժանող Եռաբլուր կոչվող տեղամասը, իսկ հեծելազորի մի մասը, որպես հետախույզներ, միացած Սիսիանի տեղական ուժերի հետ բռնել էին Բիչանակի բարձունքները՝ զսպելու Խալիլ փաշայի բանակի անցումը Սիսիան։ Թե՛ Անդրանիկի և թե՛ Զանգեզուրի Ազգային խորհրդի համար միանգամայն անսպասելի էր Վանի գնդի անակնկալ մուտքը Սյունյաց լեռնաստանի սահմանները։ Եթե հիշողությունս չի դավաճանում, այդ օրը համընկնում էր 1918-ի օգոստոս ամսվա առաջին տասնօրյակին։

Խալիլ փաշան, լսելով Երևանից Զանգեզուր ժամանած հայկական ռազմական թարմ ուժերի և վերջիններիս ռազմունակության մասին, անմիջապես հրամայում է Բիչանակի կիրճի տակ բանակ դրած իր զորամասերին թողնել իրենց բանակատեղին և նահանջել մինչև Նախիջևան և որ գլխավորն է՝ մեկընդմիշտ հրաժարվել Զանգեզուրի լեռնաշխարհին տիրելու չափազանց վտանգավոր մտքից։

Որոշ ժամանակ անց Վանի գնդի հրամանատարությունը թողեց Զանգեզուրի սահմանները և շարժվեց դեպի Արարատյան հարթավայր։ Վանի գնդի մեկնելուց 3—4 օր հետո մեր բանակը դաշնակցության բյուրոյից ստացավ մի շրջաբերական, որով առաջարկվում էր Երևան վերադառնալ բոլոր նրանց, ովքեր իրենց համարում էին այդ կազմակերպության անդամներ։ Մի քանի օր չանցած հազարից ավելի մի խումբ Սմբատի գլխավորությամբ բռնեց Երևանի ճանապարհը։ Բանակից անջատման ժամը բավական հուզիչ էր։ Ըստ հրամանի վաղ առավոտյան բանակը կազմ ու պատրաստ շարքերով կանգնած էր Շաքի գյուղի մոտ։ Գեղեցիկ ու պայծառ օր էր, օդը մաքուր, երկինքը ջինջ, սակայն անջատման ժամին բոլորի տրամադրությունը, հայտնի պատճա-

տով, ընկած էր։ Սովորական զինվորական ողջույնից հետո Անդրանիկի առաջարկությամբ բանակը բաժանվեց երկու անհավասար մասի։ Աջ թևի վրա մնացին նրանք, որոնց վիճակված էր մնալ Անդրանիկի հետ, իսկ ձախ թևի վրա նրանք, որոնց վիճակված էր Սմբատի գլխավորությամբ մեկնել Երևան։ Երկու շարքերն էլ կանգնեցին միմյանց դեմ-դիմաց։ Երկու կողմերի շարքերի կենտրոնում կանգնեցին Անդրանիկն ու Սմբատը։ Անդրանիկը բանակին հրաժեշտի սրտառուչ խոսք ասաց, որից հետո դեմ-դիմաց կանգնած մարտիկների շարքերը ընդառաջ եկան և, գրկելով Անդրանիկին ու Սմբատին, բարձրաձայն ուռաներով իրենց հզոր բազուկներով երկուսին էլ մի քանի անգամ նետեցին վեր։ Քիչ չէր նաև նրանց թիվը, որոնց աչքերից կհոսեր արցունքներ և նրանց թիվը, որոնք նախքան նախաճաշի նստելը սկսեցին երգել Անդրանիկի և Սմբատի քաջագործությունների ձոնած գովերգեր, իսկ խլաթցի տղաներից մեկը մեծ պաթոսով անգիր արտասանեց «Սասունցի Դավթից» մի կտոր։

Նախաճաշից հետո Անդրանիկը հրամայեց մեկնողներին ապահովել հացով և անհրաժեշտ քանակությամբ խաշած մսով։ Ճամփա ելնելու պահին Անդրանիկը մի հարյուրյակ ձիավորներով ուղեկցեց մեկնողներին մի որոշ տարածություն և կրկին ու կրկին եղբայրական ողջագուրանքներով ճամփու դրեց դեպի Արարատյան հարթավայր, դեպի Երևան։ Անջատվելով իր բանակի մի զգալի մասից, Անդրանիկն ինքն էլ երկար չմնաց Սիսիանում։ Նա հարկ եղած զորամասով ամրապնդելով Բիչանակի կիրճը, կրկին վերադարձավ Գորիս։

Մեր Երևան հասնելուց մեկ-երկու շաբաթ հետո ինձ վիճակված էր կրկին մի քանի օրով կարևոր գործով վերադառնալ Գորիս։ Իմ վերադարձը Գորիս փաշայի մոտ համընկավ Բաքվի բրիտանական ռազմական ուժերի արտակարգ կոմիսարի Գորիս ժամանելուն։ Այս անգլիացի զորավարը, հափշտակված մուսավաթի կառավարության մեջ բազմած Ադրբե-

ջանի խոշոր բուրժուազիայի ներկայացուցիչների կողմից, որպես կաշառք իրեն նվիրաբերած գոհարեղեններով, թանկագին քարերով և հնչուն ոսկով, իր վրա էր վերցրել ահաբեկման միջոցով ամբողջ Սյունիքը Ադրբեջանին միացնելու խնդիրը։

Եվ ահա նա անցած հարյուրի չափ զինված հնդիկ սիփահիների գլուխը, ինքն էլ իր համհարզի և թարգմանի հետ բազմած մարդատար ավտոմեքենայում, համարձակորեն, լեռնային Ղարաբաղի վրայով, սուրում է դեպի Զանգեզուր։ Բայց Սյունիքի սահմանները պաշտպանող սպա Բագրատ Բաղիրյանը թուրը մերկացրած ընդառաջ է ելնում անգլիացի զորավարին և վճռապես արգելում նրան իր զորամասի հետ անցնելու Զանգեզուրի սահմանը՝ առանց կանխապես առնելու Զանգեզուրի Ազգային խորհրդի և ռազմական ուժերի հրամանատար Անդրանիկի համաձայնությունը։ Այդ խորամանկ անգլիացի զորավարը փորձում է ահաբեկելով անցնել սահմանը, բայց իզուր։ Այս անգամ նրա առաջ ծառանում են զանգեզուրցի անվեհեր զինվորները։ Անդրանիկը լսելով այդ մասին, առաջարկում է թույլ տալ անգլիացի զորավարին իր զինվորներով մուտք գործել Գորիս։ Անգլիացին, լսելով այս, նա՛խ վարանում է համաձայնվել անցնելու սահմանը, բայց հետո՝ քաջալերված Բաղիրյանի խրախուսանքից, վճռում է շարունակել ճանապարհը մինչև Գորիս։ Մեքենաները մեծ զգուշությամբ շարժվում են առաջ և չանցած մեկ, մեկուկես ժամ, կանգ առնում Գորիս քաղաքի հրապարակում, որի երկհարկանի տներից մեկում բնակվում էր Անդրանիկը, որտեղ այդ պահին հավաքվել էին Զանգեզուրի Ազգային խորհրդի անդամները։ Անգլիացի զորավարին հրավիրվեց բարձրանալ Անդրանիկի կացարանը մի բաժակ թեյի։ Գորիսի հրապարակը թնդում էր զինված և անզեն մարդկանց խմբերի աղմուկից։

Անգլիացի զորավարը սպասում էր, որ Անդրանիկը կիջնի իրեն դիմավորելու։ Բայց հակառակ նրա սպասածին, ոչ միայն ոչ ոք չդիմավորեց

Նրան, այլև Անդրանիկի բնակարանից քաղաքի հրապարակին թառած մեծ պատշգամբից անգլերեն լեզվին քաջատեղյակ բժիշկ Բոնապարտյանը Անդրանիկի համաձայնությամբ երկրորդ անգամ հրավիրեց նրան բարձրանալ վերև։

Թեյի սեղանի շուրջը, նստած ժամանակ Անդրանիկը թարգման բժիշկ Բոնապարտյանի միջոցով ամենայն քաղաքավարությամբ դարձավ անգլիացուն հետևյալ բառերով.

— Ասացեք խնդրեմ, ձերդ գերազանցություն, կռվելու նպատակո՞վ եք եկել մեզ մոտ, թե՞ խաղաղ բանակցությունների... Եթե եկած եք կռվելու, ապա խորհուրդ կտամ ձեզ անձնատուր ըլլալու, վասնզի ձեր բանակը չափազանց փոքրիկ է, իսկ եթե եկած եք խաղաղ բանակցություններու համար, ապա բնավ հարկ չիկար այդչափ զինված մարդկանց ներկա ըլլալը։ Երկրորդ՝ խնդրեմ, պատասխանեք, ո՞ր պետության անունից եք լիազորված վարելու մեզ հետ բանակցություններ և ինչ հարցերու շուրջը։ Ունե՞ք ձեզ համապատասխան լիազորագիր, եթե ունեք, ապա բարեհաճեցեք ներկայացնել։

— Ձե՛րդ գերազանցություն, պարոն Անդրանիկ, ձեր առաջին նկատողությունը միանգամայն տեղին է ու արդարացի և մեր կողմից լոկ թյուրիմացության հետևանք, որի առթիվ կխնդրեմ առանձին կարևորություն չտալ, իսկ ձեր երկրորդ հարցին պիտի պատասխանեմ, որ որպես Ադրբեջանի բրիտանական զինված ուժերի արտակարգ լիազոր, Ադրբեջանի կառավարության գիտությամբ ինքս եմ ինձ լիազորել բանակցելու ձեզ հետ խաղաղ ճանապարհով Զանգեզուրը միացնելու Ադրբեջանի երկրամասին։

— Առարկություն չունիմ, շատ աղեկ եք խորհած, միայն թե կխնդրեմ նեղություն կրեք դուրս գալու պատշգամբ և այն, ինչ խոսեցիք հոստեղ, բարձրաձայն կրկնեք այնտեղ, որպեսզի մեր ժողովուրդը իրազեկ լինի Մեծն Բրիտանիո բարի կամքին։

Բոլորը միանգամից բարձրացան աթոռներից և խմբովին դիմեցին դեպի քաղաքի հրապարակի վրա

թառած մեծ պատշգամբը։ Բացի Անդրանիկից ու իր թարգման բժիշկ Բոնապարտյանից, անգլիական զորավարից և իր թարգմանից, Զանգեզուրի Ազգային խորհրդի կազմից, պատշգամբում էր նաև Գորիսի հասարակության հարգանքն ու համակրանքը վայելող Պարոնյան տոհմի ներկայացուցիչ՝ Ղազար ամին, որը իր պարթևահասակ, լայնաթիկունք կազմվածքով հավաքվածների միջև ամենից բարձրն էր ու վիթխարին։ Քաղաքի հրապարակում անհամբեր սպասող ժողովրդի երկսեռ բազմությունը, տեսնելով պատշգամբում հավաքվածներին և Ղազար ամու բարձրացրած գավազանը, իսկույն քար կտրեց։ Ղազար ամին իր բարձր ու բամբ ձայնով ազդարարեց ժողովրդին՝ զինվել համբերությամբ, պահպանել լռություն, իմանալու համար, թե ինչ է կատարվում։ Անդրանիկը, հազիվ զսպելով իր վրդովմունքը, կրկնեց թեյի սեղանի շուրջը անգլիացի զորավարին իր առաջադրած հարցերը։ Անգլիացին իր հերթին ճշտությամբ կրկնեց նույն պատասխանը, որից հետո Անդրանիկը առաջարկեց Ղազար ամուն հավուր պատշաճի ժողովրդի անունից մի քանի խոսքով պատասխան տալ անգլիացի զորավարին։

Ղազար ամին առաջ գալով, նա՛խ փափախը վերցրեց գլխից և ապա, հենվելով իր գավազանին, դարձավ անգլիացուն հետևյալ խոսքերով.

— Պարոն զորավար, մենք, որ կանք, մի հին ազգ ենք էս աշխարհի երեսին։ Մեր նախնիները հայտնի էին, հզոր էին, թագավորներ ունեին։ Ժամանակի ընթացքում առաջ եկավ Քրիստոսը։ Հայը էն ազգն է, որ շտապեց առաջինն ընդունելու քրիստոնեությունը։ Մեր հավատքի տաճարներից շատերը էն օրվանից մինչև օրս էլ կանգնած են ինչպես կենդանի վկաներ իմ ասածների։ Ժամանակը փոխվեց, փոխվեց և աշխարհի դրությունը՝ հին, հզոր ազգերից ոմանք կորան, գնացին, խորտակվեցին, չքացան, ոմանք էլ փոքրացան, ուժասպառ եղան, կորցրին իրենց նախկին զորությունը, և նրանց տեղը ծնունդ առան նոր ազգեր, որոնց շարքում և ձեր

Անգլիան։ Դուք էլ այդպես չեք մնա։ Ժամանակը ձեզ էլ կլափի, միամիտ կացեք։ Էդ փոփոխությունների ժամանակ Հայաստանն էլ կորցրեց իր վաղեմի փառքը, բայց նա, լինելով քրիստոնյա ժողովուրդ, իր հույսն ու հավատը չի կորցնում նորից բարձրանալու իր ընկած տեղից։ Լավ իմացեք, որ հարյուրավոր տարիների ընթացքում հայ ազգի օրորոցքի ծծկեր մանուկից բռնած մինչև խորին ծերության հասած տղամարդ թե կինմարդ այնքան են ծընկաչոք աղոթել մեր տաճարներում քրիստոնյա անգլիացու զենքի հաջողության համար, որ մեր տաճարների հատակի սալ քարերը փոս են ընկել։ Բայց հիմա դու եկել ես, որ մեր հայրենի հողը մեզնից խլես ու տաս մի ուրիշ հավատքի երկրի։ Էդ ինչ խայտառակություն է... Այսուհետև մենք թքել ենք անգլիական կառավարության և նրա թագավորի վրա։ Դուք չկարծեք, թե մենք էլ 300 միլիոն հնդիկներ ենք, որոնք լուռ ու մունջ տանում են ձեր կողմից նրանց վզին դրած ստրկական ծանր լուծը, մենք կմեռնենք քաջի պես, բայց չենք ենթարկվի ոչ ոքի։ Թող անիծյալ լինի այն Անգլիան, որի հաղթանակի համար մենք երեք հարյուր տարուց ավելի արտասվաթոր աչքերով ծնկաչոք աղոթել ենք մեր տաճարներում։ Եթե կամենում եք մեզ ճնշել զենքով, մենք պատրաստ ենք դիմադրել ձեզ և ապացուցել, որ մենք հնդիկներ չենք ձեզ համար...

Անգլիացի զորավարն այլայլվեց...

Ժողովուրդն անհամբեր սպասում էր լսելու Անդրանիկին։ Նա երկար սպասեցնել չտվեց, դարձավ անգլիացուն հետևյալ խոսքերով.

— Ձերդ գերազանցություն, բրիտանական արքայական բանակի պարոն զորավար, դուք արդեն լսեցիք իմ ժողովրդի ներկայացուցչի ելույթը, հազիվ թե զիս հաջողվի ըլլալ ավելի պերճախոս, քան այս զառամյալ ծերուկը։ Վատ չէր լինի Ղազար ամու ելույթով սպառված համարեինք հարցը, բայց ես կնկատեմ և կզգամ, որ դուք, ընդունելով ի գիտություն մեր ծերուկ նահապետի ելույթի միտքը, այ-

նուամենայնիվ տրամադիր եք լսելու նաև ինձ։ Համեցեք. անկախ իմ ազգի հանդեպ Մեծն Բրիտանիո պետության ունեցած ամենաբարյացակամ վերաբերմունքին, Անգլիան միշտ և ամենուր կշարունակի ոտնահարել եվրոպական այլ պետություններու դիպլոմատներու հետ միասին իմ խոշտանգված հայրենիքի շահերը։ Իմ թշվառ ազգն ու հայրենիքը աճուրդի է հանված Անգլիայի և եվրոպական այլ պետություններու կողմե։ Եթե մարդկային խղճին թողնելու ըլլանք, ապա իմ ցեղի կրած անվերջ ու անլուր տառապանքներու և անոր ազատության ճամփին թափած ծով արյան համար մեծագույն չարագործներեն մեկը ինքը՝ Մեծ Բրիտանիան եղած է և ցարդ կմնա անիկա։ Բայց հավատացեք, կգա օր մը և այդ օրը հեռու չէ, որ իմ ազգի ազատությունը կաշկանդող չարդարարները կկանգնեն մարդկային խրդճմբտանքով զինված ու տոգորված արդարադատ դատարանի առջև։ Կհաղթանակե ռուսական շոնդալից հեղափոխությունը, որ սկիզբն է համաշխարհային հեղափոխության և աշխարհի բոլոր գաղութարար պետություններու գործիչները, որոնց թվում առաջին հերթին անգլիացի պետական գործիչները կգամվեն խայտառակության սյունին։ Մի՞թե մոռացել եք դուք, որ դավանափոխ եղած ու ազգուրաց նախկին լորդ Դիզրաիլին հայ ժողովրդի Մեծն Բրիտանիայի պետությանն ուղղած բոլոր աղերսանքներուն ու թախանձանքներուն՝ օգնել ազատել Թուրքիայի անարգ լծի տակ հեծող, ֆիզիկապես ընաջնջվող, ասիական այդ լեռնային կղզում բնակվող դարավոր կուլտուրայի տեր խեղճ հայ ժողովրդի վերջին բեկորներուն, պատասխանել էր՝ «Բրիտանական նավատորմը չի կրնար բարձրանալ Տավրոսյան լեռներու կատարը»։ Ասված է «Ավանակը ավանակին կքորե»։ Այդ ուղղությամբ ձեր դեմ բարձրացվելիք մեղադրանքների թիվը շատ շատ է, սակայն ինչու ընկնել որոնումների հետևից, միթե բավական չէ ցույց տալ ձեզ, որ Մեծն Բրիտանիո համար Թուրքիայում մի հեկտար ծխախոտի կամ օպիումի պլանտացիա ունենալու մենա-

շնորհը ավելի կարևոր է, քան թե ամբողջ հայ ժողովուրդը։ Հապա Մեծն Բրիտանիոյ դիվանագիտական ներկայացուցիչներու խայտառակ դերը «Հայկական հարցում»— 1878-ի Բեռլինի վեհաժողովո՞ւմ... Ճիշտ է, մենք ո՛չ հնդիկներ ենք, ո՛չ աֆրիկացիներ և ո՛չ էլ Հնդկաչինի բնակիչներ, հիրավի, թվով շատ ենք փոքր, բայց գիտենք պաշտպանել զենքով մեր իրավունքն ու պատիվը մինչև մեր արյան վերջին կաթիլը։

Դուք, գաղութարարներդ կնմանվիք անբարոյական կնոջ, որն իր ստոր նպատակներուն հասնելուն համար ամեն օր նոր հարուստ փեսաներ կորոնե զանոնք կողոպտելու նպատակով։ Թաքնված մարդասիրական կեղծ դիմակի տակ, այսօր աշխարհի մի անկյունում կփաղաքշեք մեկին, վաղը մի այլ անկյունում մյուսին կխաբեք, սուտ խոստումներ կշռոայլեք, արքաներ կթագադրեք գահերու վրա, արքաներ գահազուրկ կընեք, միայն թե հաջողվի ձեզ այդ արքաներու երկրներում ապրող ժողովուրդներուն ստրկացնել և անոնց ճակտի քրտինքի հալալ վաստակը կողոպտել ի շահ Անգլիային։ Աֆղանստանի, Իրանի, Արաբիայի, Եգիպտոսի, անգամ Թուրքիայի խեղճ ժողովուրդները կթպրտան ձեր նրանց կոկորդները խրած սուր մագիլներեն... Արժե՞ր որ ձեզ զինաթափեինք ու գերեվարեինք մեր անդնդախոր ձորերու մութ ու խոնավ քարայրներու մեջ։ Բայց մենք ձեզ պես ապերախտ չենք։ Մենք մեր հարկի տակ գտնվող թշնամու անձեռնմխելիությունը կհամարենք պատվո խնդիր և անոր անձը կպաշտպանենք մեր արյան զնով այն հույսով, որ մենք վրեժխնդիր կըլլանք անորմե մեր հարկեն դուրս, ազատ դաշտին մեջ։

Գնացե՞ք, բարի երթ ձեզ, սակայն երկրորդ անգամ չհամարձակվեք նույն նպատակով ոտք դնել մեր էրգրի սահմանները։ Գնացեք և գրեցեք Լոնդոն՝ ձեր կառավարությանը, որ մենք՝ հայերս, որքան արգահատում ու անիծում ենք բրիտանական պետության վարչաձևն ու անոր խարդախ դիվանա-

գետներու ոհմակին, քառապատիկ անգամ հարգում, սիրում ու պաշտում ենք Անգլիայի ժողովրդին և անոնց ծոցեն աշխարհ ելած համամարդկային բարձր գաղափարներով տոգորված ու հոչակված զավակներուն։

Անդրանիկի ելույթը վերջանալուն պես անգլիացին այլայլված դեմքով, բարձրաստիճան զինվորականին պատշաճ զսպվածությամբ մի քայլ առաջ եկավ, և սեղմելով նա՛խ Անդրանիկի և ապա հերթով մյուս ներկաների աջը, շտապ իջավ ներքև, նստեց իր ավտոմեքենան և հնդիկ զինվորների հետ փութկոտությամբ ձգեց Գորիսն ու Զանգեզուրի սահմանները...

Անդրանիկը իր զինված ուժերով մնաց Զանգեզուրում մինչև 1919 թվականի գարնան սկիզբը և, չընտանալով դաշնակցական կառավարությունից ո՛չ բարոյական, ո՛չ նյութական և ո՛չ էլ ռազմական օգնություն, լուծարքի ենթարկեց իր զինված ուժերը՝ թողնելով Զանգեզուրի Ազգային խորհրդին իր բանակի ռազմամթերքը, ինքն էլ վերադարձավ Արարատյան հարթավայր և երկու-երեք շաբաթ հյուրընկալվելով էջմիածնում, բեկբեկված սրտով ձգեց իր սիրեցյալ Հայաստանը և մեկնեց արտասահման։ Նրա էջմիածնում հյուրընկալած պահը համընկավ ընթերցողին արդեն ծանոթ Գալիպոլի կորպուսի հրամանատար զորավար Խալիլ փաշայի Թուրքիայի կողմից Հայաստան գործուղված պատգամավորության օրերին, որի պատվին դաշնակցական կառավարության «Օրիանտ» հյուրանոցում կազմակերպված բանկետի ժամանակ Խալիլ փաշան իր բաժակաճառում ցանկություն է հայտնել անձամբ տեսնելու սեղանի շուրջը բազմած Դիլիմանի ճակատամարտի իր ախոյան, հայ ժողովրդական մեծանուն հերոս՝ Անդրանիկին։ Դաշնակցության ներքին գործերի նախարար Արամ փաշան իսկույն պատշաճ հանդիսավորությամբ մարդ է ուղարկում էջմիածին, հրավիրելու Անդրանիկին մասնակցելու խնջույքին։ Բայց Անդրանիկը կտրա-

կանապես հրաժարվում է Երևան գալ՝ պատրվակ բռնելով իր հիվանդությունը։

Եվ այդպես, Անդրանիկը գնաց, չգնահատված դաշնակցական ջոջերից, անձնական վիրավորանքի կսկիծը սրտում։ Նա հարկադրված հեռացավ դաշնակցության ստեղծած հիվանդոտ մթնոլորտից իր սիրած ու պաշտած հայրենիքի ազատության վաղորդյան արշալույսի պահին այն հույսով, որ վերադարձին պիտի ողջունի Սովետական Հայաստանը։ Բայց անողոք ճակատագրի հրամանով այլևս վիճակված չէր նրան տեսնելու իր երազած հայրենիքը։

1927-ին Անդրանիկը կնքեց իր մահկանացուն հայրենիքից հեռու՝ օտար հորիզոնների տակ՝ Ատլանտյան օվկիանոսի հակառակ ափերում, ԱՄՆ-ի Կալիֆոռնիայի նահանգի Ֆրեզնո քաղաքում, որտեղից Սփյուռքի հայության երախտապարտ որդիները նրա աճյունը փոխադրեցին Փարիզի գերեզմանատուն և ամփոփեցին անմահ Կոմիտասի և Կիլիկիայի հայ թագավորության Ռուբինյան տոհմի վերջին գահակալ Լևոն վեցերորդ Լուսինյանի կողքին։

1963 թ.
Տաշքենդ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սկիզբը 4
Դեպի ռազմաճակատ 8
Անդրանիկը 11
Սուրհանդակ Վանից . . . 23
Դեպի Վան 27
Սոֆիանի կռիվը 60
Դուզդաղի կռիվը 62
Դիլիմանի ճակատամարտը . . . 64
Կորդվաց լեռներում 87
(Տիգրիսի կիրճում)
Անդրանիկի մուտքը ազատագրված Վան . 99
Դեպի Բաղեշ 105
Դատվանի օպերացիան . . . 115
Իրականանում է Անդրանիկի նախագուշակումը 136
Նախիջևան 154
Անդրանիկի ելույթը Նախիջևանի թուրքաց թաղամասում 159
Անցում Արաքսի կամրջով . . . 164
Նոր Ավարայր 171
Նախիջևանի կռիվը 187
Սյունյաց լեռներում 193

Վաղարշակ Հակոբի Հովակիմյան
ԴԺՎԱՐԻՆ ՏԱՐԻՆԵՐ
(Հուշեր)

Вагаршак Акопович Овакимян
ТРУДНЫЕ ГОДЫ
(Воспоминания)
(На армянском языке)
Ереван «Айастан» 1988

Խմբագիր՝ Գ. Ռ. Կնյազյան
Նկարիչ՝ Վ. Ք. Մանդակունի
Տեխն. խմբագիր՝ Հ. Ս. Վարդանյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ռ. Բ. Մարգարյան

ИБ 314

Հանձնված է շարվածքի 25.04.88 թ։ Ստորագրված է տպագր. 12.09.1988 թ.։ ՎՖ 01956։ Ֆորմատ՝ 84×108 1/32։ Թուղթ՝ տպագր. № 2։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։ 9,19 պայմ. տպագր. մամ., 8,38 հրատ. մամ. +1 ներդիր։ Տպաքանակ՝ 20 000։ Պատվեր՝ 380։ Գինը՝ 1 ռ. 50 կոպ.։
«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Իսահակյան 28։

Издательство «Айастан», Ереван—9,
ул. Исаакяна, 28.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 6 տպարան, Երևան, Թումանյան 23/1։

Типография № 6 Госкомитета Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной торговли, Ереван, ул. Тумаияна, 23/1.